5 OCT 2011

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՃԽԳ.

ԲԵԼԳԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ–ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ԺԱ. ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

ԳՐԵՑ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1937

9(47.925)
Ս-28

9(с.7.925)
U-28

Ç9

Նուէր
Երևանի պետ. Գրադարանին
Յ. Ճախատուրյան
1975

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ՃԽԳ.

BIBLIOTHEQUE NATIONALE

TOME CXLIII

LA BELGIQUE ET LES ARMENIENS

ETUDE HISTORIQUE ET BIBLIOGRAPHIQUE SUR LES RELATIONS DES ARMENIENS AVEC LA BELGIQUE DE XI SIECLE JUSQU'A NOS JOURS

PAR

A. SAROUKHAN

VIENNE

IMPRIMERIE DES PP. MECHITHARISTES

1937

ԲԵԼԳԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ-ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ԺԱ. ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

ԳՐԵՑ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆ

ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1937

29 JUL 2013



3107-25



ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ

ՑԻՄՆԱՄԵԱԿԻՆ (1887—1937)

ՀՕՆՈՒՄ Է

ՆՐԱ ԿԵՍ ԴԱՐԻ ԱՆԸՆԴՀԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՀԵՂԻՆԱԿԸ

"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ"Ի ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՓԹԻԻ

Այս գրական գործս, Բելգիա եւ Հայերը, որով ջանացած եմ պատմականօրէն ուսումնասիրել Բելգիայի եւ Հայոց մէջ տեղի ունեցած դարաւոր յարաբերութիւնները, ես խաղցր պարտականութիւն եմ համարում նուիրել Վիեննայի ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ Մխիթարեան Ուսումնարանի գոյութեան Յիսնամեակին, որովհետեւ բախտ եմ ունեցել նրան աշխատակցելու հրատարակութեան առաջին օրից (1887) սկսած մինչեւ այսօր (1937) անընդհատ եւ նրա Ա. տարուց յօդուածագիրներից, նախախնամութեան կամքով, ես եմ միայն մնացել կենդանի...: Միեւնոյն ժամանակ, իմ այս կիսադարեան աշխատակցութիւնս այնքան թանգարժէք եւ նուիրական է ինձ համար, որ անհրաժեշտ պահանջ եմ զգում մի յետադարձ ակնարկով պատկերացնել նրա ամբողջութիւնն ընթերցողներիս առջեւ:

Ահա նախ այն աշխատութիւններս, որոնք լոյս են տեսած «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում եւ մնում են այնտեղ, առանց արտատպութեան կամ առանձին հրատարակու-

թեան: Այս գրութիւնները դասաւորուած են ըստ բովանդակութեան եւ տպագրութեան տարիների կարգով:

Ա. Ռուսահայոց Գրականութիւնը.

1. Ռափայէլ Պատկանեան (Գամառ Քաթիպա), 1887, էջ 85—88:
2. Յակոբ Մելիք Յակոբեան (Րաֆֆի), 1887, էջ 115—118:
3. Ռուսահայոց գրական լեզուն, 1888, էջ 21—23:
4. Գաբրիէլ Սունդուկեանց, 1888, էջ 125—127, 136—138:
5. Ռուսերէնի ազդեցութիւնը, 1889, էջ 6—9 եւ 25—28:
6. Պերճ Պռոշեանց, 1889, էջ 61—63:
7. Աբովեան-Նազարեանց գրական հիմնադրամը, 1899, էջ 161—167:
8. Առաքել Բաբախանեան (Լէօ), 1904, էջ 1—9:
9. Թատերական գրականութիւնը, 1904, էջ 234—235:

Բ. Ձորոխի վրան եւ շուրջը (ազգագրական). Ձորոխի գետեզերքը Բաթումից մինչեւ Արթվին, 1889, էջ 159—162, 215—218, 240—244. 1890, էջ 59—61 եւ 280—283:

Գ. Գրիգոր Արծրունի (Տփխիսի Մշակ լրագրի խմբագրապետն եւ հրատարակիչը).

1· Շաբաթ մ'ի Տփխիս (Գր· Արծրունու լրագրական գործունէութեան 25ամեակը), 1890, էջ 152—155, 186—191 եւ 198—204:

2· Յիշողութիւններ իր մահուան (1893) տասնամեակի առթիւ (Այստեղ պատմած եմ իմ աշխատակցութիւնը Մշակ լրագրին, 1882 ից սկսած): 1903, էջ 147—150 եւ 241—245:

Դ· Կովկասի կաթոլիկ Հայերը·

1· Պատմական տեսութիւն, 1894, էջ 101—104, 178—183, 211—216:

2· Ժամանակակից տեսութիւն, 1905, էջ 5—9, 222—223:

Ե· Օրուան խնդիրներ·

1· Ռուսահայոց դպրոցները, 1891, էջ 97—100, 129—139:

3· Կաթողիկոսական ընտրութեան ռուսական պետական օրէնքը՝ Положеніе··· 1892, էջ 215—219:

4· Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը, 1892, էջ 247—249, 275—277:

5· Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, 1892, էջ 368—370:

6· Կովկասի Հայոց ուսումնարաններն, ընկերութիւններն եւ մամուլը, 1897, էջ 16—19:

7· Օգնութիւն հայ տառապելոց, 1897, էջ 168—173:

8· Թիֆլիսի բաղաբայիի ընտրութիւնները եւ գրգռութիւնը Հայոց դէմ:

Զ· Եղբայրական Օգնութիւն Թիւրֆիայի Տառապեալ Հայոց (Братская Помощь пострадавшимъ въ Турціи Армянамъ) ռուսերէն պատկերազարդ մեծ ժողովածոն, հրատարակութիւն Գր· Զանշեանի, Մոսկուա 1897:

Կենսագրական եւ մատենագրական տեղեկութիւններ մասնակցող ռուս գրագէտների մասին: 1898, էջ 51—57, 114, 147—150, 211—213:

Է· Ժողովրդական երգեցողութիւնը ռուսահայոց մէջ:

1· Մակար Եկմալեան, 2· Քրիստափոր Կարա Մուրզա, 3· Գեւոարիոս Ղորղանեան, 4· Նիկողայոս Տիգրանեան եւ 5· Ե· Սպենդիարեան: 1905, էջ 137, 142:

Ը· Այլեւայլ.

1· Կաւկասեան Արուեստահանդէս, 1889, էջ 199—201:

2· Սեւանայ լճի աւազանը, 1891, էջ 314—315 եւ 333—337:

3· Տփղիսի Կոջոր ամառանոցը, 1891, էջ 273—276:

4. Կ. Պոլիս եւ Տփղիս (բաղդատութիւն), 1891, էջ 1—5:
5. Դիտողութիւնք Տաճկահայոց գրականութեան վրայ, 1892, էջ 17—20:
6. Կաւկասեան ֆոլերայի իշխանութեան տակ, 1892, էջ 307—310:
7. Յովհ. Այվազովսկի, նկարիչը, 1897, էջ 365—370:
8. Անդր. Արծրունի, Գերմանական համալսարանի ուսուցչապետ, 1898, էջ 360—364:
9. Պուշկին, ռուս մեծագոյն բանաստեղծի ծննդեան հարիւրամեակը (բանաստեղծի պատկերով), 1899, էջ 161—167:
10. Արշակ Չօպանեանի գրական յուշերեանը, 1925, էջ 80:

Բոլոր վերեւ նշանակուած աշխատութիւնները (բացի վերջին յօդուածից պ. Չօպանեանի մասին) ստորագրել եմ Կ. Տիւրեան կեղծանունով եւ գրել արեւմտահայ (պօլսական) բարբառով: Իսկ 1925ից յետոյ սկսած եմ աշխատակցիլ իմ բուն անունովս եւ գրած արեւելահայ (կովկասեան) բարբառով: Հարկ եմ համարում շեշտել այստեղ, որ այս երկու պարագայում էլ, վարուել եմ սովորականից տարբեր կերպով, այն է այնպիսի խառն ոճ եւ բացատրութեան ձեւեր եմ գործածել, որ գրութիւնս հաւասարապէս մատչելի է եղած երկու կողմին էլ, կամ գէթ

այս է եղած իմ նպատակս: Ուրախ եմ, որ այս դիտումս անիկատելի չէ մնացած եւ այս մասին հաւաստիք եմ ընդունած այլեւայլ անձերից թէ բերանացի եւ թէ մամուլի միջոցով: Ինձ համար առանձնապէս հաճելի է յիշել, որ մեր մեծ հայերէնագէտ Հ. Աբսէն Վ. Այտընեան (Վիեննայի Միաբանութեան Ընդհ. Աբբայ) ինձ ուղղած իր մասնաւոր եւ մտերմական նամակներից մէկում, ակնարկելով իմ այս գրութեան ձեւին, գրել էր այսպէս «Ոչինչ անախորժ նորութիւն մի՛ ես հնարեր»:

Այս «Կ. Տիւրեան» կեղծ անունով այն ժամանակ աշխատակցած եմ նաեւ Կ. Պոլսի «Արեւելք» մեծ օրաթերթին: Ահա եւ այն երկերս, որոնք «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ լոյս տեսնելուց յետոյ, հրատարակուել են առանձին գրքով (Մխիթ. Տպար. Վիեննա):

1. Սեւ ծովու ռուսական եգերքը (Կ. Տիւրեան կեղծանունով), 1895, էջ 192:
2. Կաւկասեան Լերանց մէջ (Կ. Տիւրեան կեղծանունով), 1896, էջ 72:
3. Հոլլանդան եւ Հայերը ԺԶ.—ԺԹ. դարերում, պատմ. ուսումնասիրութիւն, պատկերազարդ, 1926, էջ 106:
4. Յարգանք Հայ Նահատակին, Յիշողութիւններ Յաւիտենական Քաղաքից, 1926, էջ Ը + 128:
5. Ադեքսանդր Մանթաշեանց, Մեծ վաճառականն եւ բարեգործը, 1931, էջ 220:

6· Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացի, 1936, էջ 62: Կից հրատարակուած է գաղղ· լեզուով — Firdowci et l'Influence iranienne dans la littérature géorgienne, էջ 44:

7· Բելգիա եւ Հայերը, պատմ· ուսումնասիրութիւն, 1937, էջ 253:

Ներում ինձ յառաջ բերել այստեղ, իմ գրական աշխատութիւնների ամբողջութեան համար, այն գործերս եւս, որոնք հրատարակուած են «Հանդէս Ամսօրեայ»ից դուրս·

8· Հայկական խնդիրը եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում: Ա· հատոր (1860—1878), պատմական ուսումնասիրութիւն: Յաւելուած՝ Ազգային Սահմանադրութեան օրէնքի հայերէն եւ տաճկերէն բնագիրները: Տպ· Թիֆլիս 1911, էջեր ե + 480 + 105: Սպառուած:

9· Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում (1882ին Կարինում հիմնուած հայ գաղտնի կազմակերպութեան պատմութիւնը): Արտատպուած է Բաֆուի «Գործ» ամսագրի 1917 Մարտի համարից: Էջ 14: Սպառուած:

10· Խորհրդաւոր Աղջիկն եւ իր գաղտնիքը: Իրավէպ, Կ·Պոլսի բարբերից: Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1924, էջ 344:

Վերջացնում եմ այս անձնական դիտողութիւններս, որոնց համար ընթերցողներիս ներողամտութիւնն եմ խնդրում, նախ խորին եւ ջերմագին շնորհակալութիւնս յայտնելով Վիեննայի մեծարոյ Մխիթարեան Միաբանութեան, որ կ՚ես դար անընդհատ իր անպայման վստահութիւնը շնորհեց իմ համեստ գրչին եւ երկարդ՝ իւրաքանչիւր մաղթելով, որ բազմարդիւն Միաբանութիւնը հնարաւորութիւն ունենայ այսուհետեւ եւս անշեղ կերպով շարունակելու Հանդէս Ամսօրեայ ուսումնասիրութիւնները, յօգուտ ընդհանրապէս Հայ Մատենագրութեան եւ մասնաւորապէս Հայագիտութեան, որի կարիքը միշտ զգալի է:

Բրիւսէլ, Յունուար 1937:

ԱՌԱՔԵԼ ՍԱՐՈՒԽԱՆ

ՅԱՆԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ

Էջ

Նուիրումն «Հանդէս Ամսօրեայ»ի ..... Ե

«Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեակի առթիւ (հեղինակի պատկերով) ..... Է—ԺԴ

Յառաջաբան ..... 1—5

Ա. ԳԼՈՒԽ. Ընդհանուր տեսութիւն Բելգիայի պատմական անցեալին եւ ներկայ կացութեան վրայ ..... 7—26

Բ. ԳԼՈՒԽ. Բելգիա այցելող առաջին հայը, Անտիոքի հրաշագործ Մակար եպիսկոպոսը: Նրա ուխտն եւ տանջանքը Երուսաղէմում: Եւրոպայում ճանապարհորդութիւնը: Բելգիայի ժանտախտը: Մակարի մահը, սրբացումն եւ փառաւոր յուղարկաւորութիւնը ..... 27—34

Գ. ԳԼՈՒԽ. Առաջին խաչակրաց արշաւանքը: Կիլիկիայի Կոստանդին իշխանի եւ այլոց աջակցութիւնը: Բելգիացի Բալդուին (կամ Բոդուէն) իշխանի Եդեսիայի եւ Փոքր Հայքի տիրելը: Երուսաղէմի գրաւումն եւ Բելգիացի իշխան Գոդֆրուա դը Բույեոնի թագաւորումը 35—52

Դ. ԳԼՈՒԽ. Երուսաղէմի Բոդուէն Ա. եւ Բոդուէն Բ. Բելգիացի թագաւորները: Հայ գինուորների անձնուիրութիւնը: Գի դը Լուսինեան: Պարսից բանաստեղծ Սաադիի դէպքը: Խաչակրութեան յետագայ շրջանը: Կ. Պոլսի լատին պետութեան

Ը։

Բելգիացի կայսրները: Հայկական կոտորած: Երուսաղէմի վերջին գրաւումն եւ Ֆրանչիսկեան կրօնաւորները ..... 53—76

Ե· ԳԼՈՒԽ· Մատթէոս Ուռհայեցի պատմիչը եւ իր դատողութիւնները խաչակիրների վրայ: Երուսաղէմի հայ թագուհիները: Գրիգոր վկայասէր եւ Բարսեղ Ա· կաթողիկոսները: Գրիգոր ԺԳ· պապի գնահատականը ..... 77—92

Զ· ԳԼՈՒԽ· Միջազգային առուտուրը Փոքր Ասիայում: Հայոց մրցումը: Հայկական Այաս Նաւահանգիստն եւ իր կանոնները: Կիլիկիոյ թագաւորների հրովարտակները: Համբաւաւոր Մարկո Պօլօյի ուղեւորութիւնն եւ Այաս գալը: Մարկո Պօլօյի դիտողութիւնները ԺԳ· դարի Հայոց մասին: Վենետիկցիների եւ ջենովացիների նաւային պատերազմը Այասի առջեւ ..... 93—114

Է· ԳԼՈՒԽ· Բելգիական Բրիւժ նաւահանգիստը: Հայոց երթեւեկութիւնը: Բելգիացի հնագէտ վանդէն Բիւսբէի հետազօտութիւնները հայ-բելգիական յարաբերութիւնների մասին: Վանդէն Բիւսբէի եւ Հ· Ղ· Վ· Ալիշանի թղթակցութիւնը: Ֆլամաներէն արձանագրութիւններ Հայոց մասին: Կիլիկիայի վերջին թագաւոր Լեւոն Զ·ը Բելգիայում: Բրիւժի անկումը ..... 115—130

Ը· ԳԼՈՒԽ· Անվէրսի Մայր եկեղեցին: Թոմաս արքեպիսկոպոս Նուրիջանեանի մահն եւ թաղումն այնտեղ: Նրա թողած իրերը: Թոմասի կաթողիկոսական կոնդակներն եւ բազմաթիւ լատիներէն յանձնարարագիրները: Թոմասի ծրագրած «հայ-

լատինական» դպրոցը: Նրա մահուան վկայագիրը ..... 131—150

Թ. ԳԼՈՒԽ. Բոլլանդեան «ընկերութեան» ծագումն եւ կրած «փորձանքները»: Acta Sanctorum եւ նրա մէջ Ագաթանգեղոսի ճնճղատառութիւնը: Բոլլանդեանների միւս հրատարակութիւնները: Հայագէտ Բոլլանդեանները. ի. P. Peeters եւ նրա հայագիտական երկասիրութիւնները: Բոլլանդեանների Մատենադարանը Բրիւքսէլում ..... 151—171

Ժ. ԳԼՈՒԽ. Առաջին Բելգիացի մեծ հայագէտը, Ֆէլիքս Նէվ. իր աշխատութիւնների ամբողջ ցուցակն եւ նրանց համառօտ բովանդակութիւնը: Նրա կենսագրութիւնը: Ագաբեան պատրիարքի նամակը ..... 172—194

ԺԱ. ԳԼՈՒԽ. Լուվէնի երկու եկեղեցական հայագէտները, Լըբօն եւ Մէօյլդէրմանս: Նրանց աշխատութիւնների ցուցակն եւ բովանդակութիւնը: Բրիւքսէլի արեւելեան մատենադարանի հայ գրչագիրները եւ պարսկերէն Աւետարանը ..... 195—209

ԺԲ. ԳԼՈՒԽ. Բելգիայի համալսարանների կազմը: Բրիւքսէլի համալսարանին կից «Արեւելեան Կաճառը» (Institut de Philologie et d'Histoire Orientales): Հայերէնի ամբիոնը: Պրոֆ. Ն. Ադոնց: Կաճառի բացումն եւ գործունէութիւնը: Փոխ-Նախագահ Պրոֆ. Հ. Գրէգուառի ճառն եւ անցեալ ու ներկայ գործունէութիւնն ի նպաստ Հայոց: Բրիւքսէլի Նուպարեան Հիմնարկութիւնը. նրա պայմանները, դրամագլուխն եւ շահառուները ..... 210—222

ԺԹ. Գ. ՈՒԽ. Վերջին հայկական թշուառութիւնները եւ Բելգիան: Հայասէրների Միջազգային Լիգան: Ժընէվի Ազգաժողովի Յանձնաժողովը: Բելգիայի հայ գաղութի աճցեալն եւ ներկան: Հայերէն Աստուածաշունչի 1500ամեակի տօնակատարութիւնը Բելգիայում .... 223—236

ՅԱՒԵԼՈՒԱԾ ..... 237—253

ԲԵԼԳԻՈՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց Պատմութեան այն շրջանն, որ սկսում է Ռուբինեաններէն անկումով, ԺԴ. դարում, առանձնապէս՝ հայութեան այն հատուածներինը, որոնք իրենց հայրենի երկրի սահմաններէն այս կամ այն պատճառով հեռացել, եւ իրենց համար նոր բնակավայր են ընտրել, — դեռ բաւականաչափ չեն քննուած եւ չեն պարզուած: Ուստի ամէն մի փորձ այդ ուղղութեամբ՝ անկասկած օգտակար է եւ կրթիչ նշանակութիւն ունի:

Հայ ժողովրդի այդպիսի նոր բնակավայրերից մէկն է նաեւ Բելգիան: Այս փոքր համակրելի երկիրը ընդհանուր հետաքրքրութեան եւ յարգանքի առարկայ դարձաւ վերջին համաշխարհային պատերազմից ետքը: Բայց նա մեզ համար հետաքրքրական է նաեւ այն առանձնակի, որ նրա պատմութիւնը մասամբ նման է մեր հայրենիքի անցեալ պատմութեան: Ինչպէս որ Հայաստան՝ երբեմն իր աշխարհագրական դիրքի պատճառով հզօրագոյն դրացիների համար միջանցքի տեղ է ծառայած եւ կռուի դաշտ էր դարձած, այդպիսի

վիճակ է ունեցել նաեւ Բելգիան՝ Եւրոպայում։ Տասնեակ դար օտար գերիշխանութեան տակ ապրելուց յետոյ (բայց ոչ թէ դրեթէ անընդհատ աւերի եւ կոտորածների ենթարկուելով ինչպէս էր Հայաստանը) Բելգիան ահա ճիշդ մի դար է միայն, որ գտել է վերջապէս իր կատարեալ անկախութիւնն եւ ազատութիւնը։ Ուստի ես պարտք եմ համարում իմ այս աշխատութեան — այն է Բելգիայի եւ Հայոց յարաբերութիւնների պատմութեան — առաջին գլուխը նուիրել Բելգիային։

Այս յարաբերութիւնները սկսել են ԺԱ. դարում եւ այնուհետեւ դրեթէ անընդհատ շարունակուել, մինչեւ որ մի նոր հայ հատուածբուն է դրել այս երկրում եւ հաստատուն արմատ արձակել։

Առաջին Հայը, որ Բելգիա է եկել, մի հրաշագործ հայ հոգեւորական է եղել, ԺԱ. դարի սկզբում։ Սա իր կեանքն է գոհել այստեղ ժանտախտից վարակուած Բելգիացիներին խնամելու ժամանակ եւ իր մահուանից յետոյ սուրբերի կարգը դասուել Հռոմէական Եկեղեցուց։ Նա այսօր էլ Բելգիայի «ժանտախտից պաշտպան» սուրբն է, որի տօնը կատարւում է, ըստ Տօնացոյցի, Ապրիլ 10ին։

Այնուհետեւ հայ–բելգիական յարաբերութիւնները միանգամից մեծ ծաւալ եւ բազմակողմանի ընթացք են առել Պաշակրութեան մեծ շրջանում։ Այս շրջանն ունի իր շատ հետաքրքրական կողմերն, որոնք բաւականաչափ չեն լուսաբանուած։ Առաջին Պաշակրու-

թեան պետերը Բելգիացի իշխաններ էին, որոնք տիրել են Փոքր Հայքին, թագաւորել են Երուսաղէմում, ամուսնացել են հայ իշխանուհիների հետ եւ երկարատեւ յարաբերութիւններ են ունեցած հայ կաթողիկոսների, հայ իշխանների եւ թէ հայ ժողովրդի հետ առհասարակ: Բելգիական նաւատորմիղներ են եկած Կիլիկիոյ ծովեղերքը: Բելգիացիք էին ի մէջ այլոց որ 1147ին Լիսաբոնը պաշարելով այնտեղից դուրս վանեցին Սարակինոսներին եւ ազատեցին Պորտուգալիան: Բելգիացի իշխաններ էին նոյնպէս Կ. Պոլսի ժամանակաւոր լատին պետութեան կայսրները: Մեր ժամանակակից պատմիչը Մատթէոս Ուռհայեցին երկարօրէն խօսում է այս հայ-խաչակրաական յարաբերութիւնների վրայ: Ես երեք Գլուխ եմ յատկացրած այս խնդիրներին:

Փոքր Ասիան՝ Հին եւ Միջին Դարերում միջանցք է եղած Եւրոպայի եւ Կենդրոնական Ասիայի, ինչպէս նաեւ ծայրագոյն Արեւելքի առեւտուրի համար: Հայ վաճառականները կարեւոր դեր են կատարած այս միջազգային առեւտրի մէջ: Հայերն իրենց քաղաքական անկախութեան ամբողջ շրջանում մի միակ ծովային նաւահանգիստ են ունեցած: Այս նաւահանգիստը, ուր յաճախել են նաեւ բելգիական նաւագնացները, Կիլիկիոյ ծովեղերքի Այասն է, այժմ ողորմելի մի գեղ որ երբեմն միջազգային առեւտրի կենդրոն էր: Ուստի ես հարկ համարեցայ ընդարձակ ծանօթութիւն տալ թէ այս առեւտրի եւ թէ Այասի վրայ:

Առաջին հայ առեւտրականներն, որ ոտք են կոխել Բելգիայի հողի վրայ ԺԴ. դարում, եկել են Բրիւժ (Bruges) նաւահանգիստն, որ այն դարում, «ոսկի փեթակ» (ruches d'or) է կոչուել պատմագիրների կողմից եւ ուր յաճախել են աշխարհիս բոլոր նաւագնացները: Այդ դարի վերջերը Բելգիա է այցելել նաեւ վերջին հայ արքան, Լեւոն Զ.: Ես մանրամասն յառաջ պիտի բերեմ այն հին բելգիական արձանագրութիւններն եւ յիշատակութիւններն որ պահուած են այս դէպքերի մասին:

Շնորհիւ այն անվիճելի իրողութեան, որ հայ ցեղն եւ լեզուն հնդեւրոպական աշխարհի մասն են կազմում, եւրոպական գիտնականները, մանաւանդ վերջին հարիւրամեայ շրջանում, ընդարձակ ուսումնասիրութիւններ են նուիրել մեր պատմութեան, մեր լեզուին եւ առ հասարակ հայ կեանքին: Այս հետազօտութիւնների մէջ իրենց պատուաւոր տեղն ունին նաեւ Բելգիացի բանասէրներն, որ սակայն չատերին անծանօթ է մնացած: Ես մանրամասնօրէն պիտի խօսիմ բոլոր այն Բելգիական հատուածութիւնների եւ գիտնականների վրայ, որոնք իրենց քննութեան առարկայ են դարձրել հայ լեզուն եւ պատմութիւնը եւ յառաջ պիտի բերեմ համառօտաբար նրանց բոլոր գործերի բովանդակութիւնը, երեք գլուխ յատկացնելով այս կարեւոր խնդիրներին:

Բելգիան այսօր ունի երկու բացառիկ հիմնարկութիւն, որոնք արժանի են ընդհանուր հայութեան ուշադրութեանը: Սրանք են

Բրիւքսէլի «Արեւելեան Կաճառի» հայկական բաժինն եւ «Պօղոս Նուպարեան հիմնարկութիւնը» ի նպաստ հայ չքաւոր ուսանողների: *Պիտի պատմեմ այս հիմնարկութիւնների ծագումն եւ նրանց այժմեան գործունէութեան պայմանները:*

Իբրեւ վերջաբան համառօտ տեղեկութիւն պիտի տամ Բելգիայում հաստատուած այժմեան հայ գաղութի վրայ:

Ես այս պատմութեանս մէջ ջանացած եմ ամփոփ կերպով յիշել եւ նկարագրել այն բոլոր անցքերն, որոնք նոյն իսկ հեռաւոր կերպով աղերս ունին հայ-բելգիական յարաբերութիւնների հետ: Աշխատած եմ անձամբ քննել այն բոլոր աղբիւրները, որ հնարաւորութիւն եմ ունեցած ձեռք բերելու եւ որոնք յիշած եմ ծանօթագրութիւնների մէջ:

Որքա՞ն եմ յաջողած, թողնում եմ անաչառ ընթերցողի դատողութեան:

Ա. ԳԼՈՒԽ

Ընդհանուր տեսութիւն Բելգիայի պատմական ակնարկի եւ ներկայ կացութեան վրայ։

Մի երկրի ընդհանուր կացութեան տեղեկանալու լաւագոյն միջոցը վիճակագրութիւնն է։ Դիմենք նախ այս միջոցին։

Պաշտօնական վիճակագրութեան համաձայն Բելգիայի հողային տարածութիւնն է ընդամէնը 30,444 քառակուսի կիլոմետր, իսկ բնակիչների թիւը առ 1 Յունուար 1933, էր՝ 8,213,449 հոգի, որով ամէն մի քառակուսի կիլոմետրին ընկնում է 268 բնակիչ, որ նշանակում է թէ Բելգիան գերազանցապէս բազմամարդ երկիր է իր հողային տարածութեան համեմատելով։ Բելգիան երկու որոշ ցեղին պատկանող բնակչութիւն ունի, Ֆլաման (flamand) *եւ վալլոն* (wallon)։ *Բնակչութեան ընդհանուր թուի 53% Ֆլաման է, 46% Վալլոն եւ 1% զանազան։*

Երկիրը բաժնուած է 9 նահանգի, որոնց 4ի մէջ բնակիչների մեծամասնութիւնը Ֆլաման է, այն է Անտվէրպէն (կամ Ֆրանս. Անվէրս), Արեւելեան Ֆլանդրիա, Արեւմտեան

Ֆլանդրիա եւ Լիմբուրգ: Միւս 4ի մէջ մեծամասնութիւնը վալլոն է, այն է Հէնօ (Hainaut), Լիէժ, Նամիւր եւ Լիւքսէմբուրգ[1]: Իսկ 9ը նահանգն է Բրաբան (Brabant), որ ամենաբազմամարդն է, ուր գտնւում է Բելգիայի մայրաքաղաքը Բրիւսէլ (Bruxelles, Ֆլամ. Brussel), Ֆլամաններն եւ վալոններ դրեթէ հաւասար են թիւով[2]:

Բելգիան եզական դիրք ունի նաեւ կրօնական դաւանութեան կողմից: Նա դերազանցապէս կաթոլիկ երկիր է: Ամբողջ կաթոլիկ աշխարհական կղերի թիւն է 6272 հոգի. այս թուի դիմաց կան միայն 44 բողոքական հովիւ եւ 17 հրէական Բարբի: Բացի դրանից Բելգիան հարուստ է նաեւ կաթոլիկական կրօնաւորական հաստատութիւններով, որոնց մէջ (1930ի վիճակագրութեամբ) կային 9858 կրօնաւոր: Սրանց 6674ը տեղացի է եւ 3184 օտարերկրացի: Մեծ բազմութեամբ կան նաեւ կաթոլիկ միանձնուհիներ (religieuses) որոնց ընդհանուր թիւն է 44,653. այս թուի մէջ՝ 34,330 տեղացի են եւ 10,317 օտարական: Ամբողջ միանձնուհիները նուիրուած են կրթական եւ մարդասիրական նպատակների, այսինքն դպրոցներ են պահում կամ հիւանդապահուհիներ են: Վերոյիշեալ 10,000ի չափ

---

[1] Պէտք չէ շփոթել սահմանակից «Լիւքսէմբուրգի Մեծ Դքսութեան» հետ (Grand Duché de Luxembourg), որ անկախ երկիր է եւ իր մասնային դրութեամբ միացած է Բելգիայի հետ:

[2] Annuaire Statistique de la Belgique et du Congo. Tome LIV. 1932.

կրօնաւորների մեծ մասը Ասիայի եւ Ափրիկէի խորքերում միսիոնէրական պաշտօն են վարում, դաստիարակելով եւ խնամելով, միեւնոյն ժամանակ նաեւ Քրիստոսի օրէնքը քարոզելով հեթանոսներին: Միմիայն բելգիական գաղութամայր Կոնգօյում 2319 կրօնաւոր կան: Քիչ չեն սրանց մէջ այնպիսիները, որոնք զոհ են գնացել եւ գնում են իրենց առաքելութեանն եւ անճնուիրութեանը, զանազան արկածների հանդիպելով, կամ չատ անգամ վարակուելով տարափոխիկ հիւանդութիւններից, մասնաւորապէս բորոտներ խնամելու ժամանակ:

Բելգիան միայն 1830ից սկսած, այն է հարիւր տարի է միայն, որ անկախ է: Հին ժամանակ այժմեան Բելգիա եւ Հոլլանդա անուններով յայտնի տէրութիւնները մի ընդհանուր երկիր էին, որ Հռոմայեցիների ժամանակ provincia Belgia *անունն էր կրում եւ այդ անունը պահել է մինչեւ ԺԶ. դար, երբ ներքին քաղաքական պատերազմ ծագելով հիւսիսային գաւառները անջատուեցան հարաւայիններից եւ կազմեցին առանձին քաղաքական իշխանութիւն, որ կոչուեց Հոլլանդա*[3]*: Այս անջատումից յետոյ հարաւային գաւառները խաղալիք դարձան դրացի տէրութիւնների ձեռքում: Աւստրիան, Գաղ-*

---

[3] *Ոսկան վարդապետ, 1636ին Ամստէրդամում (Հոլլանդա) տպած Աստուածաչունչի Ա. տպագրութեան Ցիշատակարանում գրում է. «Ես եւս չէ արաբեալ հասի ի կողմանս հիւսիսայնոյ, յերկիրս Բելգիկոյ, որ այժմ ասի Հոլլանտիայ»:*

դիան, Սպանեան եւ Հոլլանդան կուռում էին իրար հետ, նրանց տիրելու համար: ԺԸ. դարում Աւստրիան էր նրանց վրայ իշխում, երբ Գաղղիական Մեծ Յեղափոխութեան զօրքերը ներս մտնելով դուրս վանեցին Աւստրիացիներին եւ Գաղղիական իշխանութիւն հաստատեցին, կցելով նաեւ Լիէժի գաւառն, որ այդ ժամանակ Պրուսիայի ձեռքումն էր: Այս էլ երկար չտեւեց: Մեծն Նապոլէոնի անկումից յետոյ երբ Դաշնակիցները Վիեննայի Համագումարում, 1815ին, Նապոլէոնեան կայսրութեան երկիրների վիճակն էին որոշում, բելգիական հարաւային նահանգները միացրին հիւսիսայինն այն է Հոլլանդական նահանգներին եւ կազմեցին Մեծ Հոլլանդան, Օրանժի իշխանի միապետութեան տակ: Այս Հոլլանդացի միապետը անկարող եղաւ դրաւել հարաւայինների համակրութիւնը: Ժողովրդական դժգոհութիւնը Հոլլանդական իշխանութեան դէմ խոր արմատներ էր արձակել եւ երբ Գաղղիայում, 1830ին Յեղափոխութիւն ծագեցաւ, սա անմիջապէս իր ազդեցութիւնը տարածեց նաեւ հարեւան բելգիական գաւառների վրայ: Բելգիացիք 1830 Օգոստոս 24ին զէնքի դիմեցին, եւ Հոլլանդական իշխանութիւնը տապալելով Սեպտեմբեր 24ին իրենց սեպհական ժամանակաւոր կառավարութիւնը հիմնեցին: Միայն Անվէրս քաղաքն էր պաշարուած մնացել Հոլլանդացիների ձեռքում երբ Գաղղիացիները օգնութեան հասան: Գաղղիական 50,000նոց բանակը ստիպեց Հոլլանդացիներին

բոլորովին քաշուիլ Բելգիայից: Գաղղիայի այս պաշտպանութիւնը վերջնականապէս որոշեց երկրի բախտը: Բելգիացիք 1831 Յունիս 4ին Սաքս-Կոբուրգի Լէոպոլդ իշխանին հրաւիրեցին թագաւորելու, որից սկսում է Բելգիայի այժմեան արքայական տոհմը: Եւրոպական միւս մեծ պետութիւնները Աւստրիա, Ռուսաստան, Անգլիա եւ Պրուսիա՝ Լոնդոնում, նոյն տարին, Նոյեմբեր 15ին կայացած ժողովում ոչ միայն պաշտօնապէս ընդունեցան նոր Բելգիայի տէրութեան անկախութիւնն, այլ երաշխաւոր եղան նրա չէզոքութեանը: Մնացած եւրոպական տէրութիւնները էլ համաձայնեցան այս վճռին, 1839ին:

Ահա այսպէս՝ 1830ից ի վեր Բելգիան դարձաւ անկախ եւրոպական թագաւորութիւն: Նրա առաջին թագաւորը Լէոպոլդ Ա. վախճանեցաւ 1869ին. նրան յաջորդեց իր որդին Լէոպոլդ Բ.: Բելգիայի ժամանակակից՝ պատմութեան մէջ Լէոպոլդ Բ. կոչուած է «belge de coeur et d'âme»: Այս Մեծ Արքան (Le Grand Roi) *շատ վճռական դեր է կատարած Բելգիայի թէ քաղաքական եւ թէ մանաւանդ տնտեսական յառաջադիմութեանը մէջ: Լէոպոլդ Բ. մեռաւ 1909ին եւ տարօրինակ հանգամանքների բերմամբ նրան յաջորդեց իր եղբօրորդին Ալբէրդ Ա.*[4]:

---

[4] *Լէոպոլդ Բ.ի ժառանգն էր իր միակ որդին, բայց սա մեռաւ հօրը կենդանութեան ժամանակ: Գահաժառանգ պիտի լինէր Լէոպոլդի եղբայրը, բայց նա հրաժարուեց յօգուտ իր մեծ որդի Բօդուէնի, սա էլ վախճանուեց երբ դեռ Լէոպոլդ Բ. ողջ էր. որով Բո-*

Դեռ բոլորիս յիշողութեան մէջ է վերջին համաշխարհային պատերազմի մէջ Բելգիայի կատարած դերը: Գերմանական կայսերական բանակը Եւրոպական 4 մեծ տէրութիւնների Լոնդոնի 1831ի վերոյիշեալ չէզոքութեան դաշնագիրը Chiffon de papier համարելով մտաւ Բելգիա, որպէս զի աւարգել ինչպէս յոյս ունէր, եւ որքան կարելի է չուտով, Պարիսի վրայ արշաւէ: Բելգիացիք մինչեւ այն օրը իրենց չէզոքութիւնն անբռնաբարելի համարելով հանգիստ նստած էին: Իսկ այժմ սաստիկ զայրացած միացան իրենց «ասպետ» թագաւորի Ալբէրտի չուրջն, եւ իրենց փոքրիկ բանակովը ծառացան հսկայ թշնամու դէմ: Արդիւնքը յայտնի է: Անգլիա, ճիշդ ինչպէս մէկ դար յառաջ Գաղղիոյ դէմ էր ելել, որովհետեւ Գաղղիացիք գրաւել էին Բելգիայի ծովեզերքը, այս ազամ էլ նոյն պատճառով Գերմանիոյ դէմ ելաւ: Անգլիան սովոր է իր չահերի համար մինչեւ վերջին չունչը մաքառել: Գաղղիոյ դէմ պատերազմը 22 տարի էր տեւել եւ վերջացել էր Մեծն Նապոլէոնի դէպի Ս.

դուէնի կրտսեր եղբայրը Ալբէրտ բնական կարգով յաջորդեց նրան: Ալբէրտ (Albert) Ա. ծնած է 1875ին, ամուսնացած է բաւարեացի իշխանուհի Եղիսաբէթի հետ, ունի 3 զաւակ: Մեծ որդին Լէոպոլդ, գահաժառանգը, ծն. 1901ին, կրում է duc de Brabant տիտղոսը, երկրորդ որդին Կարոլոս (Charles), ծն. 1903ին, Comte de Flandre տիտղոսն ունի, որով վերանորոգուած են այս բելգիական մեծ զաւառների նախկին իշխանական տները: Իսկ արքայական զոյգի երրորդ զաւակը՝ Մարի-Ժոզէ (Marie-José) իշխանուհին ամուսնացած է Իտալիոյ թագաժառանգ Ումբէրտոյ իշխանի հետ:

Հեղինէ կղզին «ճանապարհուելովը»: Այս անգամ էլ վերջացաւ Վիլհէլմ կայսեր դէպի Հոլլանդա փախուստովը: «Բելգիան, գրում է նրա մեծ պատմագիրը, Պրոֆ. Հանրի Պիրէննը, ունեցաւ իր մարտիրոսներն եւ իր դիւցազները, սկսելով իր Եկեղեցու Պետից [5], իր մայրաքաղաքի պետից եւ իր լրտեսուհիներից: Նրա կրծքից ծնան հազարաւոր երիտասարդներ, որոնք երբ թշնամին դրաւել էր իրենց երկիրը, սողոսկելով անցան ելեկտրականացած երկաթէ թելերի ցանցն, որով չրջապատուած էին սահմանները, եւ գնացին, միանալու ազգային բանակին, կռուելու համար հայրենիքի թշնամու դէմ: Իսկ հերոսուհիներն իրրեւ «լրտեսներ» աներկիւղ կուրծք տուին թշնամի գնդակներին [6]»:

Դաշնակիցների յաղթութիւնից յետոյ Բելգիան ոչ միայն վերականգնեց իր անկա-

---

[5] *Այս պետը համբաւաւոր հայրենասէր կարդինալ* Մէրսիէն է (Mercier), *որ իր ազգու բողոքի ձայնը բարձրացրեց Հռոմում եւ Եւրոպային, նոյն իսկ երբ ինքը թշնամու խիստ հսկողութեան տակ էր: Այս մեծ կարդինալը* (le grand cardinal) *ինչպէս նրան կոչում էին, մեծ հեղինակութիւն ունէր Բելգիայում թէ արքայական տան, թէ կառավարութեան եւ թէ ժողովրդի վրայ: Եւ նա՝ պատերազմը վերջանալուց յետոյ, իր հեղինակութիւնը դործ դրաւ ի նպաստ պատերազմի զոհ օտարերկրացիների, որոնք մանաւանդ Ռուսները, մեծ թուով ապաստանեցան Բելգիա: Ես խորին երախտագիտութեամբ յիշում եմ այն սիրալիր ընդունելութիւնն, որ ցոյց տուաւ ինձ հանդուցեալ ազնուահոգի կարդինալը, երբ ես ներկայացայ իրեն 1923ին, Մալինում, ուր գտնւում է Բելգիոյ արքեպիսկոպոսական աթոռը, հայ դաղթականների դործերի առթիւ:*

[6] H. Pirenne, Histoire de Belgique. Bruxelles 1929, VII հատ., էջ 395:

խութիւնը նախկին սահմաններում, այլ երկու նախկին բելգիական գաւառ, Eupen *եւ* Malmedy, *Գերմանիայից առնուելով կցուեցան նրան: Պատերազմի տուած ուրիշ մի արդիւնքն էլ այն եղաւ, որ Բելգիայի չէզոքութեան դրութիւնը վերջացաւ եւ նա, զինուորական դաշնակցութեամբ կապուեց Գաղղիոյ հետ:*

Ցեղագրական *տեսակէտից հետաքրքրական է Բելգիայի ժողովրդական կազմը: Բելգիացիք, Զուիցէրեացիների նման, տարբեր ցեղերի միութիւն են ներկայացնում: Բելգիան երկար դարեր դրացի ազգերի երթեւեկութեանն եւ նաեւ ընդհարմանը դաշտ է ծառայել. այս կերպով տեղի է ունեցել ցեղերի բնական խառնուրդն այն տեղ: Տիրող դլխաւոր ցեղերն եղած են գերմանականն եւ րոմանականը կամ կելտականը* (celtique): *Ըստ այնմ էլ բելգիական ժողովուրդը կազմուել է այժմեան երկու մեծ հատուածից:* Ֆլամանները (flamand) *սերում են գերմանական ցեղից, իսկ վալոնները* (wallon) *րոմանականից: Եւ այս երկու հատուածների միութիւնից ստեղծուած է այսօրուան* բելգիական (belge) *ազգը: Ցեղային տարբերութիւնը արդելք չէ հանդիսացած նրանց միութեան, որովհետեւ վալլոն եւ Ֆլաման ապրել են երկար դարերի ընթացքում, միեւնոյն քաղաքական եւ կրօնական չրջանակի մէջ, պարապուել են միեւնոյն առեւտուրով, ունեցել են միեւնոյն օրէնսդրութիւնը եւ միեւնոյն հասարակական հաս-*

տատութիւնները: Այս «վալոն» կոչումը Ֆլամաններն են տուած իրենց բազմադարեան դրացիներին:

Բելգիացիները մի տեսակ միջնաքաղաքացիների (mitoyen) դերի մէջ են գտնուած, երկու մեծ քաղաքակրթեալ ազգերի, այն է Գերմանացիների եւ Գաղղիացիների մէջտեղը, որով իրենց մշակոյթն էլ կրում է այս երկու քաղաքակրթութիւնների ազդեցութիւնը[7]:

Դեռեւս ԺԴ. եւ ԺԵ. դարերում, երբ Բելգիան եւ Հոլլանդան դեռ միացած՝ Ստորին նահանգներ եւ նաեւ «Միացեալ Նահանգներ» (Provinces Unies) էին կոչւում, երկու լեզու եւ երկու գրականութիւն տիրում եւ զարգանում էին քովէ քով: Ռոմանական–գաղղիականն, որ գլխաւորաբար երկրի ազնուական դասակարգին էր յատուկ եւ գերմանական platt-deutsch կոչուած գաւառաբարբառն, որ քաղենի ժողովուրդի խօսածն էր: ԺՁ. դարից յետոյ երբ Բելգիան առանձնացաւ, այս վերջին բարբառը հետզհետէ մշակուելով դարձաւ այժմեան փլամերէնը[8]: Բայց որովհետեւ գաղղիերէնը համաշխարհային լեզու է, որ խօսում եւ ուսանում են նաեւ Ֆլամանները, ուստի ժամանակակից նշանաւոր Ֆլաման հեղինակներ՝ իրենց գրական յայտնի գործերը գրել են գաղղիերէն լեզուով եւ ոչ Թէ Ֆլաման-

[7] Pirenne, Անդ, Ա. հատոր, էջ 158:

[8] Գաղղիերէնում գործածւում է en flamand, en wallon. բայց իրենք, Ֆլամանները ասում են՝ ֆլամերէն, Ֆլամական (vlaamsche) եւ վալական (waalsche) ոչ Թէ վալոնական:

ներէն, ինչպէս են Էմիլ Վէրհառն (Emil Verhaeren) բանաստեղծն եւ Մօրիս Մէտէրլինկ (Maeterlinck) թատերագիրը:

Ըստ այսմ Բելգիան երկու պաշտօնական լեզու ունի — գաղղիերէնն եւ ֆլամերէնը: Բոլոր պաշտօնական գրագրութիւնները կատարուում են այս երկու լեզուով միանգամայն: Երկիրը կոչուում է գաղղիերէն Belgique եւ ֆլամաներէն België (հնչուում է Բելղիէ): Տարբեր — թէեւ իրարից ոչ շատ հեռու անուններ են կրում նաեւ քաղաքները. Anvers = Antwerpen, Bruxelles = Brüssel, Bruges = Brugge եւ այլն: Եւ այս՝ միեւնոյն երկրի, միեւնոյն հայրենիքի զաւակներն շատ նախանձախնդիր են իւրաքանչիւրն իր լեզուին, իր գրականութեան եւ իր ցեղական մի քանի յատկութիւններին: Բայց երկուքն էլ Բելգիացի = belge ընդհանուր անունն են կրում եւ անձնուէր են ընդհանուր հայրենիքին, եթէ բայց թողնենք ֆլամաննների մի չնչին տոկոսն, որ զուտ ֆլամանական (flamingant) զգածմունք ունի եւ իբրեւ քաղաքական նպատակ՝ աւելորդ ֆլանդրիա է պահանջում եւ կոչուում է frontiste:

Բելգիական ժողովրդական երգն ասում է.

Flamand, Wallon, ce ne sont là que des prénoms,
Belge est notre nom de familles.

Գեղարուեստի առումէից, հետաքրքրական է, որ ԺԹ. դարից Բելգիան ունեցել է իր սեպհական, ինքնուրոյն մշակոյթը, եւ այս՝ Բելգիացիների վաստքն է կազմում: Առաջին

անգամ Ֆլաման վան էյք (Van Eyck) եղբայր-ներն եղան, որ ԺԴ. դարի Բ. կէսին, առաջին անգամ իւղաներկը գործածեցին իրենց պատկերներում: ԺԵ. դարում նոյնպէս Ֆլաման Quintin Metzis արուեստագէտը (ծն. 1442) նշանաւոր է հանդիսացած: Նրա գլուխ գործոցը՝ «Քրիստոսի թաղումը» 3 մասից բաղկացած (triptique) ընդհանուր հիացման առարկայ է միշտ (Անվէրսի նկարչական թանգարանում): Ֆլաման էր նոյնպէս աշխարհահռչակ Pierre-Paul Rubens, որ ԺԷ. դարի ամենամեծ նկարիչն էր: Ռուբէնս՝ Իտալիայում կատարելագործուած, յետոյ 30 տարեկան հասակում դարձած է իր հայրենիք եւ Ֆլամանական գեղարուեստին մղում տուած:

Բելգիան առանձնապէս կարեւոր է իբրեւ առեւտրական երկիր, ուր մեծապէս զարգացած է ճարտարարուեստն (industrie) եւ գործարանական արդիւնաբերութիւնը: Ոչ մի տեղ, այսչափ տարածութեան վրայ այս քանակութեամբ եւ շրջանառութեամբ գործարաններ չկան: Բելգիայի գլխաւոր արդիւնաբերութիւնը հանքածուխն եւ մետաղագործութիւնն է: Ունի ընդարձակ ածխահանքեր, որոնք շահագործւում են վերջին կատարելագործուած եղանակներով: Առատ են նոյնպէս մետաղական հանքերը՝ ցինկ (zinc), կապար, մանգանէզ եւ պիրիտ (pyrite), չհաշուելով դեռ իր գաղութի, Կոնգոյի այլեւայլ հանքերը: Երկրագործութեան եւ գիւղատնտեսական բերքերի համար քիչ տեղ է մնացած, որով

3107-85

Բելգիան ստիպուած է իր ապրուստի համար պէտք եղած ուտելիքը դրսից հայթհայթել: Այս պատճառով, Բելգիան մեծապէս կարօտ է օտար չուկաների, որպէս զի իր դործարանական արդիւնքները ծախելով կամ փոխանակելով իրեն անհրաժեշտ եղած ուտելիքն եւ դործարանական հում նիւթերը հոգայ:

Պաշտօնական տղրիւրի մը համաձայն, 1931ին, ընդհանուր աշխարհի առեւտրի 3% այս փոքրիկ երկրի ձեռքումն էր: Համաչխարհային առեւտրի մէջ Անգլիայից, Հիւսիսային Ամերիկայից, Գերմանիայից եւ Գաղղիայից անմիջապէս յետոյ Բելգիան է դալիս [9]:

Թողնելով Ասիան, Հարաւային Ամերիկան, Կանադան, Եգիպտոսն եւ Եւրոպական երկիրները, ուր Բելգիացիք առեւտրական մեծ չահեր են ստեղծած, ես պիտի խօսիմ Ռուսաստանում եւ Կովկասում նրանց ձեռնարկութիւնների վրայ: Բելգիական դրամագլուխը Ռուսաստան մտաւ 1890ին: Բելգիացիք նախ կենդրոնական Ռուսաստանում կանդնեցրին սոդայի (soude) առաջին մեծ դործարանը: Հարաւային Ռուսաստանում կէրչի մօտ չահադործեցին Կրիվօյ-Ռոդի (Кривой Рог = ծուռ եղջիւր կոչուած) հանքերն եւ ապա Դոն գետի չրջակայքում ընդարձակ հանքածուխի եւ երկաթի հանքերի չրջաններում մեծ դործարաններ կանդնելով սկսան չահադործել, տակուն

---

[9] *Բելգիայի արտաքին դործերի մինիստր Պօլ Հայմանսի* (Hymans) *դեկուցումը Լոնդոնի Համաչխարհային Տնտեսական ժողովին, 1933 Յունիս 13ին:*

կերպով: Լէոպոլդ Բ.՝ քաջալերուած իր հպատակներէն այս ձեռնարկութիւններէն, 1905ին, Լիէժի Յուցահանդէսի առթիւ հրաւիրեց «Համաշխարհային Տնտեսական Ծաւալման» համագումարը (Congrès d'Expansion économique mondiale), որին մասնակցեցաւ 3000 անդամ [10]:

Ռուսաստանում մինչեւ 1914, Բելգիացիք վերոյիշեալ ձեռնարկութիւնների համար յատկացրել էին մօտ երկուք եւ կէս միլիարդ ոսկի ֆրանկի դրամագլուխ: Նրանց վաստակութիւնը Ռուսաստանի ապագայի վրայ այնքան մեծ էր եւ ուժեղ, որ դրանից զատ նրանք դնել էին նաեւ ռուսական պետական կամ պետութիւնից երաշխաւորուած արժէթղթեր մօտ երեք միլիարդ ոսկի ֆրանկ գումարի:

Բելգիացիք իրենց առեւտրական ձեռնէբէց ոգին բերին մինչեւ Կովկաս: Նրանք էին, որ կառուցին Կովկասի մայրաքաղաքում, Թիֆլիսում էլեկտրական տրամուէյն (tramway): Մի մեծ նորութիւն ներմուծեցին նրանք նաեւ Թիֆլիսի Ս. Դաւիթ կոչուած լերան գլուխը պարանաւոր երկաթուղի (chemin de fer funiculaire) բարձրացնելով, որով Թիֆլիսցիք հնարաւորութիւն ունեցան մատչելի կերպով եւ արագօրէն բարձրանալ թէ իրենց քաղաքի բարձունքն, ուսկից հիանալի տեսարան է պարզւում լայնարձակ հորիզոնի վրայ, մինչեւ Կովկասեան լեռնաշղթայի հոչակաւոր կաղբէկ սարագագաթն, եւ թէ չուտ չուտ

[10] The world's Congress, Economic Journal. London 1906.

այցելել այդ մեծ բլուրի լանջքի մէջ հանդչող Գրիգորեդով ռուս մեծ բանաստեղծի շիրմին [11]:

Այս երկու մեծ ձեռնարկութիւնները էլ բելգիական ընկերութիւնը յաջող կերպով չափազրծեց որոշեալ ժամանակամիջոցում: Թիֆլիս քաղաքի եւ Բելգիացիների մէջ կապուած պայմանագրի համաձայն Քաղաքն իրաւունք ունէր, որոշեալ ժամանակամիջոցին վերջը, գնել ամբողջ ձեռնարկութիւնը: Քաղաքային վարչութիւնն, որ ամբողջապէս Հայերից էր բաղկացած քաղաքապետ Ը. Վէրմիշեանի նախաձեռնութեամբ, օգտուեց այս պայմանից, գնեց այս բելգիական երկաթուղին եւ ինքն սկսաւ շահագործել, վարիչ-անօրէն նշանակելով այն հայ բարձր պաշտօնեան, որ երկար ժամանակ այդ գործում դրաւնուելով, շատ լաւ ծանօթ էր շահագործման պայմաններին [12]: Այսպէս չարունակուեց

---

[11] Այս մեծ բլուրը, տեղացիք կոչում են — Մթածմինդա, որ վրացերէն նշանակում է Սուրբ Լեռ: Իսկ այնտեղ թաղուած ռուս բանաստեղծն է Գրիբոեդով, որ ամուսնացած էր վրացի իշխանուհու հետ: Այս նշանաւոր մտաւորականի գլուխ-գործոցն է Горе от ума ռուսերէն ծանօթ թատերգութիւնը, թարգմանուած նաեւ հայերէն՝ «Խելքից պատուհաս» վերնագրով (աւելի ճիշդն է՝ խելօքութեան փորձանքը) եւ շատ է խաղացուած հայկական բեմի վրայ: Նա ռուսական դեսպան էր Թէհերանում անցեալ դարում եւ այնտեղ սպանուեց ժողովրդական յուզման ժամանակ, 1829ին:

[12] Այս հայ պաշտօնեան էր Տրապիզոնցի Ծէրգլինանդ Թախթաջեան, որ Կովկասում թրքական հիւպատոսական պաշտօններ է վարած: Պատերազմից յետոյ, 1922ին նա Հայաստանի Հանրապետութեան դաշնակցական կառավարութեան ժամանակ նրա ներկայացու-

մինչեւ վերջին մեծ պատերազմն, երբ այնուհետեւ Ռուսաստանում եւ Կովկասում, ամէն ինչ յեղաշրջուեց:

Բելգիան շատ մեծ յառաջադիմութիւն է կատարած տնտեսական եւ առեւտրական ասպարէզում, մանաւանդ Լէոպոլդ Բ.ի թագաւորութեան չրջանում եւ այնուհետեւ: Այս տնտեսագէտ արքան է եղած Բելգիացիներին դէպի արտաքին աշխարհ, եւ յատկապէս գաղութային գործունէութեան մղողը: Նա իր այս ծրագիրը յամառութեամբ յառաջ է տարած եւ իրականացրած, նոյն իսկ իր հպատակների սկզբնական անվստահութեանը եւ անտարբերութեանը հակառակ: Այս բանին ապացոյց է բելգիական Կոնգօ գաղութը, որի պատմութիւնը մեծապէս չահեկան է: Լէոպոլդ Բ. իր աչքը դարձրել էր կենդրոնական Աֆրիկէի վրայ եւ ամէն գնով աշխատում էր օգտուիլ այդ ընդարձակ տարածութեան մէջ գտնուած ազատ հողերից: Այս նպատակով նա՝ 1876ին Բրիւքսէլում գումարեց Աշխարհագրական ժողով, որի նպատակն էր կենդրոնական Աֆրիկէն հետազօտել եւ ըստ այնմ քաղաքակրթութիւն մտցընել այնտեղ: Երբ համբաւաւոր անգլիացի հետախուզողը Ստէնլի (Stanley) յաջողեցաւ ամբողջ կենդրոնական Աֆրիկէն կտրել անցնիլ Կոնգօ գետի վրայ,

---

ցիչն եւ դիւանագիտական գործակալն էր Կ. Պոլսում: Երբ Դաշնակիցները թողին Կ. Պոլիսն եւ Թուրքերը վերստին գրաւեցին՝ Թախթաջեան ստիպուեց հեռանալ եւ ապաստանեցաւ Յունաստան, ուր եւ վախճանեցաւ հետեւեալ տարին:

Լէոպոլդ իր քով կանչեց նրան եւ բազմաթիւ նոր գործակիցներով եւս ուղարկեց, որոշ յանձնարարութիւններ տալով: Ստէնլիի այս պատուիրակութիւնը՝ Լէոպոլդից ստացած հրահանգի համաձայն, անմիջական յարաբերութեան մէջ մտաւ ափրիկական սեւամորթ ցեղապետների հետ եւ չորս հարիւր պայմանագիր կնքեց նրանց հետ: Այն ժամանակ ոչ ոք կարեւորութիւն տուաւ այս տարօրինակ նկատուած պայմանագիրներին: Նոյն իսկ Բելգիացիք երազ էին համարում իրենց թագաւորի այս ափրիկական ծրագիրները: Եւ սակայն այս «երազը» լիովին իրականացաւ: Լէոպոլդ 1882ին հիմնեց «Կոնգոյի Միջազգային Ընկերակցութիւնը» (Association Internationale du Congo), որ 3 տարի վերջը միջազգային քաղաքական իշխանութիւն դարձաւ, իբրեւ «Կոնգոյի անկախ պետութիւն» (Etat libre du Congo) եւ այդպէս էլ ճանաչուեց պաշտօնապէս Բերլինի Համաժողովում: Իսկ 1908ին այս «անկախ պետութիւնը» յանձնուեց Բելգիային իբրեւ սեփականութիւն, որով փոքրիկ Բելգիան տէր դարձաւ 80 անգամ աւելի ընդարձակ եւ իր հանքերովը ու այլ տնտեսական ակնկալութիւններովը հարուստ՝ մի մեծ դաղութի: Այն Ափրիկէն, որ 1885ին քարտէսների վրայ իբրեւ պարապ տեղ էր նկատուած, 10—15 տարուան մէջ՝ հետազօտուած, խաղաղացրած, եւ վարչական ու դատական կազմակերպութիւն էր ստացած: Կոնգոյի վրայ չոգենաւներ էին բանում եւ ներքին գա-

ւառները կապուած էին ծովեզերքի հետ, երկաթուղու միջոցով: Սկսել էին չահագործուիլ նրա հողերն, հանքերն, կենդանիները [13]:

Վերջին (1930) պաշտօնական վիճակագրութեան համաձայն բնիկ սեւամորթների թիւն է Կոնգօյում 9·584,000, իսկ եւրոպացիներինը միայն 25,179: Այս վերջիններից 2600 հոգին բելգիական պետական պաշտօնեաներ են. մնացածները առեւտրականներ եւ այլ մասնաւոր անհատներ: Այս փոքր թիւը բաւական է լինում 10 միլիոնի չափ բնիկներին կառավարելու համար:

Բելգիան ամէն կերպ ճգնում է օգտուիլ իր այս մեծ գաղթավայրից, բայց միեւնոյն ժամանակ ամենամեծ հոգածութիւն է տածում նրա առողջապահական բարւոքման, որ անհրաժեշտ է, նկատելով տեղական կլիմայական պայմանները, եւ նրա կրթական գործին, եւ մինչեւ հիմայ մայր երկիրը աւելի է ծախսած Կոնգօյի վրայ քան թէ այնտեղից ստացած:

Բելգիան 1880ին տօնեց իր անկախութեան 50ամեակը Բրիւքսէլի բարձունքի վրայ կանգնելով Cinquantenaire *կոչուած երկու մեծ բեւեռից բաղկացած դեղեցիկ եւ ընդարձակ չինութիւնն, որի առջեւը մի մեծ պարտէզ է տարածում: Այս չինութեան մէջ են դետեղուած Բելգիայի նշանաւոր թանգարաններին մի*

---

[13] Dechesne, Histoire Economique et sociale de la Belgique. Liège1932, էջ 487—489:

մասը, հնագիտական, եգիպտական, ազգագրական եւ գինուորական. եւ դեռ չատ ազատ տեղ կայ ծածկած, ուր պարբերաբար տեղի ունին զանազան ցուցահանդէսներ: Այն տեղ է գտնում նաեւ մի այն Բրիւքսէլի յատուկ Palais Mondialը, որ կատարեալ, չօշափելի հանրագիտարան է բոլոր հին եւ նոր ազգերի պատմութեան եւ առհասարակ գիտութեանց զանազան ճիւղերի վերաբերեալ: Իսկ 1930ին, ժողովրդական խրախճանքով տօնուեց անկախութեան հարիւրամեակը: Այս առթիւ սարքուեցան երկու համաշխարհային ցուցահանդէսներ. մէկը Ֆլամանական բաժնի գլխաւոր քաղաք Անտվէրպէնում, որ միեւնոյն ժամանակ Բելգիայի ամենամեծ նաւահանգիստն է, նաւագնացութեան, գաղութային եւ առեւտրական յարաբերութիւնների վերաբերեալ: Միւսը Վալոնների մայրաքաղաք եւ գործարանական չարժման կենդրոնավայր Լիէժում, ճարտարարուեստի եւ գործարանական արդիւնաբերութեան յատուկ: Իսկ 1935ին պիտի կայանայ Բրիւքսէլում համաշխարհային ընդհանուր ցուցահանդէս, որի համար արդէն մեծ պատրաստութիւններ են տեսնուում:

Բելգիացիք իրրեւ կրթիչ տարր եւս տարածուած են աշխարհի ամէն կողմը: Ամերիկայում, Աֆրիկէում, Եգիպտոսում, նոյն իսկ Սիամում, նրանք նշանաւոր համալսարանականներ, մասնաւորաբար օրէնագէտներ ունին: Պարսկաստան Բելգիայից էր հրաւիրել

իր Մաքսատունը կազմակերպելու համար ընդունակ անհատներ:

Բելգիացիք ընդհանրապէս են համակրելի յատկութիւններով. նրանց մէջ տիրում է՝ սէր դէպի ազատութիւնը, եռանդ դէպ ի աշխատանքը, եւ մեծ ընդունակութիւն տնտեսական գործունէութեան մէջ: Բելգիայի համար առաւելութիւն է եղած այն պարագան, որ սահմանակից եւ միջանցք լինելով բարձր քաղաքակրթութեան տէր ազգերի, ինչպէս են գերմանականն եւ գաղղիականը, ժողովուրդը դիւրութեամբ եւ բնական կերպով ազդուած է այդ ազգերի մտաւոր եւ քաղաքակրթական չարժումից եւ մասնակցած նրանց բարոյական կեանքին: Միեւնոյն ժամանակ, երկիրը՝ եւրոպական ազգագրական ալիքների հանդիպման վայր լինելով, բելգիական ժողովուրդն, իբրեւ կրկին ցեղ, անընդհատ նորոգուած է եւ ճոխացած նորամուտ ուժեղ տարրերով: Այս հանգամանքը մեծ ազդակ է եղած նրա տնտեսական ընդունակութիւնների զարգացման: Այսօր Բելգիացիք, ընդհանուր տիրող չարժիքի համաձայն, լուրջ, աչխատասէր եւ պարկեչտ ժողովուրդ են:

Այս տողերը գրուած էին արդէն, երբ պատահեց դիւցազն արքայ Ալբէրտի արկածային մահը, 1934 Փետրուար 18ին: Ասպետ-արքայի (le roi chevalier) այս անակնկալ վախճանը ընդհանուր վիչտ պատճառեց ոչ միայն իր նախկին եւ ներկայ դաչնակիցներին, այլ ամբողջ քաղաքակիրթ աչխարհի: Նրան յա-

Ջորջեց պահաժառանգ Լէոպոլդ Գ. արքան: Հանգուցեալ Ալբէրտ թագաւորն եւ Եղիսաբէթ թագուհին 1933ին Երուսաղէմ եղած ժամանակ այցելութիւն տուին Սրբոց Յակոբեանց Հայ Առաքելական Աթոռին եւ պատշաճաւոր յարգանքներով ընդունուեցան Թորգոմ սրբազան պատրիարքի եւ ամբողջ Միաբանութեան կողմից: Այս այցելութեամբ «ասպետ արքան» ցոյց տուաւ իր համակրանքը հայ ազգի եւ եկեղեցւոյ հանդէպ:

Բ. ԳԼՈՒԽ

Բելգիա այցելող առաջին հայը, Անտիոքի հրաշագործ Մակար եպիսկոպոսը: Նրա ուխտը եւ տաճարը Երուսաղէմում: Եւրոպայում ճանապարհորդութիւնը: Բելգիայի ժանտախտը: Մակարի մահը, սրբացումն եւ փառաւոր յուղարկաւորութիւնը:

—

Հայ – բելգիական յարաբերութիւնների սկիզբը դնողն եղած է մի հայ հոգեւորական, ԺԱ. դարի առաջին տարիներում: Այս հոգեւորականն այնպիսի բարերար ազդեցութիւն է ունեցած իր նոր միջավայրի վրայ, որ նրա յիշատակն անմոռաց է մնացած այն օրից ի վեր եւ մինչեւ հիմայ էլ ամենաբարձր յարգանքի առարկայ է: Ո՞վ էր այս Հայը:

Ժ. դարում, Միքայէլ անունով մի հայ իշխան իր Մարիամ կնոջը հետ Հայաստանից գաղթում է Անտիոք, ուր արդէն՝ նորեկ Հայերից մի պատկառելի գաղութ էր կազմակերպուել[1]*: Այն տեղ ծնւում է Միքայէլի*

[1] *Ինչպէս յայտնի է բազմաթիւ Հայեր, իրենց բնավայրում անհանդիստ, Ժ. դարից սկսած գաղթել են Հայաստանից դէպի Միջերկրականի ծովեզերքը եւ Տաւրոսի չրջակայքն, որ այն ժամանակ բիւզանդական*

արու զաւակը: Անտիոքի եպիսկոպոսը Մակար՝ մկրտում է նրան եւ իր անունն է տալիս: Այս կերպով փոքրիկ Մակարը դառնում է մեծ Մակարի հոգեւոր զաւակը: Եպիսկոպոսը խնամք է տանում նրա դաստիարակութեան եւ երբ իր փոքր Մակարը մեծանում է, նրան եկեղեցական կարգ է տալիս, եւ որոշում է, որ սա պիտի փոխարինէ նրան, Անտիոքի աթոռի վրայ:

Շնորհիւ այս հոգածութեան փոքրիկ Մակար ստացել էր ընտիր կրթութիւն եւ բացի իր մայրենի հայերէնից սովորել էր նաեւ յունարէն եւ ասորերէն: Բարեկիրթ, համեստ եւ խելացի, Մակար ամէնքի սիրելին էր. թէ հայն եւ թէ օտարը գովում եւ փառաբանում էին նրան: Եւ այս առթիւ նրա պատմիչները պիտի գովաբանէին նաեւ նրան ծնող երկիրը, Հայաստանը:

Մեր մեծ պատմաբանը Հ. Միք. Վ. Զամչեան, դեղեցիկ կերպով թարգմանել է պատմիչ լատին արբայի այս հատուածը իր Հայոց Պատմութեան մէջ.

«Ակն ադնուագին թագաւորական, պերճապայծառ վայելչութեան Հայաստանեայց, զոր ոչ ձեռն արուեստահնար ճարտարի, այլ ամենեցուն ճարտարապետեան Աստուած ընդելու-

---

կայսրութեան մասն էր կազմում: Հետզհետէ նոր գաղթականների գալով, Տաւրոսի եւ Կիլիկիայի հայութիւնն այնքան ուժեղացաւ, որ Ռուբէն իշխանի առաջնորդութեան տակ նոր քաղաքական իշխանութիւն կազմակերպեց, որ նոյն իսկ եւրոպական ազգերին օգնութեան պիտի հասնէր յանուն Քրիստոնէութեան:

դեալ յերիւրեաց յիւրականն թաղ. վասք ծնողաց եւ յոյս ակնկալութեան սիրելեաց, պանծալի մանուկն Մակար, չառաւիղեալ յաղնիւ զարմէ աւազաց իւրոյ աչխարհին...: Ցետ Աստուծոյ արարչին իւրոյ՝ ի լոյս ընծայեցուցիչ սորա եղեւ Հայաստան աշխարհ. աշխարհ՝ որ ի սկզբանց եւ այսր ծնողն է բազմութեան ազատ արանց քաջազանց, որ հզօր պաշտպանն է հաւատոյ եւ ճշմարտութեան եւ ամենայն արիական առաքինութեանց. որում ի մէջ այլոց պանծալի բարելաւութեանց իւրոց վիճակեցաւ եւ այսր անկշռելի բարւոյ լինել ընծիւղիչ յայսմ եւ ի սոյն ժամանակի [2]»:

Մակար մօտ 30 տարեկան էր, երբ վախճանում է նրա խնամակալն Անտիոքի առաջնորդ Մակարիոս եպիսկոպոսն որ իր մահուան անկողնում յանձնարարում է, որ իր տեղը եպիսկոպոս դնեն հայ երիտասարդ Մակարին: Այս կերպով մեր Մակարը բարձրանում է Անտիոքի եպիսկոպոսութեան աստիճանին: Նորընտիր Առաջնորդն իր հոգածութեան դլխաւոր առարկայ է դարձնում բարեգործութիւնը: *Տնանկները, կոյրերը, կաղերը, համրներն եւ առհասարակ բոլոր կարօտեալները լցուում են նրա բնակարանը եւ նա անտրտունջ ու սիրով հոգում է նրանց բոլորի պէտքերը: Բայց մինչն նրանց անհետական առօրեայ կարօտութիւնները չէ, որ նա խնամում է, այլ նա բժշկում է նաեւ նրանց մարմնական ախտերը:*

---

[2] Զամչեան, Բ. հատոր, էջ 858:

Նրա այս բարի գործերն այնքան մեծ չափեր են ընդունում, որ նրա հրաշագործութեան համբաւը տարածւում է բովանդակ Ասորիքում եւ Փոքր Հայքում, եւ ահա այն տեղերից եւս խումբ խումբ հիւանդներ դիմում են նրան...: Մակար միշտ համեստութեամբ ասում էր թէ բժշկուածներն իր չնորհիւ չէ, որ առողջանում էին, այլ ուրիշ բնական կամ դերբնական պատճառներից ազդուած: Նրա անունը հռչակուել էր ամէն կողմ իբրեւ «այր Աստուծոյ»: Նա այս աշխարհի փառքից խոյս տալու համար թողնում է Անտիոքն եւ չորս հայ ընկերների հետ ուխտի է գնում Երուսաղէմ: Նա վաղուց որոշել էր այս ուղեւորութիւնը կատարել, որովհետեւ մի մեծ եւ դժուարին ծրագիր էր յղացել. երթալ Ս. Երկիր եւ այնտեղ Աստուծոյ խօսքը քարոզել Հրէաներին եւ Մահմեդականներին: Այս նպատակը յաջող կերպով իրագործելու համար նա սովորել էր նաեւ արաբերէն եւ երբայեցերէն: Ի սկզբան «անհաւատները» նրան բռնում են Երուսաղէմում եւ սաստկօրէն տանջում. պրկում են խաչի վրայ, մերկ կուրծքի վրայ հրաշէկ քար են դնում եւ այլ չարչարանքների են մատնում: «Այրն Աստուծոյ» դիմանում է այս բոլորին. հրեշտակի միջոցով ազատւում է իր բանտից եւ այնուհետեւ ազատօրէն քարոզելով կարողանում է բազմաթիւ անհաւատներ քրիստոնեայ դարձնել:

Անտիոքի աթոռը չարունակում էր թափուր մնալ, նրա բացակայութեան ժամանակ.

ուսոի պատգամաւորներ են գալիս նրան հրաւիրելու: Սակայն Մակար իր առաքելական նոր գործունէութեան եռանդից մղուած, հրաժարում է Անտիոքի աթոռից եւ աւելի մեծ գործի ձեռնարկում: Նա ծրագրում է Արեւելքը թողնելով անցնել Եւրոպա եւ այնտեղ իր կենդանի օրինակով բացատրել արեւմտեան քրիստոնեաներին Ս. Երկրի իսկական վիճակը: Եւ նա իրագործում է իր ծրագիրը: Հետզհետէ յառաջանալով Եւրոպայում, ամէն տեղ պատմում է Քրիստոսի Ծննդեան եւ Մահուան վայրերի տխուր կացութիւնը մահմետական գերիշխանութեան տակ եւ քրիստոնեայ ուխտաւորների վրայ գործ դրուած բռնութիւնները: Իսկ Գերմանիայից անցնելու ժամանակ այս՝ դեռ եւս «բարբարոս երկիրներում նա Յիսուս Քրիստոսի օրէնքն է քարոզել[3]»:

Այսպէս իր բոլոր անցած եւրոպական երկիրներում քարոզելով եւ խրատ կարդալով, 1011ին գալիս է Բելգիայի Գէնտ կամ Գան (Gand) քաղաքն, ուր հիւրընկալւում է Ս. Բաւոն կոչուած աբբայութեան (abbaye) մէջ:

Հետեւեալ տարին մի սաստիկ համաճարակ է սկսում, որ աւերում է եւ մեծ զոհեր տանում: Էսկօ (Escaut) գետի ամբողջ եղերքի բնակչութիւնը վարակուել էր ժանտախտով: Մակար եպիսկոպոս անձնուէր կերպով խնամում է ժանտախտից բռնուած ամենածանր հիւանդներին: Ամէնքը հիացած են նրա զուտ

---

[3] Michaud, Histoire des Croisades. Paris 1854. Eclaircissements, էջ 436—437:

քրիստոնէական բոլորանուէր կարեկցութեան վրայ: Իսկ Մակար ասում է. «Ես իմ անձս պիտի չխնայեմ, որովհետեւ ժանտախտը պիտի դադրի միայն այն ժամանակ երբ ես էլ դոհ գնամ»: Մակար վարակւում է եւ դոհ-ւում իր անձնուիրութեան: Ինչպէս որ նա դուշակել էր, նա իր մաքուր հոգին աւանդում է թէ չէ, ժանտախտն էլ դադարում է: Գոնէ այսպէս են վկայում նրա ժամանակակիցները:

Մակարի դերեզմանը դառնում է ուխտա-տեղի, ուր այնուհետեւ խումբ խումբ հիւանդ-ներ են գալիս նրա բարեխօսութիւնն աղեր-սելու եւ շատերը բժշկւում են: Լուրը տա-րածւում է. Մակարի անունը հռչակւում է ամէն տեղ: Հռոմ քննութիւն է նշանակում, որ տարբիներ է տեւում: Երկար ձեւակեր-պութիւններից յետոյ Հռոմի բարձրագոյն Ատեանը ընդունում է Անտիոքի հայ եպիսկո-պոս Մակարի հրաշագործ լինելը, ըստ պատ-շաճի եկեղեցական օրէնքով արբացնում է նրան եւ արժանացնում է խորանի վրայ պա-տուելու պատուին: Այս վճռին վրայ, 1067ին նրա մարմինը հանում են անշուք դերեզմանից եւ շքեղ հանդէսով, մեծ յուզարկաւորու-թեամբ տեղափոխում են նրա հռչակին վայել տեղ: Այս յուզարկաւորութեան մասնակցել են ոչ միայն Բելգիայի բոլոր եկեղեցական եւ աշխարհական իշխանաւորները, այլ նոյն ինքն Գաղղիոյ թագաւորը, Փիլիպպոս Ա. անձամբ:

Հայ սուրբի նշխարքը սիրւում է ամէն կողմ. նրա անունով խորաններ են կանգնում

եկեղեցիներում. բարեպաշտ Եւրոպացիներ նրա պատուին կրօնական եղբայրակցութիւններ են հիմնում: Հայ Սուրբ Մակարը մտած է լատինական Տօնացոյցի մէջ եւ մինչեւ այսօր տօնւում է ամէն տարի Ապրիլ 10ին, Լատիներէն՝ S. Macarius իսկ գաղղ. Saint Macaire կոչումով:

Այս բոլորը՝ պատմուած է Բրիւքսէլի հանրածանօթ Բոլլանդեանց (Bollandistes S. J.) հրատարակած համբաւաւոր լատիներէն Վարք Սրբոցի մէջ[4], որոնց վրայ աւելի մանրամասն պիտի խօսիմ յետոյ:

Այն աբբայութիւնը կամ վանքը, ուր ապրել եւ մեռել է Մակար, այժմ կործանուած է տաճարը հնութեան հետեւանքով. բայց նրա յաճախած եկեղեցին, վերանորոգուած, այժմ էլ Ֆլանդրայի Գան քաղաքի մայր եկեղեցին է:

Թէ ինչպիսի յարգանք են տածում Բելգիացի պատմիչները հայ սուրբի մասին, երեւում է այն տողերից, որ տալիս է նրան ժամանակակից մի կենսագրող. «Ոչ ոսկի Արաբիոյ, այլ Ծաղիկ Հայաստանի, սուգ Ասորիքի (որովհետեւ թողել, հեռացել էր այնտեղից), փառք Ֆլանդրայի եւ զարդ Գանդցիների» եւ այլն[5]:

Ս. Մակար մինչեւ հիմայ էլ յարգուած է

---

[4] Acta Sanctorum, t. I. Aprilis (1675), էջ 873—896:

[5] Ահա լատիներէն բնագիրը. „Non aurum Arabiae, sed Armeniae flos et Syriae luctus, gloria Flandriae et Gandensium decus, modo regnans in caelis եւ այլն: Անդ, էջ 891:

Բելգիայում երբեւ ժանտախտի դէմ պաշտպան սուրբ :

Հետաքրքրուողները կարող են աւելի մանրամասն տեղեկութիւններ գտնել բացի յիշեալ Acta Sanctorumից դիմելով նաեւ նոյն Բոլլանդիստների Bibliotheca Hagiographica Latina, Bruxelles 1900—1901, էջ 757, ուր Macarius ep. Antiochiae Armeniae խորագրի տակ նչանակուած են նրա երեք պատմիչների գործերը :

Բելգիա ոտք կոխող այս առաջին հայի մահուանից եւ վախաւորումից յետոյ, նոյն ԺԱ. դարի վերջում, Բելգիացի իշխաններ եւ կամաւորներ մեծ բազմութեամբ, կարծես թէ վոխ այցելութեան են գնացել Մակարի երկիրն եւ այնտեղ հազարներով իրենց կեանքն են գոհել, յանուն նոյն քրիստոնէական գաղափարի, Dieu le veut («Աստուած այսպէս կ'ուզէ») բացականչելով, ինչպէս պիտի տեսնենք յետագայ Գլխում :

Գ. ԳԼՈՒԽ

Առաջին խաչակրաց արշաւանքը: Կիլիկիայի Կոստանդին իշխանի եւ այլոց աջակցութիւնը: Բելգիացի Բալդուին (կամ Բոդուէն) իշխանի Եդեսիայի եւ Փոքր Հայքին տիրելը: Երուսաղէմի գրաւումն եւ Բելգիացի իշխան Գոդֆրուա դը Բուլյեոնի (Godefroid de Bouillon) թագաւորումը:

—

ԺԱ. դարում երբ Պաղեստին Արաբների տիրապետութեան տակ էր, որանք համեմատաբար ներողամիտ վերաբերմունք էին ցոյց տալիս քրիստոնեայ ուխտաւորներին, բայց երբ 1076ին Սելջուկեան Թուրքերն եկան, թէ տեղական քրիստոնեաների եւ թէ եւրոպացի ուխտաւորների կացութիւնը զգալի կերպով վատթարացաւ: Բազմաթիւ ուխտաւորներ զոհ գնացին իրենց հաւատքի չերմեռանդութեանն եւ չվերապարձան, իսկ վերադարձողները որբագին կոչեր ուղղեցին քրիստոնեայ աշխարհին՝ Ս. Երկիրը անհաւատների ձեռքից ազատելու: Եւրոպական երկիրները յուզուեցան այս անընդհատ բռնութիւններից եւ նրան հետեւող կոչերից: Կարելի է ասել, որ Բելգիան ամէնից աւելի վրդովուած երկիր-

ներից մին էր: Քրիստոնէական կրօնական ոգին չատ ուժեղ էր այնտեղ: Բելգիան այդ ժամանակ, ինչպէս ասում է համբաւաւոր Բելգիացի պատմաբան Հ. Պիրէն, «վանքերի երկիր» էր[1]: Այս փոքր երկիրը մինչեւ այդ օրը, մեծ թուով ուխտաւորներ զոհ էր տուել: Ինչ յառաջ, այն է 1054ին, Կամբրէի եպիսկոպոսը Լիտբէրտ 3000 Ֆլամաններից ուղեկցութեամբ ուխտի էր գնացել Երուսաղէմ եւ նրանք չատ մեծ դրկանքներ էին կրել այնտեղ: Ուստի երբ Ուրբանոս Բ. պապի կչէրմոնում հաւաքած համագումարից յետոյ համատարած խաչակրութիւնը քարոզուեց, Բելգիացիք ամէնից աւելի ջերմ արձագանգ տուին այդ քարոզին:

Բելգիական առաջին խաչակրական խումբը հաւաքուեց Գան (Gand) քաղաքում, առաջնորդութեամբ Գոդֆրուա դը Բուլյեոն (Godefroid de Bouillon) կոմսի եւ իր Բալդուին կամ Բոդուէն (Baldwin = Baudouin) եւ Եւստաքիոս (Eustache) եղբայրների: Գոդֆրուա ծախեց իր ամբողջ հօրենական կալուածքը, հոգալու համար իր եւ բազմաթիւ հետեւորդների ճանապարհածախքը: Իր օրինակին հետեւեցան ուրիշ ազնուական Բելգիացիներ: Անգլիայից էլ նաւերով կամաւորներ եկան նրանց միացան: 1096 Օգոստոսին էր երբ առաջին արշաւախումբը, 30,000 հետեւակ եւ

---

[1] Henri Pirenne, Histoire de la Belgique, 2e édit. 1929, Bruxelles, էջ 91.

7000 ձիաւոր, մեկնեցաւ Բելգիայից: Նրանց մէջ կային բացի Ֆլամանններից, այսինքն բուն Բելգիացիներից, նաեւ Գաղղիացիներ, Գերմանացիներ եւ Անգլիացիներ, որոնց բոլորի հրամանատարն էր Բելգիացի իշխանը Գոդֆրուա դը Բուլեոն:

Երեք ուրիշ բանակ էլ Եւրոպայի այլեւայլ կողմերից ճամբայ ելան, որոնց բոլորի միացման կէտը Կ. Պոլիսն էր, ուր հասան հաղիւ 1097 Մայիսին, կտրելով եւրոպական ցամաքը, Բալկանեան թերակղզին: Որչա՞փ էր նրանց ընդհանուր դումարը: Կան պատմագիրներ, որոնք հասցնում են 600,000ի, իսկ ուրիշներ իջեցնում են մինչեւ 150,000ի: Ուրբանոս Բ.՝ խաչակրութեան բուն պետը հաշուել է 300,000 հետեւակ եւ 100,000 ձիաւոր, որ ամէնից հաւանականն է[2]: Խաչակիրների նշանաբանն էր Dieu le veut:

Խաչակիրների առաջին դժուարութիւնները սկսան Կ. Պոլսում, Յոյների կողմից: Յոյների եւ արեւմտեան քրիստոնեաների յարաբերութիւնները լարուած էին արդէն կրօնական հողի վրայ: Ժ. դարում, երբ Յունաց պատրիարքը, Փոտիոս, բացարձակ իշխում էր Կ. Պոլսում, հիմնական անհամաձայնութիւն էր ծագել երկու եկեղեցիների մէջ: Հռոմ եւ Կ. Պոլիս փոխադարձաբար բանադրանք էին կարդում միմեանց: Այս դժտութիւնը 1054ին

---

[2] Ernst Barker, The Crusades, Oxford 1925, էջ 6:

յանգեցաւ երկու եկեղեցիների յարաբերութիւնների վերջնական խզման: Բայց այս հանգամանքը արդելք չեղաւ, որ Եւրոպացիք, այսինքն հռոմէական կաթոլիկները, չարունակեն բիւզանդական կայսրութեան ճանապարհներով Երուսաղէմ երթեւեկել: Յոյները պէտք ունէին Եւրոպացիներին: Երբ մահմետական ցեղերը, արաբ եւ թուրք, հետզհետէ գրաւեցին Փոքր Ասիայի այն մասերն, որոնք բիւզանդական իշխանութեան տակ էին, բիւզանդական կայսրը քանիցս դիմեց Թէ Պապին եւ Թէ եւրոպական պետութիւններին, որ յանուն քրիստոնէութեան օգնութեան գան իրեն: Բայց այս դիմումները նպաստաւոր ընդունելութիւն չգտան: Երբ խաչակրաց արշաւանքն սկսաւ, Յոյները յոյս տածեցին Թէ Եւրոպացիների չնորհիւ՝ իրենց իշխանութիւնը կը վերականգնեն Փոքր Ասիայում: Բելգիական խումբը, Գոդֆրուայի հրամանատարութեան տակ, առաջինն եղաւ Կ. Պոլիս հասնողը: Ալեքսի կայսրը չատ չանաց նրան համոզելու, որ Խաչակիրների գրաւելիք տեղերը վերատին բիւզանդական կայսրութեան ենթարկուին, բայց Գոդֆրուա բացարձակապէս մերժեց այդ պայմանը: Յոյների դժդոհութիւնը մեծապէս աւելցաւ, երբ Խաչակիրների այն խումբը, որ գտնւում էր համբաւաւոր Պետրոս Անապատականի առաջնորդութեան տակ, իրենց անցած տեղերում կողոպուտներ էին սարքում ու բռնութիւններ գործ դնում ժողովրդի վրայ: Այնու ամենայնիւ երբ

Խաչակրաց բանակն առաջին պատերազմը մղեց եւ Թուրքերից գրաւեց Նիկիան, Խաչակիրներն այս քաղաքը, որ շատ մօտ էր Կ. Պոլսին, յանձնեցին Ալեքսի կայսեր:

Պաղեստին երթալու համար ամենայարմար ճանապարհը Փոքր Հայքն էր եւ մանաւանդ Կիլիկիան, որ կարեւոր դիրք էր զբաւում, Փոքր Ասիոյ եւ Ասորիքի ճիշդ մէջտեղը: «Փոքր Ասիայի հարաւ-արեւմտեան մասում հայկական իշխանութիւններ կային, որոնք դեռ էին մնացած Սելջուկեան Թուրքերի ընդհանուր յրհեղեղից եւ Խաչակիրները յոյս ունէին թէ նրանցից իրական օգնութիւն կը ստանան»[3]:

Կիլիկիայի հայկական պետութիւնը իր քաղաքական եւ տնտեսական զարգացման առաջին շրջանում էր: Ռուբէն իշխանին յաջորդել էր Կոստանդին իշխանն, որ հետզհետէ դէնքի ոյժով Յոյների ձեռքից հայաբնակ վայրեր գրաւելով միացնում էր իր իշխանութեան: Խաչակիրները Փոքր Ասիայում արդէն մեծ թուով քաղաքների եւ դիւղերի տիրել էին եւ դիմում էին դէպի Անտիոք: Բայց նրանք բոլորովին անծանօթ էին այն տեղերին, որտեղից պէտք է անցնէին: Ուստի Գոդֆրուա պատգամաւորներ ուղարկեց Կոստանդինին եւ խնդրեց, որ հայ ուղեցոյցներ ուղարկէ իրեն: Բացի դրանից, որ աւելի կարեւոր էր, նա խնդրել էր մի հայ դինուորա-

---

[3] Ernst Barker, անդ, էջ 19:

կան դունդ, որ տեղեակ լինէր ոչ միայն ճանապարհներին այլ եւ թշնամիների ռազմական դիրքերին եւ իբրեւ յառաջապահ ծառայէր Խաչակիրներին, որպէս զի սրանք մահմետականների անակնկալ յարձակումներին չենթարկուէին: Կոստանդին ամենայն սիրով կատարեց նրանց խնդիրքն, ուղարկեց թէ ուղեցոյցներ եւ թէ հայկական ջոկատ, Խաչակիրներին Տաւրոս լեռից անցընելու եւ Անտիոք առաջնորդելու համար: Յատկապէս Գոդֆրուայի համար էլ մի շքեղ (richement orné ասում է Բելգիացի պատմագիրը) վրան էր նուիրել: Դրանով չբաւականանալով նա պատուիրել էր իր զինակից հայ իշխաններին՝ Ապլրատ, Բագունի, Գող Վասիլ, Օշին եւ այլն, ինչպէս նաեւ մերձակայ հայ վանքերին, որ բոլոր հնարաւոր միջոցներով օգնեն Խաչակիրներին:

Անտիոքի պաշարումը շատ երկար տեւեց եւ մեծ կորուստներ պատճառեց Խաչակիրների բանակին: Սովը մանաւանդ՝ շատ զոհեր էր տանում: Թուրքերն, որոնք 14 տարի է տիրում էին քաղաքին, կռւում էին մոլեգնօրէն: Նրանք այս կարճատեւ տիրապետութեան ժամանակ այնքան հալածել ու ճնշել էին քրիստոնեաներին (հայ, սիրիացի եւ այլն), որ չնայելով աղօթատեղիների այն առատութեան որ կար Անտիոքի շրջանում (360 հատ, եկեղեցի, մատուռ եւ վանք), սրանք չէին համարձակւում իրենց պաշտամունքը ազա-

տօրէն կատարել եւ ապաւինել էին մի հին քարայրի մէջ[4]:

Խաչակիրները յուսահատութեան մէջ էին. մտածում էին նոյն իսկ պաշարումը դադրեցնել, երբ Հայերն օգնութեան հասան: Թէ հայ իշխաններն եւ թէ հայկական վանքերը առատ պաշարեցէն եւ նոյն իսկ դրամական օժանդակութիւն հայթայթեցին նրանց: Շնորհիւ այս նպաստի Խաչակիրները յաջողեցան վերջապէս յաղթանակել:

Անտիոքի դրաման մէջ մեծ դեր է խաղացել մի մահմեդականացած հայ, որ իր կրօնափոխութեան մեղքը քաւել ուզելով ծառայական յարաբերութեան մէջ է մտել քրիստոնեայ բանակի հրամանատարներից Բէմունդի (Boemund) *հետ: Այս հայն, որի անունը* Phyrus (*անշուշտ* Ֆիրուզ) *է եղել, ըստ Եւրոպական պատմագիրների, վայելում էր Թուրքերի կատարեալ վստահութիւնը եւ բերդապահ էր քաղաքի երեք արտաքին աշտարակների վրայ: Փիրոս գաղտնի յարաբերութեան մէջ մտնելով Խաչակիրների մի իշխանի հետ, գիշերանոց ներս է առնում զաւադիրներին եւ աշտարակները նրանց յանձնում: Այնուհետեւ քաղաքը դիւրութեամբ գրաւուում է: Փիրոս վերադառնում է քրիստոնէութեան եւ երկու տարի զորձում է Խաչակիրների հետ, բայց յետոյ*

---

[4] Michaud, Histoire des Croisades, Paris 1854, *ր. հատոր, էջ* 444:

անյայտ պատճառներից դրդուած դարձեալ Թրքանում է[5]:

Անտիոքը գրաւելուց յետոյ Խաչակիրների հրամանատարը Գոդֆրուա Բելգիացին՝ հայկական գունդը մեծ ընծաներով եաւ է ուղարկում: Պարգեւներ եւ եւրոպական սիրողաններ է յատկացնում նաեւ Կոստանդին իշխանին, որ այս համակրանքից եւ Յոյների տկար կողմերից օգտուելով յաջողում է Կիլիկիայի կարեւոր մասն իր ձեռքն անցընել եւ հայկական պետութեան սահմաններն ընդարձակել. Կոստանդին ասպետ, ասում է Ջամչեան, մեծ իշխանն Հայոց, հիւպատոս, սիրեալ բազում տեղեաց ի կողմանս Կիւղիկեացւոց, եղեւ առնուանի յոյժ ի մէջ Յունաց եւ Լատինացւոց, մինչեւ ակն ածել ի նմանէ իշխանաց նոցին»[6]:

Բելգիացի կոմս Բալդուին կամ Բօդուէն, Գոդֆրուայի եղբայրը, որ Խաչակիրների պետերի մէջ ամէնից խելոքն եւ ամէնից փառասէրն էր, բաժնուելով զվխտաւոր բանակից գիմում է դէպի Միջագետք: Այս մասին չատ չահեկան տեղեկութիւններ է հաղորդում Միշօ, խաչակրութիւնների մեծ պատմաբանը: «Այն անձերի չարքում, որոնք հարստանալու յոյսով գալիս միանում էին Խաչակիրներին, կարեւոր տեղ է գրաւում մի հայ իշխան, Պանկրաս (Pancrace, Բագարա՞տ) ա-

---

[5] Michaud, անդ, էջ 165—174: Ժամանակակից պատմիչներն, ասում է Միշօ, այս փիրոսին կոչում են «քաջ մանուկ»: Դ. հատոր, էջ 119:

[6] Ջամչեան, Պատմութիւն Հայոց, Դ. հատ., էջ 22:

նունով: Սա իր երիտասարդութեան ժամանակ թաղաւորել է Հիւսիսային Իբէրիայի (Վրաստանի) վրայ: Իր սեպհական հպատակներից վռնտուելով նա ապաստանել է Կ. Պոլիս, ուր իր նենդութիւնների պատճառով ձերբակալուելով չղթայակապ բանտարկուել է: Երբ Խաչակիրները Կ. Պոլսից մեկնելով Նիկիայի առջեւ սուլթանի բանակը հաւաքուածեցին, Պանկրաս յաջողեցաւ բանտից փախչիլ եւ Խաչակիրների բանակը գալով իր ծառայութիւնը առաջարկեց նրանց: Նա յոյս ունէր թէ քրիստոնեայ բանակի չնորհիւ իր երկիրը կը վերադառնայ, կամ գոնէ մի ուրիշ երկրի տէր կը դառնայ: Պանկրաս չատ էր մօտեցել մանաւորապէս Բալդուինին, սեռնելով սրա ձեռնարկու ոգին: Ինքը ծայրայեղ չքաւորութեան մէջ լինելով ոչինչ կարող էր տալ, բայց արծարծում էր Գոդֆրուայի եղբօր մէջ աշխարհակալական ձգտում: Երբ Խաչակիրները անցնում էին Տաւրոս լեռը, Պանկրաս մօտենալով Բոդուէնին, ցոյց էր տալիս Փոքր Ասիայի հարուստ դաշտերն եւ ասում. «Հարաւում կան Կիլիկիայի արդասաւոր դաշտերը. աւելի հեռուն Ասորիք եւ Պաղեստին, գեղեցիկ գաւառները. արեւելքում կան ճոխ երկիրներ, որոնք ոռոգուած են Տիգրիսի եւ Եփրատի ջրերով. այս երկու գետերի մէջտեղն է Միջագետքը, ուր, բոա աւանդութեան, եղել է Դրախտը: Ահա Հայաստանն, որ բացարձակապէս քրիստոնեաների երկիր է եւ Ձեր մի ցշանին է սպա-

սում ձեզ անձնատուր լինելու համար: *Այս բոլոր ասիական երկիրները անհամբեր են թէ ե՞րբ պիտի ազատուին Թուրքերի լուծից. նրանք ձեզ պիտի պատկանին, եթէ դուք օգնէք նրանց չղթաները ջարդելուն»*: Բալդուին՝ *վառքի երազներով օրորուած, լսում էր* վրաստանցիի (iberien) *այս յանկուցիչ խօսքերը*[7]:

Հա՞յ էր այս իշխան Պանկրասը կամ Պանկրատիոսը, թէ վրացի, այդ կարեւոր չէ: Իրողութիւնն այն է, որ նրա խօսքերը մեծապէս ազդել են Բոդուէնի վրայ եւ նա Ջաչակիրների պետերի, այն է իր եղբօր Գոդֆրուայի, իշխանների եւ նոյն իսկ եպիսկոպոսների խորհրդին հակառակ, որոշել է բաժնուել եւ իրագործել Պանկրատիոսի գծած ծրագիրը: Այն միջոցին, նրանք գտնուում էին Մալմիստրայում, *որ նախկին* Մոպսուէստիան է: *Բոդուէն գտնում է իր ծրագրին համակրողներ եւ մօտ հազար հոգու գլուխ անցած, Պանկրասի առաջնորդութեամբ, սկսում է իր արշաւանքը: «Նա դիմում է դէպ ի Հայաստան, չարունակում է նոյն պատմագիրը, եւ ոչ մի թշնամի չի համարձակում նրա դիմացն ելլել: Թուրքերը լսում եւ տեսնում են այս արշաւանքը եւ սարսափում, իսկ քրիստոնեաները հրճւում, ամէն կերպ նրան օգնում, Մահմետականների լուծից ազատուելու համար»:*

---

[7] Michaud, *անդ, բ. հատ., էջ* 134—135:

Բոդուէն յաջողում է գրաւել մի քանի քաղաք Եփրատի աջ եզերքի վրայ: Այս առաջին յաջողութիւնից յետոյ երկու պինակիցների մէջ անհամաձայնութիւն է գոյանում: Պանկրաս ուզում է անմիջապէս տէր դառնալ գրաւուած երկրի մի մասին. բայց Բոդուէն ընդդիմանում է. այս պատճառով Պանկրաս խոզնում, հեռանում է[8]:

Այս ժամանակ Եդեսիոյ վրայ իշխում էր Թորոս (կամ Թէոդորոս) իշխանն, որ Յունաց կերիչխանութեան տակ էր, բայց միեւնոյն ժամանակ հարկ էր վճարում Սարակինոսներին, որանց յարձակումից ազատ մնալու համար:

Միջօ՝ այս Թորոսին յոյն է համարում:

Մ. Ուռհայեցի էլ գրում է թէ Սուլթան Բէթուչ Եդեսիոյ հրամանատարութիւնը յանձնեց Հեթումի որդի «յոյն» Թորոսին, որ ամէն կերպ աշխատում էր երկիրն անհաւատների ձեռքից ազատել եւ այս նպատակով ամրութիւններ էր կանգնեցնում: Երբ նա բիւզանդական իշխանութեան տակ մտաւ, կայսրը նրան Եդեսիոյ կառավարիչ անուանեց եւ կիւ-

---

[8] Ուրիշ աղբիւրների համաձայն, այս Պանկրասը՝ հայ Գող Վասիլ իշխանի եղբայրն էր, Ռաւենդան դղեակի տէրը: Նրա եւ Խաչակիրների մէջ դժտութիւն ծագելով, ստիպուել է թողնել սրանց նոյն իսկ իր դղեակին, «որ կարեւոր դիրք էր գրաւում սիրիական առեմաններին վրայ, մի կողմից Անտիոք–Եդեսիա. եւ միւս կողմից Մարաշ–Հալէպ ուղղութեան վրայ»: J. Laurent, Doyen de la faculté des Lettres de Nancy. Les Croisades et l'Arménie. Հանդէս Ամսօրեայ, 1927, էջ 886—906:

րապաղատ տիտղոսը տուաւ : Գալով նրա «յոյն» լինելուն, այս բառը պէտք է ընդունել «յունադաւան» իմաստով : Ուռհայեցին մի ուրիշ հայ իշխանի նկատմամբ էլ նոյն ձեւով է վարուել իր տարեգրութեան մէջ : Մելիտինէի հրամանատարին նա յոյն է համարում եւ կոչում է խուրիկ, քիչ վերջն աւելի ճշգօրէն խաւրիկ, ուր որ նրա անունը Գաբրիէլ էր : Իսկ Լատին պատմիչները շատ որոշ կերպով տալիս են թէ Մելիտինէի այս հրամանատարը Գաբրիէլ իշխանն էր, ազգով հայ եւ կրօնով յունադաւան (Guillaume de Tyr, X, 21) :

Երբ Թորոս եւ Եդեսիացիք լսում են քրիստոնեայ բանակի իրենց կողմն արշաւելը, պատգամաւորներ են ուղարկում, խնդրելով, որ գայ իրենց քաղաքին տիրէ եւ ազատէ մահմետականների լծից : Բոդուէն, այդ միջոցին, իր կարգադրութեան տակ ունէր միայն . . հարիւր ձիաւոր, որովհետեւ ստիպուած էր եղել իր բոլոր գրաւած տեղերում պահապան զօրք թողնել : Բայց նա այս փոքր ջոկատով յանդուգն կերպով յառաջ է գնում, եւ երբ մօտենում է Եդեսիայի, բնակիչները ձիթենի ճիւղերով եւ սաղմոսներ երգելով դիմաւորում են նրան : Բէլգիայի քաջասիրտ կոմսը այսպէս անարգել եւ յաղթանակով մտնում է Եդեսիա : Բայց նա որչափ յանդուգն նոյնչափ եւ խորամանկ էր :

Բոդուէն հասկացնում է Թորոսին թէ ինք կը մնայ եւ կը պաշտպանէ ա՛յն քաղաքը միայն, ուր ինքն է տէրը . . . : Իշխանը հա-

կանում է նրա միտքն: Թորոս ծեր էր եւ անզաւակ, ուստի որոշում է Բալդուինին որդեգրել եւ իրեն յաջորդ կարգել: Բելգիացի կոմսն ընդունում է նրա առաջարկութիւնը: Պատմաբանն այսպէս է նկարագրում այս որդեգրութեան մեծ արարողութիւնը: Թորոս մերկանում է եւ Բոդուէնին ընդունում է իր մերկ մարմնի եւ շապկի մէջ, իբրեւ ամենամերձ ազգակցութեան եւ դաշինքի նշան: Պատաւ իշխանուհին միեւնոյն է կատարում եւ այս կերպով Բելգիացի իշխանը դառնում է Թորոսի ժառանգն եւ Եդեսիայի ապագայ տէրը[9]:

Վրէժխնդրութեան ոգին Թուրքերի դէմ, զարթել էր Եդեսիայի Հայերի քով: Նրանք՝ Բոդուէնի հրամանատարութեան տակ արշաւում են Սամոսատի (այսօր՝ Սէմիսատ) վրայ, Եփրատի աջ եզերքին եւ աւերում են ամբողջ շրջակայքը: Բայց Բոդուէն կէս ճանապարհից ետ է դառնում որովհետեւ Եդեսիայում խռովութիւն էր սկսել:

Քաղաքացիք կասկածելով թէ Թորոս՝ իր վիճակից դժգոհ, ծածուկ յարաբերութեան մէջ է մտել Թուրքերի հետ, յարձակուել էին միջնաբերդի վրայ, ուր նա ապաստանել էր եւ բռնելով պատնէշից վար գլորել եւ սպանել: Այս կերպով Բոդուէն դառնում է Եդեսիայի եւ շրջակայքի միակ իշխանը: Թորոսի թողած գանձը նա գտնում է ոչ միայն Սա–

---

[9] Michaud, Անդ, էջ 137—138:

մոսան, այլ նաեւ բոլոր այն տեղերն, որ նա զօրքի պահպանութեան պատճառով չէր կարողացել գրաւել: Այնուհետեւ նա ամուսնանում է մի հայ իշխանուհու հետ եւ հետզհետէ «իր իշխանութիւնը տարածում է Ասորեստանի նախկին պետութեան ամենաճոխ գաւառների վրայ» [10]:

Մի ուրիշ դաղղիացի պատմագիր հաստատելով այս տեղեկութիւնները աւելացնում է. «Տեղացի Հայերը կամենալով որքան կարելի է չուտով Բողուէնին իրենց վրայ իշխան ունենալ, 1098 Մարտ 9ին Թորոսին հանում են իշխանութիւնից եւ նրա տեղ բազմեցնում են Բողուէնին: Բողուէն այս կերպով հիմն է դնում Արեւելքի առաջին լատինական իշխանութեան» [11]:

Բալդուին (Բողուէն)՝ այս ձեւով Արեւելքի իշխան դառնալուց յետոյ սկսել է ապրիլ արեւելեան ձեւով: Նա արեւելեան վեհապետի նման երկար մօրուք է թողել: Պալատից դուրս գալու ժամանակ նրա առջեւից տանում էին ոսկէ վահան, թմբուկներ էին ածում եւ այլն:

---

[10] Michaud, *Անդ*, 140: *Այստեղ դաղղիացի պատմագիրը հետեւեալ ծանօթութիւնն է աւելացնում. «Եղեսիայի վերաբերեալ այս մանրամասնութիւնները քաղեցինք* Albert d'Aix *եւ* Guillaume de Tyr *պատմիչների գործերից եւ համեմատեցինք նաեւ Մատթէոս Ուռհայեցու հայերէն պատմութեանը հետ, օգտուելով* Cirbied*ի դաղղիերէն թարգմանութիւնից»: Այս* Cirbied*ն հայագէտ Շահան Զրպետն է, որ Պարիսում հայերէն լեզուի եւ դրականութեան ուսուցիչ էր:*

[11] Louis Brehier, L'Eglise et l'Orient au moyen âge. Paris 1907, էջ 77:

Նա մինչեւ իսկ պահանջել է, որ իր հպատակները ըստ արեւելեան սովորութեան իր առջեւ ծունրին, գլուխ խոնարհեցնեն [12]:

Երբ Բելգիացի իշխանն այսպէս իր իշխանական աթոռն էր հաստատում Փոքր Հայքի վրայ, Իտալացի Խաչակիրներն էլ իրենց նաւերով Կիլիկիոյ ծովեզերքն էին գրաւում: Նրանք առել են նախ Տարսոնը որի բնակիչները մեծ մասամբ Հայեր են եղել եւ մասամբ Թուրքեր: Յետոյ Իտալացիք երկրի ներսերը մտնելով գրաւել են Ատանան:

Բայց Խաչակիրների գլխաւոր նպատակն անշուշտ Երուսաղէմն էր: Գոդֆրուա դը Բուլյեոն, իր եղբօր Բոդուէնի հեռանալուց յետոյ, ինքը միւս պետերի հետ Խաչակիրների բանակը տանում է Երուսաղէմի վրայ եւ 40 օրուան պաշարումից յետոյ, 1098 Յուլիս 15ին գրաւում է Ս. Քաղաքը: Եւ այսպէս՝ ամբողջ երկու տարւոյ ճանապարհորդութիւնից եւ անտանելի նեղութիւններ կրելուց յետոյ Խաչակիրները վերջապէս հասնում են իրենց նպատակին: Գոդֆրուա երկու ուրիշ Բելգիացի ասպետների հետ, առաջինն է մտնում Երուսաղէմ, քաղաքի պարսպի մէջ բացուած առաջին անցքից:

Խաչակիրներն այնքան դառնացած էին իրենց կրած տանջանքներից եւ յոգնութիւնից, որ սոսկալի վրէժ են առնում մահմետական

[12] Michaud, Անդ, էջ 243:

թշնամիներից: Նրանք անխտիր կոտորում են բոլորին, առանց խնայելու ոչ կանանց եւ ոչ մանուկներին: Այս կոտորածն այնքան ահռելի չափեր է առել, որ «Սողոմոնի տաճարում արիւնը լճացել է եւ հասել է մինչեւ Խաչակիրների թեւերն եւ կուրծքը»[13]: Իսկ մեր ժամանակակից պատմիչը մինչեւ անգամ կարողանում է հաշուել եւ մի ահռելի թիւ է յառաջ բերում: «Եւ յայնժամ, գրում է Մատթէոս Ուռհայեցին, Կոնդոփրէ (Գոդֆրուա) զթուրն Վեսպասիանոսի կայսերն առեալ՝ յարձակեցաւ ամենայն զօրութեամբ ի վերայ այլազգեաց եւ կոտորեաց ի տաճարին արս վաթսուն եւ հինգ հազար, եւ ի քաղաքն զայլ բնակիչսն»[14]:

Խաչակիրներն ընտրեցին իրենց քաջ հրամանատար Բելգիացի իշխանին, Գոդֆրուա դը Բույենին, Երուսաղէմի թագաւոր: Ուրբանոս Բ. պապն էլ իր կողմից Պիզայի արքեպիսկոպոս Դագոբէրտին (Dagobert) կամ Դէմբէրտին (Daimbert) կանխաւ ուղարկել էր

---

[13] Louis Brehier, L'Eglise et l'Orient au moyen âge, Paris 1907, էջ 81:

[14] Մատթէոս Ուռհայեցի, Երուսաղէմ 1869, էջ 326: Այս Ուռհա եւ այժմեան Ուրֆա անուան, ծագումը բացատրում է հետեւեալ կերպով: Եդեսիան նախ կոչւում էր Callirhoe: Այս անունից արաբները վերջին վանկը միայն առնելով նախ սկսել են կոչել Ռոհա յետոյ արաբական ال յօդն աւելցնելով վերածել են Ալռոհա կամ Արրոհայի որ հետզհետէ գործածութեան մէջ դարձել է Ուռհա եւ վերջապէս Ուրֆա:

իբրեւ պատրիարք Երուսաղէմ, որ եւ օծեց Գոդֆրուային: Յոյց տալու համար թէ Ս. Երկրի իսկական տէրը Եկեղեցւոյ պետն էր, պատրիարքը պահանջեց նոր թագաւորից, որ նա հպատակութեան երդում անէ Հռոմի քահանայապետին եւ Գոդֆրուա կատարեց այդ պահանջումը: «Պատրիարքն, ասում է դէմանագի պատմագիրը, ունէր թագաւոր դնելու իրաւունքը, յանուն Պապի եւ նա իր այդ իրաւունքն ի կատար ածեց Բեթղեհէմում, յանուն Ս. Կոյսի եկեղեցու խորանի առջեւ: Նոր թագաւորութիւն չէր, որ առեղծւում էր, այլ Դաւթի թագաւորութիւնն էր յարութիւն առնում» [15]:

Գոդֆրուա այնքան խոնարհամիտ էր, որ չուզեց թագ կրել. «Այնտեղ, ուր Փրկիչը փշէ պսակ է կրել, ասել է նա, ես չեմ կարող արքայական թագ դնել իմ գլխին»: Գոդֆրուայի թագաւորութիւնը երկարատեւ չեղաւ. մի տարի յետոյ նա վախճանուեց: Այսօր Բրիւքսէլի կենտրոնում, Արքայական հրապարակի վրայ (Place Royale) կանգնած է Երուսաղէմի այս առաջին քրիստոնեայ թագաւորի հսկայական արձանը, որ ամեհի ձիու վրայ նստած, դրօշակը ձեռքին, կարծես Երուսաղէմ է մտնում:

Պատուանդանի վրայ քանդակուած է Ծա-

---

[15] Rohricht, Geschichte des Königreiches Jerusalem: H. Jorga, Brève histoire des croisades, Paris 1924, էջ 42:

չակերտների ճակատամարտներից դրուագներ եւ Հեռեւեալ յիշատակարանը. «Godefroid de Bouillon, Premier roi de Jérusalem, né à Baisy, en Brabant [16], mort en Palestine le 17 Juillet 1100. Décrété le 2 Novembre 1843. Inauguré le 24 Août 1848, sous le règne de Leopold I.»: Նոյնը նաեւ ֆլամաներէն:

---

[16] Brabant, Բելգիայի կենդրոնական գաւառն է, ուր գտնւում է Բրիւքսէլ մայրաքաղաքը:

Դ· ԳԼՈՒԽ

Երուսաղէմի Բոդուէն Ա· եւ Բոդուէն Բ· Բելգիացի թագաւորները: Հայ գիւտուրների անձնուիրութիւնը: Գի դը Լուսինեան (Lusignan): Պարսից բանաստեղծ Սադիյի դէպքը: Խաչակրութեան յետագայ շրջանը: Կ·Պոլսի լատին պետութեան Բելգիացի կայսրները: Հայկական կոտորած: Երուսաղէմի վերջին գրաւումն եւ Ֆրանչիսկեան կրօնաւորները:

Գողֆրուայի մահից վերջը, Խաչակիրները որոշեցին նրա եղբօրը հրաւիրել Երուսաղէմի գահի վրայ: Այս նպատակով յատուկ պատգամաւորութիւն դնաց Եգեսիա: Բոդուէն ընդունեց այս պատուաբեր առաջարկութիւնն եւ ճանապարհ ինկաւ 200 ձիաւոր եւ 700 հետեւակ տանելով իր հետ, որովհետեւ Երուսաղէմում միացել էր միայն 200 ձիաւոր: Իսկ Եգեսիայում նրան յաջորդեց իր մերձաւոր ազգական Բոդուէն դիւ Բուրգ (Bauduin du Bourg), *որ մօտիկ ապագայում նոյնպէս մեծ դեր պիտի խաղար:*

Երուսաղէմի այս երկրորդ քրիստոնեայ արքան բոլորովին տարբերւում էր իր բնաւո-

թութեամբ հանդուցեալ եղբօրից: Նա եղաւ իսկապէս նոր պետութիւնը կազմակերպողը: Այն օրից երբ նոյն Դէմբէյթա Լատին պատրիարքը Բեթղեհէմի եկեղեցում նրան օծեց, Բոդուէն սկսեց թէ արքայական թագ կրել եւ թէ իր աստիճանին վերաբերեալ բոլոր արտաքին յատկանիշներին մեծ կարեւորութիւն տալ: Բոդուէն, ինչպէս նաեւ նրա յաջորդները, ջանացին բանակի դինուորական պակասը լրացնել, ոչ միայն Եւրոպայից անընդհատ եկող նոր Խաչակիրներով, այլ եւ տեղացի քրիստոնեաներից մեծ թուով դինուորներ առնին: Այս վերջիններիի թուում Երուսաղէմի թագաւորները չատ մեծ նշանակութիւն էին տալիս Հայերին, որովհետեւ «Հայերը, ասում է անգլիացի պատմագիրը, Արեւելքի լաւագոյն ռազմիկներն էին» [1]:

Բոդուէն Ա.-ի դլխաւոր հոգերից մէկն եղաւ նաեւ երկրի բնակչութիւնը աւելացնել: Վերջին պատերազմները աւերել ամայի էին դարձրել Պաղեստինը, ուստի նա աչխատեց տեղական քրիստոնեայ տարրեր ներմուծել: Երբ Խաչակիրները Պաղեստինը դրաւեցին, յունական նուիրապետութիւնը կազմալուծուած վիճակի մէջ էր. պատրիարքն էլ Կիպրոս ապաստանած: Ուստի բոլոր ապատ եկե-

---

[1] „The Armenians were the best soldiers of the East". The Crusades, by Ernst Barker. Oxford, p. 40. *Մ. Ուռհայեցին պատմում է թէ Երուսաղէմի թագաւորը՝ Հ. Ք. 574ին (1125) Սարակինոսների դէմ մղած պատերազմում, 500 հեծեալ հայ ունէր իր բանակում:*

գեցական պաշտօնների վրայ լատինածէս Յոյները դրուեցան: Լիբանանի Մարոնիտները, որոնք զգալի բազմութիւն էին տեղական ժողովրդի մէջ, թողնելով իրենց հակաքաղկեդոնական վարդապետութիւնը՝ յարեցան լատինական դաւանութեան: Մարոնիտների օրինակին հետեւեցան հետզհետէ ուրիշ տեղացի քրիստոնեաներ, նեստորականներ, յակոբիտներ, Յոյներ եւ նաեւ Հայեր: Այս յարումից յետոյ է, որ հայկական մի պատգամաւորութիւն, Անտիոքի գաղղիացի եպիսկոպոս Hugues de Gibeletի առաջնորդութեամբ Եւրոպա եկաւ 1145, Նոյեմբերին, Եւգինիոս Գ. Պապի օգնութիւնն եւ միջամտութիւնը խնդրելու[2]:

Բոդուէն Ա. 18 տարի թագաւորեց եւ շարունակ կռուի մէջ էր: Նա 1118ին ձեռնարկեց մինչեւ իսկ Եգիպտոսը գրաւել, միանգամ ընդ միշտ այն կողմից դէպի Պաղեստին եւ դէպի Կիլիկիա սպառնացող արշաւանքը խափանելու համար: Նա հասաւ մինչեւ էլ Արիշ բայց դժբախտաբար չկարողացաւ տոկալ կլիմայական աննպաստ պայմաններին. հիւանդացաւ եւ Եգիպտոսում էլ վախճանուեց: Վերջին շունչն աւանդելու ժամանակ Բոդուէն խնդրել էր իր զինակիցներից, որ նրա մարմինը անհաւատների երկրում չթողնեն, այլ Երուսաղէմ տանեն ու իր եղբօր, Գոդֆրուայի քով թաղեն: Ուստի Խաչակիրները Եգիպտո-

---

[2] Louis Brehier, L'Eglise et l'Orient au moyen âge, Paris 1907, էջ 98 եւ 104:

սից հետանալու ժամանակը իրենց հետ տարին այս մեծ Բելգիացու փոքր ի շատէ զմռսուած մարմինը եւ թաղեցին Ս. Գերեզմանի տաճարում[3]:

Բողուէն Ա.-ի թագաւորութեան ժամանակ Երուսաղէմի պատրիարքը՝ Գուարամոն, 1120ին մի եկեղեցական ժողով է դումարել, Բողուէնի խորհրդով եւ ներկայութեամբ «Պաղեստինի էրիստոնիաների բարքերը ուղղելու նպատակաւ»: *Ժողովը 25 յօդուածից օրէնք է դրել, ուր մանրամասն յիշուած են այն «մարմնական յանցանքներն», որոնց դէմ հարկ են համարել մաքառելու...* (Michaud, *Ա. հատոր*, *էջ* 521—525, Pièces justificatives):

«*Բողուէն, գրում է մի Բելգիացի հեղինակ*, Kervyn de Lettenhove, *իր մեծանձնութեամբն եւ առաքինութիւններով ապացուցեց, որ արժանի էր Սուրբ Գաղաքի Ազատարարի* (Գոդֆրուա դը Բուլեոնի) *եղբայրն եւ յաջորդը լինելու*: Հայոց թագաւորը (*ակնարկում է Կիլիկիոյ Կոստանդին իշխանին*) նրան ուղարկեց արքայական նշաններ (les insignes de la royauté): *Ալեքս Կոմնենոս կայսրը նրան որդեգրեց*: *Պարթեւներն եւ Մարերը նրան*

---

[3] *Աշակերտները կանխապէս Բողուէնի մարմնից հանել են նրա սիրտն ու թաղել Եգիպտոսում: Այս պատճառով էլ այդ տեղը, արաբներից մինչեւ հիմայ էլ կոչւում է «Հէբրաթ Բարդուիլ»* (Բարդուինի քարը կամ գերեզմանը): De Hody. Description des tombeaux de Godefroid de Bouillon et des rois de Jérusalem. Bruxelles 1856, *էջ* 244—245:

մինչեւ իսկ «Ֆրանկների աստուած» սկսան կոչել»[4]:

---

[4] Kervyn de Lettenhove, Un fragment de l'histoire des croisades. Bulletin de l'Académie Royale de Belgique, 2e série, X. Այս Բելգիայի ակադեմիկոսը կէրվին դը Լեաուենհով պատմում է որ Բոդուէնի թագաւորութեան ժամանակ երուսաղէմ քիչ էր մնացել Մահմետականների ձեռքն անցնի, բայց պատուել է քրիստոնէացած մի Թուրքի հաւատարմութեան շնորհիւ: Երբ Գոդֆրուայի բանակը երուսաղէմ երկար պաշարումից յետոյ գրաւել է եւ մահմետական բնակիչներին անողորմ կերպով կոտորելով յառաջանում էր դէպի Օմարի մզկիթը, մի Թուրք երիտասարդ, Մոհամմէդ անունով, ընկնում է Գոդֆրուայի ոտքն եւ աղերսում է, որ իր կեանքին խնայէ: Գոդֆրուա մեղքանալով շնորհում է նրա կեանքն եւ իր հովանաւորութեան տակ է ընդունում: Մոհամմէդ՝ մեծապէս երախտապէտ, ոչ միայն քրիստոնեայ է մկրտւում, այլ մինչեւ իսկ Յաչակիը ասպետ է դառնում: Երբ խազադութիւն է կնքւում Յաչակիրների եւ Մահմետականների միջեւ, Ակալոնի եմիրը խնդրում է Բոդուէնից, որ իրաւունք տայ նրան որ երուսաղէմ դայ եւ տեսնէ թէ քրիստոնեաներն ինչ բարենորոգութիւններ են կատարած: Բոդուէն հաւատում է նրան եւ հրաւիրում երուսաղէմ: Մահմետական իշխանը 3 օր հիւր է մնում. ամէն ինչ քննում է եւ վերադարձին անմիջապէս դեկուցում է ուղղում Սուդանին (Եգիպտոսի սուլթանին այսպէս էին կոչում), թէ Յաչակիրները կուրօրէն հաւատում են, ուստի կարելի է դաւադրութեամբ յանկարծակի նորից գրաւել երուսաղէմը: Եգիպտացիք ուրախութեամբ ընդունում են այս միտքն եւ սկսում են հարկ եղած պատրաստութիւնը տեսնել: Նորադարձ Մոհամմէդը նոյնպէս դինադադարից օգտուելով դնացել է իր մահմետական բարեկամներին տեսնելու, ծածկելով իր քրիստոնեայ լինելը: Այն տեղ, Ակալոնում մանրամասն ծանօթանում է դաւադրութեան եւ անմիջապէս վազում է Բոդուէնի քով, որ դնացել էր Արաբիայի սահմաններըը, Թշնամիների դէմ: Բոդուէն իսկոյն ճանապարհւում է դէպի երուսաղէմ: Մինչեւ նրա դալը, եգիպտացի դինուորներ, վաճառականի հագուստով եւ զանազան ապրանքներով, մօտ հազար հոդի, արդէն դալիս տեղաւորւում են երուսաղէմում: Բոդուէն հասնում է թէ չէ, անյապաղ կարդադրում է, որ բոլոր եգիպտացի առեւտրականներն իրենց ապրանքը

Ինչպէս որ Բոդուէն Ա.՝ դեռ եւս Եդեսիայի կոմս եղած ժամանակ յաջորդել էր իր եղբօր, Գոդֆրուային, այսպէս էլ Բոդուէն դիւ Բուրգ նրանց մերձաւոր ազգականը, 1118 Ապրիլ 14ին յաջորդեց Բոդուէն կամ Բալդուին Ա.ին Երուսաղէմի գահի վրայ, Բոդուէն Բ. անուղղակի: Այսպէսով 3 Բելգիացի իշխան թագաւորել են Երուսաղէմ.

Գոդֆրուա 1099—1100.
Բոդուէն Ա. 1100—1118.
Բոդուէն Բ. 1118—1131.

Բոդուէն Բ. նոյնպէս կռիւներ է մղել մահմեդականների դէմ, Սիրիայում: Այս կռիւներից մէկի ժամանակ մի հայ ճարտարապետ մեծ օգնութիւն է տուել Մաչակիր-

---

դուրս հանեն եւ բանան հրապարակի վրայ: Կեղծ առեւտրականները տատանւում են եւ աչխատում են ժամանակ շահել: Բոդուէն հրամայում է որ նրանց բոլորին ձերբակալեն: Բանում են ապրանքները, որոնց մէջ զէնքեր են պահուած եղել եւ բացի դրանից մի աքանչելի փող փղոսկրից չինուած: Բոդուէնի եղբայրը, Եւստաքիոս բոլոր այդ կեղծ առեւտրականներին խնդրն սպանել է տալիս, բայց մէկից, որ նրան բացատրել է թէ այդ փղոսկրեայ բարձրահնչիւն փողը պիտի ծառայէր ուրիշ մահմեդական զինուորներին իմաց տալու թէ յարմար ժամանակ է Երուսաղէմի վրայ յարձակուելու: Բոդուէն օգտւում է այս հանդամանքից եւ արշալոյս չծագած հնչեցնում է փողը: Ամէն կողմից նետ են վազում մահմեդականներ, որոնք բոլորն էլ Մաչակիրների պահակներից մի առ մի սպանւում են, այն միեւնոյն զէնքերով, որոնք գտնուել են եգիպտացիների քով: Քաղաքի դռները փակում են եւ սպանուածների զլուխները կարելով դուրս են նետում: Ասկալոնի դաւաճան էմիրն, որ իր բանակով արդէն մօտեցել էր քաղաքին, այդ տեսնելով, սարսափահար փախչում է:

ների բանակին: Խաչակիրները 1124ին պաշարել էին Տիւրոս քաղաքն եւ չէին կարողանում առնել: Նրանք Անտիոքից հրաւիրել են Աւետիք անունով մի հայ ճարտարապետ, որ հմուտ մեքենավար է եղել, ղեկավարել է պաշարման միջոցներն եւ մեծապէս դիւրացրել Տիւրոսի գրաւումը: Բողուէն Բ., որ գերի էր բռնուած քաղաքում, յաջողել է այս կերպով ազատուել նաեւ գերութիւնից (Guillaume de Tyr, XIII, 14—15):

Երբ բելգիական իշխանները ցամաքի վրայ այս զինուորական եւ վարչական գործերով էին զբաղուած, բելգիական կամ աւելի ճշգօրէն Փլամանական նաւատորմիղն էլ ծովի վրայ յաջողութեամբ կռւում էր Սարակինոսների դէմ, Տարսոնի եւ Լաոդիկէի առջեւ: Իսկ 1147ին երբ Սարակինոսները բռնացել էին Պորտուգալիայի վրայ Բելգիացի Խաչակիրները, իրենց նաւատորմիղով կոմս Առնու դԱրսքոտի (Arnoult d'Aerschot) հրամանատարութեան տակ մօտեցան Պորտուգալիային եւ Լիսաբոնը պաշարեցին. ապա ցամաք իջնելով վռնտեցին Սարակինոսներին եւ ազատեցին Պորտուգալիան:

Բողուէն Բ. արդիւնաւոր թագաւորութիւն ունեցաւ: Նրանից շատ վերջը, այն է 1177ին դարձեալ մի Բելգիացի իշխանի, Philippe de Flandre կոմսին առաջարկուեց Երուսաղէմի թագը. բայց նա չկարողացաւ վայելել. հետեւեալ տարին վախճանուեց:

Առհասարակ գաղղիացի պատմագիրները,

նոյն իսկ Michelet եւ Laviste, Խաչակրական գործերի մէջ առաջին տեղը յատկացնում են Գոդդիացիներին, ամէն փառք գաղղիական նախաձեռնութեան տալով, եւ նոյն իսկ Գոդֆրուա դը Բույոնին գաղղիացի են համարում: Բելգիացի պատմաբանները շատ իրաւամբ հերքում են այդ[5]: Եթէ Գոդֆրուայի, իր եղբայրների եւ զինակիցների լեզուն գաղղիերէն էր, այդ չի նշանակում թէ նրանք ազգութեամբ էլ գաղղիացի էին: «Ոչ մի ազգ չէ կարող պարծենալ թէ այս հերոսական ձեռնարկութիւնների մէջ աւելի փառաւոր դեր է կատարել քան Բելգիացիք: Բովանդակ Եւրոպան ընդունած է այն իրողութիւնը, որ Պաղեստինի թագաւորական եւ յետոյ նաեւ Կ. Պոլսի լատինական կայսերական գահերի վրայ բելգիական իշխաններ են նստել»[6]:

Ժամանակակից մեծագոյն Բելգիացի պատմագիրը Պրոֆ. Հանրի Պիրէն էլ գրում է. «Մեր հայրենակիցները շարունակեցին իրենց բաժինը հայթայթել Խաչակրական արշաւանքներին: Այս մասնակցութիւնը թէ ստուար է եղած եւ թէ օգտակար: Բելգիան ամբողջ մի դար՝ Խաչակիրների Բուսարանն (pépinière) է եղած»[7]: Միեւնոյն ժամանակ անհերքելի է, որ գաղղիերէնը Մերձաւոր

[5] Franz Nève, Deux mille ans de l'histoire des Belges. Bruxelles 1924, Ա. հատոր, էջ 56:

[6] Kurth, Manuel d'histoire de Belgique. Bruxelles, էջ 51:

[7] Henri Pirenne, Histoire de la Belgique, Ա. հատոր, էջ 331:

Աբեւելքի բոլոր այս նոր քրիստոնէական իշխանութիւնների թէ պաշտօնական եւ թէ ժողովրդական լեզուն է եղած, որ նշանակում է թէ Խաչակիրների մէջ մեծամասնութիւնը գաղղիացի էր: Միւս եւրոպական ազգերից՝ Իտալացիք գլխաւորապէս տիրել են Միջերկրականի նաւահանգիստներուն եւ առհասարակ ծովեզերքին, այդ պատճառով էլ այս տեղերում իտալերէնը երկար դարեր տիրապետող է եղած: Իսկ Գերմանացիք միայն ԺԲ. դարերի վերջերումն էր, որ մեծ թուով եկան Փոքր Ասիա:

Խաչակիրների ազգութիւնը սովորաբար որոշւում էր իրենց կրած խաչի գոյնովը: Այսպէս՝ Գաղղիացիք ընտրել էին իրենց համար կարմիր գոյնը, Բելգիացիք կանաչ, Անգլիացիք սպիտակ եւ այլն:

Եւրոպական պատմագիրները մանրամասնօրէն պատմում են առանձնական դէպքեր հայ գլխաւորների կամ կամաւորների անձնազոհութիւնից ի նպաստ եւրոպական Խաչակիրների: Կարեւոր է մանաւանդ հետեւեալ դէպքը: Թուրքերը՝ 1122ին յանկարծակի յարձակելով Եդեսիայի վրայ երկու եւրոպացի իշխան գերի բռնելով, չղթայակապ ուղարկել են Խարբերդ: Այս տխուր լուրը երբ լսում է Երուսաղէմի թագաւոր Բոդուէն Բ., որ կանխապէս Եդեսիոյ դուքս էր եղած, անմիջապէս մեկնում է Երուսաղէմից Եդեսիոյ օգնութեան: Բայց նա ոչ միայն չկարողացաւ օգնել, այլ Թուրքերի դէմ մղած անհաւասար կռուի մէջ,

ինքն էլ դերի բռնուելով ուղարկուեց մի ուրիշ բանտ, ուր գտնուում էին միւս երկու իշխանները, Թօղլէն դը Կուրանէ եւ իր հօրեղբօրորդին Գալէբան կամ Վալէբան։ Ֆաչակիրները սաստիկ սրտաբեկ եղած, չէն իմանում թէ ի՞նչ միջոցների դիմեն, իրենց պետերին ազատելու համար։ Այս ժամանակ յիսուն հայ ռազմիկ յանձն են առնում Ֆարբերդ երթալ եւ քրիստոնեայ իշխաններին ազատել։ Ոմանք իբրեւ առեւտրական եւ ոմանք իբրեւ եկեղեցական ծպտուած, այս 50 Հայերը յաջողում են մտնել քաղաք եւ անակնկալ կերպով յարձակուում են միջնաբերդի վրայ, սպանում են Թուրք պահապաններին եւ դերի իշխաններին բանտից ազատում եւ «միջնաբերդի վրայ բարձրացնում Քրիստոսի դրօշակը» կարմիր մահիկի տեղ։ Թուրքերն առաջին չփոթութիւնից յետոյ, հաւաքւում են, բանակ կազմում եւ շրջապատում միջնաբերդը։ Հայերը դիմանում են, եա մղում Թուրքերի յարձակումը, բայց խիստ պաչարուած են ամէն կողմից։ Իշխաններից մէկը, Թօղլէն, երդւում է «ոչ դինի խմել եւ ոչ մօրուքն ածիլել», մինչեւ որ ծածկապէս բերդից դուրս գալով քրիստոնեայ բանակին լուր տանի։ Նա իրօք յաջողում է Թշնամու շարքերից անվտանգ սողոսկել, «այծի տիկերի վրայ նստած» Եփրատ գետն անցնել եւ ամբողջ Ասորիքը կտրելով երուսաղէմ մտնել։ Երբ Ֆաչակիրները տեղեկանում են թէ իրենց Թագաւորն էլ ձերբակալուած է միւսների հետ միասին, ապստամբ եւ

կամաւորները, մեծ բաղմութեամբ ճանապարհ են ընկնում դէպի Յարբերդ: Յայտնի է թէ որչափ երկար ժամանակ էր պէտք այս ճանապարհորդութիւնը կատարելու համար, ուստի մինչեւ այս օդնական զօրքի հասնելը, պաշարուած քրիստոնեաների բախտն արդէն որոշուել էր: Հայերը ամէն կերպ նեղութեան առկալով միջնաբերդը պահել էին իրենց ձեռքում եւ անձնատուր չէին եղել: Թուրքերը ուրիշ միջոց չգտնելով, մեծ աշխատանքով միջնաբերդի տակը ականի փորելով, ամբողջ բերդը օդ էին հանել...: Պաշարուածները թաղուել են աւերակների տակ կամ ինկել Թուրքերի ձեռքը: «Քաջ Հայերը, ասում է պաղեստացի պատմագիրը, մեռան չարչարանքների մէջ եւ մարտիրոսութեան դաբնիի եղաւ նրանց անձնուիրութեան վարձատրութիւնը» [8]:

Ժբ. դարի վերջերում երեւան է գալիս Գուիտոն կամ Գի դը Լուսինեան (Guy de Lusignan), որի սերունդը պիտի թագաւորէր Կիլիկիոյ վրայ: Երուսաղէմի Զ. լատին թագաւորը Բոդուէն Դ. 1182ին հռչակաւոր Սալահէդդինի դէմ մղած կռուի ժամանակ, թէեւ յաղթական, բայց սոսկալի մի հիւանդութեամբ, այն է բորոտութեամբ վարակուելով, ստիպուել էր գահից հրաժարել եւ իր տեղը յաջորդ կամ տեղապահ դնել այս Լուսինեանին, որ ամուսնացած էր Բոդուէնի քրոջ Սի-

---

[8] Michaud, Histoire des Croisades, Բ. հատոր, էջ 319—321:

բիլի (կամ Իպսայի) հետ: Պատմիչների վկայածին նայելով Լուսինեան չէր սիրուած յատին իշխաններից եւ երկար չմնաց այս պաշտօնում: Նա մեռաւ իբրեւ Կիպրոսի արքայ 1194ին:

Երուսաղէմի վերջին քրիստոնեայ թագաւորն էր Բողուէն Ե., որ մեռաւ 1186ին իսկ հետեւեալ տարին, 1187ին, Սալահէդդին գրաւեց Երուսաղէմն եւ «քրիստոնեայ իշխանները, պինուորներն եւ միւս բնակիչները, իրենց զերդաստաններով, լացով ու ողբով թողին, հեռացան Քրիստոսի չարչարման վայրերից»:

Պատմութիւնը վկայում է, որ քրիստոնեաները էլ փոխադարձաբար ներողամիտ աչքով չեն նայել մահմեդականներին եւ քիչ նեղութիւն չեն պատճառել սրանց, երբ տէրն էին Պաղեստինին: Այս տանջուածների մէջ առանձնապէս յիշատակելի է Պարսից ամենամեծ բանաստեղծը՝ Սաադին: Հինգերորդ Խաչակրութեան վերջերն էր, 1203—1204ին, երբ Խաչակիրները արդէն մեծ դժուարութիւն էին կրում իրենց դիրքերը պաշտպանելու՝ Սարակինոսների յարձակումների դէմ, երբ երկրաշարժից քանդուել են Աքեայի եւ Տրիպոլիսի պարիսպները: Խաչակիրները ամապարանօք սկսան նորոգել այս պարիսպները եւ ամէն կողմից բանտարկեալ կամ գերի հրեաներ եւ մահմեդականներ ուղարկեցին այնտեղ աշխատելու: Ճիշտ այս միջոցին Սաադի էլ հկել էր Սիրիա, երբ նրան եւս բռնելով չղթայակապ ուղարկել են Տրիպոլի, քաղաքի

փոսերում բանելու: Միայն դրամական փըրկանքը կարող էր նրան այս տաժանակիր աշխատանքից ազատել: Բայց որ տեղից փրկանք վճարէր խեղճ բանաստեղծն, որ իր ապրուստը հոգալու համար ամենահասարակ արհեստով էր պարապում: Այսպէս, Կ. Պոլսում եղած ժամանակ նա պարզ իշապան էր, իսկ Երուսաղէմում նա ջուր էր ծախում: Գիւլիստանի մեծանուն հեղինակը ինքն է պատմում իր գերութիւնն եւ իր ազատումը, միանգամայն դառն խօսքեր ուղղելով նրան գերի պահող քրիստոնեաների հասցէին: Արժէ կարդալ այդ տողերը.

«Զզուել էի Դամասկոսի իմ բարեկամների ընկերութիւնից, գրում է բանաստեղծը, ուստի Երուսաղէմի անապատը գնացի, ուր ընտելացել էի անասունների ընկերութեան, երբ Ֆրէնկները գերի բռնեցին եւ Տրիպոլիի փոսերում աշխատացրին հրեայ գերիների հետ միասին: Վերջապէս Հալէպցի մեծամեծներից մէկը, որի հետ վաղուց ծանօթ էի, պատահմամբ անցնելով ինձ տեսաւ եւ հարցրեց. «Ի՞նչ է այդ վիճակդ. ինչպէ՞ս ես դու ժամանակդ անցընում»: Ես նրան պատասխանեցի. (Այստեղ բանաստեղծը արձակը ոտանաւորի փոխելով երգում է). «Մարդկանցից փախչելով լեռ ու դաշտ էի ապաստանել, զբաղուած էի միայն Աստուծով: Իսկ հիմայ գործ ունիմ այնպիսիների հետ, որոնք եւ ոչ իսկ մարդ են: Աւելի լաւ է, որ մարդ ոտքերը շղթայակապ իր բարեկամների մէջ գտնուի

քան թէ սքանչելի պարտէզում օտարների հետ...»: Եւ այս հալէպցի ծանօթը հարիւր ոսկի վրկանք տալով նրան ազատում է գերութիւնից [9]:

Աշակերտները Պալեստինում եւ առհասարակ իրենց գրաւած քաղաքներում ներմուծել ու հաստատել էին այն դարերում Եւրոպայում տիրող Ֆէօդալական, միմեանցից զգալապէս տարբերուող վարչական դրութիւն: Թէ ինչ մեծ զեղծումների է հասել այս դրութիւնը, երեւում է նրանից, որ երբ 1291ին Աքեան (նախկին Ptolemaïsը) պաշարուեց Սարակինոսներից, որով եւ վերջ դրուեց քրիստոնէական իշխանապետութեան Փոքր Ասիայում, քաղաքում կային՝ Գալղիացիք, Անգղիացիք, Հայեր, Իտալացիք (սրանք էլ բաժանուած էին՝ Վենետիկցիների, Ջենովացիների, Պիզացիների), երեք զինուորական կարգեր եւ վերջապէս նաեւ Երուսաղէմի պատրիարքը: Սրանց իւրաքանչիւրն ունէր իր սեպհական թաղը, իր յատուկ իրաւակարգը, դատարանը, պաշտօնէութիւնը, որոնք իրարից բոլորովին անկախ էին: Այս այլ եւ այլ թաղերը կարծես թէ միեւնոյն քաղաքում չէին

---

[9] Գիւլիաման, Բ. գիրք, 32դ պատմուածք: Սաադի՝ իր կենսագիրների ասելով մօտ 90 տարի է ապրել, որից առաջին 30 տարին ուսմանց է նուիրել, երկրորդ 30 տարին չարունակ ճանապարհորդել, իսկ մնացած 30 տարին քաչուած, զուտ գրական եւ «մտածական» կեանքով է ապրել, «հնազանդութեան գորգի վրայ նստած», ինչպէս գրում է ինքը: Սաադի ծնած էր Շիրազում 1184ին եւ վախճ. այնտեղ 1272ին:

պանուամ. բոլորն էլ ունէին իրենց տարբեր սովորութիւնները, տարբեր լեզուն, եւ տարբեր չահերը: Նրանք մինչեւ անգամ այնպէս հակառակ էին միմեանց, որ ամէն մի քաղի մուտքը պաշտպանուած էր պարիսպով եւ շղթայապատ դուռով... [10]:

Առաջին *Խաչակրական արշաւանքից յետոյ, որ գլխաւորն ու ամենահռչակաւորն է եղած, տեղի ունեցան վեց ուրիշը, հետեւեալ կարգով.*

Ա.	*Խաչակրութիւն*	1096.
Բ.	„	1147.
Գ.	„	1189.
Դ.	„	1202.
Ե.	„	1217.
Զ.	„	1228.
Է.	„	1248.

Պատմութեանս ամբողջութեան համար համառօտ կերպով յիշեմ սրանց գլխաւոր գործերը եւ Հայոց մասնակցութիւնը:

Առաջին Խաչակիրների կողմից Երուսաղէմի գրաւումը մեծ ոգեւորութիւն յառաջ բերաւ Եւրոպայում եւ անմիջապէս սկսեց երկրորդ խաչակրութիւնը: Կրկնուեցին այն տեսարանները, որոնք տեղի էին ունեցել Ուրբանոս Բ. Պապի կլէրմոնում գումարած ժողովից յետոյ: Երկրորդ Խաչակիրները գնա-

[10] Hody (le baron de), Description des tombeaux de Godfroid de Bouillon et des rois latins de Jérusalem. Bruxelles 1855, էջ 180—181:

ցին Պաղեստին եւ առհասարակ այն տեղերն, ուր պէտք էր զգացում լցնելու առաջին քրիստոնէական բանակի կրած ծանր կորուստները:

Երուսաղէմի անկումին հետեւեց երրորդ *հաշակրութիւնը, որին մասնակցեցան Գաղղիոյ եւ Անգղիոյ թագաւորներն եւ Գերմանիոյ կայսրն անձամբ: Իսկ Բելգիայից գնացին Ֆլանդրայի կոմսը, Լիէժի եպիսկոպոսն եւ բազմաթիւ աղնուականներ եւ կամաւորներ: Սրանցից՝ Ֆլանդրայի կոմսը վախճանուեց պատերազմի դաշտում, Ակեայի պաշարման ժամանակ: Հայոց՝ Խաչակիրների հետ ունեցած յարաբերութիւնների տեսակէտից՝ կարեւոր է այս Երրորդը:*

Այս Խաչակիրները սոսկալի կորուստ եւ նեղութիւններ են կրել ամբողջ ճանապարհում մինչեւ Պաղեստին, այնպէս որ Եւրոպայից մեկնել են մօտ հարիւրհազար *հոգի, եւ երբ Պաղեստին են հասել, ընդ ամէնը հինգ հազար հոգի էին մնացել: «Հայաստանի պատրիարքը կամ* կաթողիկոսը, *գրում է Միչօ,* Սալադինին ուղղած երկրորդ նամակում *գրում է թէ Գերմանացի զինուորների թիւը հասնում էր 40·000ի, բայց փոխանակ զէնքի, ուխտաւորական ցուպն է մեայն մնացել նրանց ձեռքում: Ինքը* կաթողիկոսը տեսել է *այս Գերմանացի զինուորներին, երբ կամուրջից անցնում էին եւ հարցրել թէ ինչո՞ւ ոչ զէնք ունին, ոչ ձի: Նրան պատասխանել են թէ «Տեւտոնները (Գերմանացիք) իրենց ազգների*

փայտերը վառել են տաքնալու համար, իսկ ձիերը մորթել են ուտելու համար»...[11]:

Ահա այս վիճակում էր Խաչակիրների բանակն, երբ Փրեդերիկոս Շիկամօրուս, գերմանական կայսրը, 1190ին Կոնիայից յառուկ պատգամաւորներ է ուղարկում Կիլիկիոյ մեր Լեւոն իշխանին, եւ խնդրում է Հայոց օգնութիւնը, որովհետեւ ասում է նա, «զձեզ միայն զիտեմք հաւատարիմս ի ձեռնտու լինել քրիստոնէից եւ ձեօք ունիմք միխիթարել ի վերայ անիրաւութեանց այլոց յաչազկոտաց» (ակնարկում է Յունաց, որոնց դէմ ատիպուել էր պատերազմ մղել, Փոքր Ասիա անցնելու ժամանակ): Լեւոն այն միջոցին գտնւում էր Տարսոնում եւ Ներսէս Լամբրոնացու եւ ուրիշ հայ մեծամեծների հետ խորհուրդ անելով, որոշել է ամէն կերպ աջակցել քրիստոնեայ բանակին եւ թէ՛ մարդիկ, թէ՛ ուտելիք եւ թէ՛ խմելիք է ուղարկում: Երբ կայսրն այս լուրն առանում է, ուրախութիւնից արտասւում է եւ գրում է Հայոց կաթողիկոսին թէ միտք ունի հինգ տարի մնալ Հայոց աշխարհում «եւ ձերով հաճութեամբ, ասում է նա, կամիմ ընտրել տեղի բնակութեան եւ անդատան եւս բանալ եւ վարել զերկիր, մինչեւ հաստատութեամբ իշխեցից Պաղեստինոյ»[12]:

Այսպէս է գրում մեր Ջամչեանը. իսկ Գաղղիացի պատմաբանը ասում է. «Հայաս-

---

[11] Michaud, ք. հատոր, էջ 88:
[12] Ջամչեան, գ. հատ., էջ 156—157:

տանի իշխանը Փրեդերիկոսին պատգամաւորներ էր ուղարկել եւ խոստանում էր ամէն կերպ օգնութիւն հասցընել նրան, ինչ բանի որ պէտք ունենայ: Բայց՝ միեւոյն ժամանակ խորհուրդ էր տալիս, որ իր երկրում երկար չմնայ: Հայ իշխանի այս «խորհուրդը» պատմագիրը վերագրում է այն հանգամանքին, որ ամէնքը երկիւղ էին կրում «այդ անօթութիւնից ուժասպառ եղած եւ դժբախտ պատերազմից սարսափելի կերպով տանջուած բանակից» [13]:

Փրեդերիկոս ընդունում է Լեւոնի հրաւէրը: Երբ նա իր բանակով մօտենում է Կիլիկիոյ սահմաններին, Լեւոն՝ կաթողիկոսի եւ Ներսէս Լամբրոնացու հետ ընդառաջ է գնում նրան: Բայց դերմանական կայսրը Սելեւկիոյ դէտակում յապաղելու ժամանակ խեղդւում է: Հայերը այնու ամենայնիւ իրենց խոստումը կատարում են: Փրեդերիկոսի որդի եւ յաջորդը Կոնրադին իր խումբով հրաւիրում են Կիլիկիա եւ լաւ հիւրընկալում: Լատին եպիսկոպոսներից մէկն էլ 1000 հոգուով գնում է Տարսոն իբրեւ հիւր Ներսէս Լամբրոնացուն[14]:

Գերմանական կայսեր խեղդուելու դէպքը Գերմանաց հեղինակ Mutius *այսպէս է պատմում. Փրեդերիկոս կամեցել է Հայաստանի մէջ գազանիներ որսալ եւ այս որսորդութեան ժամանակ Սելեւկիոյ լեռներում սաստիկ յոզ-*

---

[13] Michaud, *Բ. հատոր*, էջ 86—87:
[14] *Զամչեան*, *Գ. հատոր*, էջ 156—158:

նելով, մտել է Սէլէֆ գետը (Գէօք–Սու) ըղ-ղանալու (Ցունիս ամսի չորսերին) եւ այնտեղ խեղդուել է[15]:

Չորրորդ խաչակրութեան ժամանակ մի ուրիշ Բելգիացի Բոդուէն նշանաւոր հանդի-սացաւ: Սա Ֆլանդրայի կոմս էր եւ 1202ին ուրիշ Բելգիացի ասպետների եւ Խաչակիր-ների հետ մեկնել էր Արեւելք: Այս արշա-ւանքը չեղուեց իր բուն նպատակից: Խաչա-կիրները բիւզանդական արքունիքի վէճերին խառնուելով կռուի բռնուեցին Յոյների հետ, պաշարեցին եւ գրաւեցին Կ. Պոլիսը: Մի Բել-գիացի էր, որ Բիւզանդիոնի պարսպի վրայ «Ֆլանդրայի առիւծը» ներկայացնող բելգիա-կան ազգային դրօշակը պարզեց: Խաչակիր-ները Բոդուէնին Կ. Պոլսի նոր լատինական կայսրութեան պետ ընտրեցին, եւ նա մեծ հան-դիսով օծուեց Ս. Սոփիայի տաճարում: Իսկ երբ նա Բուլղարների դէմ մղած անյաջող պա-տերազմում գերի բռնուելով սպանուեց, նրա եղբայրը Հենրիկոս փոխարինեց նրան կայսե-րական գահի վրայ: Իսկ սրան յաջորդեցին դարձեալ Բելգիացիք, իր երկու եղբօրորդիքը Ռոբերտոս եւ Բոդուէն դը Կուրտընէ (Bau-douin de Courtenay): Այս վերջինի ժամանակ էր որ Կ. Պոլսի լատինական իշխանութիւնը վերջ գտաւ 1261ին:

Դժբախտաբար այս լատին կայսրութեան ժամանակ էլ Հայերը մեծ զոհեր են տուել:

---

[15] Michaud, Բ. հատոր, էջ 328—329:

«Մենք պէտք չէ, որ մոռանանք, գրում է Խաչակրութիւնների Պատմագիրը, քանի հազար Հայերի կոտորածը: *Այս ժողովուրդը՝ Եփրատի եզերքը թողնելով տեղափոխուել էր Անատոլիա, ամէն տեղ հետեւելով Խաչակիրներին: Երբ Լատինները ձախորդութիւններ ունեցան, Հայերն զգալով որ իրենք էլ վտանգի մէջ էին, քանի որ Յոյները նրանց էլ հակառակ էին, հետեւեցան Խաչակիրների հրամանատար Հենրիկոսի բանակին, որ գնում էր Ադրիանուպոլսի վրայ: Հայերը տանում էին իրենց հետ իրենց ընտանիքը եւ իրենց ոչխարի հօտերը: Սայլերի վրայ բարձել էին ինչ որ իբրեւ թանգարժէք իրեղէն կարողացել էին ազատել: Նրանք այս կերպով անցան Թրակիոյ լեռներն եւ դժուարութեամբ կարողանում էին լատին բանակին հետեւիլ: Թշնամի Բուլղարների թագաւորը մեծ զօրքով յարձակուեց Լատինների վրայ. իսկ Բուլղարների առջեւից գնացող* Թաթարները *ինկան խեղճ Հայերի վրայ եւ* կոտորեցին մինչեւ վերջին մարդը: Ֆրանկները շատ արտասուք թափեցին Հայերի վրայ, բայց անզօր էին նրանց վրէժը լուծելու...» [16]:

Հինգերորդ *Խաչակրութեան մասնակցեց Գաղղիոյ Լուդովիկոս Թ. թագաւորը, որ ուզելով խալամութեան գլխաւոր ոյժը խորտակել, Եգիպտոսի վրայ յարձակուեց: Բայց աննպաստ հանգամանքների բերմամբ, իր բոլոր*

---

[16] Michaud, *Բ. հատ.*, *էջ* 328—329:

ջանքերն ապարդիւն անցան: Մանսուրայի առջեւ մղած պատերազմում պարտուելով Ինքն էլ գերի ինկաւ Եգիպտացիների ձեռքն եւ հազիւ մեծ փրկանք տալով կարողացաւ ազատիլ, բայց Գաղղիա վերադառնալու ժամանակ կէս ճանապարհին մեռաւ:

Վեցերորդ եւ Եօթներորդ Խաչակրութիւնները նոյնպէս ապարդիւն անցան: Եւ երբ Խաչակիրների ձեռքում գտնուած վերջին սիրիական քաղաքը, Աքեան, 1291ին Եգիպտացիներից գրաւուեց, Եւրոպացիք բոլորովին թողին Փոքր Ասիան եւ հեռացան: Այնուհետեւ Հռոմի Պապերի բոլոր ջանքերը՝ նորից վառելու ժողովրդի եռանդն եւ անձնուիրութիւնը ի նպաստ Ս. Երկրի եւ արեւելեան քրիստոնեաների՝ ի զուր անցան: Փոխուել էին Եւրոպայի քաղաքական հանգամանքները. փոխուել էր մանաւանդ հասարակական տրամադրութիւնը: Նախկին կրօնական աւիւնը տեղի էր տուել ընդհանուր անտարբերութեան:

Միայն մեր դարումն էր, որ Ս. Երկիրը նորից գրաւուեց քրիստոնեաներից: Դաշնակիցների բանակը 1917 Դեկտեմբերի 10ին Յաֆֆայի դռնից հանդիսաւոր կերպով մտաւ Երուսաղէմ եւ կանգ առաւ Դաւթի աշտարակի առջեւ, որպէս զի այնտեղ ունկնդրէ մի ուշագրաւ յայտարարութեան: Այս պատմական վաւերագիրը հաստատում էր Օսմանեան կայսրութեան անկումն եւ Ս. Երկրի ազատութիւնը: Յայտարարութեան ընթերցումը դիտ-

մամբ յանձնուած էր Երուսաղէմի Փրանկիսկեան կարգի ներկայացուցիչ կրօնաւորին, որ ունէր նոյնպէս իր պատմական նշանակութիւնը. որին արժէ անդրադառնալ:

Ժ-Գ. դարի առաջին քառորդին, 1217ին, իտալական Ասիզի քաղաքից մի ջերմեռանդ քրիստոնեայ, Փրանկիսկոս անունով, հիմնում էր «պարանակիր եղբայրների» կազմակերպութիւնը, որի նպատակն էր Քրիստոսի խօսքը տարածել անհաւատների եւ հեթանոսների մէջ: Նրանք էին, որ առաջին անգամ մտան Սարակինոսների չրջանը: Խաչակիրների սուրի եւ նիզակի տեղ Խաչ եւ Աւետարան էին բերում մահմեդականներին: Երեք տարի վերջը, 1220ին, ինքը, «փոքրիկ ազքատը» (Poverello), ինչպէս սկսան կոչել Ս. Փրանկիսկոսին, անձամբ այցելեց Ս. Երկիր, չնորհիւ այն արտօնութեան, որ յաջողել էր ձեռք բերել սուլթան Մէլէք-էլ-Քամէլից:

Երբ Խաչակիրները 1291ին Թոլին հեռացան, Փրանկիսկեանները յաջողեցան այնպէս վարուել, որ մնացին Երուսաղէմ, քրիստոնէութեան սրբավայրերի վրայ հսկելու համար: Սրանից ճիշդ 600 տարի յառաջ, այն է 1333ին, Նապոլիի Թագաւոր Անժուլի դուքը Ռոբերտոս Եգիպտոս սուլթանին մեծ դումար վճարելով գնեց այդ սրբավայրերն եւ պահպանութիւնը յանձնեց նոյն «պարանակիր» եղբայրներին: Այդ թուականից վերջը, միայն Փրանկիսկեաններն իրաւունք ունէին Քրիս-

տոսի Գերեզմանի վրայ պատարագելու յանուն Կաթոլիկ Եկեղեցւոյ: Ուրիշ մի հետաքրքրական պարագայ էլ այն է, որ Գոդֆրուա դը Բույենի սուրը մնացել էր այդ սրբավայրում եւ Փրանկիսկեանների մեծաւորը այդ սուրով է, որ նուիրագործում էր «Ս. Գերեզմանի ասպետների» ուխտը: Նա միակ տէրն էր նաեւ Սրբավայրի դրօշակին — սպիտակ դաշտի վրայ հինգ Խաչ բոցավառ գոյնով — որ որոշ իրաւունքներ էր տալիս բոլոր նրանց, որոնք արտօնուած էին կիրարկելու, ինչպէս առագաստանաւերին, նաւաստիներին, նոյն իսկ առեւտրականներին: Փրանկիսկեանները 600 տարի, ի հարկէ ոչ առանց մեծ զոհողութիւնների, կատարեցին անյողդողդ այս պահապանութիւնը: Ուստի երբ 1917ին նրանք՝ յանուն Ս. Գերեզմանի վերոյգրեալ պատմական դէպքի կատարողն հանդիսացան, դրանով մի տեսակ կապ հաստատեցին 1291ին հեռացող վերջին Խաչակիրների եւ նորեկ քրիստոնեայ զինուորների մէջ:

Բացի դրանից՝ ի յիշատակ այս 600ամեակի՝ Ս. Փրանկիսկոսի ծննդավայր Ասիզի քաղաքում մեծ հանդէսներ կատարուեցան, որին մասնակցեցան բոլոր հնօրեայ ասպետները, Հռոդոսի, Մալթայի եւ Ս. Գերեզմանի եւ Խաչակիրական շրջանին պատկանող ամէն կարգի եւ դէնքի ներկայացուցիչներ, այն դարի ձեւով զգեստաւորուած եւ զինաւորուած: Բոլոր այս հազարաւոր հանդիսականները եր-

դում եւ նուագում էին, այնպէս ինչպէս հին Յաչակիրները եւ այլ կրօնական արարողութիւններ, որոնք յիշեցնում էին ԺԱ.—ԺԹ. դարերի պատմական–կրօնական այդ մեծ շըրջանը: Լրագիրները լիքն էին այս հանդէսների նկարագրութեամբ [17] :

---

[17] Le Temps, 10 Octobre 1933.

Ե· ԳԼՈՒԽ

Մատթէոս Ուռհայեցի պատմիչը եւ իր դատողութիւնները խաչակիրների վրայ: Երուսաղէմի հայ թագուհիները: Գրիգոր վկայասէր եւ Բարսեղ Ա· կաթողիկոսները: Գրիգոր ԺԳ· պապի գնահատականը:

—

Մեր հին պատմիչների մէջ խաչակրական առաջին արշաւանքի պարագաների վրայ խօսել է Մատթէոս Ուռհայեցին, որ ժամանակակից էր եւ իր տարեգրութիւնները արձանագրել է մասամբ իբրեւ ականատես եւ մասամբ իր լսածների հիման վրայ: Եւ որովհետեւ նա ընդարձակօրէն պատմում է Բեկգիացի իշխանների գործերն, ուստի հարկ եմ համարում առանձնապէս կանգ առնել նրա պատմութեան վրայ:

Հին հայ մատենագիրների կեանքն եւ վարքը առ հասարակ քիչ է ծանօթ: Ուռհայեցու մասին էլ այնքան միայն գիտենք, ինչպէս ինքն է հաղորդում, որ ծնուել է Եդեսիայում եւ վանական էր, իր ապրած վանքի վանահայրը:

Ուռհայեցի իր ժամանակագրութիւնը սկսում է խաչակրութիւնից մօտ 1½ դար յառաջ, այն է 952ին եւ հասցնում է մինչեւ 1136:

Մեռե՞լ է նա այդ թուականին, թէ ուրիշ պատճառով չէ չարունակել, որոշ չէ: Ջամչեան նրա մահը դնում է 1144ին, Եղեսիայի՝ մահմետականներից գրաւման եւ հայերի կոտորածի ժամանակ[1]: Յամենայն դէպս վերոյիշեալ թուականից, 1136ից յետոյ, նրա գործը չարունակել է ոմն Գրիգոր Երէց, նոյնպէս հոգեւորական, թէեւ ոչ կրօնաւոր, եւ բերում է մինչեւ 1162: Այս երէցը հաւանականաբար Մատթէոսի աշակերտն է եղած, որովհետեւ իրողութիւնները եւ մարդիկը դասում է նոյն եղանակով եւ լեզուն էլ նոյնպէս ոամկական դրարար է եւ նոյն ոճով, ինչպէս Մատթէոսինը:

Ուռհայեցու բոլոր պատմածները հեռու են իրականութիւն լինելուց եւ իրաւունք ունի Ջարբհանէլեան նրան՝ «միամիտ եւ դիւրահաւան» կոչելու[2]:

Մատթէոս Ուռհայեցի իր պատմութեան առաջին մասում ի մէջ այլոց շատ չահեկան տեղեկութիւններ է տալիս Ռուբինեան հարստութեան ծագման եւ սկզբնական գործունէութեան վրայ: Բուն խաչակրաց չրջանի վրայ էլ այնպիսի մանրամասնութիւններ է պարունակում, որոնք ժամանակակից միւս, եւրոպացի կամ սիրիացի արար պատմիչների քով չկան:

Մատթէոս՝ Խաչակիրների Ս. Երկրի ա-

---

[1] Պատմութիւն Հայոց, Գ. հատ., էջ 25:
[2] Պատմութիւն Հայ Դպրութեան, էջ 663—664:

պատուէրեան համար Եւրոպայից գալը «Հռոմայեցւոց ելք» է անուանում եւ համարում է կատարումն այն մարգարէութեան, որ արել է Մեծն Ներսէս կաթողիկոսը, «զորս վասն Հռոմայեցւոց ելիցն խօսեցաւ ընդ նախարարան եւ ընդ իշխանան Հայոց աշխարհին» [3]:

Եւ նա այսպէս է նկարագրում այդ «ելքը»: «Եւ ահա յայսմ ամի չարժեալ եղեւ ամենայն Իտալիա եւ Սպանիա մինչեւ յԱփրիկէա եւ խորին ազգն Ֆրանկաց, եւ գոհեալ անթիւ եւ անհամար եւ ահագին բազմութեամբ որպէս զմարախ որ ոչ թուի եւ կամ որպէս զաւազ ծովու որ ոչ քննի մատաց, եւ ահաւոր մեծութեամբ եւ բարձրագահ իշխանութեամբ ելեալ գային իշխանքն աշխարհին Ֆռանկաց, եւ իւրաքանչիւր զօրօք գային յօդնութիւն քրիստոնէից եւ առ ի վրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ ազատել ի Տաճկաց զսուրբ գերեզման աստուածընկալ, արք փառաւորք եւ թագաւորազունք, հաւատով եւ ամենայն աստուածպաշտութեամբ զարդարեալք եւ էին անեալք ի գործս բարութեան»:

Ապա յիշում է պետերի անուննները. «Կոնդռիբէ, այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն Հռոմայեցւոց [4] *եւ նորին եղբայրն Պաղտին*

---

[3] *Յիշատակութիւններն առնում եմ Մատթէոս Ուռհայեցու Պատմութեան Երուսաղէմի հրատարակութենից, 1869ին:*

[4] *Կոնդռիբէ, այն է Գոպֆրուա՝ իրօք իր մեծ մօր կողմից, Մեծն Կարոլոս* (Charlemagne) *գաղղ. թա-*

(Baldwin, Baudauin)։ Այս կոնդոփրէ էր, «որ ունէր զհետ իւր զթագն եւ զթուրն Վեսպիանու թագաւորին»։ Այնուհետեւ շարում է խաչակիր իշխանների անուններ՝ «Պեմունդ (Boëmund), Տանգրի (Tancrède), Զնճիլ (Saint Gilles), այր աճարկու եւ փառաւոր, եւ Ռուպէրթ Նորմնտայ կոմս (Robert comte de Normandie) եւ միւս այլ Պաղտինն (Baldwin du Bourg), եւ կոմսն որ ասի Ճոսլին (Josslin) այր քաջ եւ հզօր..։ Գային եւ զհետ սոցա բազում եպիսկոպոսունք, քահանայք եւ սարկաւագունք..»։

Մատթէոս՝ իր պատմութեան մէջ «կոմսն մեր» է կոչում «Պաղտինին», որի իշխանութեան տակ է գտնուել ինք Եդեսիայում։ Գրիգոր Երէց պատմում է թէ այս լատին կոմսն իրան խոստովանահայր է ընտրել մի հայ հոգեւորական, «Բարսեղ վարդապետն Հայոց»։

Եւրոպական աշխարհն առաջին անգամ ծանօթացաւ Ուռհայեցու պատմութեան, երբ Ճահան Չրպետ (Cirbied) Ֆրանսերէնի թարգմանեց նրա՝ յատկապէս խաչակիրներին հայող մասը, որին Silvestre de Sacy կցել էր իր ծանօթագրութիւնները[5]։ Այս առաջին թարգմանութիւնից 40 տարի եւքը հայազէտ գաղղիացի գիտնականը Դիւլօրիէ՝ հրատարակեց Ուռհայեցու ամբողջ պատմութիւնը, նրան կցե-

գաւարից էր սերում, որ «Համէական կայսր» է կոչուած (800—814)։

[5] Notices et extraits des Manuscrits de la Bibliothèque Imperiale, Paris, Tome IX.

րով նաև Գրիգոր Երէցի շարունակութիւնը[6] : Այս թանգարժէք գործը թարգմանիչը նուիրել էր Ռուսաց Ալեքսանդր Բ. կայսեր : Դիւլորիէյի այս հրատարակութիւնը կարեւոր էր նրանով մանաւանդ, որ բազմահմուտ թարգմանիչը բանասիրական-պատմական բազմաթիւ հմտալից ծանօթութիւններ էր կցել իր թարգմանութեանը : Այս աշխատութիւնը մեծապէս գնահատուած է հայ հեղինակների կողմից : Երուսաղէմի տպագրութեան հրատարակիչը «հանճարաւէտ քննութիւն» է անուանում, թէեւ տեղ տեղ ուղղումներ է կատարել նրա ծանօթագրութիւնների մէջ :

Այնուհետեւ Բելգիացի հայագէտ Պրոֆ. Ֆէլիքս Նէվ, գաղղիերէն լեզուով հրատարակել է Մատթէոս Ուռհայեցու պատմութեան այն էջերն, որոնց մէջ հայ ժամանակակից պատմիչը խօսում է յատկապէս Խաչակրութեան այս առաջին շրջանի Բելգիացի պետերի մասին[7] :

Ուռհայեցին ընդհանրապէս շատ գոհ է քրիստոնեայ եւրոպացիների արշաւանքից այլազգիների դէմ եւ նուիրական է համարում նրանց Ս. Երկիրն ազատելու նպատակը : Բայց Խաչակիրների եւ տեղացի հայերի յաճախակի

[6] Chronique de Mathieu d'Edesse (962—1136) avec la continuation de Gregoire le Prêtre jusqu'en 1162, par Edouard Dulaurier, professeur à l'Ecole Impériale des langues Orientales vivantes, Paris 1858.

[7] Felix Nève, Les chefs belges de la Première Croisade, d'après les historiens arméniens, Bruxelles 1857.

չխումների ժամանակ, երբեմն նրանց մէջ էլ անհաճոյ դէպքեր եւ նոյն իսկ ծանր ընդհարումներ են տեղի ունեցել եւ Մատթէոս այսպիսի պարագաներում դառն լեզու է դարձնում Խաչակիրների դէմ եւ նոյն իսկ ուրախանում է, որ սրանք պարտութիւն են կրում մահմեդականներից: Դիւրոուիէ այսպէս է բացատրում այդ հայ-լատինական ընդհարումները, արդարացնելով Մատթէոսի դանդատները.

«Ֆրանկները, ասում է նա, իրենց աւարի եւ կողոպուտի բնազդովը եւ այն վատասիրտական ոգուվը, որ միացած էր նրանց միամիտ բարեպաշտութեանը, երբեմն ձերբակալել են նաեւ հայ պետեր եւ կեղեքել շատ դաւաճաններ, օտար աշխարհականների պէս: Այս բռնութիւնների, ինչպէս եւ իր հայրենիքի դժբախտութիւնների յիշատակը՝ մեր ժամանակագրին (Ուռհայեցուն) ստիպել են դառն խօսքեր ուղղել նրանց դէմ: Այսպիսի խօսքեր, ցաւալի է, որ յաճախ են պատահում նրա գրչի տակ» (Préface XIX եւ XX):

Ինչպիսի՞ էին այս ընդհարումները: Բերեմ մի քանի օրինակներ:

Բոդուէն դիւ Բուրգ՝ երբ դեռ Երուսաղէմի թագաւոր չէր, այլ Եդեսիայի կոմս, որ եւ է պատճառով թշնամանում է «Գող» վասիլ կոչուած հայ իշխանի հետ: Բոդուէն խլում է նրանից նրա իշխանութիւնն եւ նոյն իսկ Հռոմկլա քաղաքն, որ յետոյ (1151) Հայոց կա-

Թողիկոսի աթոռատեղին եղաւ[8]: Այս հանգամանքը սաստիկ զայրացրել է մեր պատմիչին, որ չէ բացատրում գժտութեան բուն պատճառն եւ միայն վրդովւում է, մանաւանդ որ ինք մեծապէս զովել էր մինչեւ այդ դէպքը՝ «Թոզ» իշխանին:

Նոյն Բոզուէն կոմսը թշնամացել է մի ուրիշ Վասիլ կոչուած հայ իշխանի դէմ, որ «Տղայ» մականունն էր կրում, եւ սա փախել, ապաւինել է Ռուբինեան Կոստանդինի որդի Լեւոնի քով, որի աղջկան հետ պիտի պսակուէր: Ուռհայեցին պաշտպան է հանդիսանում Վասիլին, ընդդէմ Բոզուէնի, եւ վրդովւում է միանգամայն մի ուրիշ հայ իշխանի վարմունքից: Այս իշխանն էր յիշեալ Լեւոնի եղբայրը Թորոս, որ փոխանակ Վասիլը պահպանելու, բռնում է նրան եւ տանում յանձնում Բելգիացի կոմսին: Բոզուէն՝ բաւականանում է Վասիլին իշխանութիւնից զրկելովը ինչքը դրաւելով եւ ազատ է թողնում նրան: Վասիլ էլ գնում է Կ. Պոլիս, ուր Մատթէոսի առելով բիւզանդական կայսրը մեծ պատուով է ընդունել նրան: Յոյների եւ լատինների յարաբերութիւնները բարեկամական չէին այն ժամանակ:

Շատ աւելի կարեւոր է Ուռհայեցու պատմած հետեւեալ դէպքը: Նոյն Բոզուէն, երբ

---

[8] Հռոմկլա՝ այսինքն Հռոմի բերդ, قلعة روم արաբ. կոչումով, ինչպէս կաթողիկոսական աթոռատեղի մինչեւ 1293, երբ եգիպտական մամլուքները դրաւեցին:

1113ին Եդեսիայից բացակայ էր, մի քանի «վատահոդի ֆրանկներ» եկել, զեկուցել են նրան թէ «Եդեսիոյ հայերը որոշել են քաղաքը Թուրքերին յանձնել», որ ըստ Մատթէոսի՝ պարզապէս սուտ զրպարտութիւն էր: Բոդուէն հաւատում է եւ իսկոյն եռ գառնում. մի կիրակի օր, ճաշի ժամին նրա հրամանով բոլոր հայերին քաղաքից դուրս են հանում բռնի կերպով: Միայն 80 հոգի ազատւում են այս արտաքսումից, որովհետեւ ապաստանել էին Ս. Թորոս եկեղեցում: Եւ Ուռհայեցին սաստիկ դանդաղում է «ֆրանկների ապերախտութիւնից», հայերի այնչափ անգամ ցոյց տուած անկեղծ աջակցութեան փոխարէն:

Եղել են նաեւ բռնութեան ուրիշ դէպքեր Հայոց դէմ: Շատ հաւանական է որ այս հալածանքների բուն պատճառը «Հայոց դանձը յափշտակելն» է եղած ինչպէս բացատրում է Ուռհայեցին: Կողոպուտի համար՝ Ֆաչակիրները երբեմն տարբերութիւն չէին դնում Թուրքի եւ քրիստոնեի մէջ...: Նոյն իսկ Պետրոս Անապատականն եւ իր խառնիճաղանճ բանակը իրաւամբ մեղադրուած են այս յանցանքի մէջ, Եւրոպայի պատմագիրների կողմից:

Բելգիացի պատմագիրը՝ Ֆէլիքս Նէվ, աւելի որին մօտ է ընդունել հայ պատմիչի դառն խօսքերը Բելգիացի կոմսի դէմ եւ գրում է. «Մատթէոս Ուռհայեցին Գոդֆրուայի եւ երկու Բոդուէնների, Երուսաղէմի այս առաջին թագաւորների արժանիքն եւ բարձր յատ-

կութիւնները չէ ուրանում. նրանց դինուորական վարքը խոստովանում է, բայց նրանց քաղաքականութիւնն եւ դործերը դատում է իր՝ ազգային տեսակէտից: Երկու Բոդուէններն էլ անընդհատ յարաբերութիւն են ունեցած Եդեսիայի եւ չրջակայքի հայոց հետ եւ ամենևին տարօրինակ չէ, որ այնպիսի արտակարդ հանդամանքներում, որոնց մէջ նրանք դանւում էին, իրենց իշխանութիւնը պաչտպանելու նպատակով եւ իրենց ծախքերը հոդալու նպատակով զինուորական զգուշողական միջոցներ են ձեռք առել եւ մեծ տուրքեր են դրել ժողովրդի վրայ: Այս է որ առիթ է դարձել հայոց դանդատներին» [9]:

Երուսաղէմում հիմնուած լատինական արքայական տան եւ Կիլիկիայի հայկական իշխանական դերդաստանի մէջ ազգականական կապ է հաստատուել, ամուսնութիւնների միջոցով: Արդէն՝ եւրոպացիները Փոքր Ասիայում տէրտուրելուց յետոյ նրանց ասպետները սկսել էին հայ դեղեցկուհիների հետ ամուսնանալ: Այս ամուսնութիւններն ունեցել են իրենց բացատիկ, վիպական եւ մասամբ նաեւ զուարճալի հանդամանքները: Գոդֆրուայի եղբայր, Բոդուէն Ա.՝ Երուսաղէմի երկրորդ թագաւորը, ամուսնացել էր Ռուբինեան հարստութեան հիմնադրի որդի Թորոս Ա.-ի աղջկան, Արտայի (Arta) հետ: Մի Եւրոպացի պատմիչ

---

[9] Felix Nève, Les chefs belges de de Première Croisade d'après les historiens Arméniens. Bruxelles 1859, p. 37.

(Jacques de Vitry, էջ 74) հաւատացնում է թէ Թորոս՝ իր աղջիկը տալու ժամանակ խոստացել է 60·000 ոսկի օժիտ տալ, բայց պայման դրել, որ Բողուէն մօրուք թողնէ եւ չածիլէ: Բողուէն համաձայնել է: Թորոս՝ օժիտից 17·000 ոսկին վճարել է հարսանիքի օրը, բայց մնացածը սկսել է ձգձգել: Այն ժամանակ Բողուէն դրել է իր աներոջ թէ եթէ չվճարէ, ինքն էլ պիտի ստիպուի իր մօրուքն ածիլել: Այս «սպառնալիքն» ազդել է Թորոսի վրայ, որ խնդրել է իր Բելգիացի փեսայից, որ այդ «անարգանքը» չհասցնէ իր աղջկան եւ ուղարկել է մնացած դումարը: Գուլիելմոս Տիւրացի պատմում է, որ Բողուէն վերջ ի վերջոյ հեռացել է իր կնոջից (որին նա Աալիս [Aalice] է կոչում), եւ ստիպել է նրան Երուսաղէմի Մ. Աննայի կուսանոցը մտնել (Guillaume de Tyr, X 1 եւ XI 1):

Այնուհետեւ Ռուբինեան կոստանդինի երկրորդ որդին Լեւոն, կամ baron Լեւոն, ինչպէս նա կոչւում էր, ամուսնացաւ Եդեսիոյ կոմս Բողուէն դիւ Բուրգի աղջկան հետ, իսկ այս Լեւոնի աղջիկն էլ Բողուէնի յաջորդող կոմս Ժոսլինի հետ: Իսկ ինքը Բողուէն դիւ Բուրգ, որ Երուսաղէմի վրայ պիտի թագաւորէր Բողուէն Բ. անուանով, ամուսնացել էր Մելիտենէի (Մալաթիա) հրամանատար հայ իշխանի Թաթիկէի (Ուռհայեցու «Ռաւրիկ» կոչածը) Marcille կամ Մորֆիա աղջկանը հետ, որից ունեցել է 4 աղջիկ Մելիսանդ կամ Me-

lissent, Ալիս, Հոդիէրնա եւ Իվէտ կամ Joie: Այս պարագան յայտնի է նաեւ Ուռհայեցուն:

Այս հայ–լատինական ազգականական եւ խնամիական կապերը հաստատուել են նաեւ ուրիշ տեղական լատինական իշխանական դերդաստաններում: Այսպէս՝ ի մէջ այլոց, երբ Անտիոքի իշխանը, Բոհեմունդ 22 նաւով եւ դրամական մեծ գումար բերելով օգնութեան է հասել Խաչակիրներին, Պաղեստինում, Բողուէն Բ. իր Ալիս աղջկան կնութեան է տուել նրան[10]: Միւս աղջիկներից՝ անդրանիկը՝ Մէլիսանդ պսակուել է Անժուի կոմսի հետ, իսկ կրտսերը՝ Իվէտ կամ Joie՝ որոշել է վանք մտնել եւ St. Lazare de Bethanie անունով կուսանոց է հիմնել:

Այս կերպով հայ իշխանուհիներ Երուսաղէմի թագուհի տիտղոսն են կրել: Առաջին Թագուհին էր ինչպէս տեսանք վերը, Արտա՝ Բողուէն Բ.ի կինը: Երկրորդ Թագուհին եղաւ Մորփիա: Երրորդ Թագուհին եղաւ նրա անդրանիկ աղջիկը Մէլիսանդ, որովհետեւ նրա ամուսին Անժուի կոմսը Բողուէն Բ.ի մահից յետոյ Երուսաղէմի գահը ժառանգեց: Մէլիսանդ՝ իր ամուսնի մահից վերջն էլ Թագուհու պաշտօն էր կատարում եւ Թագաւորական հրովարտակներ էր արձակում մինչեւ որ իր որդին Բողուէն Գ. գահակալեց 1160ին: Բողուէն Գ.ին յաջորդեց սրա եղբայրը Ամորի

[10] Röhricht, Königreich Jerusalem, էջ 8: Nicola Jorga, Brève histoire des Croisades, Paris 1924, էջ 81–85:

(Amaury) Ա. որ ամուսնացաւ Ժոսլին Բ.ի աղջկան Ագնէսի հետ. իսկ այս Ագնէսը Կիլի–կիոյ Կոստանդին Ա.ի թոռն էր։ Ագնէս այս ա–մուսնութիւնից մի որդի ունեցաւ (1160), որ ապա Բոդուէն Դ. տիտղոսով Երուսաղէմում թագաւորեց եւ մեռաւ 1185ին անզաւակ։ Եր–կու տարի վերջը, 1187ին Սարակինոսները Երուսաղէմը գրաւեցին, բայց «Երուսաղէմի թագաւոր» տիտղոսը դեռ չարունակւում էր։ Այսպէս անուանապէս «Երուսաղէմի թագա–ւոր» կոչուած լատին իշխանների մէջ ամէնից նշանաւորն էր Ժան դը Բրիէնն (Jean de Brienne), որ ամուսնացաւ Կիլիկիոյ առաջին թագաւոր Լեւոն Ա.ի աղջկան հետ։ Այս կեր–պով, Երուսաղէմի բոլոր քրիստոնեայ թա–գուհիները կամ բուն հայուհի էին եւ կամ հայ արիւն էին կրել իրենց երակներում։

Խաչակիրների առաջին արշաւանքի ժա–մանակ Բելգիացի եղբայրները, Գոդֆրուա եւ Բոդուէն (կամ Բալդուին) մեծապէս օգտակար են հանդիսացել երկու հայ կաթողիկոսների։ Մէկը Բարսեղ Ա. կաթողիկոսն էր։ Սա Անի քաղաքումն էր, երբ լսել է Եդեսիայի մէջ Բո–դուէնի ձեռքով քրիստոնէական իշխանու–թեան հիմնուելը։ Անին այդ միջոցին պար–սիկների ձեռքն էր անցել եւ կաթողիկոսը սաստիկ անհանգիստ էր այնտեղ։ Այստեղ խօսքը թողնում եմ Զամչեանին, որ դէպքը պատմում է հետեւեալ կերպով.

«Տեսեալ նորա (Բարսել կաթողիկոսի) թէ ոչ կարէ գտանել հանգիստ եւ անդ (յԱնի),

ընդ իշխանութեամբ պարսից, յորդորեալ ի ծածուկ գուխս եկեղեցւոյ իւրոյ, եւ նոքօք յՍեւոյ Հանդերձ քանի մի ազատօք եւ գնաց ի Միջագետս, յԵդեսիա քաղաք: Եւ դուքս քաղաքին, որ կոչիւր Բաղտին (Բալդուին, Բոդուէն) մի յիշխանացն լատինացւոցն, բազում պատիւ եցոյց նմա եւ ետ նմա գիւղս յոլովս ի կալուածս, ընդ որ կարի խիստ հաճեալ Բարսեղ՝ կամեցաւ բնակել անդ առ ժամանակ մի» [11]:

Շատ աւելի կարեւոր անձնաւորութիւն էր այս Բարսեղի նախորդը, Գրիգոր վկայասէր: Այս մեծ հայրապետն, աւելի իրաւամբ պէտք էր խաղաղասէր կոչուիլ, որովհետեւ իր ամբողջ պաշտօնավարութեան ժամանակ եռանդով նուիրուած էր՝ իր Ազգն ու Եկեղեցին հանելու այն մեկուսացեալ դիրքից, որի մէջ դրուած էին, այլացեղ եւ այլակրօն թշնամիներից շրջապատուած եւ հաշտեցնելու ուրիշ մեծ քրիստոնեայ ազգերի եւ եկեղեցիների հետ: Գրիգոր Մագիստրոսի այս արժանաւոր որդին, չբաւականանալով գրագրութեամբ կամ այս նպատակին ուղղուած նամակների փոխանակութեամբ, յանձն էր առել ճանապարհորդել թէ՛ Արեւմուտք եւ թէ՛ Արեւելք եւ անձամբ տեսակցիլ այս մասին եկեղեցական եւ աշխարհական քրիստոնեայ պետերի հետ: Նա նախ գնացել է Հռոմ 1075ին, ուր Պետրոս Առաքեալի գերեզմանի վրայ իր ուխտը կատարելուց յետոյ, մեծ պատիւներով ընդու-

[11] Չամչեան, Գ. հատ., էջ 25:

նուել է Գրիգոր Է. պապի կողմից եւ «բերան ի բերան խօսեցեալ ընդ նմա ի վերայ կրօնից եւ ծիսից հայոց, հաւնեցոյց զմիտս նորա» գրում է Զամչեան: Բայց այս բաւական չէր. պէտք էր յունական եկեղեցու պետի միտքն էլ «հաճեցնել»: Եւ Խաղաղաւէր կաթողիկոսը 1083ին գնում է Կ. Պոլիս: Այն դարում Բիւզանդիոյ կայսրը շատ մեծ ձայն ունէր եկեղեցական խնդիրներում. ուստի Գրիգոր Վկայասէր՝ մեծ ջանք է գործ դրել նրան համոզելու համար: Նա խնդրել է կայսրից ըստ Զամչեանի, «զի փոխանակ հալածելոյ զհայս, միաբանեցուսցէ զնոսա ընդ յոյնս, սիրով»: Դժբախտաբար Կ. Պոլսում նա չէ գտել իր ակնկալած ընդունելութիւնն, ինչպէս ունեցել էր Հռոմում, որովհետեւ բիւզանդացիք քաղաքական–աշխարհակալական ձգտում եւ նպատակ ունէին այն տեղերի վրայ, ուր Ռուբինեան իշխանապետութիւնն սկսել էր հիմնուել եւ հետզհետէ տարածուիլ: Այնուհետեւ Գրիգոր Խաղաղաւէր երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմ, Քրիստոսի Գերեզմանին այցելութեան, անշուշտ երկնաւոր միջամտութիւն հայցելու իր սիրած Եկեղեցւոյ եւ Ազգի համար: Այս միջոցին էր, որ Երուսաղէմ պաշարուեց Սաչակիրներից: Մատթէոս Ուռհայեցու վկայութեան համաձայն, նրա կեանքը մեծապէս վտանգի տակ էր, երբ Բելգիացի Գոդֆրուան քաղաքը գրաւելով նրան ստոյգ մահուանից ազատեց: Այլեւս իր խաղաղասիրական դերը կատարած նկատելով, Գրիգոր

քաշուեց Սեւլեռի վանքը, Տաւրոսի սարերում, եւ անձնատուր եղաւ մինչեւ իր մահը (1105ին, ընտրուած էր 1065ին), իր սիրած գրական աշխատութիւններին, աջակից ունենալով հայագէտ Թէոփիլատէ յոյն իմաստակէրին: «Ծաղկեցաւ, ասում է Չամչեան, սրա իմաստունս եւ բանիբունս յազգէ իւրմէ եւ յազգէ յունաց եւ ասորւոց, ի ձեռն նոցա անդադար պարապէր ի թարգմանութիւն զանազան գրոց, մանաւանդ վարուց Սրբոց» [12]: Ահա այս գործի, այսինքն մի քանի սուրբերի վկայաբանութիւնները գրելու եւ գրել տալու եւ նրանց տօները հաստատելու յիշատակն էր որ պահպանուել է գլխաւորաբար եւ նրա «Վկայասէր» անունը: Բայց Շնորհալին աւելի փառաւոր տիտղոս է տուած նրան երբ երգում է նրա մասին՝

«Երկրորդ Մեսրոպայ մեզ երեւեալ»:

Իսկ Ուռհայեցին նրան մինչեւ իսկ Յովհ. Մկրտիչին եւ Եղիա Մարգարէին է նմանեցնում [13]:

Այստեղ վերջ տանք Խաչակրութեան շրջանի պատմութեան, յառաջ բերելով մի լիովին հեղինակաւոր անձնաւորութեան գնահատականն, այն կարեւոր դերի մասին, որ կատարել են հայերը այն ժամանակ:

---

[12] Չամչեան, Պատմ. Հայոց, Բ. հատ., էջ 1000 եւ Գ. հատ., էջ 8 եւ 20:

[13] Ուռհայեցին ի մէջ այլոց պատմում է, որ Գրիգոր այցելել է նաեւ Եգիպտոս, ուր իր ժամանակ 30·000 հայ կայ եղել:

Սոսքը թողնենք դարձեալ մեր ձեռնհաս պատմագրին.

«Զայս գործ հայոց, գրում է Չամչեան, բազում գրուտանօք յիշէ եւ սրբազան պայն Գրիգոր ԺԳ., այն, որ նորոգեաց զՏոմարն Հռովմայեցւոց, քանզի գրէ ի կոնդակի իւրում զոր արար վասն Հայոց *յամի* 1584, *այսպէս. «Բայցի բազմագիմի երախտեաց, զոր եցոյց ազգդ այդ առ եկեղեցի եւ առ քրիստոսական ժողովուրդ, արժանի անմոռաց յիշատակի՝ մեծ եւս է այն գործ, զոր արարին հայք ի գնալ իշխանաց եւ զօրաց քրիստոնէից բազում անգամ յառումն Ս. Երկրին. զի* ոչ այլ ազգք եւ ոչ այլ ժողովուրդք այնպէս յօժարամիտ եւ զուարթագին զանձինս ընծայեցուցին ի սատար օգնականութեան որպէս հայք, *որք զօրօք եւ երիվարօք, զինուք եւ թոշակօք, խորհրդով եւ ամենայն նպաստիւք ձեռնտու եւ* զօրավիգն եղեն քաջութեամբ եւ հաւատարմութեամբ առ քրիստոնեայս *յայնմ մեծի եւ կարեւոր պատերազմի»*[14]:

---

[14] *Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. հատոր,* էջ 19:

Զ · ԳԼՈՒԽ

Միջազգային առուտուրը փոքր Ասիայում: Հայոց մրցումը: Հայկական Այաս Նաւահանգիստն եւ իր կանոնները: Կիլիկիոյ թագաւորների հրովարտակները: Համբաւաւոր Մարկո Պոլոյի ուղեւորութիւնն եւ Այաս գալը: Մարկո Պոլոյի դիտողութիւնները ԺԳ· դարի Հայոց մասին: Վենետիկցիների եւ ջենովացիների նաւային պատերազմը Այասի առջեւ:

—

Եւրոպայի եւ Հայաստանի միջեւ առեւտրական յարաբերութիւնները սկսել են մշակուիլ ԺԱ· դարում եւ հետզհետէ զարգացել են: Այս ժամանակամիջոցում, Թաչատիր առանձներ չէին միայն՝ Կիլիկիայի ծովեզերքն եկողները: Նրանց հետ միասին եւ նրանցից յետոյ բազմաթիւ Եւրոպացի նաւապետներ եւ առեւտրականներ օգտուել են առթիւ եւ մեծ դործունէութիւն ցոյց տուել: Քրիստոնեաների՝ փոքր Ասիոյ զանազան մասերում եւ մանաւորապէս ծովեզերեայ վայրերում սեպհական եւրոպական իշխանապետութիւնները հիմնելը գլխաւոր ազդակն է եղած այս ճեռնարկութիւնների ծաղկելուն:

Այս դարերում, ոչ միայն Փոքր Ասիայի այլ եւ կենդրոնական Ասիայի եւ նոյն իսկ Ծայ-

թագոյն Աբեւելքի հետ առեւտրական յարաբերութիւններ տեղի էին ունենում Միջերկրականի ասիական ծովեզերքի միջոցով: Փոքր Ասիոյ եւ Միջագետքի զլխաւոր քաղաքներում, ինչպէս Հալէպ, Դամասկոս, Բաղդադ եւ Մուսուլ, առնաւճառներ էին սարքւում ապրանքների մթերման, վաճառման եւ փոխանակութեան համար: Իսկ ծայրագոյն Աբեւելքից՝ ապրանքները բերում էին կարմիր ծովով Ալիա եւ Աղէն նաւահանգիստներն եւ այնտեղից ցամաքային կարաւաններով փոխադրւում Միջերկրականի ծովեզերքը: Մթերանոցներ էին հաստատուել յատկապէս Միջերկրականի այն նաւահանգիստներում, որոնք ամէնից աւելի մերձաւոր յարաբերութիւններ ունէին եւրոպական ծովեզերքի հետ, այն է Տիւրոս, Աքիա, Բէյրութ եւ Տրիպոլի: Մթերուած ասիական եւ առ հասարակ արեւելեան ապրանքներն էին՝ չինական յախճապակի, դորգեր, մուշտակ, մարգարիտ, մետաքս, հոտաւէտ իւղեր եւայլն: Բացի դրանից յատուկ դործարաններ էին հիմնուել արեւելեան հում նիւթերից եւրոպական ճաշակի յարմար իրեր պատրաստելէ: Այսպիսի գործարաններ կային մանաւանդ հետեւեալ տեղերում՝ Անտիոքում եւ Տրիպոլիում մետաքսեղէն գործուածքների համար, Երուսաղէմում ոսկերչական իրերի, Տիւրոսում չաքարեղէնի, Հերրոնում ապակեղէնի եւայլն: Երբ իտալական եւ բելգիական նաւահանգիստներից նաւեր էին գալիս, վաճառականների համար օգնական խումբեր բե-

բելով կամ Փոքր Ասիայում հաստատուած եւրոպական դաղութներին՝ եւրոպական դրամական արդիւնք մատակարարում, այս միեւնոյն նաւերը վերադարձին տանում էին վերոյիշեալ մթերանոցներում ամբարուած կամ դործարաններում պատրաստուած նոր ձեւի ապրանքներ:

Այս դարերում, Միջերկրականի ծովեզերքի առուտուրը Վենետիկի, Պիզայի եւ Ջենովայի ձեռքումն էր. փոքր չափով միայն մասնակցում էր Մարսիլիան: Բայց այս մի-ջազգային առեւտրի մէջ «հայերը շատ լուրջ մրցակիցներ դարձան» նրանց, գրում է դաղիացի մի պատմագիր[1]: Հայերի առեւտրի դլխաւոր առարկաներն, որոնք կա՛մ ուղղակի կա՛մ իտալացիների միջոցով Եւրոպա կը ներմուծուէին՝ հետեւեալն էին՝ բուրդ, բամբակ, Փոքր Հայքի հանքերից ստացուած պղինձ ու երկաթ, գինի, չամիչ եւ ամէն տեսակ կենդանիներ՝ ձի, ջորի, էշ, ուղտ, այծ, գոմէշ եւայլն եւ նրանց կաշին ու մաղերէները: Սակայն հայ վաճառականների ամէնից աւելի մեծ ձեռնարկը մետաքսի առուտուրն էր: Եւ զարմանալի չէ այս: Դեռեւս Թ. եւ Ժ. դարերում, մետաքսեղէնն այնչափ առատ է եղել Հայոց քով, որ նոյն իսկ հասարակ մարդիկ մետաքսէ հագուստ են ունեցել: «Մինչեւ հովուաց եւ անդէորդաց մետաքսայս զդենուլ պատմուճան» վկայում է Ասողիկ (Գ. գ.):

---

[1] Ferd. Chalandon, Histoire de la Première Croisade, Paris 1929, էջ 359:

Հայկական առեւտրի ամենամեծ չուկան այն ժամանակ, ԺԱ. դարում, Արծն քաղաքն էր, կարնոյ դաչտում, «հռչակաւոր եւ բազմամբոխ քաղաք Հայոց» գրում է Ուռհայեցին, որի ասելով մինչեւ 150·000 հոգի բնակչութիւն է ունեցել եւ 800 եկեղեցի: Իսկ վաճառականների հարստութիւնը եղել է «անհամար չափս ոսկւոյ եւ արծաթոյ եւ զդիպակաց»: Բայց այս վաճառականներն երբեք անտարբեր չեն մնացել իրենց երկրի ազգի եւ եկեղեցոյ կարիքների հանդէպ· «վաճառականք, գրում է Արիստակէս Լաստիվերտացին, եկեղեցւոյ չինողք եւ զարդարիչք, կրօնաւորաց օթեւանք եւ հանդուցիչք, առ աղքատս ողորմածք եւ գարմանիչք··· եւ օդնողք թագաւորաց»:

Կիլիկիայի միջոցով կատարւում էր մի ուրիշ առուծախք, որ բարեբախտաբար՝ ոչ հայկական ապրանք էր եւ ոչ էլ հայի ձեռնարկութիւն: Կովկասից բերում էին դերիներ եւ գերուհիներ եւ այնտեղ ծախում Եգիպտոսի համար, հայկական դրամով: Գերին կ'արժէր 200 հայկական դրամ, իսկ գերուհին կրկինը՝ 400:

Բնդհատիք, յատկապէս Փլամանները՝ ԺԱ. դարի երկրորդ կէսից յետոյ են սկսել երեւալ Միջերկրականում իրրեւ ծովագնացներ:

Մի հետաքրքրական դէպք է պատահել այս բնդհատիների հետ Կիլիկիայի ծովեզերքում, ԺԲ. դարում: Տասը առագաստանաւ, մի հարուստ Փլամանդական ընկերութեան

տավ, պահել են, որ աւելի ձեռնտու է օտար ապրանքն ուղղակի առնելը քան թէ իրենց ապրանքի հետ փոխանակելը, եւ սկսել են ծովահէնութիւն անել: Նրանք՝ իրենց հանդիպած օտար նաւերը՝ փորձուած ծովագնացների ձեռքով ծակում էին յատակից եւ երբ այս պատճառով օտար նաւագնացների մէջ շփոթութիւն էր ծագում, Ֆլամաններն օգտւում էին հանգամանքից, յարձակւում, գրաւում եւ կողոպտում էին: Նրանք շուտով յայտնի են դարձել ամբողջ Միջերկրականում իբրեւ «կատաղ ծովահէններ»: Մի անգամ, իրենց գործն այսպէս շարունակելով նրանք եկել են մինչեւ Տարսոն, որպէս զի այնտեղ իրենց աւարը ծախեն կամ փոխանակեն, երբ յանկարծ ամենամեծ զարմանքով տեսնում են, որ Տարսոնի պարսպի վրայ իրենց ազգային, Ֆլանդրական դրօշակն է ծածանում: Գոդֆրուայի եղբայր Բոդուէնն էր այնտեղ, որ նոր եկել գրաւել էր Տարսոնը: Ծովահէն Ֆլամանների ուրախութիւնն անսահման է լինում իրենց հայրենակիցներին պատահելով: Բայց Բոդուէն նրանց համոզել է, որ ծովահինութիւնն անվայել է իրենց. ուստի Ֆլամանները թողել են այս արհեստն եւ Խաչակիր գրուելով «արժանաւոր կերպով իրենց կեանքն վերջացրին» ասում է Բելգիացի պատմիչը[2]:

Մերձաւոր Արեւելքի հետ այս առեւտրական յարաբերութիւնը Եւրոպայի տնտեսական

[2] Vanden Bussche, La Flandre, 1878, էջ 56:

կեանքի համար մի կարեւոր տարր դարձաւ, որ սկսել էր խաչակրութիւնների պատճառով եւ Խաչակրութեան դանդաղացման հիմնական պատճառներից մէկը պիտի դառնար: Արեւելքի այն դարի վայլուն քաղաքակրթութիւնը՝ բոլորովին նորութիւն էր քրիստոնեաների համար, կատարելապէս տարբեր այն նեղ եւ միօրինակ կենցաղավարութիւնից, որոնց սրանք սովոր էին Արեւմուտքի իրենց դղեակներում: Այս արեւելեան նոր կեանքը չուտով շրաւեց նրանց: Արեւելեան դղեակն, իր մեծ ծաւալովն աւելի յարմար երեւաց, մանաւանդ տեղական կլիմայի համար, քան իրենց սովորական ապրային հագուստը. նրանք իրենց դլխարկի վրայ փաթթեցին արաբական fուֆիյէն, որ պաշտպանում էր արեւի դէմ. նրանք ընտելացան արեւելեան նուրբ կերակուրներին[3]:

Ասորիքում եւ Պաղեստինում ոչ միայն եւրոպացի, այլ եւ տեղացի ժողովրդի հասարակ դասակարգը ապրում էր Աֆեայում (նախկին Ptolemaïsը): «Այստեղ ապրում էին, երկնքի տակ գտնուող ամենահարուստ վաճառականները, աշխարհիս բոլոր ազգերի առաջներից: Ապրում էին այստեղ ի մէջ այլոց պիզացիներ, Ջենովացիներ եւ լոմբարդացիներ, որոնց՝ իրարու հետ ունեցած անիծեալ ժառանգութիւնները պատճառ դարձան Աքեայի կործանման...: Արեւածագից մինչեւ արեւա-

---

[3] Louis Brehier, L'Eglise et l'Orient au Moyen Age, Paris 1907, էջ 99:

մուտքը, տիեզերքի ամէն ծայրից ամէն տեսակ ապրանք էին բերում այստեղ, ինչ որ կար ամենաթանդ եւ ամենահազուագիւտ, որովհետեւ այստեղ բնակւում էին իշխաններ եւ մեծամեծներ...»[4]:

ԺԱ. դարից սկսած Փոքր Հայքի բնակչութիւնը եւ մանաւանդ նրա պետերը ձգտում էին դէպի ծով: Օտար երկիրների հետ առևտրական, ապահով եւ անընդհատ յարաբերութիւններ ունենալու համար անհրաժեշտ էր ծովեզերքի տէր դառնալ: Թուրինեանները յաւ էին հասկացել այս կէտն եւ նրանք հատան իրենց նպատակին: Այնուհետեւ է, որ երկիրը նախ Հայակիլիկիա (Armeno-Cilicie) կոչուելուց յետոյ կամ դուցէ եւ միաժամանակ, ուղղակի Armenia եւ Terra Armeniorum սկսեց կոչուիլ եւրոպացիներից: Իսկ արաբները «Կիլիկիա» կոչումը բոլորովին թոյլ թողնելով Հայաստան կամ աւելի ճիշդը՝ «Հայկական երկիր կամ քաղաքներ» (Բիլադ-ուլ-էրմէն) սկսան անուանել:

Միայն ծովեզերք ունենալը բաւական չէր. պէտք էր յարմար նաւահանգիստ ունենալ: Այդ նաւահանգիստն եղաւ՝ Այասը: Կիլիկիայի ծովեզերքի վրայ կային ուրիշ փոքրիկ վայրեր, ուր մօտենում էին օտար առագաստա-

---

[4] G. Schlumberger, Byzance et Croisades, Paris 1927, էջ 219: Հեղինակն այս տողերը քաղել է մի դերմանացի ճանապարհորդի պատմութիւնից, որ ԺԴ. դարի առաջին կէսին այցելել է Աքեայի ափերին եւ նկարագրում է, ականատեսներից լսելով:

նաւեր եւ մեկնում էին այնտեղից: Դրանց ոչ մէկը չունէր Այասի առաւելութիւնները: Հետաքրքրական է, որ Այաս դարձաւ կառուցել նաւահանգիստ եւ դրաւեց իր վրայ բոլոր Եւրոպացի նաւապետների եւ առեւտրականների ուշադրութիւնը: Այաս Հայոց Պատմութեան մէջ կարեւոր է, իբրեւ միակ հայկական նաւահանգիստը, ուստի արժէ նրա մասին մանրամասն խօսել:

Այաս ունէր արդէն իր պատմական անցեալը: Նա յայտնի էր հռոմէական աշխարհին Aegae իսկ յունականին Egea (գաղղ. Egée) կոչումներով: Այս նախկին պատմական ծովեզերեայ փոքր քաղաքը 7 դար անյայտութեան մէջ մնալուց յետոյ, նորից վերակենդանացաւ շնորհիւ Կիլիկիոյ հայ իշխանապետութեան: Իտալացի նաւապետներն սկսան կոչել այնուհետեւ՝ Portus Ayacii, Domini Regis Ermenie, ինչպէս յիշուած է Զենովայի պաշտօնական արձանագրութիւնների մէջ: Այս նոր «Regis Ermenie»ի («Հայաստանի թագաւորութեան») մայրաքաղաքը Սիսն էր, բայց բարեխառն սիրտը Այասն է եղած: Հ. Ալիշանն՝ այս երկրին նուիրած իր բազմարժէք երկասիրութիւնը Սիսուան է կոչել, իբրեւ Սիսից կախում ունեցող, հրապարակելով Գրիգոր Տղայ կաթողիկոսի մի քերթուածից, որտեղ Կիլիկեան Սիսուան է կոչուած:

Երբ Եգիպտացիք 1268ին գրաւեցին Անտիոքն եւ ապա 1291ին նաեւ Ակեան (Saint

Jean d'Acre), հայկական Այասը *Միջերկրականի ասիական ծովեզերքի ամէնից կարեւոր եւ բանուկ նաւահանգիստը դարձաւ եւ այսպէս մնաց մինչեւ ԺԴ. դարի կէսը: Ժամանակի Եւրոպական մատենագրութեան մէջ նա կոչուած է* Ajazzo, Lajazzo *եւ* Lascaso:

Ամէնից յառաջ վենետիկցիք են եկել Այաս. բայց նրանց անմիջապէս հետեւել են Բելգիացիք, որոնք գալիս էին Բրիժ կամ Բրիւգէ նաւահանգստից, որի մասին ընդարձակօրէն պիտի խօսիմ յաջորդ Գլխում:

Հետզհետէ Այաս են երթեւեկել Միջերկրականի ծովեզերքի բոլոր նաւապնացները, յոյներ, ապանիացիք, գաղղիացիք եւայլն: Սրանց բոլորի նպատակն էր իրենց երկրի գործառնական արդիւնքներն եւ այլ եւրոպական գործուածքներ Այասի միջոցով վաճառել Փոքր Ասիոյ ներքին շուկաներում: Երբ այս կերպով Եւրոպացի վաճառականներ հիմնաւորապէս հաստատուել են Այասում, նրանց կառավարութիւններն էլ հիւպատոսներ են նշանակել, իրենց հպատակների շահերը պաշտպանելու համար: Այս հիւպատոս — consul *բառն է, որ Կիլիկիոյ այն ժամանակի լեզուի մէջ գործել է «դունց»:*

Այասում հաստատուած էր յատուկ արքայական տեսան, որ ունէր արձանագրւում էին բոլոր առեւտրական գործողութիւնները Եւրոպացիների եւ Հայոց մէջ:

Այս պաշտօնատեղին Եւրոպացիք կոչել են Curia Regis Armeniae: *Նա երկու ճիւղի էր*

բաժնուած, նայելով գործառնութիւնների տեսակին: Այնպէս բացի արքունի հայ պաշտօնեաներից կային յատուկ թարգմաններ՝ մանաւանդ լատիներէնի համար, որ գործառնութիւնների պաշտօնական լեզու էր բոլոր եւրոպացիների համար, իբրեւ այն դարի ամէնից տարածուած գրական լեզուն: Կային թարգմաններ նաեւ իտալերէնի, գաղղիերէնի, արաբերէնի եւ ուրիշ լեզուների համար:

Այստեղ կար հայկական մաքսատուն, որ կոչւում էր Բաժ–տուն: Լատիներէն գրուած կամ լատիներէնի թարգմանուած հայ արքունի հրովարտակներում այս բառը լատինականի է վերածուել Pasidonium կամ Pacistonium ձեւի տակ: Եւ այս Բաժ–տունը այնքան եկամուտ է ունեցել որ նրա հասոյթով հայկական պետական ծախքերի մեծ մասն է հոգացուել, որ անշուշտ շատ կարեւոր եկամուտ է, քանի որ եւրոպացի վաճառականները, առանձնապէս Ջենովացիք, Վենետիկցիք եւ Ֆիորէնցիացիք մեծ արտօնութիւններ էին վայելում տուրքի կողմից, արքունի հրովարտակներով շնորհուած: Այս հրովարտակները մեծ մասամբ պահպանուած եւ հրատարակուած են, թէեւ ցիրուցան եւ դանազան տեղեր: Շահեկան է ի մէջ այլոց Վ. Լանգլուայի ժողովածուն՝ Trésor des Chartes d'Arménie (տպ. Վենետիկ 1863):

Այս հայկական վաւերագրների մէջ նշանաւոր է Լեւոն Ա.ի հրովարտակն, որ առա-

ջինն է եղած այս արտօնութիւնները չնորհողը:

Այսպէս կենդանութիւն են տուած մանաւանդ Կոստանդին եւ իր որդին Հեթում, որ 1261ի հրովարտակով վենետիկցիներին ընդարձակ առանձնաշնորհումներ էր տալիս:

Այստեղ կգտնում ենք Կիլիկիոյ հայ թագաւորների կողմից տրուած երկու հազուագիւտ հրովարտակի հարազատ նմանահանութիւնը: Այս հրովարտակները վերաբերում են Այասին եւ հետաքրքրական են թէ իրենց բովանդակութեամբն եւ թէ իրենց լեզուով որ այն ժամանակի տիրող դրական բարբառն է եղած:

Առաջին հրովարտակին ընթերցուածն է.

«Ի թագաւորական բարձր հրամանաց գիտացիր, պարոն Աւշին Եհաննենց պո(ռքսիմ)ոս, որ կու համենք քեզ, որ Մունբուղլէրցի վաճառականք, զոր կան ի մեր աշխարքս ի Այաս ու զոր ի յայս գի ի հետ գան ու գնան ի վաճառականութիւն ի մեր աստուածապահ աշխարքս ի Այաս, նայ գիրենք այս կերպով տաս խալսել ի Այասոյ Բայժտանն, որ ի ծախելն եւ ի գնելն ի հարոյրն երկուք մէն տան. եւ գիրս քեզ համանք. ի մեծ թվին ՉԿԴ, ի յունվար է»:

(Տառրագր.) ԱՒՇԻՆ թգ.

Հրովարտակի եռեւը գրուած է.

«Ի յԱւշին Եհաննենց պո(ռքսիմ)ոսէս գիտացիր, սիր Թորոս Մխիթարենց, Այասոյ

Բայժատանն գլխաւոր, որ առնուս գԹագվորին ձեռնգրաւ բարձր համանքն, ու իջու ի Բայժատանս ի Թաւթերն ու արայ որպէս գրած է ու համած ի մէկայլ գեհն»:

(Մոորագր․)　　　　Աստուծոյ Ծառայ

ԱԻՇԻՆՍ

Այս հրովարտակը շնորհուել է ի նպաստ «Մունրուգլէրի» վաճառականներին որ է Գաղղիայի Մոնպէլիէ (Monpelier) քաղաքը: Աւշին Թագաւորը հրամայում է Եհաննենց «Պառքսիմոսին», որ նրանցից՝ փոխանակ 4% միայն 2% տուրք առնէ: Եհաննենց էլ իր կողմից նոյն պատուերը փոխանցել է «Բաժնետան» (մաքսատան) գլխաւոր Թորոս Մխայլէնցին, որ սա բստ այնմ վարուի:

Հրովարտակի Թուականը՝ Յունվար 7 Հայոց ՉԿԳ = 763 համապատասխանում է մեր 1314 Յունվար 7ին, որ Օշինի Թագաւորութեան 7դ տարին էր:

Երկրորդ հրովարտակը (էջ 457—458) կարդացւում է այսպէս․

«Ի Թագաւորական բարձր հրամանաց գիտացիր, պարոն Պետրոս պո(ռքսիմ)ոս, որ Մունրուգլէրցի վաճառականքն բերին առ մեզ զայն համանքն, որ մեր ի Քրիստոս հանգուցեալ հայրն է պարգեւել իրենց, որ տեսաք որ իրենք, զոր կան ի յԱյաս ու զոր այլ գան ի հետ ու ի հետ ի մեր աստուածապ(ահ) աշխարքն ի յԱյաս ի վաճառականութիւն, նայ ի գնելն ու ի ծախելն ի յԱյասայ բաժատնն ի

յամէն հարոյրն երկուք մէն տան մեզ իրա-
վունք, ամ կու համենք քեզ, որ պիրենք ի վրայ
այն հաւնացն տաս պահել, որ մեր հայրն է
պարգեւել իրենց. եւ այս քեզ համանք. ԺԶ ի
Մարտըն. թվ. Դ. ի մեծ թվ. ՉՀ:

Իջցնէ ի սիջիլ պայնիս պրերս»:

Հրովարտակիս եաեւը գրուած է.

«Մենք Հեթում Զամպլայս ու Հեթում սի-
նիջեալս հասկցուցաք գայսոր բանն թագ-
վորին: † Հեթում. † Հեթում.»

«Ի Պեարոս (Ի)պտենց պո(ոքսիմ)ոսէ
պիտեցիք պարոն Կոստանց, Այասոյ Բայժ-
ատնն գլխաւոր, որ առնոյք թագվորին ձեռն-
գրաւ բարձր համանք, որ պայլերն ի մէկալ
գետն են ձեռնգրել, ու տուր իջեցնել ի Բայժ-
ատնս ի թաթերն ու այնել որպէս համած է ի
մէկալ գետն»:

Այասեղ Օշին թագաւորի որդին կրկնում է այն արտօնութիւնն, որ իր «ի Բրիստոս հանգուցեալ հայրը» շնորհել է Մոնպէլիէցի վաճառականներին: Բայց որովհետեւ Օշինի որդին, որ էր Լեւոն Ե. այդ թուականին դեռ անչափահաս էր, 11 տարեկան մի տղայ, ուստի երկիրը նրա անունից կառավարում էին 3 հայ իշխաններ, իրրեւ խնամակալ, որոնք էին՝ 1. արքունի սպասարապետ Հեթում, 2. արքունի դաստուր Հեթում եւ 3. Կորիկոսի կոմս Օշին: Հրովարտակի տակ այս վերջինիս ստորագրութիւնը չկայ, որովհետեւ նա սպարապետ Կոստանդի հետ գնացել էր Այասի

վրայ արշաւող եղիպտացի թշնամի բանակի դէմ:

Ուշադրութեան արժանի է Բ. հրովարտակի թուականն եւս: Այստեղ կայ մի անորոշ «թվ. Դ.» եւ ապա Հայոց թուականը ՉՀ = 770, որ անում է 1321 (ճշդապոյնը՝ 30 Դեկտեմբեր 1320—29 Դեկտեմբեր 1321)[5]:

Կիպրոս կղզում հաստատուած էր Ֆլորէնցայի նշանաւոր սեղանաւորական տան՝ «Բարդի ընկերութեան» (Compagnie de Bardi) մի ճիւղն, որ ընդարձակ առեւտրական դործունէութիւն ունէր ԺԴ. դարում եւ իր յատուկ պրաւենեակներն ունէր եւրոպական կարեւոր չուկաներում, ի մէջ այլոց նաեւ Բելպիական Բրիւժում: Լեւոն Ե. Լուսինեան 1335 Յունուար 10 թուով հրովարտակով մեծ արտօնութիւններ էր շնորհել այս ընկերութեան՝ Այասում եւ առ հասարակ հայկական աշխարհում գործելու համար: Կիպրոսի ճիւղի կառավարիչը՝ Բալդուչչի Պէգոլէտտի (Balducci Pegoletti), մի հետաքրքրական յիշատակագիր է կազմել իր ժամանակ տեղի ունեցած առեւտրական յարաբերութիւնների վրայ: Սրա մէջ մի յատուկ գլուխ կայ որ շատ կարեւոր է հայկական ծանրութեան եւ տարածութեան չափերը որոշելու տեսակէտից: Վերնագիրն է՝ «Come i pesi e le mesure d' Erminia tornano in diverse terre, e quelle con Erminia e primieramente con Vinegia».

---

[5] Հանդէս Ամսօրեայ, 1905, էջ 107—111:

Այնտեղ ասուած է՝

«Ruotali uno d' Erminia di spezieria, faè in Bruggia, libre XIV. Marchi uno d' argento al peso di Bruggia, faè a Lajazzo in Erminia once VJ e starlini XIIJ [6]».

Հայկական այս հին եւ միակ նաւահանգիստի յիշատակը պահպանուած է ԺԳ. դարի համբաւաւոր ճանապարհորդ՝ Վենետիկցի Մարկո Պօլոյի հանրածանօթ ուղեգրութեան պատմութեան մէջ: Աչխարհահռչակ ուղեւորն այնքան կենդանի գոյնով է նկարագրել Այասն եւ առ հասարակ իր ունեցած տեղերի հայութիւնը, որ ես աւելորդ չեմ համարում ընդարձակօրէն յառաջ բերել նրա ուղեգրութեան այս մասը [7]:

Մարկո Պօլօ իր Յառաջաբանի մէջ ամէնից յառաջ Հայաստանն է յիչում, քանի որ Հայաստանից է սկսել իր մեծ ճանապարհորդութիւնը դէպի ծայրագոյն Արեւելք «Ահէք այս պէրքն, ասում է նա, կարդացէք, որպէս դի

---

[6] *Ֆիօրէնցիայի Բիւկարդեան Մատենադարանի ձեռագիրը՝* Pratica della mercatura, *հրտր.* Paganini, T. III, ch. XI, p. 44. La Flandre, 1880, էջ 15—16:

[7] *Մարկո Պօլոյի այս նչանաւոր ուղեգրութիւնը բազմաթիւ հրատարակութիւններ եւ թարգմանութիւններ է ունեցած: Նա գրուած է եղել նախ 1295ին, ապա Մարկոն 1307ին վերաքննել եւ ուղղել է մի քանի տեղեր: Ես աչքիս առջեւ ունիմ ամենանոր եւ չքեղ հրատարակութիւնը, որ կատարուած է Պէկինում, 1924—1928, որովհետեւ Պօլօն ամէնից աւելի Չինաստանի մասին է խօսած: Հրատարակիչը՝* A. J. Charignon, *ակզբնական բնագրի լեզուն, որ ԺԳ. դարի ֆրանսերէն գործածական լեզուն է եղել, վերածել է այժմեան գրական դաղղիերէնի եւ բազմաթիւ ծանօթագրութիւններով ճոխացրել:*

տեղեկանաք թէ ինչ մեծ հրաշալիքներ են այն-տեղ նկարագրուած Մեծ Հայաստանի, Պարսկաստանի, Թաթարստանի, Հնդկաստանի եւ ուրիշ երկիրների վրայ...»:

Ա. Գլուխն այսպէս է սկսում. «Այս (ուղեւորութիւնը) պատահեցաւ այն ժամանակ երբ Քրիստոսի 1260 թուականին Բոդուէն՝ Կ. Պոլսի կայսր էր»: Այս Բոդուէնը Բելգիացի իշխանն էր, որ Կ. Պոլսի լատինական նոր պետութեան կայսրը դարձաւ, ինչպէս տեսանք, աշխատութեանս Դ. Գլխում: Այդ ժամանակ դեռ եւս Մարկօն չէր մտանակցում. նրա հայրն ու հօրեղբայրն էին եկել Կ. Պոլիս, իբրեւ Վենետիկցի վաճառականներ եւ այնտեղից նրանք դնացել են Սրիմ եւ ապա Կովկասից անցնելով մինչեւ Բուխարա, ուր այցելել եւ հիւր են եղել Թաթար Խանին, որին Koubilai (Կուբիլայ) Խան են կոչում: Այս արեւելեան վեհապետն առաջին անգամ էր տեսնում եւրոպացի, կամ ինչպէս այն ժամանակ անուանում էին՝ Լատին մարդ. ուստի մեծ համակրութեամբ է ընդունել նրանց, տեղեկութիւններ է քաղել լատին աշխարհի եւ քրիստոնեաների մասին եւ որոշել է մի բարեկամական նամակ գրել Հռոմի Պապին: Պօլօ եղբայրներն յանձն են առնում նամակն անձամբ տանել Հռոմ եւ ճանապարհ են բնկնում Բուխարայից: «Երկար օրեր ուղեւորութեամբ, ասուած է բնագրում, նրանք վերջապէս հասան Լայաս, Հայաստանում: Այս էլ ձեզ ասեմ, որ նրանք երեք տարուայ հասան Լայաս, որովհե-

ու չէին կարողացել անընդհատ ճանապարհորդել վատ եղանակների, ձիւնի, հեղեղային անձրեւների եւ գետերի ողողման պատճառով» (էջ 14—15):

Այստից նրանք գնացել են Աքեա, ուր եկել են 1269 Ապրիլին: Այդտեղ լսել են որ Հռոմի Պապը (Կղեմէս Զ.), որի հասցէին ղրուած է եղել Խանի նամակը, վախճանել է, ուստի այլեւս աւելորդ են համարել Հռոմ գնալ եւ եկել են իրենց հայրենիքը, Վենետիկ: Բայց նրանք որոշել են Խանի միւս յանձնարարութիւնն անպատճառ կատարել, այն է երթալ Երուսաղէմ, Քրիստոսի Գերեզմանի կանթեղից մի քիչ եղ առնել եւ տանել Խանին: Մեծ եղբայր Նիկոլան 15 տարեկան մի որդի ունէր՝ Մարկօն, որ ձգտել է անպատճառ ընկերանալ նրանց. եւ ահա այս կերպով պատանի Մարկօ Պօլօն սկսում է իր՝ մինչեւ այն ժամանակ անօրինակ եւ արտակարգ ճանապարհորդութիւնը:

Մեր ուղեւորները գնում են Երուսաղէմ, առնում են նուիրական եղն եւ գալիս են Այաս, որպէս զի շարունակեն իրենց ճանապարհը դէպի Բուխարա:

Այս ժամանակամիջոցում Հռոմում կատարուել էր նոր քահանայապետի ընտրութիւն եւ Աքեայի լատին նուիրակն էր ընտրուել, Գրիգոր Ժ. անուանով, որ իմացնում է Պօլօ եղբայրներին թէ ինք պատրաստ է նրանց ընդունել Աքեայում: Նրանց գործը մեծապէս դիւրացնում է Կիլիկիայի թագաւորը. «Հայա-

ստանի թագաւորն, *առաւած է բնագրում*, անմիջապէս յատուկ նաւ պատրաստել *առնց, որպէս պի նրանք Աքեա գնան, Պապի մօտ»* (ՀՀ 18)։

Թէ այս եւ թէ նուիրական եղի յանձնարարութիւնը հաւատարմութեամբ կատարելուց յետոյ, Մարկո Պօլօն առանձին չարունակում է իր մեծ հանապարհորդութիւնը։ Նա կրկին անգամ անցել, դարձել է Հայաստան եւ իր Գրքի XIX եւ XXI Գլուխները նուիրում է Հայաստանի կացութեան։ Ես յառաջ կը բերեմ միայն այն Գլուխն, որ տեղ խօսում է Փոքր Հայքի Կիլիկիայի մասին, որովհետեւ սա միայն կապ ունի մեր պատմութեան հետ։

«*Ձիշդ է, որ երկու Հայաստան գոյութիւն ունի, Մեծ եւ Փոքր։ Փոքր Հայաստանի (Կիլիկեան է ակնարկում) թագաւորը իր երկիրը կառավարում է արդարութեամբ։ Նա հնազանդում է թաթարներին։ Շատ քաղաքներ եւ դղեակներ կան այնտեղ եւ ամէն բանի մեծ առատութիւն է տիրում։ Այս երկիրը չատ յարմար է վայրենի անասուններին եւ թռչուններին որսորդութեան համար։ Բայց ձեզ այն էլ ասեմ, որ երկիրը առողջապահական վայր չէ, այլ ընդհակառակն շատ վատառողջ տեղ է։ Հին ժամանակ այս երկրի ազնուականները նշանաւոր էին իրենց զինուորական գործերովը եւ քաջութեամբը. բայց հիմայ ողորմելի են եւ վատոգի (vil). ամենևին քաջասրտութիւն չունին. յաւ խմողներ են միայն։ Ծովեզերքում մի քաղաք կայ, որ Լայաս* (Layas) է

կոչում, որ մեծ առեւտրի տեղ է: Իմացէք, որ բոլոր համեմներըը, առուեղէնները, ոսկեղէն իրերն եւ ուրիշ ապրանքներ բերում են այստեղ նեբսեբից· իսկ Վենետիկի, Ջենովայի եւ ուրիշ երկիրների վաճառականներ գալիս են, ծախում են իրենց բերած ապրանքներն եւ գնում, առնում են ինչ որ իրենց պէտք է: Ով որ ուզէ երկրի նեբսեբը գնալ, վաճառական թէ ուրիշ ուզեւոր պէտք է որ այս քաղաքից անցնի» (ՀՂ 33) [8]:

Հետաքրքրական է այս երկար ուղեւորութեան վախճանը: Մարկո Պօլօ տասնեակ տարիներ վերջը դարձեալ եկել է Այաս այս անգամ այնտեղ կռուելու համար: Այս դէպքը հետեւեալ կերպով է նկարագրուած նրա գրքում: Մարկո Պօլօ 26 տարի Արեւելքում ճանապարհորդելուց յետոյ, վերադարձել էր Վենետիկ այնպիսի հագուստով, դէմքով եւ նոյն իսկ խօսուածքով, որ իր հայրենակիցները չէն ճանաչել նրան: Բոլորն էլ նրան մեռած էին կարծում եւ նոյն իսկ նրա հօրեղբայրական տունն անցել էր ուրիշ ժառանգների ձեռքը: Շատ ժամանակ է հարկ եղել, մինչեւ որ ամէն ինչ կարգի մտնէ: Վենետիկցիք երբ տեսել են թէ Մարկոն, իր հայրն ու հօրեղբայրը մեծ քանակութեամբ գոհարեղէն են բերել Արեւելքից, իրենց հագուստեղէնի մէջ

---

[8] Ուշադրութեան արժանի են տասը, անկողմնակալ ականատեսի այս տողերը (առորագծումը մերն է), հայ երկրի եւ ազնուականների այն ժամանակի կացութեան եւ բարքերի մասին:

կարուած, նրանց տրամադրութիւնն էլ փոխուել է…: Մարկօն այնուհետեւ կոչուել է Marco Millioni:

Այն դարերում, Վենետիկի եւ Ջենովայի հասարակապետութիւնները չարանակ մրցման մէջ էին, եւ ամէն կերպ աշխատում էին իրար վնասել, մանաւանդ նաւագնացութեան եւ միջազգային առեւտրի մէջ: Մարկոյի դարձից քիչ վերջը Ջենովացիների նաւատորմիղը Դալմատիայի ծովեզերքի վրայ սկսել է սպառնալ Վենետիկցիներին: Վենետիկի հասարակապետութիւնն էլ իր կողմից ռազմանաւեր է պատրաստել, նրանց դիմադրելու համար: Մարկոյի մէջ զարթել է հայրենասիրական ոգին եւ նա իր սեպհական ռազմանաւով միանում է Վենետիկեան նաւատորմիղին, Ջենովացիների դէմ կռուելու համար: Երկու թշնամի նաւատորմիղները բաց ծովում միմեանց հալածելով վերջ ի վերջոյ երկուսն էլ գալիս են… Այյաս եւ հայկական նաւահանգիստը 1296ին նաւային մեծ պատերազմի դաշտ է հանդիսանում: Յաղթանակը մնում է Ջենովացիներին, որոնք 25 Վենետիկեան նաւ կործանում եւ գերում են, որոնց մէջ է լինում նաեւ Մարկոյի սեպհական նաւը[9]*: Մեր համ–*

[9] *Հեթում պատմիչ՝ Այասի առջեւ պղպիսի մի նաւային պատերազմի նկարագրութիւնն է տալիս, որ տեղի է ունեցել 2 Յունիս 1293ին: Ջենովացիները 12 ռազմանաւով* (Galère) *յարձակուել են վենետիկցիների 32 նաւերի վրայ որոնց 24ը գերի են վերցրել: Այս պարտութեան վրէժը լուծելու համար վենետիկցիներն էլ մի քանի տարի վերջը ջենովացիների գրասենեակները են կործանել:*

բաւական ճանապարհորդն ինքն էլ գերի է ընկնում : Ջենովացիները բերում են նրան Ջենովա եւ բանտարկում : Մարկո Պօլոյի անունն արդէն այնքան տարածուած էր Եւրոպայում, որ երկու տարի շարունակ ամէն կողմից գալիս այցելում են նրան իր բանտում, որ նրա բերանից լսեն իր անօրինակ ուղեւորութեան արկածները : Այդ պատճառով, այն էլ միեւնոյն բանը անդադար չկրկնելու համար, Մարկո որոշել է թելադրել եւ գրել տալ իր ճանապարհորդութիւնը : Պիզացի մի Ռուստիչէն, գրի է առել, որից յետոյ ուրիշներն ընդօրինակելով տարածել են : Այդ սկզբնական բնագրի վերնագիրն է եղել՝ Livres des diversités et merveilles du monde :

Մարկո Պօլօ 4 տարի բանտում մնալուց յետոյ, վերջապէս շնորհիւ իր մեծ համբաւին ազատւում է եւ դառնում Վենետիկ, ուր եւ վախճանւում է 1324ին (էջ 29—30) :

Պատմագիրները բացի իր բազմակողմանի, ճշգրիտ եւ սրամիտ նկարագրութիւններից մի ուրիշ մեծ արդիւնք են վերագրում Մարկո Պօլոյին, այն է որ նա՝ շնորհիւ Թաթար Խանի վրայ ունեցած ազդեցութեան կարողացել է համոզել, որ սա չմիանայ մահմեդական Սարակինոսներին Խաչակիրների դէմ, որ եթէ պատահէր, անշուշտ մեծապէս պիտի դժուարացնէր այս վերջինների գործունէութիւնը Ս. Երկրում եւ շրջակայքում :

Ռուբինեանների անկումից յետոյ Այասն էլ կորցրեց իր գոյութեան իրաւունքը: Առուտուրը եւ նաւագնացութիւնը տեղափոխուեցան խորշի միւս եզերքն, Ալեքսանդրէտ: Այաս դարձաւ մի խեղճուկ աննշան գեղ, ճահճային վայրում, Ջէհան գետի բերանի վրայ, Դէօրտ Եօլի մօտ:

Է. ԳԼՈՒԽ

Բելգիական Բրիւժ ճաւահանգիստը: Հայոց երթեւեկութիւնը: Բելգիացի հնագէտ վանդէն Բիւսէէի հետազօտութիւնները հայ-բելգիական յարաբերութիւնների մասին: Վանդէն Բիւսէէի եւ Հ. Ղ. Վ. Ալիշանի թղթակցութիւնը: Ֆլամաներէն արձանագրութիւններ Հայոց մասին: Կիլիկիայի վերջին թագաւոր Լեւոն Ջ.ը Բելգիայում: Բրիւժի անկումը:

ԺԱ.—ԺԵ. դարերում, Բելգիայի ամբողջ առեւտրական եւ արդիւնաբերական գործունէութիւնը կենդրոնացել էր Ֆլանդրա գաւառում, որի նաւահանգիստն էր Բրիւժ (Bruge) *կամ Ֆլամաներէն Բրիւգդէ* (Brugge): *«Միջնադարում՝ Բրիւժ եւրոպական առեւտրի մեծ ճանապարհների ժամանակէան էր դարձել»*[1]: *ԺԳ. դարում նա արդէն այնչափ էր յառաջացել, որ մրցում էր Վենետիկի հետ եւ այդ պատճառով «Հիւսիսային Վենետիկ» տիտղոսն էր կրում: Միեւնոյն ժամանակ չնորհիւ այն կենդրոնական դիրքին, որ նա գրաւում էր*

---

[1] H. Pirenne, Histoire de Belgique. Գ. հատոր, էջ 211:

Գաղղիայի, Անգղիայի եւ Գերմանիայի մէջ, Բրիւժ միջազգային դրամական հրապարակ էր եւ Եւրոպայի առեւտրական վճարումները մեծ մասամբ այնտեղ էին կատարւում:

Բրիւժ գտնւում էր Զվինել ծովախորշի վրայ եւ իր նաւահանգիստը, նոյն իսկ իր դիրքը՝ ծովի յառաջխաղացումից ապահովելու համար, ծովեզերքի վրայ բարձր պատուար էր կանգնեցրել: Ծովի դէմ կատարուած այս ձեռնարկն այնքան հռչակ էր ստացել ամբողջ Եւրոպայում, որ ԺԳ. դարի իտալական մեծ հանճարը, Դանտէ, որ ժամանակակից էր, անմահացրել է այդ պատուարն իր «Աստուածային Կատակերգութեան»ը մէջ[2]:

Բրիւժ Ֆլամանական քաղաք էր, բայց բնակիչների մեծ մասը օտարերկրացիներ էին, այն երկիրներից եկած, որտեղից ապրանքներ էին բերւում այնտեղ ծախելու կամ փոխանակելու: Այս ապրանքներն էին ի մէջ այլոց՝ Անգլիայից բրդեղէն, Հունգարիայից եւ Բոհեմիայից մետաղներ, Ռուսաստանից մորթեղէն, Սպանիայից դանազան եղեր եւ այլն[3]: Օտար քաղաքացիների այս բազմութեան պատճառով Բրիւժի քաղաքային վարչութիւնը իր թղթակցութիւնները դրում էր դաղղիերէն,

---

[2] Dante Alighieri, Inferno XV, 4—6. Ահա այդ տողերի պարզ թարգմանութիւնը. «Ինչպէս որ Ֆլամանցիները Ուիսաղանդի եւ Բրիւժի մէջ, իրենց վրայ խաղացող ծովային ալիքի դէմ թումբ են կանգնեցնում, որպէս զի ծովը փախչի»:

[3] Van Bruyssel, Histoire du Commerce et de la marine de Belgique. Bruxelles 1861—1865.

դերմաներէն, անդղիերէն, բայց մանաւանդ լատիներէն, որ Միջին Դարուն Եւրոպայի սովորական միջազգային լեզուն էր:

Բրիւժի փլամանները յարաբերութեան մէջ էին նաեւ Կիլիկիայի եւ մանաւորապէս Այասի հետ: Վ. Լանգլուա իր Trésor des Chartes d'Arménieի Յառաջաբանի մէջ գրում է.

«ԺԴ. դարում առուտուրը Հայաստանում (Հայակիլիկիայում) ընդարձակ չափեր էր առել եւ բոլոր օտար նաւաղնացներն ափերում էին (Հայոց թագաւորից) այլեւայլ արտօնութիւններ, որ եւ ստացան, աւելի կամ նուազ չափով: Այս ափերատրկու ազգերի թուումն էին նաեւ Բրիւժի փլամանները»:

Նոյն ԺԴ. դարումն է, որ սկսել է նաեւ Հայոց երթեւեկութիւնը Բելգիա: Առաջին հայ առեւտրականներն եկել են Բրիւժ 1340ին, եւ բերել են ծախելու կամ փոխանակելու, հայկական եւ առ հասարակ արեւելեան բերքեր՝ ներկեր, համեմներ, գորգեր եւ այլն: Ըստ երեւոյթին նրանք երկար չեն մնացել այնտեղ, որովհետեւ 1354ի արձանագրութիւնների մէջ հայի անուն չկայ: Նրանք 1358—1360ի չրջանում վերադարձել են աւելի մեծ թուով, հաստատուել են Հրապարակի վրայ եւ առեւտրական ընդարձակ գործունէութիւն սկսել: Նրանք իրենց ներմուծած արեւելեան ապրանքների փոխարէն, տեղական կամ եւրոպական ուրիչ երկիրներից Բրիւժում ամբարուած զանազան

պործուածքներ էին գնում եւ ուղարկում կամ տանում թէ Անգլիա եւ թէ այն նաւահանգիստներն, Միջերկրականի շուրջն, ուր իրենք ճիւղեր կամ ընկերներ ունէին:

Բրիւժում միջազգային առեւտրով պրաղող բոլոր ցեղերը, Միջերկրականից սկսած մինչեւ Բալտիկեան ծովեզերքում բնակողները, ամէնքն էլ իրենց յատուկ «ազգային տուներն» ունէին, որ loժա (loge) էր կոչւում: Անգլիա կերպով Բրիւժ համաչխարհային բնակավայրի կերպարանք ունէր: Հայերը չեն ուշացել եա մնալ եւ կառուցել են նոյնպէս իրենց լօժան կամ «Հայտունը»:

Միջինդարում առեւտրական վոխանակութիւնն այնպէս էր կազմակերպուած, որ օտարերկրացիները պարտաւոր էին միջնորդի ձեռքով գործ ունենալ ուրիչ վաճառականների հետ: Այս միջնորդն էլ պէտք է անպատճառ տեղացի լինէր, եւ Բրիւժցիք մեծապէս օգտուում էին այս հանգամանքից:

Բրիւժի Սէնտ Օբէր (Saint Obert) *վանքի հին արձանագրութիւնների մէջ այսպիսի մի պէպք է պատմուած: «Նիկոդեմոս անունով Հայը* (Niclaise den Hermenier) *իրեն ընկերացող բարձրաստիճան եկեղեցականին* (prelat) *մի կտոր գործուածք* (lakine) *ընծայեց, իսկ նրանց, որոնք նրա հետ միասին Ս. Խաչի Դուռն* (Cruusporte) *անցան, 12 լիրա* (xij lb.) *տուաւ»*[4]: *Ո՞վ էր այդ Նիկոդեմոս. անչուշտ*

[4] La Flandre. Bruges 1880, p. 17.

որ եւ է պատգամաւոր, որին առանձին պատիւ են տուել եւ որ հնարաւորութիւն է ունեցել ընծաներ տալու պրէլատին եւ ուրիշներին:

Բրիւժի ԺԴ., ԺԴ. եւ ԺԵ. դարերի նեբածութեան եւ արտածութեան մասին մի հետաքրքրական վաւերագիր կայ Պարիսի Ազգային Մատենադարանում (Bibliothèque Nationale), որի մէջ յիշուած են թէ ո՞րտեղից, ի՞նչ տեսակ ապրանք էր ներմուծւում: Այս ցուցակի համեմատ՝ Կ. Պոլսից, Երուսաղէմից եւ Եգիպտոսից յետոյ կարդը գալիս է Հայաստանին (Հայաքիլիկիա) եւ գրուած է այսպէս՝ «Dou royaume de Hermenie vient contons et tote autre espicerie dessus dite», այսինքն՝ «Հայաստանի թագաւորութիւնից առացւում է բամբակ եւ դանազան համեմներէն, ինչպէս վերը յիշուած է». իսկ վերը յիշուածներն են՝ «պղպեղ, ամէն ուրիշ համեմներ եւ bresis, որ ներկելու գործ է»[5]:

Բրիւժի կամ աւելի ընդարձակօրէն խօսելով Ֆլանդրայի՝ Մէջին Դարում Կլիկիայի եւ առ հասարակ Հայոց հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը պարտական ենք մի Ֆլամանդ ուսումնականի, Էմիլ Վանդէն Բիւսքէի (Emil Vanden Bussche), որ Բելգիայի պետական դիւանապահն է եղած եւ իրեն նպատակ էր

---

[5] Le Grand d'Aussy, Fabliaux (3e édit.). Paris 1829, p. 8.

դրած Բելգիայի, մասնաւորապէս նրա Ֆլամանական մասի հնութիւններն եւ պատմական չինութիւններն ուսումնասիրել: Նա 1878*ին յօրինել է մի դրքոյկ «Արեւելեան մի խնդիր՝ Միջին Դարում» վերնագրով, որի մէջ քննել եւ հրատարակել է Ֆլանդրայի եւ մասնաւորապէս Բրիւժի՝ Մերձաւոր Արեւելքի հետ ունեցած առեւտրական կապի վերաբերեալ անտիպ վաւերագիրներ*[6]*: Այս ուսումնասիրութեան մէջ Բիւսքէ հրատարակել է Ադրիէն Բալտին* (A. Baltyn) *անունով բելգիացի վաճառականի* 1589*ին յօրինած մի դեկուցագիրն եւ դրա հիման վրայ հետեւեալ եզրակացութիւններն է անում.*

1· *Ժդ· դարի սկզբում, Ֆլամանները Մերձաւոր Արեւելքի հետ իրենց առուտուրը կատարում էին արեւելցիների միջոցով, որոնց թւումն են նաեւ Հայերը, ինչպէս կարդում ենք դեկուցագրի Ֆլամաներէն բնագրում:*

2· *Ժե· դարի սկզբից Փոքր Ասիայից առեւտրականներ են եկել եւ սեպհական գրասենեակներ հաստատել Բրիւժում:*

3· *Այնուհետեւ Ֆլամաններն էլ նրանց օրինակին հետեւելով դնացել են Մերձաւոր*

---

[6] Emil Vanden Bussche, Une question d'orient au Moyen Age, documents inédits et notes pour servir à l'histoire du commerce de la Flandre, particulièrement de la ville de Bruges — avec le Levant. Bruges 1878.

Արեւելք եւ այնտեղ առեւտրական գրասենեակներ հաստատել:

4· Բայց ըստ երեւոյթին Ֆլամանների այս ձեռնարկութիւնը յաջողութիւն չէ ունեցել, որովհետեւ չուտով հեռացել են Մերձաւոր Արեւելքից եւ իրենց ապրանքները ծախել են Բրիւժում Հայերին եւ ուրիշ արեւելքցիներին:

Վանդէն Բիւսքէ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում առաջին անգամ Բրիւժ եկող հայ առեւտրականների մասին: «Մերձաւոր Արեւելքցիք (levantin, *որոնց մէջ են եւ Հայերը), *գրում է նա, ամէնից յառաջ հաստատուել են Բրիւժում, այն է 1340ին: Բայց 1354ին մի տարաձայնութիւն է ծագել նրանց եւ Բրիւժի քաղաքացիների մէջ եւ այս արեւելքցիք ստիպուել են թողնել ու հեռանալ: Նրանք գնացին Դորդրէխտ (Հոլլանդայում), ուր մի քանի տարի մնացին եւ այս միջոցին նրանց հեռանալուն առիթ տուող խնդիրը հարթուելով նրանք եւս դարձան եւ 1358ին վերջնականապէս հիմնուեցան եւ իրենց գրասենեակը հաստատեցին: Նրանք (Հայերը) 1478ին մի փառաւոր տուն կանդնեցին դոթական ոճով չինուած, որի 4 անկիւնի վրայ 4 աշտարակ էր բարձրանում...: Այս արեւելքցիները իրենց եկեղեցական պաշտամունքը կատարում էին Կարմելեան կրօնաւորների (Carmes) մատուռում: Այս տունը կանգուն էր մինչեւ ԺԸ· դար եւ ապա քանդուեց...:*

*Բրիւժի քաղաքային դիւանում պահուած հաշիւների համաձայն 1340ից էլ յառաջ այն է 1322ին այն «արեւելքցիք» սկսել են Բրիւժ գալ... : Այս առեւտրականների հետ յաճախ գալիս էին «անարժէք» անձնաւորութիւնները, որոնք եթէ «կռիւների մէջ իրենց ոսկրները չէին թողնում», նրանք բեռ էին գառնում քաղաքների, դղեակների եւ ասպետների վրին: Այսպիսի անարժէքներ կային եպիսկոպոսներից, յոյներից, վալախներից, հրէաներից, հնդիկներից եւ այլն: Նրանց կարգում յիշուած են նաեւ մի քանի Հայեր, բայց անուններ չեն նշանակուած: Այս վերջինները եկել են 1447—1448 տարիներում...: Ժե. գարում հայերի հետ միասին թուրք վաճառականներին եւս իրաւունք է տրուել St. Domat մայր եկեղեցու մեծաւորի կողմից, իրենց ապրանքը, դրդ. եւ ուրիշ թանգարժէք իրեր ծախել եկեղեցու առջեւ. բայց թուրքերը ժողովրդի մոլեռանդութեանը դոհ գարձան. ոչ նրանց, ոչ էլ ապրանքներին եւ մարդկիններին չէին սիրում իրենց կրօնի պատճառով. հետեւաբար մահմեդականները չկարողացան այս քաղաքում (Բրիւժում) տեւական յարաբերութիւններ հաստատել, թէեւ քաղաքապետը նրանց էլ միւսներին հաւասար կերպով էր պաշտպանում: Նոյն իսկ կղերը հակառակ չէր...»: Փիլիպպոս Գեղեցիկի (Philippe le Beau 1482—1506) թագաւորութեան ժամանակ,

Բրիւժում Հայեր եւ ուրիշ արեւելքցի չէին մնացել...»[7] :

Մեր արդիւնաշատ մատենագիրը՝ Հ. Ղ. Ալիշան, այդ թուականին նոյնպէս զբաղած էր հետազօտելով Հայոց յարաբերութիւնները Միջին Դարում եւրոպական երկիրների եւ ի մէջ այլոց Բելգիայի հետ: Նա պատրաստում էր իր Սիսական եւ Սիսուան բովանդակալից աշխատութիւնները: Ուստի նա դիմում է այս Բելգիական պետական դիւանապահին (archiviste) եւ շատ սիրալիր մի նամակով հարցնում է թէ «Հայերը ԺԴ.-ից մինչեւ ԺԶ. դարերը ունեցե՞լ են առեւտրական յարաբերութիւններ Ֆլանդրայի եւ մասնաւորապէս Բրիւժի հետ»: Ալիշան՝ Բելգիայի պատմաբան-հնագէտին սիրաշահելու համար իր նամակի հետ նրան նուէր է ուղարկել մի օրինակ Վ. Լանգլուայի՝ Trésor des Chartes d'Arménie, հոյակապ հաւաքածոյից (Վենետիկ 1863): Բիւսքէ մեծապէս ուրախացել է այս նուէրից, որովհետեւ, խոստովանում է ինքն իսկ, այս հաւաքածոն «չափազանց օգտակար է արեւմտեան երկիրների՝ Արեւելքի հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների ուսումնասիրութեան համար, մանաւանդ որ ինքն էլ իր մինչեւ այն օրն կատարած աշխատութեան հաստատութիւնն է գտել այնտեղ»: Իբրեւ պատասխան՝ Բիւսքէ Ալիշանին ուղարկել է իր վերջիշեալ

[7] La Flandre, Revue des monuments, 1878, Bruges, p. 201—222.

«Une question d'Orient au moyen âge» *գրքույկը։ Անուհետեւ թղթակցութիւնը երկու դիտնականների մէջ չարունակւում է. յառաջ բերեմ նրա էական մասերը, ինչպէս որ Բելգիացի դիտնականը հրատարակել է իր՝ համբաւաւոր* La Flandre *ամսագրի մէջ*[8]։

Հ. Ալիշան 1880 *Յունիս* 23*ին գրում է նրան.* «Je soupçonnais que notre pauvre nation l'Arménie, devait avoir été représentée parmi les Levantains, commerçant avec Bruges. Votre ouvrage, que j'ai parcouru avidement, bien que ne comprenant pas les passages en flamand, m'a confirmé dans mon opinion» *եւ յետոյ ի մէջ այլոց աւելացնում է.* «Dans vos minutieuses recherches dans les archives, auriez-vous rencontré quelque document concernant plus ou moins directement l'Arménie».

Ալիշանի այս նամակն առիթ է տալիս, որ Վանդէն Բիւսքէ լրջօրէն զբաղի նրա յարուցած հարցով եւ իբրեւ իր հետազօտութիւնների արդիւնք մի նոր Գլուխ է գրում նոյն տարին (1880) *իր ամսագրում* «Les Arméniens» *վերնագրի տակ, իբրեւ յաւելուած իր յիշեալ* Une question d'Orient au Moyen âge *աշխատութեան։ Այս յօդուածում նա պատասխանում է Ալիշանին հետեւեալ տողերով.*

---

[8] La Flandre, Revue des monuments d'histoire et d'antiquités. Directeur Vanden Bussche, archiviste de l'Etat. Bruges 1880.

«եթէ մեր յարգելի թղթակիցն այս հարցումով ի նկատի ունի՝ diplômes, chartes, lettres-patentes, octrois կամ որ եւ է այլ վաւերագիր վեհապետական իշխանութիւնից արուած, ցաւ ի սիրտ պիտի ասենք, որ մեր պատասխանը բացասական է: Բելգիայի ոչ մի արքունի դիւանում եւ ոչ էլ գաւառական դիւաններում, այդպիսի վաւերագիրներ՝ անուանապէս Հայերին արուած, չկարողացանք գտնել, թէեւ բոլոր դիւանները փնտռեցինք»: Հեղինակը յետոյ անցնում է Trésor des Chartes d'Arménieի վերլուծման, յատկապէս փլամանների վերաբերմամբ: Լեւոն Բ. Թագաւորի 1214 Ապրիլ 23 թուով հրովարտակում (որով Լեւոն յայտարարում է թէ մի գումար փոխ է առել եւ իբրեւ երաշխաւորութիւն իր հողերի մի մասը գրաւ դրել) յիշուած է Willelmus de Insula անունը: Այս Վիլլէլմուսը փլամաց ասպետ էր, որ Անտիոքի իշխան Բոէմունդի մահից վերջը՝ անցել էր Լեւոն Բ.ի ծառայութեան: Նոյն Լեւոն Բ.ի Իննովկենտիոս պապին գրած նամակում, 1205ին, որտեղ Թագաւորը դանգաւում է կարգինալ Pierre de Saint Marcelի վրայ, յիշուած է թէ կիլիկիայում ընդհանուր ժողով է կայացել, որին մասնակցել է Ֆլանդրայի կոմսուհին:

Այնուհետեւ վանդէն Բիւսքէ յառաջ է բերում Հայոց վերաբերեալ իր գտած արձանագրութիւնները:

ԺԹ. դարից վախճտական Հայեր սկսում

են Եւրոպա դալ։ Բելգիացիք 1346*ին նրանց համար մի տուն են կառուցել Բրիւժի շրջակայքում, որպէս դի «անտուն եւ անտեղ ճանապարհորդներն այնտեղ պատսպարուին»։ Այս ապաստանարանը պատկանել է Բրիւժի* Saint Bavon *մայր եկեղեցուն, որի մատեանի մէջ մի արձանագրութիւն կայ* 1386*ից, Ֆլամաներէն լեզուով, որտեղ ասուած է.* «daer up dien tydt waren vele arme rudders ende ook landtloopers ende ook Giptenaers ende vremde luyen uyt Armenien ende Asien, vluchtende de Sarrasijnen ende comende ten groten ghetalle in desen lande»։ (*Այն ժամանակ կային բազմաթիւ աղքատ ասպետներ, ինչպէս նաեւ թափառականներ, նոյնպէս եւ Եգիպտացիներ եւ օտարականներ, որոնք դալիս էին Հայաստանից եւ Ասիայից։ Նրանք փախչում էին սարակինոսներից եւ մեծ թուով գալիս էին այս երկիրը։*)

Այդ թուականից էլ յառաջ, այն է 1321—1322*ից Բրիւքսէլի* Rouge Cloître *նշանաւոր վանքի երկու կրօնաւորներին վերագրուած մի Ֆլամաներէն արձանագրութիւն կայ, որտեղ ասուած է.* «doden de Sarrasijnen groote schade den Kerstenen in Cipers ende in Armenien. Ende de coninck von Cipers sant aen den paws Jan den XXij om hulpe». (*Սարակինոսները մեծ չարիք էին հասցրնում Կիպրոսի եւ Հայաստանի քրիստոնեաներին եւ*

կիպրոսի թագաւորը՝ Յովհան IԲ. Պապի օգնութիւնն է խնդրել։)

Նոյն թուականին, մի ուրիշ արձանագրութեան մէջ ասուած է· «op dit jaer soe doode de conink van Armenien dusent Sarrasijnen»· (Այն տարին Հայաստանի թագաւորը հազար Սարակինոս սպանիեց։)

Բրիւժ եւ մերձակայ Դամմ եւ Եկլիւզ նահանգիսանների հին դրամական հաշիւների մէջ չատ անգամ են պատահում հայ եւ Հայաստան անուննները՝ Hermanie, Harmenie, Ermeniers ձեւերի տակ, որոնց դրամական նպաստ է տրուել։ Մի տեղ, 1447ի արձանագրութեան մէջ ասուած է թէ նպաստ է չնորհուած Հայաստանցի քահանաներին (priesters uut Hermenie), որոնք եկել են Բելգիա։

Վանդէն Բիւսբէ՝ Հայոց վրայ գրած այս յօդուածին իրրեւ վերջաբան յառաջ է բերում պատմարան Ֆրուասարի մի ընդարձակ տեսութիւնը՝ հին Ֆրանսերէնով գրուած, Լեւոն Զ. Լուսինեանի վրայ, երբ մեր այս վերջին թագաւորը գտնուում էր Եւրոպայում 1378ին։ «Pour ces jours, ասուած է այնտեղ, estoit aveuc le roy de France le roy Lion d'Ermenie, et estoit tout nouvellement revenu de Grèce et de dessus les frontières de son pays». Այստեղ՝ այն է հետաքրքրականն, որ Եւրոպայի ազնուականները, այս ճանապարհորդութեան ժամանակ Լեւոնին մի տեսակ հարցաքննութեան են ենթարկել եւ նա նրանց բոլոր հար-

ցումներին պատասխանել է անկեղծօրէն, պատմելով իր արկածներն եւ բացատրութիւններ տալով Հայաստանի այն ժամանակի քաղաքական կացութեան մասին...:

Լուսինեանի վրայ խօսող այս առաջին բելգիացի պատմիչը՝ Ֆրուասար (Froissart), որին բելգիացիք «մեր հին ժամանակագիրների հայրն» են կոչում, Լեւոնին կոչում է նաեւ Livon V. եւ Lionnet de Lusignan: Ֆրուասարի այս ժամանակագրութիւնը հրատարակուած է Բելգիայի մեծ պատմաբան Kervyn de Lettenhoveի 24 հատորից բաղկացած ընդարձակ Պատմութեան մէջ (Bruxelles 1870—1877):

Լեւոն Զ. 1378ի այս ճանապարհորդութիւնից յետոյ դարձեալ եկել է Բելգիա: Իպր (Ypres) քաղաքի արձանագրութիւնների մէջ ասուած է թէ երբ 1385ին Կարոլոս Զ. Գամմ քաղաքն էր պաշտպանում թշնամիների դէմ, նրա հետ էր նաեւ «Հայաստանի թագաւորը»[9]:

Հայ գաղութի Բրիւժից հեռանալու գլխաւոր պատճառն այն էր, որ սա ԺԵ. դարի վերջերը սկսել էր կորցնել իր կարեւորութիւնն իբրեւ նաւահանգիստ: Ծովեզերքն այնպէս էր լցուել աւազով, որ նաւերն այլ եւս չէին կարողանում մօտենալ որով ամբողջ նաւագնացութիւնը դադարել էր:

[9] Kervyn, Table analytique des noms historiques, T. XX, p. 111.

Բրիւժի անկումից յետոյ բելգիական մեծ նաւահանգիստը, Անտվէրպէն կամ Անվէրսն (*Փլ.* Antwerpen, *գաղղ.* Anvers) *է նրան փոխարինում: Բայց չնայած նրա փառքն էլ հետզհետէ նսեմանում է, որովհետեւ Հոլլանդացիք ամէն միջոց գործ են դնում, որ Ամստերդամը ծաղկի: Էսկօ* (Escaut) *գետի բերանը, այսինքն այն հողամասն, որով Անվէրս հաղորդակցութիւն էր պահպանում ծովի հետ, անցել էր Հոլլանդայի ձեռքն, ինչպէս է եւ հիմայ էլ: Հոլլանդացիք փակել էին ԺԶ. դարի վերջերը, Անվէրսի ծովային ճանապարհը: Նոյն իսկ Անվէրսի եւ բելգիական ծովեզերքի քաղաքների մէջ երթեւեկութիւնը Հոլլանդացիների հսկողութեան տակ էր դրուած: Շնորհիւ այս հանգամանքի Անվէրսն այն ժամանակ նոյնպէս ինկաւ եւ դրա փոխարէն սկսաւ փայլել Ամստէրդամի աստղը: ԺԷ. դարից մինչեւ ԺԹ. դարի սկիզբը, այսինքն մինչեւ Գաղղիացիների տիրելը, Ամստէրդամ առաջին տեղն էր գրաւում եւ «Եւրոպական կայսրուհի» տիտղոսն էր ստացել: Այս միջոցին է, որ հայ վաճառականները, բայց այս անգամ ոչ թէ միայն Միջերկրականի ծովեզերքում բնակողներն, ինչպէս օր. Համար Զմիւռնիացիք, այլ գլխաւորաբար* պարսկահայերը, Նոր Ջուղայեցիք *իրենց ուշադրութիւնը դարձրին Ամստէրդամի վրայ եւ այնտեղ հիմնեցին մի շատ կարեւոր գաղութ, որ տեւեց ամբողջ* 200 *տարի եւ որ նշանաւոր*

հանդիսացաւ ոչ միայն իր առեւտրական գործունէութեամբն, այլ մանաւանդ իր տպարանական ձեռնարկութիւններովն, որոնց նմանը ոչ մի ուրիշ քաղաքում, այդ թուականին, ժէ· դարում, չէ երեւացել[10]:

Երբ Բելգիան 1830ին իր կատարեալ անկախութիւնը ձեռք բերեց եւ վերջին քաղաքական հանգամանքները ձեռնտու հանդիսացան, հայերը նորից սկսան Բելգիա գալ, եւ հաստատուեցան կատարելապէս Անվէրս մեծ նաւահանգստում եւ Բրիւքսէլ մայրաքաղաքում, ինչպէս պիտի տեսնենք:

---

[10] Ամստէրդամի այս համբաւաւոր գաղութի մասին տե՛ս Սարուխան, Հոլլանդան եւ Հայերը: Վիեննա 1926:

Ը· ԳԼՈՒԽ

Անվէրսի Մայր Եկեղեցին: Թոմաս արքեպիսկոպոս Նուրիջանեանի մահն եւ թաղումն այնտեղ: Նրա թողած իրերը: Թոմասի կաթողիկոսական կոնդակներն եւ բազմաթիւ լատիներէն յանձնարարագիրները: Թոմասի ծրագրած «հայ–լատինական» դպրոցը: Նրա մահուան վկայագիրը:

—

Հրաշագործ Մակարից յետոյ (Բ· Գլուխ)՝ Բելգիան հանգստավայրը է դարձել մի երկրորդ հայ եպիսկոպոսի, որ նոյնպէս նշանաւոր է հանդիսացած, թէեւ տարբեր տեսակէտից: Բելգիայի հանրահռչակ նաւահանգիստ Անվէրս (կամ Անտվէրպէն) քաղաքի՝ յանուն Աստուածամօր Մայր Եկեղեցին (Eglise Cathédrale de Notre Dame) *այն հրաշակերտ չէնքերից մէկն է, որ երբ եւ իցէ մարդկային հանճարը կառուցել է ի փառս Արարչին: Նրա մեծութիւնը, ճարտարապետական չքեղութիւնը, եւ առանձնապէս նրա հսկայական աշտարակը պատուաւոր տեղ են յատկացնում այս եկեղեցուն՝ արուեստի հրաշալիքների փոքրաթիւ շարքում: Ահա այս փառաւոր տաճարում, այն էլ աւագ խորանի առջեւ, դասի մէջ, թաղուած է Վանանդեցի Թոմաս արքե–*

պիսկոպոս Նուրիջանեան: Ո՞վ էր սա եւ ինչո՞վ է նշանաւոր:

Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանգամանքներն այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական քայլերն եւ ձեռնարկութիւնները մարմնացել եւ իրականացել են նրա հայրենիքից դուրս եւ ապա ներս մուծուել: Այսպէս է եղած յատկապէս տպագրութեան համար: Հայ տպագիրն առաջին անգամ լոյս աշխարհ է տեսել այնտեղ, ուր միջոցներ կային այս նոր արհեստից օգտուելու: Ինչպէս որ առաջին կարեւոր դպրոցականութիւնը Եւրոպայում՝ հիմնուել է Վենետիկում, այդպէս էլ առաջին հայ գիրքը երեւան է եկել դոժերի այդ հազուադիւտ քաղաքում: Տպագրութեան դիւտից (1455) հաշիւ 57 տարի վերջն էր, որ Վենետիկում երեւաց նրա հայերէն օրինակը, 1512—1513ին: Այնուհետեւ հայ տիպն սկսում է տարօրինակ կերպով բուսնիլ Եւրոպայի այլեւայլ եւ միմիանցից հեռու վայրերում. Կ. Պոլսում (1567), Հռոմում (1579 եւ 1584), Էմմբէրգում (1616), Միլանում (1624), Պարիսում (1633), եւ Լիվոռնոյում (1643): Ձեռներէց մի հայ վաճառական էլ մի սերմ բերել, ցանել է իր հայրենի Նոր Ջուղայում, 1640ին: Բայց այս բոյսերն ոչ մի տեղ հաստատուն արմատ չեն բռնել եւ չեն ծլել, ծաղկել: Բոլոր այդ տպագիրները խեղճ եւ անճաշակ դպրոցներ են եղել:

Հայ տպագրութեան առաջին մաքուր, իսկապէս գեղարուեստական արտադրութիւնը լոյս է տեսած Ամստէրդամում 1660ին, շնորհիւ Էջմիածնայ Յակոբ Դ. կաթողիկոսին: Հոլլանդացի պատմագիրներն էլ խոստովանում են այդ երբ գրում են՝ «Հայաստանի պատրիարքը Յակոբ, արուեստի եւ գիտութեանց սիրահար մի մարդ, 1656ին լսելով, որ Վենետիկի եւ Նոր Զուղայի տպարանների տառերը մաշուել, անգործածելի են դարձել, իր սարկաւագ Մատթէոս Մարեցին Հոլլանդա է ուղարկել, որպէս զի նոր, լաւագոյն տառեր պատրաստել տայ»[1]: Այս Մատթէոս Մարեցին էլ իր առաջին տպած գիրքը (1660), Շնորհալու «Ցիսուս Որդին», անշուշտ իր պետից ստացած հրահանգի համաձայն, մեծ վեհականկատարութեամբ նուիրել է Հոլլանդայի իշխանին՝ «Նորընձա փոխինչիփային Վիլհալըմ Օրաննեայ»: Մատթէոսի մահից (1661) յետոյ Յակոբ կաթողիկոս Ամստէրդամ է ուղարկում Ոսկան վարդապետին, որ յաջող կերպով շարունակում է առաջինի գործն, եւ 1666ին երեւան է հանում առաջին հայ մաքուր եւ պատկերազարդ տպագիրը, Աստուածաշունչը: Ոսկան Ամստէրդամում 15 գիրք տպելուց յետոյ ստիպուել է իր գործունէութիւնը տեղափոխել նախ Լիվոռնո եւ ապա Մարսիլիա, ուր եւ վախճանուել է 1674ին: Յակոբ կա-

---

[1] Սարուխան, Հոլլանդա եւ Հայերը, Վիեննա 1926, Ազգային Մատենադարան, Թ. ձԺԹ., էջ 64—71:

Թողիկոս՝ այս անգամ իր ձեռնասուն Թոմաս Վանանդեցի վարդապետին է յանձնում տպարանական գործը: Թոմաս այդ ժամանակ Գողթն գաւառի Ս. Խաչ վանքի նորոգութեան համար ժողովարարութիւն էր անում Հայաստանի այլ եւ այլ կողմերում. բայց կաթողիկոսի յանձնարարութեամբ անցնում է Եւրոպա եւ նախ գալիս է Հռոմ, ուր բերել է տալիս իր 3 մերձաւոր ազգականներին, իր մօրեղբօրորդի Մատթէոս Յովհաննիսեանին եւ իր եղբօրորդիք Ղուկաս եւ Միքայել Նուրիջանեաններին: Սրանցից Մատթէոս Յովհաննիսեան ամբողջապէս նուիրուում է տպարական գործին եւ 1685ին վերականգնում է հայկական տպարանը Ամստէրդամում. բայց գործը կազում է մինչեւ որ Թոմաս, որ արդէն եպիսկոպոս էր, իր եղբօրորդուց հետ գալիս է Ամստէրդամ, տպարանը վերակազմում է, ճոխացնում է նոր գործիքներով եւ տառերով եւ 1695ից մինչեւ 1705 հրատարակում է հայերէն մի գեղեցիկ աչխարհացոյց քարտէս եւ 13 գիրք, որոնք հիմայ էլ կարող են տպարական արուեստի գարդ համարուիլ:

Թոմաս Վանանդեցի, 1705ին, Ամստէրդամի քաղաքային նօտարի ներկայութեանը կտակ է անում, որով «իր տպարանը բոլոր առարկաներով եւ բոլոր տպած գրքերը՝ թողնում է իր սիրեցեալ հայրենիքին, որպէս զի այն խեղճ քրիստոնեաններն, որոնք ապրում են խաւարի մէջ եւ բռնաւորի լուծի տակ, լուսաւորուին»:

Մինչեւ հիմայ յայտնի չէր թէ իր տպագրական գործունէութիւնը դադարեցնելուց յետոյ Թոմաս ո՛ւր է գնացել եւ ի՛նչ վախճան է ունեցել: Այժմ չնորհիւ մի բարեպատեհ հանդամանքի որոշ կերպով դիտենք այդ[2]:

1708 *Յուլիս* 13*ին Անվէրս է գալիս ծեր եւ հիւանդ մի հայ արքեպիսկոպոս, որ դիմում է տեղւոյն եպիսկոպոսարանին: Մայր Եկեղեցւոյ վերատեսուչ հայր* Nicolas Ferlatia *ընդունում է թէ՛ նրան, եւ թէ նրան հետեւող* 2 *հայ ուղեւորներին եւ տեղաւորում է եպիսկոպոսարանում: Մայր Եկեղեցին հոգում է նրանց բոլոր ծախքը: Հարկ եղած բժշկական դարմանները մատուցանում են*

---

[2] *Աւելորդ չեմ համարում պատմել այս հանգամանքը: Անվէրսի պետական դիւանի նախկին կառավարիչ՝ Վաննէրիուս* (J. Vannerus, *այժմ ակադեմական*), *իր հսկողութեանը յանձնուած հին յիշատակարանները կարդի բերելու ժամանակ, պատահում է մի կապոցի, որտեղ իրեն անծանօթ լեզուով գրուած թղթեր են եղել եւ լատիներէն ձեռագիրներ, որոնցից մէկին առանձնապէս գրաւել է նրա ուշադրութիւնը: Այս ձեռագրի մէջ ասուած էր թէ ոմն հայ արքեպիսկոպոս* 1695*ին Ամստէրդամում տպարան է ունեցել եւ բազմաթիւ՝ հայերէն լեզուով գրքեր եւ քարտէզներ է տպել: Այս «նորութիւնը» նրան այնչափ զարմացրել է, որ մի յօդուած է գեղեցիկ այդ մասին Բրիւքսէլի* Revue des Bibliothèques et Archives de Belgique *հանդէսի մէջ* (1906), Note sur une Imprimerie Arménienne à Amsterdam *վերնագրով: Պատահմամբ ծանօթանալով այդ յօդուածին եւ անմիջապէս տեղեկացայ Պ. Վաննէրիուսի հետ, որ հաճեցաւ մի օրինակ նուիրել ինձ այդ յօդուածից եւ միեւնոյն ժամանակ միջամտել, որ վերոյիշեալ կապոցը Անվէրսից Բրիւքսէլ բերուելով դրուի իմ տրամադրութեան տակ: Այս կերպով ես հնարաւորութիւն ունեցայ քննել մանրամասն նրա բովանդակութիւնը: Օգտւում եմ այս առթիւ խորին չնորհակալութիւնս յայտնելու համար յարգելի Պ. Վաննէրիուսին:*

հիւանդին, բայց իր յառաջացած տարիքի պատճառով հիւանդութիւնն ընկճում է նրան եւ հայ արքեպիսկոպոսը աւանդում է իր հոգին, «Հռոմէական կաթոլիկ եկեղեցու Ս. Խորհուրդներն ընդունելով», ինչպէս ասուած է նրա մահուան վկայականում: Եպիսկոպոսի տեղապահն եւ միւս Բելֆիացի կանոնիկոսները հանդիսաւոր թաղում են կատարում եւ հայ արքեպիսկոպոսի մարմինը դնում են Մայր Եկեղեցւոյ աւագ խորանի առջեւ, դասում, այնտեղ, ուր նրանից չատ յառաջ, այն է 1590ին, մի ուրիշ եպիսկոպոս է եղել թաղուած, որի տապանագիրն է՝

D. O. M. Monumentum Huguini Hiberni Archiepiscopi Thuamensis, obiit nonis Augusti M. D. X. C.

Ահա այս տապանում է հանգչում այժմ, կապտագոյն տապանաքարի տակ, մեր ծանօթ Թոմաս վարդապետ Վանանդեցի Նուրիջանեան, Գողթան գաւառի Ս. Աստի վանահայր, արքեպիսկոպոս եւ Հայ Տպագրութեան մեծ գործիչը:

Տիւր յուղարկաւորութիւնից յետոյ եպիսկոպոսարանի քարտուղարը հայր Հայբէնս (Hybens) կանչում է քաղաքային նօտարին եւ խնդրում է որ ըստ օրինի ցուցակագրէ հանգուցեալի իրեղէնները: Նօտարը՝ Jacques Boeye՝ Մայր Եկեղեցու արարողապետ հայր Վան դէր Ստեգէն (Stegen) կանոնիկոսի հետ միասին մի առ մի ցուցակագրել է բոլոր

իրերը: Ներկայ են եղել եւ մասնակցել են Թոմասի հետ եկած երկու հայերն, որոնց անուններն են Յովհաննէս Գասպար (Johannes Gaspars) եւ Պետրոս Ալվարէզ (Petrus Alvarez): Յուցակը կազմուած է Փլաման լեզուով, որ Անվէրսի պաշտօնական լեզուն է: Ահա ինչպէս է նկարագրում Յուցակն՝ այս իրերը.

1. Մի կաշիով պատած անուշկ, որի մէջ կային նոր տպուած գրքեր, մէկ մասը կազմուած, միւսն անկազմ, «հայերէն լեզուով եւ գրերով»:

2. Մի ուրիշ անուշկ, գարձեալ հայերէն գրքերով. նաեւ երկու սեւ անդրավարտիք:

3. Գարձեալ մի անուշկ հայերէն գանազան գրքեր:

4. Մի անուշկ ճերմակեղէն եւ մէջը հայերէն լեզուով մի Պատարագամատոյց:

5. Մի կաշիէ պայուսակ, այլ եւ այլ հագուստեղէնով: Յովհ. Գասպար յայտնեց թէ այդ պայուսակն իրենն է:

6. Կտաւէ պարկ, հագուստեղէնով: Պետրոս Ալվարէզ յայտնեց թէ այս պարկն իրենն է:

7. Մի փակ կողով, հին բարձեր եւ կաւեղէն, անարժէք:

«Թոմաս եպիսկոպոս, չարունակում է նոտարը, եկել է Անվէրս, որպէս զի այստեղից նաւով վերադառնայ իր հայրենիքը, Պարսկահայաստան»:

Այնուհետեւ նոտարը յիշում է հանգուցեալի թողած թղթերն, որ են յատուկ պիտի

բերեմ մանրամասնօրէն, նրանց թուականի կարգով: Թղթերից երեքը հայերէն են, մնացածները լատիներէն: Նոտարն եւ եկեղեցու կանոնիկոսները հայերէն չգիտենալով, հաւատացել են հայ հետեւորդների տուած բացատրութեան, այս պատճառով նրանց բովանդակութիւնը ցուցակում սխալ է արձանագրուած: Հայերէն ձեռագրների պատճէններն են միայն մնացել, անչուչա հայ կիսապրապէտ սպասաւորի ձեռքով ընդօրինակուած, այդ պատճառով ուղղագրական վրիպակներով լի:

Ահա այդ հայերէն թղթերը.

1. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու քրիստոսահիմն եւ լուսակառոյց Աթոռոյ Էջմիածնի» իր օրհնութիւնն է չնորհում «ընդհանուր ամենայն հայկական ցեղի աստուածասէր եւ բարեպաշտ հանճարաշահ վաճառականաց, եկաց եւ բնակաց, մեծաց եւ փոքունց, առ հասարակ ամենեցունց» եւ յայտնում է թէ «յերկրին Գողթնեաց վանք մի կայր առաքելաշէն անուն, որոյ եկեղեցիքն եւ ամենայն չինութիւնք ի վաղուց յետէ աւերեալ եւ խանդարեալ կայր, եւ եղեալ անբնակ ի քահանայից եւ եկեղեցական միաբանից եւ բնաւին ի քրիստոնէից, որոց փոխանակ այլազգիք տիրէին, եւ յահէ այլազգեաց ոչ ոք չկարէր ի քրիստոնէից մօտաւորել կամ մերձենալ անդ, բայց հոգեւոր որդին մեր Թոմաս վար-

դապետ ձեռնարկեալ մեծաւ ջանիւք եւ աշխատութեամբ եւ բազում ծախիւք նորոգեալ պայծառացոյց զեկեղեցին եւ զվանքն. իսկ այժմ անկեալ կայ ի ներքոյ բազում պարտուց վասն չինութեան կողմանէ, որոյ վասն տուաք զայս նամակս, օրհնութեամբ, չրջել ի դրունս քրիստոսասէր վաճառականացդ եւ պարոն դոլվաթաւորացդ խնդրել ողորմութիւն վասն սիրոյն Քրիստոսի եւ յուսոյ արքայութեան. ամենայն ոք, ըստ իւրաքանչիւր կարեաց, զմիմիանս յորդորելով եւ միմիանց բարեաց պատճառ լինելով յօժարամիտ կամօք եւ յայտարար սրտով ողորմութիւն արարէք...»:

«Գրեցաւ ի թուին ՌՃԺ, Մարտի ամսոյ ԻԸ. յաւուր հինգշաբթի եւ ի դրան սրբոյ էջմիածնի»:

Ըստ այմ կոնդակը գրուած է 1661 *Մարտ* 28*ին*, ժողովարարութեան ներկայութեամբ ի ներկայ Ս. Խաչ վանքի: *Իսկ նոտարը նրա բովանդակութիւնը Փլամանեերէն արձանագրել է այսպէս. «վկայական Հայոց Յակոբ պատրիարքի՝ տրուած Թոմաս վարդապետի եպիսկոպոսական օծման մասին*, 28 *Մարտ* 1660*ին»:*

2. *Երկրորդ թուղթն եւս նոյն Յակոբ կաթողիկոսից է եւ սկսում է այսպէս. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս եկեղեցւոյ ընդհանուր հայկական տոհմի վիճակեալ սրբոյ առաքելոցն Բարթուղիմէոսի եւ Թադէոսի, տեղապահ եւ յաջորդ սրբոյն Գրի-*

դոր հօրն մերոյ Լուսաւորչին, եւ պատրիարք Վաղարշապատու...»: Կաթողիկոսը այս կոնդակը տալիս է նոյնպէս Թոմաս վարդապետին որ երթայ Սալմաստի եւ Խոյի կողմերն եւ ժողովարարութիւն անէ նոյն Ս. Խաչ վանքի համար, որ «հացի կողմանէ կարի պակասութիւն ունի» եւ յորդորում է տալ «անտրտունջ երեսօք եւ պայծառապոյն դիմօք»:

«Գրեցաւ ՌՃԻԱ. Հոկտեմբեր քսանհինգ» = 1672:

3· Երրորդ հայերէն թուղթն էլ նոյն Յակոբ կաթողիկոսի կողմից տրուած, ուղղուած է «վանի թեմի եւ վիճակի առաջնորդաց, որդւոց մեր սիրելեաց եւ համօրէն քահանայից, նաեւ ժողովրդեան» դարձեալ Ս. Խաչի համար եւ յորդորում է, որ օգնեն Թոմաս վարդապետին, «սիրով եւ յօժարութեամբ, ցորենով եւ այլ ինչ նիւթով եւ ողորմութեամբ»:

«Գրեցաւ թուղթս ՌՃԻԲ. Յունիս ամսոյս Ժ·ի ի յանապատս մեծ Ստաթէի» = 1673:

Նոսաքն այս երկու կոնդակների հայերէն պատճէնների տակ էլ գրում է, թէ այս թղթերն «ընդագիրներ» են Հայոց Յակոբ կաթողիկոսի կողմից Թոմաս վարդապետին տրուած»:

Իսկ լատիներէնները բնականաբար ճշդութեամբ են արձանագրուած: Այս թղթերի բովանդակութիւնն է՝

4· Հռոմ, 1682 Յուլիս 9· «Հայոց եւ

Հնդկաց պաշտպան» (Armenorum Indorumque Protector) *կարդինալ* Cybo, *ջերմօրէն յանձնարարում է «հայ ուխտաւոր, Հայաստանի Ս. Խաչ վանքի վանահայր Թոմաս եպիսկոպոսին» եւ խնդրում է, որ նրան ամէն տեղ սիրով ընդունին եւ նրա ճանապարհների ապահովութեանը հոգ տանին: Ստորագրուած է* A. Cardinalis Cybo, Protector *եւ դրուած է նրա պաշտօնական կնիքը:*

5· *Դրանից մի քանի տարի վերջը Թոմասին պատում ենք Բրիւքսէլում, ուր նեկայանում է պապական նուիրակին, եւ սա* 1693 *Հոկտեմբեր* 27 *թուով մի Յանձնարարական է տալիս, որի մէջ նուիրակը գրում է թէ Հռոմից* 21 *Հոկտեմբեր* 1681 *թուով ստացած պաշտօնագիրը վկայում է թէ* Rd. Sr. Thomas Vardapiet Devanant (*Վանանդեցի*) *իրօք «Հայաստանի Ս. Խաչ վանքի եպիսկոպոս» է: Եւ որովհետեւ, ասում է նուիրակը, նա այսչափ հեռաւոր երկրից է եկել, ուստի այն բոլոր անձերն, որոնք նրան սիրալիր ընդունելութիւն ցոյց կու տան, արժանի կը լինին համբաւաւոր արեւելեան եկեղեցիներին* (prosequantur de famoso nomine ecclesiarum orientalium egregie merituri): *Ստոր·* J. Piazza *նուիրակն եւ* M. Pigliarch, *քարտուղար: Դրուած է նուիրակի պաշտօնական կնիքը:*

Շնորհիւ այս յանձնարարականի նա ապատ կերպով չջնում է ամբողջ Բելգիայում եւ բոլոր տեղական եպիսկոպոսներից պատօնու-

Թիւն ստանում իրենց եկեղեցիներում իր մայրենի հայերէն լեզուով պատարագելու (in genuina sua lingua, in lingua armenica)։ *Նրա թղթերի մէջ կան այսպիսի վկայականներ՝ Մալինի արքեպիսկոպոսից* 28 *Հոկտ.* 1693, *Անվէրսի եպիսկոպոսից* 14 *Նոյեմբեր* 1693 *թուով. իսկ երկու տարի վերջը, Հիլդէսհէյմի եպիսկոպոսից* 1695 *Յունիս* 5 *թուով եւ նոյն տարին նաեւ Գանի* (Gand) *եպիսկոպոսից։*

Ինչպէս դիտենք նա այդ տարին 1695*ին եկել է Ամստէրդամ եւ այնտեղ հիմնարկել իր տպարանը։ Բայց երկար չէ մնացել։ Քանի որ իր աղգականները յաջող կերպով վարում էին տպարանական գործը, ինքը հարկ է համարել անցնիլ Վիեննա։ Այստեղ մեր ճարպիկ Վանանդեցին ամբողջ կէս տարի է մնում եւ յաջողում է* 2 *կարեւոր յանձնարարական ձեռք բերել։*

6. *Վիեննայի արքեպիսկոպոսը* 1697 *Օգոստ.* 14 *թուով գրութեամբը վկայում է, որ «Գերապատիւ Տէր Վարդապետ Վանանդ* (Rever. Sr. Vardapiet Wanand), *Ս. Խաչ վանքի աբբայ եւ Մեծ Հայքում Գողթան արքեպիսկոպոս», մօտ կէս տարի մնացել է Վիեննայում եւ եկեղեցական պաշտօն վարել, մեծ արժանապատուութեամբ, առանց որ եւ է առիթ տալու «ոչ բանադրանքի, ոչ կախակայման եւ ոչ որ եւ է քննութեան»։ Ստոր. արքեպիսկ.* Joes Bapta Mair *եւ եպիսկ.*

նոսար Melchior Scheibelavs: Դրուած է պաշտօնական կնիք:

7. Թոմաս Վիեննայում ստանում է ջերմ յանձնարարական նոյն ինքն Աւստրիոյ կայսր Լէոպոլդից, 1697 Սեպտ. 5 թուով, մագաղաթի վրայ գրուած եւ կայսերական կնիքով, որտեղ կայսրը գովում է հայ եպիսկոպոսի քրիստոնէական եռանդը:

Անցնում է զարձեալ 2 տարի: Թոմաս 1699ին նորից Բելգիայումն է եւ Անվէրսում տեսնւում է Բոլլանդեաննների հետ: Նրա այս տեսակցութիւնը պատմուած է Acta Sanctorumում, ինչպէս պիտի տեսնենք յետագայ Գլխում: Այդ տարին նա հարկ է համարել նոր յանձնարարական ստանալ Բելգիայում:

8. Այս նոր գրութեան մէջ, որ կրում է 1699 Յուլիս 7 թուականն եւ ստորագրուած է Մալինի արքեպիսկոպոս Humbert Guillaume de Precipiano, մանրամասն յիշուած են մեր վանանդեցու բոլոր տիտղոսները լատիներէն այսպէս՝ Rever. Dom. Thomas Vardapiet Natione Armenum, ordinis St. Antonii abbatis, Dei gratie et matris ecclesie archiepiscopum Goghtanensum, monasterii S^ae Crucis, in Majore Armenia, hygamenum sive prepositum abbatem, որ Հռոմայ Եկեղեցւոյ Ս. Աթոռի հետ հաղորդութեան մէջ է: Բելգիացի primat արքեպիսկոպոսը ջերմագին յանձնարարում է, որ ամէն ոք նպաստէ «այս անձնուէր եկեղեցականին, որ թշնամիների տիրապե-

աութեան տակ գտնուած մի երկրում բնակելով եւ կեանքի բազմաթիւ վտանգների ենթարկուելով հանդերձ պահպանել է իր կրօնն ու բարեպաշտութիւնը»:

Թոմաս Բելդիայից գառնում է Ամստէրդամ, տպարանական գործի վրայ հսկելու համար: Բայց 2 տարի վերջը դարձեալ ուղեւորութեան է սկսում, այս անգամ դէպի Գաղղիա:

9. Նրա թղթերի մէջ գտնում ենք մի ջերմ յանձնարարական 1702 Մարտ 3 թուով, Պարիսում, Բենեդիկտեան կրօնաւորական կարգի ընդհանուր մեծաւորից տրուած (humilis superior generalis congregationis ordinis sanctae benedictae): *Սոսր.* Claudius Boistard:

10. Պարիսից նա դարձել է Ամստէրդամ, ուր 1705ին կատարել է իր նշանաւոր կտակը 1705 Հոկտ. 30 թուով որի լատիներէն բնագրի մի օրինակը կայ նրա թուղթերում: Այս կարեւոր վաւերագրի ամբողջ թարգմանութիւնն ես արդէն ուրիշ տեղ[3] գետեղած լինելով, աւելորդ եմ համարում այստեղ կրկնել: Ինչպէս վերեւ յիշեցի, այս թուղթն է, որ ամէնից աւելի գրաւել է օտարի ուշադրութիւնը:

Հետաքրքրական է որ Թոմաս չէ բաւականացել այսպէս Բելգիա, Աւստրիա, Գերմանիա, Գաղղիա եւ Իտալիա ճանապարհորդ-

---

[3] *Սարուխան, Հոլլանդա եւ Հայերը: Վիեննա, Մխիթ. Տպար., 1926, էջ 106—120:*

դելով. նա գնացել է նաեւ Անգլիա: Այս երեւում է նրանից, որ նրա թղթերում եղել է՝

11. 1707 Յունիս 8 թուով անգլիական անցագիր, մագաղաթի վրայ, լատիներէն լեզուով գրուած, Անգլիոյ Աննա թագուհու անունով տրուած եւ այս վերջինի արքայական կնիքովը կնքուած:

Այս վերջին ճանապարհորդութիւնից յետոյ է, որ նա որոշել է դառնալ իր հայրենիքը եւ ինչպէս վերեւ տեսանք, 2 հայ հետեւորդներով եկել է Անվէրս, որպէս զի այնտեղ նաւ նստի հաւանականաբար Զմիւռնիայի համար. իսկ այնտեղից դիւրին էր ցամաքային ճանապարհով Գողթն գաւառ կամ իր Ս. Թաչի վանքը երթալ: Բայց բախտը տարբեր կերպով էր տնօրինել...:

Ի՞նչ էր արդեօք նրա այս բոլոր մեծ ճանապարհորդութիւնների եւ ուսուցչապետներից[4], եպիսկոպոսներից, կարդինալներից եւ նոյն իսկ կայսրից առած այլեւայլ յանձնարարականների նպատակը:

Թոմասի թղթերի մէջ գտնուած մի տպեալ, լատիներէն ուղերձ՝ բացատրում է այդ նպատակը:

Այս գրուածքը, առանց թուականի է եւ ուղղուած է՝ «աշխարհական եւ եկեղեցական

---

[4] Հոլլանդական նոտարը վկայում է, որ Թոմաս յանձնարարական է ունեցել, իբրեւ իր «քրիստոնէական եռանդին ապացոյց» նաեւ Գերմանիայի Hall քաղաքի (Մագդէբուրգի մօտ) Augustus Hermanns Francius ուսուցչապետից:

իշխաններին, դուքսերին, մարքիզներին, կոմսերին, բարոններին, եւ առ հասարակ ամէն վիճակի եւ դասակարգի անձերին»:

«Իմ պատանեկութիւնից սկսած, ասում է այնտեղ Թոմաս Վանանդեցին, ես միտք եմ ունեցած իմ թեմում մի լատինահայկական դպրոց հիմնել (ab adolescentia meâ hanc usque in graveseentem aetatem in meâ Diocesi Collegium utriusque Litteraturae Latino-Armeno idiomate stabiliendi animus mihi fuit semper . . .): Այս նպատակով Պարսկահայաստանից Եւրոպա բերել տուի իմ ազգական երեք պատանի, որպէս զի նրանցից երկուսը ընտիր ուսումով եւ բարքով կրթուին, իսկ միւսը տպագրական արուեստին համառնայ: Տպարանը անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին գրեանք հասցընելու համար . . . : Այս երիտասարդներն նկան եւ լիովին իրականացրին իմ ակնկածը: Այժմ մնում է, որ նրանք էլ հնարաւորութիւն ունենան կրթել մեր այն թշուառ քրիստոնեաներին, որոնք գտնւում են խաւարի մէջ եւ ապրում են բռնաւորական լուծի տակ: Այս նպատակի համար պէտք է որ իմ հայրենիքում այդպիսի մի դպրոց բացուի եւ տպարանս էլ այնտեղ փոխադրուի . . .»:

Գործի էութիւնն այսպէս բացատրելուց յետոյ Թոմաս խնդրում է բարեհաճ եւ բարեպաշտ եւրոպացի ընթերցողներից, որ չխնայեն իրենց օժանդակութիւնը եւ նրանց ջերմեռանդութիւնը չարժելու համար պատշաճաւոր

խօսքեր է յառաջ բերում Աւետարանից, Գործք Առաքելոցից եւ Սաղմոսից: Աւետարանից յառաջ բերած խօսքն է՝ sine me nihil potestis facere *«Առանց իմ ոչինչ կարէք առնել»* (*Յովհ. ԺԵ. 5*):

Ի՞նչ է եղած այս չրչաբերական ուղերձի արդիւնքը՝ յայտնի չէ: Նօտարական արձանագրութեան համաձայն, նրա մահուանից յետոյ որ եւ է դումար չէ գտնուած իր քով: Այսչափ միայն յիշուած է այնտեղ թէ իր հայ հետեւորդները «Գասպար եւ Ալվարէզ յայտնեցին թէ հանգուցեալն ընդ ամէնը 5 դուկատ (ducats) *ունէր, որ ծախսուել է նաւավարձի, բժշկի եւ դեղերի համար»: Այնպէս որ, նոյն իսկ նօտարական ծախքն Անվէրսի եկեղեցին է վճարել, ինչպէս վկայում է նօտարի ընկալագրերն, որտեղ ասուած է թէ «Հայաստանի հանգուցեալ արքեպիսկոպոսի իրերը դուրս կապրելու համար գործածուել է 26 թերթ թուղթ եւ ծախքը 14 st. (տեղական դրամ) է»:

Թոմասի այս անակնկալ վախճանից յետոյ նրա հետեւորդները խնդրել են, որ իրենց մի վկայական տրուի այս տխուր եղելութեան մասին, որպէս զի նրանք անարգել չարունակեն իրենց ճանապարհը: Ըստ այնմ Անվէրսի Մայր Եկեղեցու եպիսկոպոսական Տեղապահից 22 Սեպտեմբեր 1708 թուականով այդպիսի մի վկայական տառնալով Յովհ. Գասպար եւ Պետրոս Ալվարէզ մեկնել են իրենց երկիրն եւ իրենց հետ անչուշտ տարել Թո-

մասի բոլոր իրեղէններն, որովհետեւ դրանց հետքը չէ մնացել Անվէրսում:

Շատ հետաքրքրական վաւերագիր է այդ վկայականը, որտեղ պատմուած է ամբողջ եղելութիւնն եւ միանգամայն բարի վկայութիւն է տրուած հայ սպասաւորների մասին: Այդ թղթի մի օրինակը կցուած է Յուցակին եւ պահւում է կապոցում:

Vicarij generales Episcopatus Antverpiensus vacantis etc.

Omnibus has visuvis salutem in Domino: Notum faciemus et attestamur quod die 13 July anni 1708 ad urbem hanc Antwerpiensem venerit Ill^mus ac Rev^mus D^mus Thomas Vardapiet Archiepiscopus S^tae Crucis in Gochtan, Abbas St Ordinis S^ti Antonij Perso-Armenia, hic vir confectae aetatis in Armeniam jter prosequi cupiens praepeditus jnfirmitate, eaque continuo jnvalescente, tandem eccl^iae Catholicae Romanae sacramentis vite munitus, hic pie obdormivit jn Domino, die nempe 8 Septembris, eiusdem anni, et quiescit jn choro eccl^iae nostrae cathedralis ante summum altare jn sepulchro, cuius jnscriptio in verbis ut sequitur: *Heignini Hyberni Archép^i Tuamensis,* post cuius obitum ministri eius Joannes Gaspars et Petrus Alvarez hinc jn Regionem suam redire meditantes, humiliter nobis supplicarunt sibi concedi Litteras commendatitas, quorum desiderio libenter annuentes testamur dictos

supplicantes, a tempore quo hic degerunt, sese, ut honestos viros decet, gessisse et religionis nostrae catholicae munera exercuisse, proinde eosdem uti tales, omnibus quorum opera ac favore indeguerint jn Domino commendamus. Datum Antverpia, in vicariatu nostra die 22 Septemb. 1708.

(*Ստոր.*) Demandato adm. RR. ac Ampliss: Dnorum Vivariorum Gnolum praefotorum (?)

ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Է

Անտվէրպէնի եպիսկոպոսական աթոռի քահուր լինելովը նրա ընդհանուր տեղակալները յայտնում են՝

*Բոլոր նրանց, որոնք կը կարդան այս դիրն՝ ողջոյն ի Տէր: Ծանուցանում եւ վկայում ենք, որ 1708 Յուլիս 13ին Անտվէրպէն քաղաքս եկաւ Գերպ. եւ Գերապայծառ Տէր Թոմմաս վարդապետն, Արքեպիսկոպոս Ս. Խաչ (վանքի) Գոպէն (գաւառի), Պարսկահայքում, վանահայր Ս. Անտոնի կարգի: Այս անձը, որ ծեր էր, վախճանել էր Հայաստան վերադառնալ, սակայն հիւանդութիւնն, որից վաղուց տառապում էր, արգելք դարձաւ: Նա՝ Հռոմէական կաթոլիկ եկեղեցու Ս. Խորհուրդներովը զօրանալով այստեղ բարեպաշտօրէն ի Տէր հանգեաւ, տարւոյս Սեպտեմբեր 8ին, եւ հանգչում է այս Մայր եկեղեցու գաւթ աւազ խորանի առջեւ, այն տապանի մէջ, որի վրայ այսպիսի արձանագրութիւն

կայ՝ «Heignini Hyberni Archép[i] Tuamensis [5]»: Նրա մահից յետոյ իւր սպասաւորները՝ Յովհաննէս Գասպար եւ Պետրոս Ալվարէզ՝ իրենց երկիրը դառնալ ուզելով, խոնարհաբար խնդրեցին մեզնից, որ Յանձնարարական թղթեր տանք նրանց: Ուստի ընդ առաջ գնալով այս բաղձանքին, սրանով վկայում ենք, որ յիշեալ խնդրատուները, որքան ժամանակ որ նրանք այստեղ մնացին, իբրեւ պարկեշտ մարդիկ ապրեցան եւ մեր կաթոլիկ կրօնի պարտականութիւնները կատարեցին: Ըստ այսմ յանձնարարում ենք նրանց ի Տէր, իբրեւ օգնութեան արժանի կարօտ անձեր: Տրուած է Անտվէրպէնում, մեր Տեղակալութեան ժամանակ, 1708 Սեպտեմբեր 22ին:

---

[5] Անտվէրպէնի (կամ Անվէրսի) պետական դիւանի յիշատակարանների մէջ տեղեկութիւն կայ նաեւ այս հանգուցեալի մասին: Այնտեղ ասուած է, որ Տուամի (Tuam) արքեպիսկոպոս Milerus Hignius 1590 Օգոստոս 4ին իր կոակը չինելուց յետոյ երկրորդ օրը վախճանել է Անվէրսում:

Թ. ԳԼՈՒԽ

Բոլլանդեան «ընկերութեան» ծագումն եւ կրած «փորձանքները»: Acta Sanctorum եւ նրա մէջ Ագաթանգեղոսի ճնշադատութիւնը: Բոլլանդեանների միւս հրատարակութիւնները: Հայագէտ Բոլլանդեաններ. ի. P. Peeters եւ նրա հայագիտական երկասիրութիւնները: Բոլլանդեանների Մատենադարանը Բրիւքսէլում:

Բելգիայում հայագիտութեան տարածման համար կարեւոր դեր է կատարած եւ շարունակում է կատարել Société des Bollandistes (*Բոլլանդեանների Ընկերութիւն*) *անունով յայտնի կրօնաւորական կարգը, որի լաւինեերէն համբաւաւոր պարբերական հրատարակութիւնը* Acta Sanctorum (*Գործք Սրբոց*) *հանրածանօթ է գիտական աշխարհին: Բայց նախ քան Բոլլանդեանների հայագիտական ասպարէզում ունեցած գործունէութեան մասին խօսելը, աւելորդ չեմ համարում մի ընդհանուր ակնարկ նետել այս «Ընկերութեան» ծագման պարագաների եւ նրա ուղղութեան վրայ:*

Հոլլանդացի մի «յիսուսեան» կրօնաւոր, Հ. Րոզվէյդէ անունով (Heribert Rosweyde),

որ իրեն նպատակ էր ընտրել սուրբերի կեանքն ու վարքն ուսումնասիրել, իրաւամբ նկատել էր, որ վկայաբանութիւնները, այսինքն սուրբերի գործերի նկարագրութիւնները վիսում են բազմաթիւ անհաւատալի դէպքերով, չափազանցութիւններով կամ ընդհանրապէս այնպիսի պատմութիւններով, որոնք հեռու են ճշմարտութիւնից: *Եւ նա դալիս է այն եզրակացութեան, թէ* այդ առասպելներն աւելի վնաս են պատճառում կրօնասիրութեան քան օգուտ: *Ուստի նա որոշում է մի նոր, լուրջ ժողովածոյ կամ նորատեսակ «Վարք Սրբոց» գրել, որի մէջ միայն ճշմարիտ կամ գոնէ ճշմարտանման դէպքեր պատմուէին: Ըստ այսմ սուրբերի գործերն ու վարքը պիտի համառօտէր աւելի անկողմնակալ կերպով եւ աւելի լաւ քննուած եւ ստուգուած աղբիւրների հիման վրայ: Ռոզվէյդէ իր այս դաղափարը ներկայացնում է Հռոմ կարդինալ Բէլլարմինին, նրա հաւանութիւնը ստանալու համար եւ կարդինալն ոչ միայն հաւանութիւն է տալիս, այլ եւ ամէն կերպ քաջալերում: Ռոզվէյդէ՝ այդ նպատակով սկսել էր ամէն կողմից նիւթեր ամբարել եւ արդէն մեծ ատաղձ էր ժողովել իր հսկայական ծրագրի իրականացման համար, երբ մահը վրայ է հասնում 1629ին, Բելգիայում: Այն ժամանակ մի ուրիշ յիսուսեան կրօնաւոր բելգիացի հայր Բոլլանդ (Jean Bolland) անունով, յանձն է առնում ի կատար ածել այս ձեռնարկութիւնը, օգտուելով Ռոզվէյդէի հաւաքած*

նիւթերից : Այս կերպով երեան է գալիս Acta Sanctorumը, որի առաջին երկու հատորները 1643ին հրատարակւում են Բելգիայի Անտվէրպէն (Antwerpen կամ Anvers) քաղաքում : Ահա այս Բոլլանդի անունով է, որ նրա գործը չարունակող յիսուսեան կարգի կրօնաւորների խումբը սկսել է այնուհետեւ կոչուիլ «Բոլլանդեանների Ընկերութիւն» : Հ. Բոլլանդի գործակիցն էր իրեն նման տաղանդաւոր աշխատող եւ բազմահմուտ մի կրօնաւոր, Հ. Հէնսքէն (P. Godefroi Henschen) : Սրանք երկուսը 1658ին հրատարակում են 3 հատոր եւս : Առաջին 2 հատորը յատկացուել էր այն սուրբերին, որոնք ծնւում էին Յունուար ամսում, իսկ վերջին 3 հատորները Փետրուարին : Հռոմի բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնը գնահատեց նրանց այս ձեռնարկը : Աղեքսանդր Է. պապը Հ. Բոլլանդին եւ իր աշխատակիցներին Հռոմ հրաւիրելով նրանց տրամադրութեան տակ է դնում վատիկանի դիւաններն, որպէս զի այնտեղ փնտռեն եւ քննեն ինչ վաւերագիր, որ օգտակար գտնեն իրենց նպատակի համար : Բոլլանդ՝ հիւանդութեան պատճառով անկարող լինելով ճանապարհորդելու, Հ. Հէնսքէն (Henschen) եւ մի ուրիշ նշանաւոր աշխատակից Հ. Պապեբրուկ (Papebroek) օգտւում են այս նպատաստաւոր հանգամանքից եւ ոչ միայն վատիկանի հին վկայականական ձեռագիրներն են քննում, այլ Իտալիայի, ինչպէս նաեւ Գերմանիայի եւ Գաղղիայի կարեւոր մատենադարաններն աչքից

անցընելով ընդարձակ նիւթ են ժողովում : Այս կերպով Acta Sanctorumի նորանոր հատորներ են հրապարակ գալիս : Բոլլանդեաններն իրենց այս նոր «Վարք Սրբոցում» դնել, մաքրել էին բոլոր հին վկայաբանութիւնները, անաչառ քննութեան ենթարկելով մի խումբ սուրբերին վերագրուած հրաշքներն եւ անբնական դէպքերը[1] : Այս բոլորը տեղի ունէր դեռ ԺԷ. դարում :

Գիտական աշխարհը մեծապէս գնահատեց Բոլլանդեաններին այս քննադատական ձեռնարկութիւնը : Այնպիսի գիտնականներ՝ քրիստոնէական գրականութեամբ զբաղող բանասէրներ՝ ինչպէս են Ad. Harnack գերմանացին եւ C. H. Turner անգլիացին, գովասանք ուղղեցին նրանց հասցէին : Մի գաղղիացի երեւելի քննադատ գրում է[2]. «Inutile de faire longuement l'éloge d'un ouvrage aussi universellement estimé. Dès les premiers volumes, l'esprit critique apparaît et les Pères Bolland, Henchenius et Papebroek témoignent pour certaines légendes mal venues d'une sévérité égale à celle des simples laïques.»

Այսպէս չմտածեցին սակայն ուրիշ կրօնաւորական կարգեր : Հ. Պապեբրոքի հեղինակած քննական կենսագրութիւնը Երուսաղէմի պատրիարք Ս. Ալբէրտի վրայ, գրգռեց

---

[1] Gachard, Archiviste de d'Etat. Mémoire sur les Bollandistes. Gand 1835.

[2] Auguste Molinier, Les Sources de l'Histoire de France. T. V. 1904, p. CLXIII.

կարմելականներին, որոնք մի երկար եւ խիստ յուշադիր տպեցին բոլլանդեանների վկայաբանական քննադատութիւնների դէմ։ Հ. Պապերրոք անպատասխան չթողեց այդ յուշադիրը (1696)։ Կարմելականները զայրացած՝ խնդիրը ներկայացրին Սպանիոյ Հաւատաքննութեան Ատեանին, որ այն ժամանակ դեռ իր ամբողջ ոյժի մէջն էր։ Տօլէդոյում կայացած Հաւատաքննական Դատարանը դատապարտեց բոլլանդեանների ձեռնարկը իբրեւ «մոլորական եւ հերետիկոսական դրուածներ» եւ բանադրանքի սպառնալիքի տակ արգիլեց նրանց ընթերցումը...։

Բոլլանդեանները չընկրկեցան այս անարդար վճռի առջեւ։ Նրանք դրաւոր դիմեցին սպանիական այդ Հաւատաքննական դատարանին եւ խնդրեցին, որ ցոյց տայ թէ «որո՞նք են Acta Sanctorumի բովանդակած հերետիկոսական, մոլորական տողերը», բայց... պատասխանի չարժանացան։ Այս անիրաւ վարմունքը ազդեց նրանց վրայ եւ հարուածեց նրանց գործունէութիւնը։ Այսպէս տեւեց դրութիւնը, մինչեւ որ վերջապէս Հռոմ 1715ին, վոխեց Հաւատաքննական ատեանի վճիռը, բարձաւ արգելքն եւ բանադրանքն եւ ազատութիւն տուաւ բոլլանդեաններին՝ իրենց առ կախ թողած գործը վերսկսելու։ Բայց խնդիրը այդ «մեծ վորձանքով» չէր վերջացել. ուրիշ նիւթական եւ բարոյական անյաջողութիւններ հետեւել էին առաջինին որոնց վրայ աւելորդ եմ համարում կանգ առնել։

Միայն 1836ին է, իսկապէս, որ Բոլլանդեանների ձեռնարկութիւնը կենդանութիւն ստացաւ : Գաղղիայում մի մեծ ընկերութիւն յանձն էր առել Acta Sanctorumի հրատարակութիւնը ստանձնել, այն պայմանով, որ բոլլանդեանները իրենց գործունէութիւնը Գաղղիա փոխադրեն : Բայց Բելգիա՝ որ նոր էր իր ազգային պետական անկախութիւնը ձեռք բերել, չթողեց, որ այդ գիտական ձեռնարկութիւնը հեռանայ իր երկրից : Լուվէնի կաթոլիկ համալսարանի տեսչութեան նախաձեռնութեամբ «Բոլլանդեանների Ընկերութիւնը» վերակազմուեց, ուրիշ Բելգիացի յիսուսեան կրօնաւորների մասնակցութեամբ : Ընկերութեան կենդրոնատեղին Անտվէրպէնից տեղափոխուեց Բրիւքսէլ, ուր եւ մնում է ցարդ, հետզհետէ զարգացնելով իր գիտական եւ կրթական գործը :

Հետաքրքրական է այն առաջին կարեւոր յիշատակութիւնը, որ եղած է Acta Sanctorumի մէջ հայ վկայաբանութեան մասին : Հաստատուած հեղինակն է նոյն ինքն Հ. Հէնշէն, Բոլլանդի գործակիցն եւ Acta Sanctorumի հիմնադիրներից մէկը : 1707ին տպուած Յունիսեան Դ. հատորում, Հէնշէն խօսում է մի խմբային մարտիրոսութեան, այն է «10·000 խաչեցեալների» առասպելի մասին եւ յիշում է մի «հայ եպիսկոպոսի» վկայութիւնը : Նա գրում է. «Որովհետեւ տօնացոյց խմբագրողներն այսպիսի, երբեմն աւելի եւս անմիտ առասպելներ են ընդունել եւ ներմուծել, չենք

կարծում թէ այդ պարապան, իրողութեան անհաւանականութիւնը բաւական լինի, որ այդ «10·000 խաչեցեալների» առասպելի վրայ չխօսէինք: Պէտք է ենթադրել թէ նա լատինական ծագում ունի եւ լատիններն են եղած, որ ԺԲ. եւ ԺԳ. դարերում, Խաչակրութեան չրջանում այս աւանդութիւնը հաղորդել են Հռոմէական Եկեղեցուն յարած հայերին: Մի հայ արքեպիսկոպոս որ 1699ին անցնում էր Կ.Նովէրպէնից, հաւատացրեց մեզ թէ այս առասպելը դեռ դոյութիւն ունի այնտեղ, ապէտ ժողովուրդի մէջ[3]»:

Այս հայ արքեպիսկոպոսը Թոմաս Վանանդեցին էր, որ ինչպէս տեսանք նախորդ Գլխում, 1708ին դարձեալ եկել է Անտվէրպէն, իր հայրենիքը վերադառնալու մտադրութեամբ, բայց հիւանդացել եւ վախճանել է այնտեղ:

Acta Sanctorumի Հայոց վերաբերեալ ամենակարեւոր հատուածը Ագաթանգեղոսի քննադատութեանն է վերաբերում: Երբ բոլանդեաններն ամէն կողմ պտտելով իրենց «Գործք Սրբոցի» համար նիւթեր եւ ձեռագրներ էին ժողովում, այսպիսի պրպտումների ժամանակ, Ֆիորէնցիայում, Մէդիչիների համբաւաւոր Մատենադարանում նրանք գտել են Ագաթանգեղոսի մի ձեռագիրը, յունարէն լեզուով: Բոլլանդեան Հ. Սոլերինդ

---

[3] Acta SS. Junii, T. IV, p. 176, «Sed neque Armenis nota est nisi ex Latinis scriptoribus», վերնագրի տակ:

(Stilting) անմիջապէս լծուել է նրա քննութեանն եւ լատիներէնի թարգմանելով, յունարէն բնագրի հետ միասին հրատարակել է Acta Sanctorum-ի մէջ, 1762ին [4]: Սուլտինգ՝ այս քննութեան մէջ հաւատ չէ ընծայում ոչ Գր. Լուսաւորչի Հռոմ երթալուն եւ ոչ էլ Սեղբեստրոս պապի հետ տեսնուելով Դաչինք կապմուելուն:

Միեւնոյն ժամանակ, այս կաթոլիկ աստուածաբանը մատնանշում է Ագաթանգեղոսի բովանդակած վկայաբանութեան բազմաթիւ անճշդութիւններն եւ աւելորդաբանութիւնները Ս. Հռիփսիմէի, Գայեանէի եւ ընկերուհի կոյսերի վերաբերեալ: «Հ. Սուլտինգի այս քննադատութիւնը, գրում է Բելգիացի հայագէտ Ֆ. Նէվ, հաւանութիւն չգտաւ վենետիկի պիտնական Մխիթարեաններից կողմից [5]»: Եւ իրօք, այնուհետեւ էլ, Ագաթանգեղոսի վրայ խօսող Մխիթարեան հեղինակները Սուլտինգի հերքումներին կարեւորութիւն չընծայեցին կամ նրա դոյց տուած նոր չաւղով չընթացան (համմա. Զամչեան, Պատմ. Հայոց, Հատ. Ա., էջ 359—420 եւ Ծանօթութիւններ. Հատ. Բ., էջ 613—679. համմա. նաեւ Ալիշանի, Ինճիճեանի գործերն եւ այլն): Ս. Ղազար՝ Ագաթանգեղոսի հայերէն

---

[4] Acta Sanctorum, Sept., T. VIII, p. 295, վերնագիրն է՝ «De S. Grigorio Episcopo Armeniae confessioni item SS. virginibus Ripsime, Gaiana et Sociis martyribus, in Armenia Majore».

[5] Felix Nève, L'Arménie Chrétienne, p. 194.

բնագիրը հրատարակելուց յետոյ 1840*ին լոյս ընծայեց նաեւ նրա իտալերէն թարգմանութիւնը: Իտալացի գիտնական* Tomaseo *եւս այս թարգմանութեան կցել էր «վիճաբանական դիտողութիւններ»* (Observations polémiques), *ինչպէս ասում է նոյն Ֆ. Նէվ: Տարբեր վերաբերմունք ունեցաւ Հ. Բ. Սարգիսեան, իր համառիտ ուսումնասիրութեան մէջ*[6]: *Նա բացասաբար վերաբերուեց Տրդատի եւ Գրիգորի Հռոմ երթալու աւանդութեան: Նա եղաւ, որ առաջին անգամ երեւան հանեց, որ Ագաթանգեղոսի մէջ Կոստանդիանոսի վրայ պատմուածն էլ քաղուած է Եւսեբիոսի «Վարք Կոստանդիանոսի» գրքից (Գ. գլ. ա):*

Հ. Սուքիասեանցին լիովին հաւանութիւն տուող առաջին Մխիթարեանն եղաւ Հ. Յ. Տաշեան, որ որոշ կերպով գրեց թէ Բուլղարեան դիտնականի «սուր դիտողութեանց շատերը ցայսօր իսկ զօրութիւն ունին, թէպէտ եւ հեղինակը սոյն գրոց (Ագաթանգեղոսի) բնագրին եւ անոր հայ մատենագրութեան մէջ բոնած գրից անծանօթ էր: Իւր (Սուքիասեանցի) դիտողութեանց հետեւութիւնն է թէ սոյն գրոց մէջ կայ շատ բան ճշմարիտ եւ յարգի, բայց նաեւ շատ բան սուտ եւ առասպելական, եւ ինք զասոնք իրարմէ զատելու ալ ջանայ[7]»: *Տաշեան մի ուրիշ առթիւ էլ նոյնպէս կարուկ կերպով գրեց. «Պէտք չկայ*

---

[6] *Ագաթանգեղոս եւ իր բազմադարեան դաշտանիքը: Վենետիկ* 1890:

[7] *Հանդէս Ամսօրեայ*, 1890, *էջ* 193:

լսելու, որ այժմ Աղաթանգեղեայ անուամբ պտնուող Դաշանց թուղթը շատ ուշ եւ շատ տգէտ գրչի գործ է[8]» :

Ըստ սկզբնական ծրագրի, Acta Sanctorumի մէջ տեղ ունին քրիստոնեայ կրօնին պատկանող բոլոր սուրբերը, ոչ միայն նրանք, որոնք ընդհանուր քրիստոնէութեան մէջ յայտնի են եւ տօնւում են ամէն երկրում, այլ նաեւ նրանք, որոնք՝ միայն մասնաւոր Եկեղեցիների եւ նոյն իսկ առանձին կրօնական խմբակցութիւնների պաշտաման առարկայ են: Acta Sanctorumը տալիս է իր քննած վկաների վերաբերեալ վաւերագիրներն իրենց յատուկ բնագիրներովը[9] :

Acta Sanctorumի հատորները կազմուած են ամիսների եւ օրերի շարքով: Ամէն ամիս իր հատորներն ունի եւ նուիրուած է այն սուրբերին, որոնք այդ ամսի օրերումն են տօնւում: Մինչեւ հիմայ հրատարակուած է 65 հատոր, որոնց վերջինը Նոյեմբեր ամսին է յատկացրած եւ շարունակութիւն է 1896 Նոյեմբերին լոյս տեսածին, իբրեւ սրա Ա. մասի լրացումը[10]: Այս մեծադիր հատորը ամբողջապէս խմբագրուած է հայր H. Dele-

---

[8] Անդ, էջ 249:

[9] A travers trois siècles. L'œuvre des Bollandistes 1615—1915; par Hippolyte Delehaye S. J., Bruxelles 1920.

[10] Novemberis, Tomi II pars posterior… Bruxelles, Société des Bollandistes, in folio, 1931. p. XXIV + 721.

hayeի ձեռքով, որ Բոլլանդեաններէ այժմեան պետն եւ ղեկավարն է:

Բոլլանդեաններէ այս վկայաբանական պիտական գործունէութիւնը քալելութիւն է գոած օտար մեծ մատենադարաններէ վարչութիւններէ կողմից, որոնց մէջ առաջին տեղն են գրաւում Լոնդոնի British Museumն եւ Պարիսի Bibliothèque Nationaleը:

Բոլլանդեան ընկերութիւնը 1882ին ձեռնարկեց յարակից մի ուրիշ պարբերական հրատարակութեան, գաղղիերէն լեզուով, Analecta Bollandiana խորագրով, որի մէջ մտնում են մասամբ՝ անտիպ վկայութիւններ իրրեւ յաւելուած Acta Sanctorumի եւ մասամբ նոր քննութիւնների արդիւնքները: Ընդարձակ տեղ է տրուած այնտեղ այլեւայլ մատենագրական ճիւղերի՝ գլխաւորաբար վկայաբանական գրականութեան վրայ գրախօսական յօդուածներէ: Այս ժողովածոն, որ բացառապէս գիտական սկզբունքներով է առաջնորդում, բաւ արժանւոյն դնահատուած է արտաքին ուսումնական աշխարհից եւ օտարներ եւս աշխատակցում են այնտեղ:

Վերջին տարիները Բոլլանդեաններն առանձին ուշադրութիւն են դարձրել արեւելեան պիտական բաժնին: Նրանք 1910ին հրատարակեցին «Արեւելեան վկայաբանական Մատենադարան» (Bibliotheca hagiographica Orientalis), որտեղ յառաջ բերուած եւ մատնանշուած են ի մէջ այլոց նաեւ հայկական բնա-

ցիրնէր : *Սրանով չբաւականանալով, բոլլանդեանները նուիրուեցան նաեւ հայերէն լեզուի ուսման: Առաջին հայագէտ Բոլլանդեանն էր Ժ. Մատանյը* (Jules Matagne) : *Դժբախտաբար նա անկարող եղաւ երկարօրէն զբաղիլ, իր կարճատեւ կեանքի պատճառով (ծն.* 1833—*մահ.* 1872) : *Նրանից յետոյ, բայց անհամեմատ աւելի մեծ չափով* հայերէն լեզուի եւ մատենագրութեան *նուիրուեց Հայր Պ. Պետերս* (Paul Peeters), *որ հմուտ է ոչ միայն հին արեւելեան լեզուներին, չխօսելով բնականաբար եւրոպականների վրայ, այլ եւ վրացերէնի եւ ռուսերէնի:*

«*Պետերս ծնած է Բելգիայի Տուռնէ* (Tournai) *քաղաքը,* 1870*ին: Գրաբար հայերէնն սկսած է սորվիլ* 1895*ին Լուվէն (Բելգիայի համալսարանական քաղաքը), առանց ուսուցչի. բայց բազմաթիւ աշխատութեանց եւ հիւանդութեան պատճառով իր այս ուսումն ընդհատումներ է ունեցած:* 1902—1903*ին Բէյրութ է գտնուած, ուր ասորերէն եւ արաբերէն սորվելու ժամանակ, հայերէն լեզուով ևս զբաղած է գործնականապէս, հայ կղերականի մը քով: Այնուհետեւ ինքնաշխատութեամբ է շարունակած: Հայերէն կերպախօսութիւնը* (morphologie) *սորված է Պետերմանի* Porta linguarum orientalium*էն, իսկ համաձայնութիւնը ի սկզբան* Lauer*ի* Armenische Grammatik*ով փորձած է սորվիլ, որուն անբաւականութիւնը տեսնելով՝ Աւետիքեանի*

«Բերականութիւն Հայկականը» (Վենետիկ 1823) սկսած է դործածել, ամբողջապէս դաղղիերէնի թարդմանելով: Պետերս ոչ միայն հմուտ դրաբարադէտ է, այլ աչխարհաբարի ալ տիրացած է տոկուն աչխատութեամբ: Հայադիտութեան մէջ իր առաջին դործերն եղած են Analecta Bollandianaի XXIV (1905) հատորի մէջ (էջ 125—132) երկու մատենախօսականները, որոնց մէկն է Dr. Weberի Die katholische Kirche in Armenien առուար դրքի վրայ: Քննադատի մը անաչառութեամբ, որ դլխաւորապէս Բոլլանդեանց յատուկ է, այս մատեանը թէ կարդաւորութեան եւ թէ սկզբունքի կողմանէ պակասաւոր կը դտնէ: Վիճաւները ձրի չեն տրուած: Հայկական նիւթոց վերաբերեալ հրատարակութեանց ունեցած մեծ հմտութիւնը կը յայտնուի, երբ վէրէրին անծանօթ մնացած ադբիւրներն անոր մատրութեան կը յանձնէ: Քննադատութիւնը կը վերջացնէ բաղձանք յայտնելով, որ հեղինակը իւր երկասիրութիւնը նոր կաղապարէ անցընելով նորէն հրատարակէ: Միւս մատենախօսութիւնը J. Labourtի Le Christianisme dans l'empire perse sous la dynastie Sassanide, Paris 1904 դործին է նուիրուած: Հոս մատիր կ'ընէ Peeters, որ Labourt՝ Տիգրոնի քահանայից դլուխ Մարի երէցին վրայ խօսած աուեն Փաւստոս Բիւզանդացւոյ նոյնին վրայ պատմածը (Դ. 16) չի յիշած ակեր[11]:

---

[11] Հանդէս Ամսօրեայ, 1905, էջ 95—96:

Analectaի 1909ի հատորում (T. 28) *ունի երկու յօդուած*, Une passion arménienne de Saint Georges, *որ «Վկայաբանութիւն Սրբոյն Գէորգեայ Զօրավարին» գրուածքի լատիներէն թարգմանութիւնն է, հանդերձ քննութեամբ*, եւ Une passion arménienne des SS. Abdas, Hormisdas, Sahin et Benjamin, *որ «Ս. Աբդեայ եպիսկոպոսի եւ Որմզդանայ եւ Սայենի եւ Բենեամինի սարկաւագի վկայաբանութեան» (Վարք վկայաբանութիւնք Սրբոց. Ս. Վենետ. 1874) լատիներէն թարգմանութիւնն է ընդարձակ ներածութեամբ։ Իսկ 1911ի հատորում* (T. 30, էջ 5—26), Pour l'histoire synaxaire arménien *յօդուածում, ընդարձակօրէն եւ համաձիւց կերպով ուսումնասիրում է Հայոց Յայսմաւուրքը, այս մասին եղած բոլոր հայ եւ օտար գրուածքները յիշատակելով։ Նոյն հատորում ունի մի ուրիշ գրուածք եւս*, La passion arménienne de S. Phocas, *որտեղ նա այս հայերէն վկայաբանութիւնը* (Վենետիկ 1874) *բնագրից եւ տալիս է նրա ամբողջական լատիներէն թարգմանութիւնը ասորական օրինակի հետ համեմատութեամբ։ Եւ այսպէս շարունակում է իր հայագիտական քննութիւնները* Analectaի *յետագայ հատորներում։ Յառաջ բերեմ մի քանի հետաքրքրականները*։ La version ibero-arménienne de l'autobiographie de Denys l'Aeropagyte *յօդուածում* (T. 39, 1921) *Հ. Պետերս հրատարակել է Դիոնիսիոս Արիսպագացւոյ ինքնակենսագրութեան*

վրացերէն օրինակը՝ որա լատիներէն թարգմանութեամբը: Նեղածութեան մէջ դիտնական հեղինակը աչխատում է ապացուցանել, որ հայերէն օրինակն, որ առաջին անգամ Հ. Ն. Վ. Ակինեան հրատարակ հաննց եւ արաբերէնից թարգմանուած էր կարծում, բխում է վրացերէնից եւ վրացերէնն է, որ արաբերէնից է առնուել: Այս հիման վրայ Հ. Պետերս մեկնում է այն արաբական հետքերն, որոնք առաջին անգամ Հ. Ակինեան մատնանշել էր: Դարձեալ նոյն հատորում Les traductions Orientales du mot martyr (էջ 50—64) յօդուածում Պետերս բացատրում է թէ հայերն էլ Ասպինեզի նման վոխ են առած յունական «մարտիրոս» բառը, որը սակայն ժողովրդական առուգաբանութիւնը լծորդել է «մարտ» բառին: Հայերէն բուն բառերն են, ասում է նա, «վկայ» եւ «խոստովանող», որոնց առաջինը յունարէնի, իսկ երկրորդը ասորերէնի նմանութեամբ են ձեւուած: Իսկ Traductions et traducteurs dans l'hagiographie orientale à l'époque byzantine գրուածքում (Անդ, T. XL, III եւ IV, էջ 241—298) ընդարձակօրէն խօսում է Հայոց վրայ եւս: Բոլոր գրացի լեզուներից, ասում է, թարգմանութիւններ եղած են, բայց հայերէնից օտար լեզուի թարգմանութիւն քիչ է հատարուել (այսպէս են Ագաթանգեղոսն եւ Ագուեսապիրքը): Միայն վրացերէնն է, որ մեծ չափով թարգմանել եւ առ հասարակ վոխ է առել հայ մատենագրութիւնից: Սակայն,

եղրակացնում է Հ. Պետրս, «Օտար լեզուով գրող Հայեր պակաս չեն եղած»:

Հայագէտ Բոլլանդեանը բնականաբար պիտի հետաքրքրուէր բոլոր այն հայերէն կամ հայագիտական հրատարակութիւններով, որոնք դիտական–պատմական բովանդակութիւն ունին եւ մատչելի են եղած իրեն: Ուստի նա բազմաթիւ դրախօսականներ ունի դրած այսպիսի հրատարակութիւնների վրայ: Յիշեմ նրանցից մի քանիսը: Analecta Bollàndiana*ի 1911ի հատորում* (T. 30, էջ 109) *քննում է Պրոֆ. Ն. Ադոնցի՝ ռուսերէն* Армения в эпоху Юстиняна (*Հայաստանը Յուստինիանոսի ժամանակ*) *կարեւոր պատմական ուսումնասիրութիւնը* (տպ. Պետերբուրգ 1908) *եւ եղրակացնում է. «Պ. Ադոնցի դիտական հետազօտութիւնները ամենայուրջ ուշադրութեան արժանի են բոլոր մանագէտների, զանց չառնելով նաեւ վկայաբաններին»: Այն հատորում խօսելով Հ. Ն. Ակինեան «Կիւրիոն կաթողիկոս Վրաց, իւ. դարի հայ–վրական յարաբերութեանց մասին» (Վիեննա 1910) համալից ուսումնասիրութեան վրայ, վկայում է թէ «հեղինակի (Ակինեանի) դիտողութիւնները պայծառ են, լաւ չղթայուած եւ կատարելապէս առարկայական»: Կիւրիոնի դէմքը այնպէս բարեհաճօրէն է նկարուած, որ նա ընթերցողի համակրանքն է գրաւում, եւ վերջացնում է Հ. Ակինեանի այս դիրքը «une remarquable étude» կոչելով: Նոյն հեղինակի «Սկեւրայի Աւետարանը» պատկերազարդ դրքի*

(Վիեննա 1930) մասին խօսելով ասում է. «Հ. Ակինեան, որին բազմաթիւ ուսումնասիրութիւններ ենք պարտական հայ պատմութեան եւ գրականութեան վրայ, չատ դեղեցիկ դաղափար է ունեցել հետազօտելու այս ձեռագիրը Աւետարանն, որ պատկանում է Հայ–Կիլիկեան դեղարուեստին»: Հ. Պետերս ընդարձակ գրախօսական ունի նաեւ Հ. Վարդան Վ. Հացունու՝ «Կաթողիկոսական ընտրութիւնն եւ ձեռնադրութիւնը Պատմութեան մէջ» (Վիեննա 1930) բովանդակալից եւ մեծ համառութեամբ գրուած աշխատութեան վրայ: Նա դանում է իրաւամբ, որ Հ. Հացունի «յոյժ չահեկան մանրամասնութիւններ է հաւաքել. աղբիւրները նշանակուած են ճշդիւ եւ այն մասնագէտներն, որոնք կը կամենան աւելի խոր կերպով ուսումնասիրել այս հարցը, այնտեղ պիտի դանեն ներածութիւն եւ ընտիր, դոհացուցիչ նիւթեր»: Այս միեւնոյն հատորում Հ. Պետերս ունի մի դեղեցիկ հետազոտութիւն «Un colophon géorgien de Thornik le moine» վերնագրով, որ իսկապէս վրացագիտութեան է վերաբերում: Այսչափ միայն յիշենք, որ այս Թոռնիկը ծննդեամբ հայ էր եւ միայն դաւանութեամբ «վրացի» այսինքն ճշդադոյնը՝ «քաղկեդոնական»: Վերջապէս, այնտեղ կայ գրախօսական նաեւ «Յարգանք հայ նահատակին, Յիշողութիւններ Յաւիտենական Քաղաքից» (Վիեննա 1930) գրքոյկի վրայ, որի մասին բառացի ասուած է «Ce

petit livre écrit con amore, est tout fait pour plaire et pour instruire» :

Հ. Պետերս անդամ է եւրոպական դիտական հաստատութիւնների, ի մէջ այլոց Բրիւքսէլի Արքայական Ակադէմեայի Գաղղիական ճիւղի, որի նիստերում կարդացած է չահեկան ուսումնասիրութիւններ :

Մեզ համար ուշադրութեան արժանի է նրա հետեւեալ գրուածքը — L'Intervention politique de Constantin II. dans la Grande Arménie en 338, *տպուած նոյն Ակադէմեայի* 1930/31*ի* Bulletin*ում, որտեղ հետազօտուած է Հայաստանի քաղաքական վիճակն եւ հայ ժողովրդի դրութիւնը Դ. դարում :*

Հ. Պետերս աշխատակցել է նաեւ Պարիսի Revue des Etudes Arméniennes *պարբերաթերթում, որի առաջին իսկ համարում դետեղել է մի յօդուած հետեւեալ վերնագրով՝* Le début de la persécution de Sapor, d'après Faust de Byzance (*Շապուհի հալածանքի սկզբնաւորութիւնն ըստ Փ. Բիւզանդացւոյ*), *որտեղ նա մեկնաբանում է Փաւստոսի ԺԶ. եւ ԺԷ. Գլուխները, բաղմաթիւ հայ եւ օտար պատմական աղբիւրների վրայ հիմնուելով* (1920, T. I, էջ 15—33) : *Նրա վերջին յօդուածն այդ ամսագրում, մի կարեւոր եւ ուշադրաւ ուսումնասիրութիւն է հայ այբուբէնի ծագման վրայ* (L'origine de l'alphabet Arménien, Revue IX, էջ 219 *եւ շար.*) :

Բրիւքսէլի Արեւելեան Կաճառի նորերս հրատարակած ժողովածոյին (Mélange Bidez,

Annuaire, T. II, 1934), նա մասնակցել է մի հետաքրքրական յօդուածով, A propos de la version arménienne de l'historien Socrate, որտեղ յառաջ են բերուած մանրամասնօրէն այն բոլոր աշխատութիւնները, որ երեւցել են այս հարցի վրայ հայերէն եւ օտար լեզուներով: Հեղինակի եզրակացութիւնն է թէ Փիլոնի ժամանակագրութիւնն ստոյգ է եւ գրուած կանխադոյն քան է. դարի վերջերը: Իսկ Բրիւքսէլի հանրածանօթ Byzantion գիտական հանդէսի 1933ի համարում (T. VIII, fasc. 2), որի դեկավարն է Պրոֆ. Հանրի Գրէգուար (որի մասին առանձնապէս պիտի խօսուի իր տեղում), Պետերս մի հետաքրքրական յօդուած ունի ΠΑΣΑΓΝΑΘΗΣ — ΠΕΡΣΟΓΕΝΗΣ յունարէն վերնագրով, որտեղ քննում է Է. դարում արաբական տիրապետութեան շրջանը Հայաստանում: «Պատագնաթէս» Հայաստանի պատրիկի «դաւաճանութեան» զրոյցն առիթ առնելով ըստ իր սովորութեան քննում է բազմաթիւ՝ հայկական, ասորական, յունական եւ արաբական աղբիւրներ:

«Հանդէս Ամսօրեայ»ի, 1927 Նոյ.–Դեկտ. յոբելեանական թուի մէջ, ուր գտնում ենք միա՛յն եւրոպացի հայագէտների յօդուածները, Հ. Պետերս ունի հետեւեալ աշխատութիւնը՝ Une sainte arménienne oubliée, Sainte Marie la Jeune (էջ 723—730): Նա խօսում է մի հայ սրբուհու մասին, որ անծանօթ է մնացել հայ վկայաբանութեան եւ առ հասարակ հայ մատենագրութեան, բայց որի յիշատակը

պահպանուել է Աթոս լերան վանքի մի յունական ձեռագրում: Խոր կերպով ուսումնասիրելուց յետոյ բոլոր աղբիւրները, նա եզրակացնում է թէ այս սրբուհին հայ էր, որ գաղթել է Թ. դարում Կղարջքից երբ այնտեղ սկսել էին իշխել Բագրատունիներն իրենց աթոռանիստ Արտանուջ բերդում: Ուրիշ աշխատութիւն եւս հրատարակած է «Հանդէս Ամսօրեայ»ի «Յուշարձանում» 1911ին «La passion arménienne de S. Serge le Stratélat» (էջ 186—192):

Բոլլանդեանների փառքն է կազմում նրանց ճոխ եւ բազմաբովանդակ Մատենադարանը Բրիւքսէլում, որ ունի իր ընդարձակ Արեւելագիտական բաժինը: Այնտեղ պատուաւոր տեղ է գրաւում նաեւ Հայկական մասը, ուր կարելի է գտնել թէ դասական եւ թէ ժամանակակից՝ գիտական, պատմական եւ կրօնական շատ կարեւոր հրատարակութիւններ, անխտիր, թէ հայերէն եւ թէ օտար լեզուներով: Հայերէն պարբերական ուսումնաթերթերից կան լիակատար ժողովածուներ, Բազմավէպի, Հանդէս Ամսօրեայի, Արարատի (մինչեւ 1914) եւ Սիոնի (1917ից սկսած): Հայկական Մատենադարանի հիմնադիրն է եղած վերոյիշեալ առաջին Բոլլանդացի հայագէտը Ժ. Մատանյը (Jules Matagne). իսկ այնուհետեւ մեծապէս ճոխացած է շնորհիւ Բոլլանդեանների մեծ հոգածութեան:

Բրիւքսէլում, Բոլլանդեանների այս հազուագիւտ մատենադարանը տրամադրելի է

բոլոր ուսումնասէրներին: Նրա ընդարձակ պահլիճ–ընթերցարանում, շարունակ նստած պարապում են ամէն ազգի, կրօնի եւ սեռի բանասէրները, իւրաքանչիւրն իր ցանկացած ճիւղի վերաբերեալ մատեաններով մէջ թաղուած: Հոլլանդեաննները սիրայօժար կերպով աջակցում են նաեւ իւրաքանչիւրին իրենց խորհուրդներով: Ես եւս, իբրեւ այդ պահլիճի եռանդուն յաճախողներից մին օգտւում եմ այս առթից իմ խորին շնորհակալութիւնս յայտնելու ընդհանրապէս Հոլլանդեան Ընկերութեան եւ մասնաւորապէս բարեհամբոյր Հ. Պ. Պետերսին:

Ժ· ԳԼՈՒԽ

Առաջին Բելգիացի մեծ հայագէտը, Ֆէլիքս Նէվ· իր աշխատութիւնների ամբողջ ցուցակն եւ նրանց համառօտ բովանդակութիւնը: Նրա կենսագրութիւնը: Ազարեան պատրիարքի նամակը:

—

Առաջին բելգիացի դիւանականն, որ լրջօրէն զբաղուել է հայերէնի ուսումով, ուսումնասիրել է հայ մատենագրութիւնն եւ իր համալից գրուածքներով մեծ չանք է գործ դրել հայ ժողովուրդն եւ իր անցեալը ծանօթացնելու իր հայրենակիցներին եւ առ հասարակ եւրոպական գիտական շրջաններին, Ֆէլիքս Նէվ (Felix Nève) *է եղած: Ուստի՝ յարգելով նրա յիշատակը, ես հարկ եմ համարում մանրամասնօրէն կանգ առնել նրա հայագիտական աշխատութիւնների վրայ: Նէվ՝ Լուվէնի (Բելգիայում) համալսարանի ուսուցչապետ էր եւ այնտեղ է գրած իր ուսումնասիրութիւնները, տպուած գանազան գիտական հրատարակութիւնների մէջ:*

Ֆէլիքս Նէվի առաջին հայագիտական աշխատութիւն է՝

թ. 1. Esquisse historique sur la langue et la littérature arménienne համառօտ տեսութիւնը հայ լեզուի եւ գրականութեան վրայ, որ տպուած է 1841ին, Լուվէնի մէջ, Choix de Mémoires de la Société littéraire գրական ժողովածոյի Ա. հատորում:

Ա.ինուհետեւ ամբողջ 40 տարի նա անընդհատ՝ մինչեւ իր մահը, նուիրուել է հայ բանասիրութեան եւ թէ՛ բովանդակութեամբը, թէ՛ ուղղութեամբը մեծապէս գնահատելի աշխատութիւններ լոյս ընծայել: Այս գրական գործերի մեծագոյն մասը 1886ին ամփոփուած են՝ L'Arménie Chrétienne խորագրով մեծ ժողովածոյի մէջ:

Նէվ բարեխղճօրէն ուսումնասիրած է հայ մատենագրութիւնը, մանաւանդ հոգեւոր գրականութիւնը: Նա չատ տեղերն իր քննութեան առարկայ դարձած աղբիւրներից ճըշդութեամբ թարգմանած է գաղղիերէնի:

Հայ ազգային հաստատութիւններին վերաբերում է համակրանօք եւ երբեմն մինչեւ իսկ յատուկ գուրգուրանք է ցոյց տալիս: Բայց երբ մօտենում է զաւանաբանական խնդիրներին, այն կէտերում, որոնց մէջ Հայ եկեղեցին տարբերւում է Հռոմէական եկեղեցուց, Նէվի եզրակացութիւնները բնականաբար աննպաստ են առաջինին: Ճշմարտանք, որ Նէվ ոչ միայն կաթոլիկական համալսարանի պրոֆէսոր էր, այլ եւ ջերմ կաթոլիկ:

Ֆէլիքս Նէվին՝ իր առաջին հայագիտական աշխատութիւնների մէջ օգնել է մի ու-

բիչ բելգիացի դիանական, Բրիժի թեմական եպիսկոպոսը, մոնսէնեոր Մալու, որ 8 տարի նրա հետ միասին ուսուցչապետ է եղել Լուվէնի համալսարանում եւ «զգացել է թէ չատ բան կարելի է ապահել թէ՛ ընդհանրապէս դաստիարակութեան եւ թէ մասնաւորապէս քրիստոնէական դրականութեան համար, հայկական յիշատակարանների ուսումնասիրութիւնից», ինչպէս գրում է Նէվ։

Գանք այժմ նրա հեղինակութիւններին.

Ա. «L'Arménie Chrétienne» *ժողովածոյի առաջին գրուածքն է՝*

Թ. 2. Tableau de la littérature Arménienne, *որտեղ հեղինակը՝ 44 ընդարձակ էջերում ներկայացնում է ընթերցողներին՝ հայերէն լեզուն եւ այբուբէնը, լեզուի մշակման շրջանները, առաջին հայ թարգմանիչներն եւ մատենագիրներին։ Այնուհետեւ ծանօթացնում է խաչակրութեան շրջանի հայ գրականութեան հետ եւ վերջապէս համառօտ պատկերն է տալիս նորագոյն շրջանի հայ գրականութեան, գանազան երկիրներում։ Այս կերպով բելգիացի կամ առհասարակ եւրոպացի ընթերցողը, կարող եմ ասել նաեւ հայ ընթերցողը, մի ընդհանուր, ամփոփ պատկերով ծանօթանում է հայ լեզուի մշակման եւ հայ գրականութեան ծագման, անկման վերածնունդի եւ այժմեան տիրող շրջաններին։*

Թ. 3. L'hymnologie Arménienne, 14 *էջ։*

Նէվ տալիս է հայկական չարականների հեղինակների ամբողջական ցուցակը, նրանց

այլեւայլ տպագրութիւնները, կարեւոր համարած չարականների քննութիւն եւ պաղպ. թարգմանութիւնը:

Թ. 4. La Transfiguration de notre Seigneur Jésus Christ, dans l'office des Arméniens. 18 էջ:

Նէվ կապում է այս ոտնը Հայոց հեթանոսական շրջանի Վարդավառի հետ, յատուկ է բերում այս մասին հայ մատենագիրների գրածները, պարզում է Տօնացոյցի մէջ Ա.յլակերպութեան ոտնի Ա., Բ. եւ Գ. օրերի կանոնները եւ տալիս է սրանց թարգմանութիւնը:

Թ. 5. De l'Invocation du Saint Esprit. Hymnes traduites et commentées pour servir à l'histoire du dogme en Orient. 44 էջ:

Նէվ այստեղ եւրոպական դիտական աշխարհի ուշադրութիւնն է հրաւիրում «քրիստոնէական աստուածաբանութեան այն կոթողների վրայ, որոնք պահպանուած են հայ գրական լեզուի մէջ եւ շատ քիչ են ծանօթ Եւրոպայում»: Նա ընդարձակօրէն յատուկ է բերել Հոգւոյն Սրբոյ հայոց հայ եկեղեցական փառաբանութիւնները, եւ մանրամասնօրէն խօսում է Հոգեգալստեան երկերի բովանդակած վարդապետութեան, նրանց աղբիւրների, ոճի եւ հեղինակների վրայ եւ տալիս է այս երկերի բարեխիղճ թարգմանութիւնը:

Թ. 6. Canon des Fêtes de Saint Jean Baptiste. 19 էջ:

Այստեղ հեղինակը խօսում է նախ Յովհ.

Մկրտչի մասին ընդհանուր քրիստոնէական եկեղեցու աւանդութեան վրայ, ապա տալիս է թարգմանաբար՝ հայ եկեղեցւոյ երգերն եւ կանոնները:

Թ. 7. Canon des Saints Apôtres Pierre et Paul. 14 *էջ:*

Այս աշխատութեան մէջ նէվ յառաջ է բերում եւրոպական աղբիւրներից բազմաթիւ յիշատակութիւններ Պետրոս եւ Պօղոս առաքեալների մասին եւ յետոյ տալիս է Հայոց հոգեւոր երգերի բովանդակութիւնը նոյն առաքեալների վրայ:

Թ. 8. Constantin et Théodose devant les Eglises Orientales. Etude tirée des sources grecques et arméniennes. 36 *էջ,* 8°:

Արեւելեան եկեղեցիները, ըստ Նէվի, չատ աւելի մեծ յարգանք են մատուցանում եւ նոյն իսկ պաշտում Կոստանդիանոս եւ Թէոդոս կայսրներին, քան Արեւմտեան Եկեղեցին: Հեղինակը թարգմանօրէն յառաջ է բերում յունական եւ հայկական եկեղեցական գրուածքները, որոնք մինչեւ այդ՝ որ եւ է եւրոպական լեզուով դեռ չէին թարգմանուած: Հայկական գրուածների թւում կան քաղուածքներ հայ պատմագիրներից, Յայսմաւուրքից եւ Շարակնոցից: Նրա եզրակացութիւնն է թէ «Հայ Եկեղեցին երախտապիտական յիշատակ է պահպանել Կոստանդիանոս կայսեր նկատմամբ, բայց աւելի մեծ պատիւներ է յատկացրել Թէոդոսին, որի առաքինութիւնը հայերն աւելի մաքուր եւ աւելի կատարեալ

են համարել քան Կ. Պոլսի բոլոր միւս կայսրներինը»:

Թ. 9. La légende de Saint Rhipsimâ et de ses compagnes martyres. 10 էջ:

Նէվ պատմում է այստեղ Ս. Հռիփսիմէի եւ իր ընկերուհիների Հայաստան գալու եւ մարտիրոսանալու դէպքը՝ Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացու աւանդածի համաձայն: Նա ամբողջապէս թարգմանել է այս կոյսերին նուիրուած գեղեցիկ շարականը՝ Կոմիտաս կաթողիկոսի (է. դարում) յօրինածը եւ ապա Ներսէս Շնորհալունը՝ ԺԲ. դարում: Իր այս թարգմանութեան Նէվ կցում է կարեւոր ծանօթութիւններ՝ Շարականների բովանդակութեան վերաբերեալ:

Թ. 10. Cantiques en l'honneur de Vartan et de ses compagnons, guerriers arméniens, martyrs de la foi. 8 էջ:

Հայ Եկեղեցին սրբոց կարգն է դասել Վարդանանց պատերազմի մէջ նահատակուած հայ զինուորներին: Յոյն եւ ուրիշ աստուածաբաններ անտեղի են գտել այս սրբացումը այն հիման վրայ թէ Ընդհ. Եկեղեցին չէ սրբացնում այն քրիստոնեաներին որոնք անհաւատների դէմ մղուած պատերազմների մէջ սպանուած են: Եկեղեցին մարտիրոս չէ համարում նաեւ բիւզանդական կայսրութեան այն զինուորներին, որոնք անհաւատների դէմ ճակատամարտներում ինկել են: Նէվ այստեղ պաշտպան է կանգնում Հայ Եկեղեցուն եւ պատասխանում է. «Հայն ազգովին

ոտքի էր կանգնել օտար ասպատակողների դէմ. մղուած պատերազմը հաւատքի պաշտպանութեան համար էր: Հայոց դիմադրութիւնը քրիստոնէական կրօնքի հալածանքի պատճառով էր: Հետեւաբար Վարդան եւ իր ընկերները քրիստոնէական կրօնի համար զոհուել են կամաւորապէս...: Հայ զօրապետները եւ դինուորները դիւրութեամբ կարող էին ուրանալ իրենց կրօնն եւ փախուստ տալ կռուից. բայց նրանք յօժարակամ կռուի են դնացել յանուն քրիստոնէութեան եւ զոհուել, ուրեմն նահատակներ են»:

Այս ջատագովումից յետոյ, Նէվ Թարգմանում է Ներսէս Շնորհալու երկու դեղեցիկ Շարականները վարդանանց վրայ, պատմական ծանօթագրութիւններ աւելացնելով իր կողմից:

Թ. 11. Les hymnes funèbres, prières liturgiques de l'Eglise Arménienne pour les morts.

Այս աշխատութիւնը հեղինակի ամենահին գրուածքներից մէկն է, լոյս էնում տպուած 1855*ին.* 40 *էջ,* 8^0: *Նա բաժնուած է հետեւեալ գլուխների.*

Ա. Շարականի երգերը, նրանց թուականը, հեղինակները եւ թարգմանութիւնը, 4 *երգ:*

Բ. Ներսէս Շնորհալու երգը մեռելոց վրայ:

Գ. Մեռելական երգերի կարեւորութիւնը Հայոց դաւանութեան եւ պատարագի մէջ:

Դ. Մեռեալների համար եղած աղօթքի հետեւութիւնները:

Նէվ ասում է թէ «այս գրաւոր յիշատակարանները վկայում են թէ ի՞նչ է իրօք Հայ Եկեղեցու դաւանանքը»:

Թ. 12. St. Grégoire l'Illuminateur, fondateur de l'Eglise Arménienne et un de ses plus anciens écrivains.

Նէվ իր այս աշխատութեան մէջ Գրիգոր Լուսաւորչի վրայ խօսում է իբրեւ Հայ մատենագրի: Նա ի նկատի ունի «Յաճախապատումի» հեղինակին: Նա համառօտ կերպով ծանօթացնում է ընթերցողներին Գրիգորի կեանքի եւ գործունէութեան հետ եւ պարզում է իր հայեացքը Յաճախապատումի մասին: Ի՞նչ լեզուով էր նա գրուած: «Թէեւ, ասում է Նէվ, Գրիգոր իր դաստիարակութիւնը կեսարիայում առած լինելով, պէտք էր որ յունարէն լեզուով գրած լինէր իր ճառերն եւ աղօթքները, բայց կասկած չկայ, որ նա խօսած եւ քարոզած է հայերէն լեզուով եւ իր աղօթքներն էլ հայերէն է շարադրած: Միայն թէ որովհետեւ իր ժամանակ դեռ հայերէն գիր չկար, որ միայն Ե. դարուն է ընդունուած Հայաստանում, ուստի Գրիգոր ստիպուած էր կամ յունական եւ կամ ասորական գիր գործածել: Հարիւր տարի վերջը միայն նրա այս գրուածքները արտագրուել են, հայերէն տառերով: Ա.յսպիսի պարագաներում յօրինուած գրութիւնը անշուշտ պիտի ունենար մութ խմբագրութիւն եւ պակասաւոր տեղիք,

որոնք մինչեւ հիմայ էլ թարգմանողների համար մեծ դժուարութիւնների առիթ են»:

Նկվ յիշում է թէ ի՞նչ թարգմանութիւններ են եղած Յաճախապատումի՝ եւրոպական լեզուներով եւ ապա յառաջ է բերում Գրիգոր Լուսաւորչի 23 ճառերի վերնագիրները, որոնցից մի քանիսը, մասնաւորապէս Թ.ը (Ս. Երրորդութեան վրայ) նա արդէն թարգմանաբար հրատարակել էր 1866ին, Revue Catholiqueի մէջ:

Թ. 13. Saint Grégoire de Nareg. Notice littéraire et biographique. 12 էջ:

«Գրիգոր Նարեկացին, ասում է Նկվ, Հայ Եկեղեցու ամենամաքուր փառքերից մէկն է, բայց մինչեւ հիմայ ոչինչ է կատարուած նրան ծանօթացնելու, ժողովրդականացնելու համար մեր Արեւմուտքին»: Եւ հեղինակը յանձն է առել այս գործն եւ յաջողութեամբ է կատար ածել: Նա ընդարձակօրէն պատմում է Նարեկացու ծագումն ու կեանքը: Ինչպէս յայտնի է Նարեկացին ծնած է 951ին. նրա հայրը Խոսրով Մեծ եւս հմուտ էր գրականութեան, մանաւանդ հելլենականին: Այնուհետեւ Նկվ բացատրում է Նարեկացու գրուածքների միտքը. դովաբանում է նրա գլուխգործոցը՝ «Երգոց Երգի» մեկնութիւնը, որ նա հեղինակել է, երբ դեռ 26 տարեկան էր: Նկվ տալիս է Նարեկացու մի քանի «ճառերի» պեղեցիկ թարգմանութիւնը. չէ մոռացել յիշել նաեւ թէ Ներսէս Լամբրոնացին նրան «հրեշտակ ի մարմնի» է կոչել:

Թ. 14. Le patriarche Nerses IV, dit Schnorhali ou le Gracieux, envisagé comme écrivain. 18 էջ:

Նէվ պատմում է նախ Ներսէս Շնորհալու ծագումն եւ դաստիարակութիւնը: Նրա հայրն էր Ապիրատ, ազնուական ներդաստանից. մօր կողմից նա Գրիգոր Մագիստրոսի թոռն էր: Գրիգոր վկայասէր կաթողիկոսն, որի քով անցել է նրա պատանեկութիւնը, Շնորհալու մեծ հօրեղբայրն էր: Գրիգոր Գ. կաթողիկոսը նրա աւագ եղբայրն էր, որի օգնականը դարձաւ Ներսէս. իսկ երբ իր այս եղբայրը վախճանուեց, Ներսէս՝ կաթողիկոս ընտրուեց նրա տեղ, 1166ին, երբ իր իմաստութիւնն եւ ճարտարախօսութիւնը հանրածանօթ էր դարձել: Նրա հայրապետութիւնը կարճատեւ եղաւ. նա վախճանուեց 1173ին: Շնորհալու կաթողիկոսական գործունէութեան մէջ լսա Նէվի, առանձնապէս յիշատակելի են այն բանակցութիւնները, որ նա վարել է Յոյն Եկեղեցու հետ միանալու նպատակով:

Նէվ մանրամասն խօսում է Շնորհալու գրուածքների վրայ մեծ գովասանքով: «Իրրեւ բանաստեղծ, գրում է նա, հայ լեզուն ճոխացրեց նոր յանգերով: Նրա ոտանաւորները տոգորուած են ոչ միայն կրօնական այլ եւ հայրենասիրական չունչով. բայց Շնորհալու բուն ոգին երեւում է իր արձակ գրուածների մէջ: Այստեղ է գոյց տալիս նա իր գործն ու պղեցութիւնն իբրեւ եկեղեցական

եւ իբրեւ Հայ Եկեղեցւոյ պետ»: Ներբէս Շնորհալու գրուածներուն մեծ մասը թարգմանուած է լատիներէնի՝ կապէլլէտտիի ձեռքով, (Abbé Joseph Capeletti) եւ տպուած Վիեննա 1833ին:

Թ· 15· Des Principaux monuments de la Littérature historique de l'Arménie. 12 էջ:

«Ամենամեծարանական այլ եւ այլ ճիւղի գրուածքներից վերջը, ասում է Նէվ, պատմագրութիւնը հայ գրականութեան կարեւորագոյն մասն է»: Հեղինակը մանրամասն նկարագրել է թէ ի՞նչ է կատարուած՝ հայ պատմագրութիւնը եւրոպական գիտական աշխարհին ծանօթացնելու համար: Նա պատմում է, որ առաջին ուժեղ քայլն առել է Բրոսէ, Histoire de la Géorgieի մեծանուն հեղինակն, որ ոչ միայն քաջ վրացագէտ այլեւ հմուտ հայագէտ էր եւ չատ լաւ ըմբռնել էր հայ պատմիչների կարեւորութիւնը: Բրոսէ (Brosset) 1840ին, Պետերբուրգի Գիտութեանց Ճեմարանին ներկայացրեց՝ «հայ անտիպ պատմագիրների ժողովածոն» կազմելու ծրագիրը (Projet d'une collection d'historiens arméniens inédits) վերնագրով որեղ խորհուրդ էր տուել օգտուել գլխաւորաբար էջմիածնի Մատենադարանէն:

Ճիշդ նոյն տարին 1840ին, Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնն էլ ծրագրել էր հրատարակել այդպիսի մի ժողովածոյ, իտալերէն թարգմանութեամբ, որ պիտի բաղկանար 24 հատորից, 8⁰: Բայց այս ծրագրի հա-

մեմատ միայն 2 հատոր լոյս ընծայուեց. Մ. Խորենացին եւ Ագաթանգեղոսը: Ապա Մկրտիչ Լմին Մոսկուայում հրատարակեց Մովս. Խորենացու եւ Վարդան Մեծ պատմիչի ռուսերէն թարգմանութիւնը: Նշանաւոր հայագէտ պաղղիացին Եդ. Դիւլորիէ (Ed. Dulaurier) 1856ին հրապարակի վրայ դրաւ իր նոյնպիսի մի ծրագիրը՝ Bibliothèque historique arménienne, որին աջակցելու հրաւիրեց բոլոր եւրոպացի հայագէտներին: Ինքն իր կողմից մատնակցեց՝ Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութեան թարգմանութեամբն եւ իր Chronologie techniqueի Ա. հատորովը, որ իր մտադրած «Հայ. պատմական Մատենագրանի» խարխարը պիտի կազմէր: Մի ուրիշ պաղղիացի հայկաբան Վ. Լանգլուա (Victor Langlois) նոյնպէս յղացել էր հայկական հրատարակութիւնների մի մեծ ծրագիր, որին արդէն խոստացել էին աջակցիլ Վենետիկն եւ Մոսկուան: Դժբախտաբար այս եւս կիսատ ձնաց Լանգլուայի վաղաժամ մահուամբ, 1869ին, հազիւ 40 տարեկան հասակում: Լանգլուա տուաւ միայն Մ. Խորենացու եւ Եղիշէի թարգմանութիւնները: Նէվ իր այս հետաքրքրական տեղեկութիւնների շարքը շարունակելով հասցնում է մինչեւ 1880, երբ Պետերբուրգի համալսարանից՝ Պրոֆ. Քերոբէ Պատկանեան հրատարակում է ռուսերէն լեզուով իր «Հայկական պատմական գրականութեան մատենագիտութիւնը»:

Նէվից յետոյ չատ բան է կատարուած այս

նպատակով ոչ միայն դաղղիացի այլ եւ ուրիշ՝ գերմանացի, անգղիացի եւայլն հայագէտների ձեռքով:

Թ· 16· Elisée, historien du Ve siècle. 18 էջ:

Այս աշխատութեան մէջ Նէվ համառօտ կերպով եղիշէի բովանդակութիւնն է պատմում եւ դովում է մանաւանդ նրա մատենագրական ոճը: Նէվ այս առթիւ դարձեալ չեշտում է հայ ազգի քրիստոնէական անդրդուելի ոգին: Նա թարգմանաբար յառաջ է բերում մի քանի գեղեցիկ դրուագներ Վարդանանց պատերազմի նկարագրութիւնից:

Թ· 17· Jean VI catholicos et son Histoire d'Arménie. 24 էջ:

Նէվ՝ Յովհաննէս կաթողիկոսի այս պատմութեան Saint Martin դաղղ· թարգմանութեանն առթիւ դեռ եւս 1843ին մի յօդուած էր գրել, որ տպուած է Université Catholique XVI եւ XVII թիւերում (Paris 1843—1844): Իսկ այժմ աւելի ընդարձակ բացատրութիւններ է տալիս Յովհ· կաթողիկոսի պատմական չրջանի, եւ նրա պատմութեան այլեւայլ պարագաների, ինչպէս նաեւ պատմաբանի դրութեան ոճի վրայ: «Յովհաննէս կաթողիկոս, վերջացնում է Նէվ, իր պատմած բոլոր դէպքերը դնահատում է քրիստոնէական սկզբունքի վրայ հիմնուելով, որ հայ ազգի դոյութեան խարիսխն է եղած եւ դատապարտում է Մարդարէի հետեւողների մոլեռանդութիւնն եւ դաժանութիւնը· բայց միեւնոյն ժամանակ,

նա՝ իբրեւ պատմաբան անկողմնապահ է եւ ըստ արժանւոյն գնահատում է մահմետական պետերից ոմանց ազնիւ վարմունքն եւ վեմ գործը»:

Թ. 18. Chronique de Mathieu d'Edesse. Les chefs belges de la première croisade. 30 էջ:

Նէվ այս նիւթի վրայ գրել էր արդէն 1859ին: Իսկ Դիւլօռիէյի թարգմանութիւնից յետոյ վերադառնում է այս խնդրին եւ մանրամասնօրէն քննում է Ուռհայեցու պատմածները «Առաջին Խաչակրութեան բելգիացի պետերի»՝ Գոդֆրուա դը Բուլյեօնի, Բոդուէնի եւ միւս իշխանների գործերի մասին եւ Ուռհայեցու վերաբերմունքը՝ Խաչակիր «Ֆրանկների» հանդէպ: Տեղ տեղ խիստ լեզու է գործածում հայ պատմիչի կրօնական հայեացքի եւ նեղմիտ ազգասիրութեան դէմ՝ «esprit de secte et d'étroit patriotisme» ասում է Նէվ:

Թ. 19. Les Sources arméniennes pour l'histoire des mongols en Asie jusqu'à la chronique de Thomas de Medsop (XIII—XVe siècle). 12 էջ:

«Մոնղոլները, գրում է Նէվ, Պարսկաստանից յետոյ գրաւեցին եւ աւերեցին Հայաստանի մեծ մասն: Այն ժամանակ գտնուեցան Հայոց մէջ ուսեալ անձեր, որոնք ստիպուած էին քաշուիլ վանական պատերի առանձնութեան մէջ եւ մեծ գրականներ կրել: Այնու ամենայնիւ նրանք, չնայելով իրենց այս անճոռնի վիճակին, կարողացան մի առ մի արձանա-

գրել իրենց երկրի եւ ժողովրդի կրած ազէտները»: Եւ նա խօսում է Յովհան Վանականի եւ իր աշակերտների, Կիրակոս Գանձակեցու, Մաղաքիա աբեղայի եւ Վարդան Բարձրբերդցու վրայ, տեղեկութիւններ տալով իւրաքանչիւրի անձնաւորութեան, պատմութեան եւ ոճի վրայ, մեծ հմտութեամբ:

Թ. 20. L'Arménie Chrétienne *ժողովածոյի վերջին նիւթն է՝* La Composition historique chez les Syriens et les Arméniens. 18 *էջ:*

Ց. Նէվ, որ դասախօսում էր Լուվէնի համալսարանում Արեւելեան Գրականութեան պատմութիւնը, ի մէջ այլոց նաեւ Սիրիայի քրիստոնէական գրականութիւնը, իր այս հետաքրքրական տեսութեան մէջ ցոյց է տալիս այն կապն եւ մերձաւորութիւնն, որ կայ հայ եւ ասորական գրական պատմական յիշատակարանների մէջ: Եւ որովհետեւ նա արդէն երկարօրէն ուսումնասիրել էր հայկական քրիստոնէական գրականութիւնն, ուստի այս վերջին յօդուածի մէջ կանգ է առնում գլխաւորաբար Գրիգոր Բար-Հէբրէոսի (Grégoire Bar-Hébreus) *սիրիական մեծ ժամանակագրութեան վրայ:*

Ց. Նէվ հայագիտական 3 ուրիշ գործ եւս ունի, որոնք չեն մտած l'Arménie Chrétienne*ի մէջ: Սրանք են.*

Թ. 21. Libri Armeniaci *համառօտ գրուածքն, որտեղ խօսում է հայկական Մաշտոցի* (Rituale Arménienne) *եւ Լէյդէնի (Հոլլանդիայում) Մատենադարանի երկու ձեռա-*

գիր Սաղմոսների վրայ (Cod. Hebr. 21 Scal. եւ Cod. Hebr. 61 Warn.), նկարագրելով մանրամասնօրէն՝ նրանց բովանդակած հայկական գարդագրերը:

Թ. 22. Quelques épisodes de la Persécution du Christianisme en Arménie au XVe siècle, 38 էջ, որ տպուած է Revue Catholique-ի Ա. հատորում 1861ին:

Իր այս բովանդակալից ուսումնասիրութեան մէջ Նէվ խօսում է ԺԵ. դարում Թաթարական արշաւանքի ժամանակ պատահած այն դէպքերի վրայ, երբ հայերը քրիստոնէական կրօնի սիրոյն համար ամէն հալածանքի տոկալով զոհուել, մարտիրոսացել են: Նա յառաջ է բերում այս կարգի նահատակների բազմաթիւ անուններ, որոնց մէջ կան անխտիր թէ՛ եկեղեցականներ եւ թէ՛ աշխարհականներ, ինչպէս նաեւ կանայք եւ պատանիներ, որոնք անտանելի չարչարանքների էին ենթարկուել մոնղոլների կողմից:

«Եթէ, վերջացնում է Նէվ, նախախնամութիւնը չէ խնայել Հայաստանն այն աղէտներից, որոնք թափուել են նրա վրայ, ինչպէս Մերձաւոր Հայաստանի բոլոր քրիստոնեայ երկիրների վրայ, Հայ ժողովուրդը, յամառ կերպով դիմացել է, տոկացել եւ այսպիսով պահպանել է իր գոյութիւնը»:

Թ. 23. Ֆ. Նէվ դեռեւս 1855ին Պարիսի Journal Asiatique-ի մէջ (Օգոստ.–Սեպտ.) մի ընդարձակ յօդուած է նուիրել Etude sur Thomas de Medsoph et sur son Histoire de

l'Arménie au XVe siècle վերնագրով, որի մէջ տալիս է Մեծոփեցու կենսագրութիւնն, եւ նրա պատմութեան ընդհանուր բովանդակութիւնը, քննում է նրա վկայութիւնների արժէքն եւ եւրոպացի պատմաբանների ուշադրութիւնն է հրաւիրում նրա վրայ, չնայելով որ «դրուագքի ցամաքութեանը»: Այնուհետեւ 1858ին հրատարակում է Մեծոփեցու պատմութեան գաղղ. թարգմանութիւնը՝ «Exposé des guerres de Tamerlan et de Schah-Rokh dans l'Asie Occidentale d'après la Chronique Arménienne inédite de Thomas de Medsoph», խորագրով որ 156 էջ է, 8°: Թարգմանել է Պարիսի Ազգային Մատենադարանի անտիպ ընդօրինակից:

Մեծոփ գտնւում էր Արճէշի մօտ, վանի լճի եղերքին, ուր երբեմն բնակուել է Գրիգոր Տաթեւացին: Թոմա՝ 1406ին 20 ուրիշ պատանիների հետ աշակերտել է Տաթեւացուն եւ այնուհետեւ նրա սկզբունքների անշեղ հետեւողն է եղել: Նա սկսել է պատմագրել երբ 50 տարեկան էր եւ ընթերցողների ներողութիւնն է խնդրում իր պատմուածքի թերութիւնների համար. «զու անմեղապիր լեր, ասում է Թոմա իր ընթերցողին, զի ծեր էի եւ յետ Ծ (50) ամաց սկսայ, վասն այսորիկ յետ եւ յառաջ դրեցի»: Այս թերութիւնը նկատի այսպէս է որոշում. Թոմա գրել է իր ժամանակագրութիւնը հայ գրականութեան անկման չրջանում. նրա ոճը ցամաք է եւ անհաւասար, քերականական համաձայնութիւնը

անկանոն, անարուեստ, իսկ լեզուն ոսոխական ձեւերով լիքը»: Այս իսկ պատճառով Նէվ խոստովանում է թէ իր թարգմանութեան մէջ էլ մի քանի անհարթութիւններ են մտել: Բայց բելգիացի հայագէտը Մեծոփեցու պատմութիւնը մեծապէս ուշադրութեան արժանի է համարում, նախ՝ «իբրեւ Հայաստանի քաղաքական պատմութիւնը մինչեւ ԺԵ. դարի կէսը, երկրորդ՝ որովհետեւ Հայաստանի կրօնական պատմութիւնն է ներկայացնում, այն ժամանակ երբ Հայաստան եւ Հայ Եկեղեցին առանձնացել էին միւս քրիստոնեայ երկիրներից եւ երրորդ՝ հայ գրականութեան տեսակէտից, որովհետեւ այնտեղ պատմուած է այն գարում Հայաստանի նշանաւոր վանքերում բուն դրած դրական չարժումը:

Տարբեր են Մեծոփեցու պատմութեան հայերէն ձեռագիրների վերնագիրները: Պարսխի ձեռագիրն, որ գործածել է Նէվ, կրում է «Պատմութիւն համառօտ անօրէն Թամուրին, որ եկեալ ի յաշխարհէն Մորասանու եւ զնաց մինչեւ ի ծովն Ովկիանոս. արարեալ Թումայ վարդապետէ»: Իսկ Վենետիկի ձեռագրի խորագիրն է. «Պատմութիւն համառօտաբար վասն արեւելեան թագաւորացն. պղծոյն եւ չար գազանին Լանկ Թամուրայ եւ այլոցն. զոր արարեալ է քաջ վարժապետն Թումայ վարդապետն»:

Թ. 24. L'Eglise Arménienne et le Protestantisme (տպ. Revue Catholique, Louvain 1857, էջ 687—702).

Այստեղ Նէվ պատմում է բողոքականութեան մուտքը Հայոց մէջ եւ վերջացնում է այսպէս. «Բողոքականութիւնը չափազանց սակաւաթիւ հոգի է հրապուրած Հայոց մէջ: Հայ-Լուսաւորչական եկեղեցին մնացած է անյողդողդ իր անցեալի եւ իր աւանդութիւնների մէջ: Կարծես թէ նախախնամութիւնը պահում է նրան Աբեւելքի վերածնութեանը ծառայեցնելու համար, որ կարող է իրականանալ միայն երբ բոլոր այլեւայլ քրիստոնեայ հասարակութիւնները (communautés) հաչտուին իրար հետ եւ միութիւն կազմեն»:

Թ. 25. Les Mechitaristes de Vienne et leur abbé-général Mgr. Aristaces Azarian (Revue Catholique, Louvain 1858, էջ 565 եւ չար.):

Նէվ մեծ յարգանքով եւ համակրանօք էր վերաբերում միշտ Մխիթարեան Միաբանութեան, խօսելով Վենետիկի մասին, նա գրում է այստեղ. «Այս հաստատութեան համբաւը մեծ է բաւական, չատ քիչեր կան անգիտացող այն մեծ ծառայութեան, որ Ս. Ղազարի մենակեացները մատուցել են եւրոպական գիտութեան՝ իրենց ուսումնական եւ գրական հրատարակութիւններով»: Ապա անցնում է Վիեննական Միաբանութեան հիմնուելուն եւ չարունակում. «Վիեննայի Միաբանութիւնը համեմատաբար դուցէ աւելի քիչ է ծանօթ. բայց նա էլ նոյնչափ իրաւունք ունի հասարակական ուշադրութեան»: Ֆ. Նէվ իր ընդարձակ յօդուածի մեծ մասը նուիրել է

Վիեննայի Աբբահայր արքեպ. Արիստակէս Ազարեանին, առթի առնելով դերմանացի նշանաւոր պատմագիրը Fred. Hurter*ի հեղինակութիւնը՝* Aus dem Leben des hochwürdigsten Herrn Aristaces Azarian . . ., *Վիեննա* 1855, 8°, *էջ* VIII—152: — *Այս երկու աշխատութիւնից տեղեկանում ենք, որ աբբահայր Արիստակէս Ազարեան ծնուել է* 1782 *Յուլիս* 28*ին Կ. Պոլսում: Իր մանկութեան անունը եղել է Յովսէփ, բայց իր սէրը Գր. Լուսաւորչի որդի Արիստակէսի նկատմամբ այնչափ մեծ է եղել, որ ուխտ առած ժամանակ նրա անունն է ընդունել: Քահանայական ձեռնադրութիւնը տեղի է ունեցել* 1803*ին: Աբբահայր ընտրուելուց յետոյ, չնորհիւ իր մեծ եռանդին եւ գործնական, բազմակողմանի ընդունակութիւններին, յաջողել է բարձրացնել եւ չա՛տ բարձրացնել, իր վարած Միաբանութեան թէ կրթական եւ թէ տնտեսական մակարդակը: Այս աբբահայրը վայելում էր իր ժամանակի Հռոմի պապի մեծ համարումն եւ մտերմութիւնը, այնպէս որ պապը նրան պարզապէս իր անունով՝ Արիստակէս էր կոչում: Նա յաջողել է դրաւել նմանապէս Աւստրիոյ կայսեր վստահութիւնն եւ բարեկամութիւնը: Շնորհիւ այս հանգամանքի նա մեծ օգնութիւն է մատուցել, բացի իր Միաբանութիւնից եւ վանքից, նաեւ այլուր գըտնուող իր ազգակիցներին: «Արիստակէս Ազարեան ասում է նրա պատմագիրը, 4 բան էր սիրում. Ընդհանուր Եկեղեցին, իր Հայ Հայ-*

բենիֆը, իր Միաբանութիւնը եւ իր ապաստանած երկիրը, Աւստրիան»:

Մխիթարեան այս մեծ գործիչը վախճանել է 1855 Մայիս 5ին, 73 տարեկան:

Ֆէլիքս Նէվի այս երկերը բաւական են ցոյց տալու համար թէ նա ինչ մեծ բարեխղճութեամբ եւ համառութեամբ ուսումնասիրել է հայ կեանքի եւ գրականութեան այլեւայլ ճիւղերը: Նրա գրուածքների ամբողջ թիւը, հայերէններն էլ մէջը լինելով, հասնում է 120ի: Նա առաջին բելգիացի դիտնականն է եղած հայերէնը սիրողն ու մշակողը: Կանխապէս նա պարապուել էր եւ չարունակել է պարապիլ հնդկական լեզուով եւ գրականութեամբ. այնուհետեւ նա այս երկու լեզուն եւ գրականութիւնը միանգամայն սկսեց մշակել: Հայերէնը նա ուսումնասիրել է ոչ այնչափ լեզուագիտական եւ բանասիրական տեսակէտից, որչափ պատմական եւ մատենագրական:

Նէվ հայերէն սկսել է սովորել Միւնխէնում 1833ին, ուր արեւելագէտ Նէօյման (Neumann) հայերէնի դասախօսութեամբ եւս պարապում էր: Այնտեղ նա ծանօթացել է նաեւ մի ուրիշ գիտնական դերմանացու, որ նոյնպէս հայագէտ էր, Ֆրիդ. Վինդիշման (Friedrich Windischmann), որի հետ մինչեւ իր մահը մօտ յարաբերութիւն էր պահպանում:

Երբ Վենետիկի Միաբանութիւնն անցեալ դարի սկիզբները, քաղաքական հանգամանք-

ների թերմամբ Ս. Ղազարը ակադեմիայի վերածեց, որին այնուհետեւ անդամագրեց ծանօթ հայագէտներ, նա անդամ ընտրեց նաեւ Ֆէլիքս Նէվին: Այս կերպով Բրոսէի, Բորէի, Պետերմաննի, Դիւլորիէյի, Ս.-Մարտէնի, Վ. Լանգլուայի, Կոնիբիրի եւ ուրիշ շատ յարգելի եւ հեղինակաւոր եւրոպական գիտնականների շարքում «Ս. Ղազարի հայկական ակադեմիայի անդամ» ենք գտնում նաեւ այս Բելգիացի մեծ հայագէտին:

Ֆ. Նէվ՝ անդամ էր բազմաթիւ եւրոպական գիտական հաստատութիւնների, Académie Royale de Belgique, Académie Impériale des Sciences de S. Pétersbourg, Académie catholique de Rome եւայլն եւայլն:

Նրա կենսագրական տեղեկութիւնների մէջ գտնում եմ նաեւ հետեւեալը. Ֆէլիքս Նէվ, երբ Լուվէնի համալսարանի ուսուցչապետ էր, մի օրինակ իր L'Arménie Chrétienne ժողովածոյից նուէր է մատուցել կաթոլիկ Հայոց կաթ.-պատրիարք Ազարեանին: Ազարեան պատրիարք՝ փոխադարձաբար նրան ուղարկել է Կ.Պոլսից իր կենդանագիրը պատշաճաւոր մակագրութեամբ եւ մի ընդարձակ հայերէն նամակ է ուղղել նրան, որտեղ բարժանույն գովում է Նէվի «գիտութեան հաստատութիւնը, հմտութեան խորութիւնը, մեկնութեանց ճշգութիւնը» եւ միեւնոյն ժամանակ քաղցր պարտականութիւն է համարել «յանուն Հայ Ազգի» իր երախտագիտութիւնը յայտնել: «Ֆէլիքս Նէվի անունը ան-

ընչելի պիտի մնայ մեր հայկական տարեգրութեան մէջ» վերջացնում է իր նամակը Ազաբեան պատրիարք: Բելգիացի պատմագիրն, որ նրա ընկերակիցն էր, վկայում է թէ Ազաբեանի այս գնահատականն եւ համակրական վերաբերմունքը շատ խոր եւ հաճելի տպաւորութիւն է թողել Նէվի վրայ[1]:

Ֆէլիքս Նէվ վախճանել է 1893 *Մայիս* 23*ին, նա ծնած էր* 1816 *Յունիս* 13*ին*:

---

[1] Annuaire de l'Université Catholique de Louvain, 1894, p. XXXI—XXXVI. Annuaire de l'Académie Royale de Belgique 1894, Bruxelle. Bibliographie de l'Université de Louvain, 1834—1900, p. 214—220.

ԺԱ. ԳԼՈՒԽ

Լուվէնի երկու եկեղեցական հայագէտները, Լըբօն եւ Մէօյլդէրմանս: Նրանց աշխատութիւնների ցուցակն եւ բովանդակութիւնը: Բրիւքսէլի արքայական մատենադարանի հայ գրչագիրներն եւ պարսկերէն Աւետարանը:

Լուվէն (Louvain) *քաղաքը Բելգիայում այն դէրն է կատարում ինչ որ Էդինբուրգը Շոտլանդիայում, այսինքն զուտ դպրոցական, համալսարանական քաղաք է, ուր ամէն ինչ յիշեցնում է ուսում եւ կրթութիւն: Բազմաթիւ են այստեղ վիտութեան նուիրուած անձեր, գրեթէ բացառապար եկեղեցական դասակարգից: Այս չարքում ունինք նաեւ երկու հայագէտ*, M. le Chanoine Lebon *եւ* M. l'abbé J. Muyldermans: — *Առաջինը, Լըբօն, համալսարանի մաս կազմող* Collège du Saint Esprit *դպրոցի նախագահն է եւ համալսարանի Աստուածաբանութեան ուսուցչապետը: Երկրորդը, Ժ. Մէօյլդէրմանս, որ աւելի երիտասարդ է, նոյնպէս կրօնաւոր է, բայց նոյն եռանդով զբաղուած է բանասիրական եւ մատենագրական աշխատութիւններով: Տ. Լը-*

բօն՝ Լուվէնի համալսարանում առանձնած է հայերէնի դասը: Այս դասախօսութիւնը համալսարանի ծրագրի մէջ մտել է 1920ից սկսած. դասընթացքը երկամեայ է եւ ունի ազատ ունկնդիրներ, այն ուսանողներից — բոլորն էլ Բելգիացի եւ օտար — որոնք կրօնագիտութեան են հետեւում: Այս ուսանողների հայերէն սովորելու նպատակը քրիստոնէական հին մատենագրութեան հետազօտութիւնն է, որի մէջ հայկական հին թարգմանութիւնները անչափ տեղ չեն գրաւում:

Լուվէնի համալսարանն ունի իր յատուկ պարբերական հրատարակութիւնը՝ Le Muséon, Revue des Etudes Orientales, կոչմամբ, 1882ից սկսած, ուր, դէխաւորաբար, տպւում են համալսարանի ուսուցչապետների, ինչպէս նաեւ կողմնակի դիտնականների ուսումնասիրութիւնները:

Լրբօնի հայագիտական աշխատութիւններն, որոնք մինչեւ հիմայ լոյս են տեսած, հետեւեալներն են.

1. Version arménienne et version syriaque de Timothée Elure, այս երկու լեզուով կատարուած հին թարգմանութեան համաձիւ բաղդատութիւնը. տպուած է «Հանդէս Ամսօրեայ»ում, 1927, էջ 713—722:

2. Les citations patristiques grecques du «Sceau de la Foi». Սա մի ընդարձակ ուսումնասիրութիւն է հանգ. Կարապետ եպ. Տէր Մկրտչեանի «Կնիք Հաւատոյ» հատածոյի վրայ (Էջմիածին 1914, Յառաջաբան եւ

436 էջ)։ Տ. Լըբօն քննում է այս առթիւ այս հարցի վրայ գրուած բոլոր այլ հրատարակութիւնները, գնահատում է հայ եպիսկոպոսի աշխատութիւնը։ Տպուած է՝ Revue d'histoire ecclésiastique, 1929, t. XXV, էջ 1—32։

3. Notice sur un manuscrit arménien de la Bibliothèque de l'Université de Louvain. Համալսարանն այս մի միակ հայերէն ձեռագիրն ունի, որ Շարական է, թուղթ, 325 թերթից բաղկացած, բոլորգիր, ԺԷ. դարից։ Ընդօրինակողն իր մասին գրում է. «սկսեալս իմ գու հան յաւարտ» եւ ապա «զհէր Մարգարայ գծողս յիշել ի տէր աղաչեմ զձեզ»։ Տ. Լըբօն այս գրչագիրը համեմատում է էջմիածնի մի Շարականի եւ Վիեննայի 202 թիւի հետ, ըստ Տաշեան Յուցակի (էջ 523—525)։ Տպուած է Le Muséon, t. XVI, 1928, էջ 261—280։

4. Fragments arméniens du Commentaire sur l'«Epitre aux Hébreux» de Saint Cyrille d'Alexandrie. Այս գրուածքի հայերէն հին թարգմանութեան վերնագիրն է՝ «Եբանելոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի Մեկնութենէ Առաքելոյն յԵբրայեցւոց Թղթոյն յԱռաջին ճառէն ի բանն՝ Բազում մասամբք եւ բազում աւրինակաւ(ք) կանխաւ խօսեցաւ»։ Տ. Լըբօն տալիս է այս հայերէն օրինակի լատիներէն հարադատ թարգմանութիւնը, համեմատում է յունարէն բնագրի հետ եւ մեկնաբանում։ Տպուած է՝ Le Muséon, 1931, t. XLIV, էջ 69—114։ Իսկ չարունակութիւնը

կամ աւելի ճիշդը՝ այս նիւթի վրայ իրեւ լրացում երկրորդ յօդուածը լոյս տեսաւ նոյն Le Muséon-ի XLVI հատորում:

Ձեմ տարակուսում, որ յարգելի նախապահն եւ պրոֆէսորն անդանդաղ պիտի չարունակէ իր հայագիտական ուսումնասիրութիւնը: Տ. Լըբօն հայերէն սովորած է առանց դասատուի օգնութեան:

Աւելի հիմնաւոր ուսում է առած հայերէնում, միւս հայագէտը՝ Տ. Մէօյլդէրմանս, որ 2 տարի յաճախած է Պարիս, Ecole des Langues vivantes Orientales եւ աշակերտած է Պրոֆ. Ֆր. Մակլէրին: Նա մինչեւ հիմայ չատ կարեւոր եւ լուրջ աշխատութիւններ լոյս է ընծայած, որոնց ամբողջական ցուցակը ներկայացնում եմ ստորեւ:

1. La Domination arabe en Arménie, տպ. Պարիս 1927, 8°, էջ 180: Այս աշխատութիւնը վարդանի (ԺԳ. դար) Պատմութեան թարգմանութիւնն է, բազմաթիւ համառելից ծանօթութիւններով: Հեղինակն այս գրուածքը ներկայացրել է Ecole pratique des Hautes Etudes-ի դիպլոմն ստանալու համար:

2. A travers la tradition manuscrite d'Evagre le Pontique, որ տպուած է իրեւ երրորդ հատոր Le Muséon-ի Մատենադարանի, Լուվէնում 1932:

Տ. Մէօյլդէրմանս առանձնապէս զբաղուած է եւ չարունակում է զբաղուել այն հին յունական գրուածքներով, որոնց բնագիրը պահպանուել է միայն հայերէն թարգմանու-

թիւններէն մէջ: Նա խորապէս ուսումնասիրել է այս հարցը, աչքի առջեւ ունենալով Հ. Բ. Սարգսեանի հրատարակութիւնը՝ «Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք», Վենետիկ 1907: Այս խնդրին վերաբերող հետազօտութիւններ են նաեւ՝

3. La teneur du Tracticus d'Evagre le Pontique, տպ. Le Muséon, 1929, t. XLII, էջ 74—89:

4- Evagriana, նոյնտեղ, XLIV, 1930, էջ 37—68 եւ 369—383:

5. Le discours de Xystos dans la Version arméninne d'Evagrius le Pontique, տպ. Revue des Etudes Arméniennes, Paris 1929, t. IX, էջ 183—201:

6. Une recension arménienne du syntagma doctrinae. «Հանդէս Ամսօրեայ»ում, 1927, էջ 687—700:

7· Revue des Etudes Arméniennesի 1930, t. Xի մէջ (էջ 193—200) Տ. Մէօյլդէրմանս գետեղել է մի չահկան յօդուած Le Parisinus, supplement grec 419 de la Bibliothèque Nationale de Paris վերնագրով: Այս դրչագրի 65—73 եւ 140—230 թերթիկները հայերէն են, մասամբ Ֆրանսերէնի թարգմանուած: Հեղինակը, Մէօյլդէրմանս ուղղում է այս թարգմանութիւնն եւ երեւան է հանում, որ դրանց առաջին մասը Սամուէլ Անեցու պատմութիւնից է քաղուած, իսկ միւս կտորը, Գր· Լուսաւորչի Յաճախապատումից: Բացի դրանից թարգմանութեան

սխալները սրբագրելուց, Մէօյլդէրմանս մեկնաբանում է նաեւ հայերէն բնագիրները:

Բայց ի վերոյիշեալ Թ. 5 դրուածից համակրելի հայագէտը «Հանդէս Ամսօրեայ»ում հրատարակել է ուրիշ կարեւոր եւ չահեկան հետազօտութիւններ՝ ինչպէս են

8. Note sur «Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի ապդիս մերում», 1925, էջ 462—469:

9. Un procédé hagiographique, 1926, էջ 24:

10. Le dernier prince Mamikonien de Bagrévand, 1926, էջ 168—169:

11. Un fragment arménien de l'Oraison funèbre de Basile de Césarée par Grégoire de Nazianze, 1927, էջ 13—16:

12. Le Costume liturgique arménien. Etudes historiqeus, տպ. Le Muséon, Louvain, t. XXXIX, 1926, էջ 253—324:

Սա մի ընդարձակ ուսումնասիրութիւն է հայկական պատարագի զգեստի՝ հիմնուած Հ. Վարդան Վ. Հացունու «Պատմութիւն հին հայ տարազի» չահեկան երկասիրութեան վրայ (պատկերազարդ, Վէնետիկ 1923): Գրուածքը վերջանում է եկեղեցական պաշտօնի յատուկ հայերէն բառերի ցանկով: Տ. Մէօյլդէրմանս կցել է իր այս լուրջ աշխատութեան՝ օրինակներ հայկական կրօնական պատկերների, որոնք գտնւում են այլեւայլ տեղեր, ինչպէս Վէնետիկ, Լէյդէն, Կ. Պոլիս եւայլն:

13. Mechitar de Sébaste et les Mechitaristes, *տպ. Լուվէն*, Le Muséon, t. XLIII, 1930, էջ 117—132:

Այս գեղեցիկ աշխատութեան մէջ, հեղինակը պատմում է ամփոփ կերպով եւ ջերմագին եռանդով, Մխիթար Սեբաստացու կեանքն եւ Մխիթարեան Միաբանութեան դործունէութիւնը հիմ առնելով Հ. Վահան Ինգլիզեանի հրատարակած գերմաներէն լեզուով Մխիթար Աբբայի կեանքը (Der Diener Gottes Mechithar von Sebaste, Stifter der Mechitharisten und Kulturapostel des armenichen Volkes . . ., *Վիեննա* 1929, *պատկերազարդ*, էջ XII + 178): *Տ. Մէօյլդէրմանս ուրիշ ապրիւրներ եւս նկատի է առել, ինչպէս՝* Eugène Boré, Le couvent de Saint Lazare à Venise, Paris 1837; Victor Langlois, Notice sur le couvent arménien de Saint Lazare de Venise, 1921; Pro orfani Armeni, *Վենետիկ* 1925, *ինչպէս նաեւ Հ. Ն. Ակինեանի եւ նոյն Դկտ. Հ. Ինգլիզեանի ուրիշ դործերը մեւնոյն հարցի մասին: Հեղինակն այսպէս է վերջացնում. «Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանները չեն դադարել իրենց ազդային մշակոյթի զարդացման աղդուսպէս սատարելուց: Իրենց բազմահմուտ հետազօտութիւններովն եւ իրենց դրական երկասիրութիւններով ինչպէս Վենետիկցիք, նոյնպէս եւ Վիեննացիք, իրենց համբաւաւոր հիմնադրի արժանաւոր աշակերտներն են հանդիսացել»:*

—

Տեսնենք այժմ թէ ինչ հին հայկական ձեռագիրներ կան Բելգիայում։

Բելգիայի մատենադարանները շատ աղքատ են հայ գրչագիրների կողմից։ Նրանց ամենամեծի, այն է Բրիւքսէլի Արքայական Մատենադարանի (Bibliothèque Royale) ձեռագիրների բաժնում ընդ ամէնը երկու հայերէն ձեռագիր միայն կայ, բայց այս երկուքն էլ որոշ տեսակէտից շահեկան են։

Առաջինն է՝ մի խոշոր մեծագիր (in folio) Բառարան 3 հատորից բաղկացած կաշեկազմ, հայերէնից լատիներէն, բայց երբեմն պատահում են նաեւ հայերէն բացատրութիւններ եւ գաղղիերէն։ Տառերի ձեւը բոլորգիր է։ Այս տարօրինակ բառարանը բովանդակում է ոչ միայն հայերէն գրաբար եւ ռամկական բառեր, թէեւ ոչ ամբողջական, կիսատ, այլ եւ ամէն տեսակ հին ու նոր, գրական եւ ժողովրդական օտար բառեր, որոնք այս կամ այն ձեւով եւ հնչումով մտել են գործածութեան մէջ։ Բառերի առջեւը գրուած են — ոչ բոլորի, նրանց նշանակութիւնը լատիներէն։ Օտար բառերի առջեւ՝ նրանց հայերէնը։ Բոլոր օտար եւ ռամկական բառերը գրուած են այն ձեւով, ինչպէս որ հնչւում են ժողովրդեան բերանում։ Յիշեմ մի քանիսը այդպիսի բառերից։

Լամբ. — երկան հաստ փատ, որ համալները կ՚ունենան։

Լապանալ — ուսանիլ, սորվել։

լալա — tulippe.
խեղա — գայթակղութիւն, առակ Իբ:
չամաթայ — մունէպալէ, զարթուցիչ:
քրօբ, քրօբէ — cherubin.
օղուլուչաղ — familia.
ասկայկանութիւն — (ազգականութիւն):
չիր, չրի — կաթն, պարսկերէն:

Ա. հատորն ունի 437 թերթիկ (feuillet) *. առաջին բառն է՝*
աբբայ — abbas, abbé.

Վերջին բառն է՝
Լաբան — «Laban».

Բ. հատորն ունի 535 թերթիկ. առաջին բառն է՝
չամբ, չամբի (սեռական) — առանց բացատրութեան):

Վերջին բառն է՝
Իքիմ — չրթուն:

Գ. հատորն ունի 436 թերթիկ: Առաջին բառն է՝
չամբչեայ — Lymphaticus.

Վերջին բառն է՝
Օքաճլ — օգտել, բաւել, բաւականել:

Ոչ մի տեղ յիշատակութիւն չկայ, թէ ո՞վ է նրա հեղինակն եւ ե՞րբ կամ ո՞ւր է գրուած:
Ա. հատորի սկիզբը կայ մխայն հետեւեալ տաբօրինակ գաղղիերէն մակագրութիւնը. տաբօրինակ՝ իր ուղղագրութեամբն եւ աւելի տաբօրինակ՝ իր տառագրութեամբը. «Le pré-

sent diquetionaire (dictionnaire) a tête (a été) trôve (trouvé) chez un bokiniste (bouquiniste) de la rue St. Severin—St. Jacque». *Ստորա–գրուած է* — Thonderterthroukh. Armenian de Erzeroum : *Առեղծուած է այդ «Էրզրումցի Հայի» անունը* :

Արդեօք սա այն հայ–լատին բառարանը չէ՞, որ յօրինել է Ամստերդամի հայ եկեղեցու հովիւ Ամասիացի Տէր Յովհաննէսը, որ Ամստերդամ է եկել 1733*ին, մասնակի վերանորոգել է այն եկեղեցին* 1749*ին եւ յիշւում է իբրեւ «հայ–լատին բառգրքի հեղինակ»* [1] :

Երկրորդ գրչագիրն է՝ Հայ–Թրքական Աւետարան, 4 *աւետարանների ամբողջութեամբ, որ վերջանում է հետեւեալ յիշատակարանով. «Աւարտումն գրքիս ՌՃԿԹ, մարտի յամսոյ Ժ. եւ Ա. ի վայելումն Արգըմանին. ընդ երկայն աւուրս պահեսցէ, ձեռամբ Նախաշ Տէր Խաչատուրի. ի ժամանակս Կարապետ արհեպիսկոպոսի Զէյթունցի. Էջմիածնա կաթողիկոս Աստուածատուրի»* [2] : *Ըստ այսմ նա գրուած է* 1720*ին* :

Գրչագրի սկզբումն էլ կայ մի ուրիշ յիշատակութիւն, որ հաւանականաբար վերոյգրեալ «Արգըմանի» կողմից է, եւ որ ասում է՝ «յիշատակ է արաբկիրցի տէր Սարգիս քահանայի» :

---

[1] *Տես իմ «Հոլլանդան եւ Հայերը», Վիեննա,* 1926, *էջ* 59, 199 *եւ շար.* :

[2] *Աստուածատուր Ա., Համադանցի, կաթողիկոս ընտր.* 1715 *Մայիս* 7, *վախճ.* 1725 *Հոկտ.* 10:

Այս Աւետարանը չքեղ կազմ ունի կաշիէ, որի երկու կողքի վրայ վայլում է Օսմանեան Թուղրան. ինչո՞ւ համար, յայտնի չէ: Բրիւքսէլի Մատենադարանն այս գրչագիրը ձեռք է բերել ընդ ամէնը 52 Ֆր. 80 ս. վճարելով:

Գրչագիրը չատ մաքուր է գրուած, նոտրագիրը, թղթի վրայ, եւ ամէն էջ ունի հայկական զարդագրեր: Ինչպէս երեւում է, «Նախաչ» (գծագրող) Տէր Մաչատուրը հմուտ էր իր արուեստին:

Ամէն մի էջի կէսը հայերէն–գրաբար Աւետարան է, իսկ միւս կէսը նրա թրքերէն թարգմանութիւնը, հայերէն տառերով: Ես համեմատեցի մի քանի էջ այդ թարգմանութիւնը հայերէն բնագրի հետ: Ոճը Կ. Պոլսի սովորական գրական լեզուն է, պարսկերէն եւ արաբերէն բառերով լիք, ինչպէս որ էր մինչեւ նորագոյն Բէմալեան շրջանը. բայց պատահում են նաեւ ոամկաբանութիւններ: Ընդհանրապէս թարգմանութիւնը կատարուած է հարազատ, նոյն իսկ բառացի: Համեմատութիւնը հայերէն բնագրի եւ թրքերէնի մէջ ցոյց տուաւ, որ կայ նաեւ տարբերութիւններ:

Այսպէս՝ Յովհաննու Աւետարանի մէջ՝ «պատասխանի եառն նմա Հրեայքն՝ մեք օրէնս ունիմք» թարգմանուած է. «Ճֆուտլէր ճէվապ վէրթիլէր օնա. պիզիմ նամուսըմըզ վարտըր»: «Նամուս» նշանակում է պատիւ եւ ոչ թէ օրէնք: «Գլուխ Առաջին» թարգմանուած է «Պաշ խափտա»: «Իբտիդա» (ابتدا) նշանակում է սկիզբ եւ ոչ թէ առաջին,

որի համապատասխան բառն է Բիւրինջի (جبر) տառկերէն կամ արաբերէն ول (էվվէլ) եւայլն: Կան նաեւ տեղեր, ուր Թրքերէնն աւելի անթերի է քան հայերէնը: Օր. համ. Յիսուսի խօսքերն ըստ Մատթէոսի՝ «ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ» պարբերութեան «ինձը» հայերէնում բաց է թողուած, ուր որ Թրքերէնում ամբողջ է. «ճէմի նէսնէլէր վէտէրըմտէն պանա վէրիլմի»: Հայերէնի մէջ «Ահա այդ ցաւդ» պարբերութիւնը, ը–ի անկումով դարձել է «ահա այդ ցաւդ», բայց Թրքերէնում ճիշդ է պրուած:

Այս եւ այսպիսի մի քանի տեղիք ցոյց են տալիս, որ Թրքերէն մասը ոչ թէ այս հայերէն բնագրից է թարգմանուած, այլ հայերէնի դիմացը գրուած են ուրիշ պատրաստի Թրքերէն Աւետարանից օրինակուելով: Այս հայ–Թրքական Աւետարանն անշուշտ Թրքախօս հայերի գործածութեան համար էր:

Բրիւքսէլի Արքայական Մատենադարանում կայ նաեւ մի հետաքրքրական Աւետարան, 4 աւետարանիչներն ամբողջութեամբ, պարսկերէն լեզուով, սովորական արաբական տառերով գրչագիր եւ չատ մաքուր գրուած: Արտագրողն, ինչպէս եւ սկզբնական թարգմանողն ըստ ամենայն հաւանականութեան, հայեր են եղած, յատկապէս պարսկահայեր: Կողքի առաջին սպիտակ երեսի վրայ կայ հետեւեալ հայերէն արձանագրութիւնը. «Մար–

կար տի Խոսրովըս գրեցի ի թիվին $17^{6}_{7}72$, Անգալի [3]» :

Այս պարսկերէն գրչագրի էջերի վրայ, այլեւայլ տեղեր ուրիշ շատ ծանօթագրու-թիւններ կան հայերէն լեզուով: Կարեւոր է հետեւեալը: Մատթէոսի աւետարանի մի էջի վրայ պարսկերէն 8 տող ջնջուած է եւ ապա նրա տակը 2 նոր տող աւելցուած դարձեալ պարսկերէն. լուսանցքի վրայ հայ գրիչն այդ-տեղ աւելացնում է հայերէն՝ «մինչեւ ցայս վայր նոր գրածս է աւելորդ» եւ ապա «այս միճ տողս է ճիշդ»: Այս «միճ» բառը ի մէջ այլոց, ցոյց է տալիս, որ գրողը պարսկահայ է, որովհետեւ այնտեղի ոճ է: Էջերի տակն ու վրան յիշուած է հայերէն թէ քանիերո՛րդ գլուխն է եւ քանի տուն է գրուած եւ գրքի վերջում գումարուած է. «Միանգամայն տունք չորից աւետարանացն են 3779. լինին բովան-դակ գլուխք չորից աւետարանչաց 89»:

Մատթէոսի Աւետարանի թարգմանու-թեան վերջը հայ գրիչը նշանակել է «1071 տունք»: Այս 1071ը՝ մեծ չփոթութեան պատ-ճառ է դարձել գրչագրի հին եւ նոր տէրե-րին: Ոմն Դոկտ. Հէնդէրսըն, որ Միսիոնէր է Պարսկաստանում, գտնել է այս Աւետարանը 1854ին եւ տեսնելով վերեւ նշանակուած

[3] Անգալին պարսկական նաւահանգիստ է Կաս-պից ծովում, այժմ կոչւում է Փէհլէվի, նոր արքայի անունով. իսկ տի Խոսրով = Խոսրովեան ձեւը յատուկ էր այն պարսկահայերին, որոնք հաստատուած էին Ամստերդամում, ինչպէս բազմաթիւ ուրիշ օրինակ-ներից յայտնի է :

«1071»ը, առանց ուշադրութիւն դարձնելու հայերէն «տունք» բառին, ենթադրել է թէ դա քրիստոնէական թուական է եւ լրջօրէն արձանագրել է դրչագրի վրայ· «See the date at the end of St. Matt[nes] Gospel, corresponding to the date of the christian Era 1071» (*թուականը տես Մատթէոսի Աւետարանի վերջը, որ համապատասխանում է քրիստոնէական* 1071*ին*) : *Ոչ պակաս սխալ է դրծել Աբգայական Մատենադարանը*, տպագրելով *իր Ցուցակի մէջ* «Cette date de 1071 désigne sans doute l'ère arménienne et par conséquent c'est en 1622 de notre ère que le volume fut écrit[4]».

Պարսկերէն թարգմանութեան մէջ ամէն մի Աւետարանչի տակը գրուած է նրա գրութեան թուականը արաբական ձեւով : *Ամէնից սրոչը Ղուկասի աւետարանի ներքեւ նշանակուածն է : Այս պարբերութիւնից պարզ երեւում է, որ գրուած է Հիջրէյի* 1074*ին, եւ «օրհնեալ Զիկադէ ամսի* 6*ին»* (11*րդ ամիսը Մուհարրէմից սկսելով*) *ինչպէս ասուած է պարսկերէնում : Ուրեմն ոչ քրիստոնէական եւ ոչ հայկական թուականին այլ Հիջրէի* 1074*ին, որ է* 1662, *Յունիս* 24 :

Շահեկան է նմանապէս Մարկոսի Աւետարանի ներքեւ գրուած արձանագրութիւնը :

---

[4] Catalogue des manuscrits de la Bibliothèque Royale de Belgique, II, 55, no. 54. *Մատենադարանին ուղղած իմ դիտողութիւնից յետոյ հարկ եղած ուղղումը կատարուած է այնտեղ:*

Այստեղ ասուած է, որ գրուած է «Էմիր Միւլքի որդի Սէրգիսի ձեռքով». Եւ ապա աւելցուած է նոյն տարին եւ ամիսը ازماه صبارك ری قمده سنه ١٠٧٤ ، այսինքն նոյն «օրհնեալ» Զիլկադէ ամիսը 1074ին:

Հայ գրիչը աւելորդ չէ համարել Մատթէոսի Աւետարանի գլխին էլ դնել իսլամական ձեւով սովորական սկզբնական օրհնէնքը՝ այսպէս՝ Բիսմիլլահ էրրահման էրրահիմ, «Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի»:

Մի հայերէն գրչագիր էլ կայ Լուվէնի համալսարանի Մատենադարանում, Տարական, որի մասին վերեւ խօսեցայ:

ԺԲ. ԳԼՈՒԽ

Բելգիայի համալսարանների կազմը: Բրիւքսէլի համալսարանին կից «Արեւելեան Կաճառը» (Institut de Philologie et d'Histoire Orientales): Հայերէնի ամբիոնը: Պրոֆ. Ն. Ադոնց: Կաճառի բացումն եւ գործունէութիւնը: Փոխ-Նախագահ Պրոֆ. Հ. Գրէգուարի ճառն եւ անցեալ ու ներկայ գործունէութիւնն ի նպաստ Հայոց: Բրիւքսէլի Նուպարեան Հիմնարկութիւնը. նրա պայմանները, դրամագլուխն եւ թոշակառուները:

Փոքրիկ Բելգիան չորս համալսարան ունի բոլոր իրենց մասնաճիւղերովը: Այս համալսարանների երկուքը ամբողջապէս պետական են, այսինքն գտնւում են ազգութեան անմիջական կարգադրութեան տակ եւ պահպանւում են պետական բիւջէից սահմանուած ծախքով: Այսպիսի համալսարաններից մէկը բացուած է Գլանդրայի, այսինքն Ֆլամանների բնակավայրի կենդրոնում, Գան կամ Գէնտ (Gand, Gent) *քաղաքում, իսկ միւսը՝ Վալոնների գլխաւոր քաղաքում, Լիէժում: Տարբեր է երկու այլ համալսարանների թէ*

վարչական գիրքն եւ թէ տնտեսական կացութիւնը: Սրանցից՝ Լուվէնի (Louvain, որ նոյնպէս Ֆլանդրայում է) համալսարանը գերազանցապէս կաթոլիկական ուղղութիւն ունի եւ այդ պատճառով էլ կոչւում է պաշտօնապէս՝ «կաթոլիկական համալսարան» (Université catholique de Louvain): Այս բարձրագոյն կրթարանը դրուած է Բելգիայի եպիսկոպոսների հովանաւորութեան տակ եւ վայելում է նրանց մասնաւոր հոգածութիւնը: Վերատեսուչն էլ եպիսկոպոս է: Այս հիման վրայ նա կրում է միանգամայն «եպիսկոպոսների համալսարան» (Université des évèques) տիտղոսը: Կառավարութիւնը այս համալսարանի ծախքերի մի թեթեւ մասն է միայն հոգում. մեծ մասը հոգացւում է այն գանձանակի արդիւնքից որ դրուած է եկեղեցիներում «յօգուտ կաթոլիկական համալսարանի»: Այս համալսարանում հիմնաւոր կերպով աւանդւում է կրօնագիտութիւնը, բայց միեւնոյն ժամանակ բոլոր միւս սովորական ճիւղերն էլ իրենց պատշաճաւոր տեղն ունին: Իբրեւ հակակշիռ Լուվէնին՝ հիմնուած է Բրիւքսէլում «Ազատ» կոչուած համալսարանը (Université Libre de Bruxelles): Սա եւս Կառավարութեան անմիջական տնօրինութեան տակ չէ եւ երկար ժամանակ, մանաւանդ սկիզբները, իր ծախքերը հոգում էր գլխաւորաբար Բրիւքսէլ քաղաքի եւ մասնաւոր անհատների ընձեռած միջոցներով: Բայց վերջերս Կառավարութիւնը տարեկան որոշ գումար (10 մի–

լոն ֆրանք) յատկացնելով, ծածկում է ծախքերի մեծ մասը: Աւելորդ է ասել, որ բոլոր 4 համալսարաններում էլ ուսանողների մեծ մասը տարեկան որոշ թոշակ են վճարում: Կան բացառութիւններ չքաւորների համար: Դասախօսութիւնների լեզուն՝ Գանի համալսարանում, իբրեւ զուտ Ֆլամանական, ֆլամերէն է, իսկ միւսներում գաղղիերէն:

Շահեկան է այս համալսարաններում ուսանողների թիւը: Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, զուտ Ֆլամանական համալսարանը, 1931/32ին յաճախել են 1690 աշակերտ. իսկ միւս համալսարաններում, նոյն շրջանում, ուսանողների թիւն է եղել՝ Լիէժում 2469, Բրիւքսէլում 2242, իսկ Լուվէնում 3963[1]: Սրանք միայն տեղացիք, Բելգիացիք են: Բայց կան բազմաթիւ օտարերկրացի ուսանողներ, որոնց թիւն այն տարին 2423 էր եւ շարունակում է աճել:

Բելգիան ունի նաեւ իր ակադեմիաները: Եւ որովհետեւ, երկրում երկու ցեղ եւ երկու պաշտօնական լեզու գոյութիւն ունի, ուստի ակադեմիաներն էլ երկու են, մէկը Բրիւքսէլում գաղղիերէնի համար, որ կոչուած է Académie Royale de la langue et de littérature française եւ միւսը Գէնտում, Koninklijke Vlaamsche Academie voor Taal en Letterkunde անունով: Այս երկրորդի նպա–

[1] Annuaire statistique de la Belgique, t. LIV, Bruxelles 1932.

տակն էլ Ֆլամանդ, կամ որ դրեթէ նոյնն է՝ հոլլանտական լեզուի, բանասիրութեան եւ գրականութեան մշակումն է:

Կան նաեւ ուրիշ բարձրագոյն դասընթացներ, որոնց վրայ աւելորդ եմ համարում խօսել այստեղ, բացի միայից, որ իմ դրութեան դլխաւոր առարկան է: Այս նոր դիտական հաստատութիւնը, Բրիւքսէլի «Արեւելեան բանասիրութեան եւ Պատմութեան Կաճառն»ը (Institut de Philologie et d'Histoire Orientales), որ ծնունդ է առած 1931ին հետեւեալ պարագաներում:

Երբ 1930ին Բելգիայի քաղաքական անջատ դոյութեան հարիւրամեակն էր տօնւում եւ այս առթիւ մեծ հանդէսներ էին կատարւում, Անվէրսում բնակող մի հարուստ նաւատէր, Ռօբէրտ Վէռնէր անունով, կամեցաւ չօշափելի կերպով յաւերժացնել այս տօնն իր կողմից եւս եւ Բրիւքսէլի համալսարանին տարեկան 175·000 Ֆրանքի մի դումար խոստացաւ, այն պայմանով, որ այս նուէրով հիմնուի Արեւելագիտութեան ուսմամբ պարապող մի նոր կրթական հաստատութիւն: Նրա այս դիտաւորութիւնն եւ նուէրը մեծ չնորհակալութեամբ ընդունուեց համալսարանի կողմից: Երբ պատշաճաւոր վաւերաթղթերը պիտի փոխանակուէին, համալսարանի «Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղի» (Faculté de Philosophie et de Lettres) նախագահը, Պրոֆ· Հանրի Փրէդուաւ, որ մինչ բարեկամ է եղած Հայութեան, դիմեց

բարեբարին եւ խնդրեց, որ իր նուիրատուութեան մի մասը յատկացնէ «Հայկական ամբիոնին» եւ իր գրաւոր առաջարկութեան մէջ էլ այս կէտը իր կողմից յատուկ բերէ, որպէս դի որեւէ առարկութեան առիթ չտրուի: Պ. Վէռնէր ընդունեց Պ. Գրէգուառի խընդիրքն եւ Համալսարանի Խորհուրդին ուղղած պաշտօնական գրութեան մէջ, որով յայտնում էր իր նուիրատուութիւնը, պայմաններից մէկն էլ այն դրեց, որ տարեկան 20·000 ֆրանք յատկացուի ապագայ Արեւելեան Կաճառում հայերէնի դասախօսութեան: Բրիւքսէլի Համալսարանի Վարչական Խորհուրդն իր 1930 Նոյեմբեր 29ի նիստում ընդունեց Պ. Վէռնէրի նուիրատուութիւնն իր բոլոր պայմաններով: Այս կերպով Հայագիտութիւնը պարտաւորիչ էր դառնում իբրեւ դասընթացք: Բայց որովհետեւ տարեկան 20·000 ֆրանքը բաւական չէր մշտական ուսուցչապետ հրաւիրելու համար, այնպիսի դասախօս, որ իր ուսումնական դիրքովը հաւասար նկատուէր Համալսարանի միւս պրոֆէսորներին, ուստի Վարչական Խորհուրդը որոշեց, որ Հայագիտութեան ամբիոն բացուի այն ժամանակ երբ Հայ Հասարակութիւնն էլ մօտաւորապէս այդպիսի մի դրամար իր կողմից իբրեւ տարեկան նպաստ կը յատկացնէ: Բելգիայի Հայ դաղութը խուլ չմնաց այս առաջարկութեան եւ լրացրեց հարկ եղած գումարը: Այս մասին Արեւելեան Կաճառի պաշտօնական հրատարակութիւնը՝

«Տարեգիրք» մեծ համակրանքով է խօսում եւ հայերի այս ջանքը կոչում է «Effort accompli par un groupe de patriotes arméniens, ayant à leur tête la comtesse d'Arschot (Օգոստա Նուպար փաշայի դուստրը), M. M. Saroukhan et Mihrtadiantz»[2]:

Նոյն տարին իսկ, այն է 1931 Նոյեմբեր 24ին տեղի ունեցաւ նորահաստատ Արեւելեան Կաճառի պաշտօնական բացման հանդէսը, հրաւիրեալներէ մեծ բազմութեան ներկայութեամբ, որոնց մէջ բազմաթիւ հայեր: Բացման ճառը արտասանեց համալսարանի վերատեսուչը, որ պարտականութիւն համարեց չնորհակալութիւն յայտնել «այն հայերին, որոնք իրենց ղրամական օժանդակութեամբը հնարաւոր կացուցին հայերէնէ ամբիոնի հաստատութիւը»: Բայց բուն խօսքը պատկանում էր Պրոֆ. Գրէգուարին, որ «Արեւելեան Կաճառի» վոխ-նախագահ էր ընտրուած եւ իսկական դեկավարն էր հանդիսանում: Խօսելով հայկական ամբիոնի մասին նա ներկայացրեց Պրոֆ. Նիկողայոս Ադոնցին, որ հրաւիրուած էր ուսուցչապետ այս ամբիոնի եւ գովեց նրա նախկին գիտական գործունէութիւնն իբրեւ Պետրոգրադի Համալսարանի հայերէնի ուսուցչապետ: Հայագիտութեան ուսման ակնարկելով նա ասաց. «Ուսման այս դաշտը ոչ թէ միայն չարունակու-

---

[2] Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales pour 1932/1933, Bruxelles, p. 17.

թիւն է Բիւզանդականին, այլ այնպէս խառնուած է սրա հետ, որ կարելի է կոչել «բիւզանդա-հայկական», կամ նոյն իսկ «հայ-բիւզանդական...»: Եւ ապա այս առթիւ օգտուելով յարգելի ճառախօսն, որ միշտ հետաքրքրուած է հայկական հարցով եւ ուժգնօրէն պաշտպանած[3], աւելացրեց հետեւեալը. «Կարո՞ղ եմ առանց յուզման ներկայ լինել մեր մայրաքաղաքում հայերէն լեզուի, դրականութեան եւ պատմութեան դասընթացքի հաստատման եւ չյիշել Պատմութեան ամենադաժան ազգային ողբերգութիւններից մին: Հայ մշակոյթի այս իրաւական (de jure) ճանաչումն ես ընդունում եմ իբրեւ սկիզբ հատուցումի (reparation), իբրեւ քաջալերական եւ իբրեւ լաւագոյն ապագայի ակնկալութիւն»:

Այս առաջին տարեշրջանում (1932/33) Պրոֆ. Ադոնց իր աշակերտներին, որոնք մեծամասնութեամբ օտարազգիք են, բացատրեց հայերէն այբուբէնից յետոյ ուղղակի քերականութիւն, հիմնուելով Meilletի ծանօթ ձեռնարկի վրայ: (Աւելորդ է կարծեմ ասելն որ դասախօսութիւնը գաղղիերէն է:) Ապա նա պարապուեց հայերէն բնագիրների ընթերցումովն եւ մեկնութիւնով, ինչպէս Աւետարան, Եղնիկ եւ Փաւստոս Բիւզանդացի:

---

[3] Ուշադրութեան արժանի է Պ. Գրէգուարի վերջած Le Flambeau, revue belge des questions politiques et littéraires *ամսագիրն, ուր յաճախ երեւցած են չահեկան յօդուածներ հայկական կեանքի երեւոյթների մասին:*

Այս աշակերտների թուին է նաեւ նոյն ինք Պրոֆ. Գրէգուար:

Համալսարանն, որի, ինչպէս արդէն ասի, Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղին կից է Արեւելեան Կաճառը, ակսած է արդէն իր Հայագիտական մատենադարանն եւս կազմել, որի համար դրքեր մասամբ գնուած են եւ մասամբ նուէր առացուած:

Արեւելեան Կաճառը նաեւ չահեկան հրապարակական դասախօսութիւններ է սարքում յատկապէս հրաւիրուած օտար գիտնականների միջոցով: Այսպիսի մի դասախօսութիւն կարդաց Օր. Ս. Տէր Ներսէսեան Ուէլլզլիի Գպրոցի (Welsley College, Cambridge, Mass.) ուսուցչապետը, l'Illustration de la légende de Barlaam et Joasaph նիւթի վրայ: Նրա դասախօսութիւնը արժանացաւ մասնագէտների, ի մէջ այլոց Հ. Պեեերսի գնահատութեան[4]:

Բրիւքսէլում կայ նմանապէս՝ մի չատ կարեւոր հայկական բարեգործական հաստատութիւն, այն է՝ Նուպարեան հիմնարկութիւնը, որ պաշտօնապէս կոչւում է Oeuvre des Boursiers Arméniens Fondation Boghos Nubar pacha, որ հանդուցեալ մեծ հայի ազգասիրական ձեռնարկութիւններից մէկն է եւ ոչ նուազագոյնը:

---

[4] Հ. Պեեերս գրել էր արդէն այս նիւթի վրայ. P. Peeters, La traduction latine de «Barlaam et Joasaph» et son Original grec. Analecta Bollandiana, t. XLIX, 1931, p. 276—312.

Այս հիմնարկութեան նպատակն է, ինչպէս ասուած է կանոնագրութեան Ա. յօդուածում, «դպրոցական դրամական նպաստներով օգնել այն հայ պատանիներին, որոնք ուսման ընդունակ են բայց միջոց չունին համալսարան եւ բարձրագոյն դպրոց մտնելով մասնագիտութիւն սովորելու, մեր ազգին օգտակար հանդիսանալու համար»: Բայց այս նպաստները պէտք է յատկացուին այն ուսանողներին, «որոնք իրենց ուսումն աւարտելուց վերջը յանձն կ'առնեն Հայաստան երթալ: Նրանք պարտաւոր են Հայկական Կառավարութեան դպրոցներում դասախօսել կամ առհասարակ իրենց մասնագիտութիւնը Հայաստանում գործադրել»:

Նուպարեան հիմնարկութեան թոշակառնելը, ինչպէս որոշակի չէ ասուած է կանոնագրութեան 5րդ յօդուածում, պէտք է հայ ցեղին պատկանին, բայց առանց խտրութիւն դնելու նրանց կրօնական դաւանութեանը մէջ: Թեկնածուները պէտք է համապատասխանեն հետեւեալ պայմաններին (յօդ. 7). ա. Հայերէն կարդալ եւ գրել պէտք է գիտենան. բ. ոչ պակաս քան 14 տարեկան եւ ոչ աւելի քան 20 տարեկան լինին. գ. բարի վարքի վկայական ներկայացնեն Եկեղեցական իշխանութեան կամ այլ պատշաճաւոր մարմնի կողմից տրուած. դ. բժշկական վկայական ունենան իրենց առողջական վիճակի վրայ. ե. ոչ մի քաղաքական կուսակցութեան չպատկանին եւ իրենց ուսման ընթացքի ժամանակ էլ ոչ մի

քաղաքական կազմակերպութեան չյարին. գ· այս պայմաններին համապատասխանող աղջիկ ուսանողուհիներ եւս կրնան ընդունուիլ իբրեւ Թոչակաւոր· բայց ուսանողուհիներէն թիւը Թոչակաւորներէն ընդհանուր Թուի մէկ հինգերորդէն աւելի պէտք է չլինի:

Հիմնադիր բարեգործը հարկ է համարել նչանակել նոյնպէս Թէ ինչ մասնագիտութիւն նախամեծար է, որ իր Թոչակաւորները հետեւին (յօդ· 12). «Որովհետեւ մեծ Թուով հայեր, որոնք իրաւագիտութիւն, բժշկութիւն եւ նոյն իսկ երկրագործութիւն են սովորել, մեծ դժուարութիւն են զգում իրենց արհեստը բանեցնելու եւ ստիպուած են ուրիչ պարապմունք փնտռել, իրենց ապրուստը շահելու համար, ուստի Թոչակներ պէտք է յատկացուին մասնաւորապէս այն ուսանողներին, որոնք կ'ուզեն դառնալ՝ մեքենավար, էլեկտրագէտ, քիմիաբան, ճարտարագէտ, ճարտարապետ, դեղագործ, վաճառական եւ մանաւանդ այնպիսիներին, որոնք յանձն կ'առնեն իրենց սովորած մասնագիտութիւնը Հայաստանի գպրոցներում դասախօսելու: Իրրեւ բացառութիւն կարելի է 10 Թոչակից 2ը յատկացնել այն ուսանողներին, որոնք ուրիչ ճիւղերի կը հետեւին, օրինակի համար գրականութեան եւ գեղարուեստի»:

Պօղոս Նուպար՝ իր այս հայանպաստ հաստատութիւնը հիմնել է Բրիւքսէլում, ուր բնակւում է իր միակ դուստրը, որ ամուսնացած է մի պնուական Բելգիացու, կոմս

դ'Արսկոտի հետ (comte d'Arschot-Schoonhoven)։ Հաստատութիւնը դրուած է մի վարչական Խորհուրդի հսկողութեան տակ, որ բաղկացած է 5 անդամից։ Սրանցից 2ը Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան կենդրոնական վարչութեան կողմից պէտք է նշանակուին, 2ը Բրիւքսէլի Համալսարանի Հաստատութեան (Fondation Universitaire) կողմից, իսկ 5երորդը պէտք է լինի Հիմնադիր Նուպարի ուղղակի սերունդը կամ սրա ներկայացուցիչը։ Այս Վարչական Խորհուրդն է, որ լիազօր կերպով վարում է հաստատութեան եկեմուտքը։

Այս հաստատութիւնը հիմնուած է 1924ին։ Սկզբնական դրամագլուխը՝ 20·000 (քսան հազար) անգլիական լիրա ստէրլինգ էր, որ Պօղոս Նուպար դրաւ Լոնդոնի Barklay's Bank L[d] դրամատան մէջ, 5% տոկոսաբեր արժեթղթերով։ Նրա պայմանն էր, որ այս դրամագլուխը պիտի մնայ անձեռնմխելի (trust) եւ միայն տոկոսը պիտի գործադրուի։ Այնուհետեւ բարերարը իր մահուանից անմիջապէս յառաջ, այն է 1930ին, այդ դրամագլուխի վրայ աւելացրեց 50·000 ամերիկեան դոլլար (= մօտ 10·000 £), դարձեալ տոկոսաբեր արժեթղթերով։ Եւ որպէս զի այս դրամագլուխը չպակսի, այլ տարուց տարի աճի, կանոնագրութեան յօդ· 2ի համաձայն, Բարկլէյ բանկը պիտի պահէ ընդհանուր եկամտի $^1/_5$ը եւ աւելացնէ դրամագլխի վրայ, եւ միայն մնացած $^4/_5$ը ուղարկէ Բրիւքսէլի

Համալսարանական Հաստատութեան, գործադրուելու համար: Եւ որովհետեւ Պարիզի Հ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը որոշ հակադրութիւն պիտի ունենայ, իր 2 ներկայացուցիչներով միջոցով, Թոչակառուներուն վրայ, ուստի Բրիւքսէլի Համալսարանական Հաստատութիւնն էլ, բանկից ստացած գումարի $^{1}/_{10}$ը պէտք է դնէ Բարեգործականի տրամադրութեան տակ, այս վերջինի ընթացիկ ծախքերը ծածկելու համար: Եւ վերջապէս՝ կանոնադրութիւնը նախատեսել է նաեւ այն պայմաններն, երբ Հ. Բարեգ. Ը. Միութիւնը կամ Բրիւքսէլի Համալսարանական Հաստատութիւնը լուծուին: Այն ժամանակ անգլիական յիշեալ բանկը դրամագլխի եկամուտը, ըստ Կանոնադրութեան գործադրուելու համար, պիտի յանձնէ Պարիզի Հայ Լուսաւորչական Եկեղեցւոյ Թաղական կամ Վարչական Խորհուրդի Նախագահին, որ Նուպարեան գերդաստանի մի ներկայացուցչի հետ պիտի չարունակէ գործել:

Տիրող ընդհանուր տնտեսական տագնապն ազդած է նաեւ այս հայանպաստ ձեռնարկութեան արդիւնքի վրայ: Անձեռնմխելի դրամագլուխը, ներկայ պայմաններուն մէջ, թէ՛ իբրեւ հիմնադրամ եւ թէ իբր տարեկան տոկոս՝ զգալի կերպով պակասած է: Աչքի առջեւ ունիմ 30 Սեպտեմբեր 1931 եւ 30 Սեպտեմբեր 1932 հաշուեկշիռները: 1930/31ին տարեկան եկամուտ է եղած (ընդհանուր մուտքի $^{4}/_{5}$ը՝ ըստ Կանոնադրութեան) 243·033,80 բելգ·

Ֆրանք, իսկ 1931/32ին միայն 160·061,50: Ըստ այնմ էլ պակասած է թռչակաւորների թիւն եւ նրանց տրուած նպաստը:

«Պօղոս Նուպար փաշա հիմնարկութիւնը»՝ իր հաստատման թուականից, այն է 1924ից մինչեւ 1932 Սեպտեմբեր 30, ունեցել է 48 թռչակաւոր ուսանող, որոնց վրայ ծախսել է 1,036·000 բելգ· Ֆրանք: Այս ծախսն անհաւասար կերպով է բաժնուած: Նրանց մէջ կայ մէկն, որ երկար տարիներ օգտուել է նպաստից եւ ստացել է 112·000 Ֆրանք, բայց սա բացառութիւն է կազմում:

Նուպարեան Հիմնարկութեան այժմեան վարչութիւնը մեծ հոգածութիւն է ցոյց տալիս թէ դրամական խնդրի կանոնաւորութեան եւ թէ թռչակաւորների յարմար ընտրութեան:

ԺԳ· ԳԼՈՒԽ

Վերջին հայկական թշուառութիւնները եւ Բելգիան: Հայասէրների Միջազգային Լիգան: Ժընէվի Ազգաժողովի Յանձնաժողովը: Բելգիայի հայ գաղութի անցեալն եւ ներկան: Հայերէն Աստուածաշունչի 1500ամեակի տօնակատարութիւնը Բելգիայում:

—

Ինչպէս յայտնի է, քաննելորդ դարի մեծ եղեռնագործութիւնն, այն է՝ անպէն, անօգնական եւ անմեղ մի ժողովրդի, իր բնաւայրից բռնի տարագրելով, դժնդակ պատգանները տեղահանուիլն եւ բնաջնջման ենթարկուիլը զայրոյթ, ապշութիւն եւ կասկածութիւն յառաջ բերաւ թէ Եւրոպայում եւ թէ Ամերիկայում: Յնցուած էր մարդկային խիղճն եւ այլեւայլ երկիրներում ցոյցեր տեղի ունեցան, որոնք արդարութիւն էին պահանջում նահատակութեան մատնուած հարիւրհազարաւոր անմեղների համար: Այս ժողովրդական ինքնաբուխ ցոյցերի մէջ վոքրիկ Բելգիան ոչ մի երկրից ետ չմնաց: Հայ վիպաստականները մեծ թուով դիմեցին եւ տեղաւորուեցին այս հիւրընկալ երկրում: Այսպիսով Բելգիան մի անգամ եւս ապացու-

ցեց թէ նա ազատ եւ ապահով ապաստանա-
բան է դրկուածներու, մեծապէս օժտուած է
մարդասիրական զգածմունքով եւ ամէնից
աւելի բարձր է դասում մարդկային անձն եւ
նրա օրինաւոր իրաւունքները:

Բրիւքսէլում կազմուեց մի հայ–բելգիա-
կան Յանձնաժողով, Comité belge philarmé-
nien, *որի նախագահուհին էր* կոմսուհի դ'Արսֆոտ (*Պօղոս Նուպար փաշայի դուստրը,*
որ ստորագրում է Nubar comtesse d'Ars-
chot), *փոխ նախագահ՝ Բոլլանդեան կրօնա-*
ւոր, ծանօթ հայագէտ հայր Պօղոս Պետերս
եւ անդամներ՝ համալսարանի ուսուցչապետ
Հանրի Գրէգուար, Օսկար Գրօժան[1] *եւ*
Մաքսուս Միհրդատեանց, որոնք եռանդով
վարեցան իրենց յօժարակամ ստանձնած
մարդասիրական պարտականութեան: Հայր
Պետերս եւ Պրոֆ. Հ. Գրէգուար ճարտար
բանախօսութիւններով բելգիացիների հա-
մակրութիւնն էին արծարծում ի նպաստ ա-
ղետեալ Հայոց: Բելգիայի զանազան քա-
ղաքներում, այս Յանձնաժողովի ձեռքով
միտինգներ կայացան, որոնք իրենց միահա-
մուռ խղճամիտ զայրոյթն էին արտայայտում
Թիւրքիայում կատարուած այս սոսկալի եղեռ-
նի դէմ եւ իրենց միահամուռ որոշումների
մէջ պահանջում էին «Հայ ժողովուրդի հա-
մար սեպհական հայրենիք իր նախնեաց հողի

---

[1] *Այս Բելգիայի ուսումնականը Պրոֆ.* Henri Gré-
goire*ի հետ համբաւիր–հրատարակիչ է* Flambeau *գրա-*
կան հանդէսի:

վրայ»: Միեւնոյն ժամանակ հիմնուել էր մի «տեղեկատու գրասենեակ» — Bureau d'information arménien — որ լուրեր եւ ամբողջ յօդուածներ էր հայթայթում Հայոց վիճակի մասին բելգիական մամուլին եւ այս կերպով երկրի կառավարութեան եւ ժողովուրդի հետաքրքրութիւնն ի նպաստ Հայոց վառ պահում:

Բաց ի այս Յանձնաժողովի անդամներից, ուրիշ ազդեցիկ բելգիացիներ եւս այս կամ այն ձեւով իրենց համակրութիւնն են յայտնել հայ ազգին, իրենց մասնակցութիւնը բերելով հայկական դատի նպաստաւոր լուծման: Առանձնապէս յիշատակելի է նրանց մէջ Պ. Ջոֆէն (Paul Tschoffen), քանիցս մինիստր եւ բելգիական կաթոլիկ ազդեցիկ քաղաքական կուսակցութեան պետերից մէկը:

Բելգիական կառավարութիւնն եւս անտարբեր չմնաց, եւ ինչ որ դիւանագիտական միջոցներով կարող էր գործել, չթերացաւ եւ կատարեց լիովին: Ամէն պատեհ առթից օգտուելով (ի մէջ այլոց Պ. Ջոֆէնի հարցապնդումի վրայ) բելգիական խորհրդարանում պաշտպան հանդիսացաւ հայերի եւ արդարութիւն պահանջեց նրանց համար: Նա միջնորդեց այս մասին այն Մեծ Պետութիւնների մօտ, որոնք վճռական դեր կարող էին կատարել ի նպաստ Հայոց եւ վերջապէս Ժընէվի Ազգաժողովում իր ներկայացուցիչները՝ յօգուտ հայ փախստականների եղած

դիմումներին եւ պահանջներին ամէն կերպ աջակցել են իրենց ազդու միջամտութեամբը:

Կարեւոր է հետեւեալ պարագան:

Այլեւայլ երկիրներում հիմնուած հայասնպաստ Յանձնաժողովները 1920 Յուլիս 7ին համագումար ունեցան Փարիզում եւ հիմնեցին «Հայասէրների Միջազգային Լիգա» (Ligue Internationale Philarménienne), որ իր գործունէութեան կենդրոնավայր ընտրեց Ժընէվը, «Ազգերի Մխութեան» վրայ ազդելու նպատակով: Եւ իրօք այս «Լիգայի» անդուլ միջամտութեան արդիւնքն էր այն որոշումն, որ կայացրեց «Ազգերի Մխութեան» Ընդհանուր Ժողովը, որով նա յանձնարարում էր իր Խորհուրդին՝ «Հայաստանի ապագան ապահովել եւ Հայերին յատկացնել տալ սեպհական հայրենիք (foyer national) Օսմանեան տիրապետութիւնից անկախ»: Ինչ որ էլ լինի ստացուած արդիւնքն, հայ ժողովուրդը պէտք չէ որ մոռնայ յիշեալ Լիգային մասնակցող օտարազգի հայասէրների գործն եւ անունները[2]:

---

[2] Իրրեւ պատմական դէպք եւ հայութեան համար նշանակալից, աւելորդ չեմ համարում այս Լիգայի հիմնադիրների եւ 1920ին Փարիզի համագումարին մասնակցողների անուններըը:

Մեծն Բրիտանիա. Harold Buxton, Arnold J. Toynbee եւ Aneurin Williams, M. P.

Բելգիա. H. Lafontaine, Sénateur: Նրան փոխարինած է 1924ին, prof. Henri Grégoire.

Դանիա. Mme Inga Nalbandian, դանուհի:

Գաղղիա. Victor Bérard, Sénateur.

Զուիցերիա. A. Kraft-Bonnard, Paul Moriand եւ Ant. Velleman.

Այս արդիւնքը դժբախտաբար սխուր եւ յուսաբեկ եղաւ: Զափազանց աննպաստ այլեւայլ քաղաքական հանգամանքներէ պատճառով Ազգաժողովի այս որոշումն անգործադրելի դարձաւ: Հարկ եղաւ՝ յատկապէս հայ գաղթականներին նկատմամբ տարբեր միջոց ձեռք առնել: Մարզասէր եւ մեր ցեղին բարեկամ մեծ Նորվեգիացու Նանսէնի ազդեցիկ միջամտութեան չնորհիւ, նրա ղեկավարութեան տակ յատուկ Մասնաժողով ընտրուեց, որ պիտի ջանար, հայ փախստականներին փոխադրել Կովկաս, եւ տեղաւորել այնտեղ Հայաստանում, կամ մօտերքը, որչափ հնարաւոր էր: Նանսէն 1925ին անձամբ գնաց Հայաստան, քննելու համար թէ ի՞նչ կերպով կամ ո՞ր չափով կարելի էր ի կատար ածել այդ որոշումը:

Նրա եզրակացութիւնն էր թէ Խորհ. Հայաստանի մէջ կարելի էր մեծ թուով գաղթականներ տեղաւորել եթէ հնարաւորութիւն տրուէր 45·000 հեկտար անջրդի հող կարգի բերել այնտեղ: Ազգերի Միութիւնը անկարող հանդիսացաւ հարկ եղած ծախքը (1½ մի-

---

Ամերիկա (*Միաց. Նահ.*). James L. Barton, Walfer George Schmid եւ Charles V. Vickrey.

Լիգայի ժընէվի մէջ Գործադիր մարմնի (Comité Exécutif) *անդամներն էին՝* Ed. Naville *Նախագահ*, Aug. de Morsier, *Ա. Ընդհ. քարտուղար եւ* John H. Harris (*Լոնդոնում*), *Բ. Ընդհ. քարտուղար:*

Լիգան ունէր նաեւ իր վարչական Յանձնախումբն (Commission administrative), *որի անդամներն էին* Leopold Favre, William Rappard եւ Jules Breitenstein.

լիոն £) հողալ, որով այս ծրագիրը չգործադրուեց: Բարեբախտաբար Հայաստանի կառավարութիւնը կենդրոնական իշխանութեամբ ինքն իր միջոցներով սկսած է գործադրել այս տեղաւորումը մասնակի ներգաղթների ձեւով:

1932 Հուլիս 28ին էր, որ ծրնէվում ստորագրուեց այն միջազգային պայմանագրութիւնն, որով սահմանւում էր ռուս եւ հայ փախստականների իրաւական կարգը (statut), որի գործադրութեան վրայ պիտի հսկէր Office International des Réfugiés կոչուած պաշտօնատանը ծրնէվում: Մեծ եւ փոքր պետութիւնները հետզհետէ ընդունեցան այդ իրաւակարգը թէեւ դեռ ոչ բոլորը: Ըստ այսմ Բրիւքսէլում Արտաքին Գործոց նախարարութեան մէջ կայ մի յատուկ Բելգիայի պաշտօնեայ, որի պաշտօնն է ճշդել գաղթականների ինքնութիւնը, դիւրացնել նրանց բնակութիւնն եւ կանոնաւորել նրանց առօրեայ կեանքն, որպէս զի կարողանան իրենց ապրուստը հոգալ, անթերի կատարելով տեղական օրէնքները:

Բելգիայի հայ գաղութն եւս օգտւում է այս նոր իրաւակարգից:

Մեծ պատերազմից յառաջ Բելգիայի հայ գաղութը մօտ 50 հոգուց էր միայն բաղկացած, որոնք գլխաւորապէս առեւտրականներ էին, բոլորն էլ որոշ եւ հաստատուն դրամագլխի տէր: Դրանց մեծ մասն Անվէրսում էր հաստատուած եւ ծխախոտի եւ ադամանդի

գործով էին պարապում: Կային նաեւ գորգի վաճառականներ եւ դպրոցական ուսանողներ: Պատերազմի ընթացքում եւ մանաւանդ զինադադարից յետոյ այլեւայլ կողմից Բելգիա ապաւինեցան անգործ եւ մեծ մասամբ ընչազուրկ հայեր, որոնց համար տեղական լեզուն, ֆրանսերէնը, համեմատաբար աւելի մատչելի էր: Այսպիսիների թիւը հետզհետէ հասաւ մինչեւ հազարի, որ մինչեւ այսօր էլ զրեթէ նոյնը մնաց: Նրանց մեծ մասը թիւրքիացիներ են եւ միայն փոքր մասը կովկասցիք: Նրանք հաստատուեցան Բրիւքսէլում, զրեթէ $^{2}/_{3}$ը, եւ Անտվէրպէնում (Anvers) $^{1}/_{3}$ը: Կան նաեւ պարսկահայեր, որոնք բարձրագոյն դպրոցների ուսանողներ են:

Երբ Թիւրքիան պատերազմի ընթացքում զօրակոչ յայտարարեց օտար երկիրներում ապրող իր հպատակներին, Բելգիայում գտնուող թրքահպատակների մեծ մասը վախնալով, որ Գերմանական իշխանութիւնն, որ գրաւած էր երկիրը, իրրեւ գաչնակից կարող էր ճնշում գործ դնել նրանց վրայ, խոհեմութիւն համարեցին մերձակայ չեզոք երկիրը, Հոլլանդա ապաստանիլ եւ մինչեւ պատերազմի վերջը մնացին այնտեղ: Իսկ Անվէրսից չատերն արդէն պատերազմի սկիզբներն Անգլիա էին փոխադրուել, որով ոչ մի հայ չտուժեց: Հոլլանդա տեղափոխուած Հայերն անտարբեր չգտնուեցան իրենց կարօտ հայրենակիցների նկատմամբ: Հոլլանդայում կազմուեց «Կարօտեալ Հայերին օգնող Հոլ-

լանդական Յանձնաժողով» (Nederlandsche Comité tot hulpbetoon de noodlijdende Armeniërs) *որին անդամակցում էին 21 ազգային հոլլանդացիներ, նախագահ ունենալով նախկին Ֆինանսական մինիստր վան Ղայն* (Ant. Van Gijn) *եւ քարտուղար՝ օրիորդ վան դէր Հօօպ* (Van der Hoop)[3]:

Բելգիայում, հայ գաղութը 1920ից սկսած պաշտօնապէս սկսել էին արձանագրուիլ réfugié arménien: *Բայց երբ նոր Թիւրքիան Ազգերի Ընկերութեան անդամ ընդունուեց, սա ամէն ջանք գործ դրեց, որ եւրոպական երկիրներում իբրեւ «հայ» արձանագրուած Թրքահպատակները Թրքական դեսպանատան կարգադրութեան տակ մնանն եւ պարզապէս «Թուրք» ճանչցուին: Այս կերպով մեր գաղթականներն, որոնք իբրեւ վախճատականներ Թուրք կառավարութիւնից իրաւազուրկ էին նկատուած, իրաւազուրկ պիտի դառնային նաեւ Նանսէնեան Յանձնաժողովի առջեւ:*

---

[3] *Այս հոլլանդական հայանպաստ Յանձնախումբը բացի կարօտեալ հայերին դրամական նպաստ հայթայթելուց, մի օգտակար գործ եւս կատարեց: Նա հրատարակեց մի բովանդակալից գիրք հոլլանդերէն լեզուով* Marteling der Armeniërs in Turkije, *այսինքն «Հայոց մարտիրոսացումը Թիւրքիայում» վերնագրով, տպ. 1918ին: Այս չափական հրատարակութիւնն, որ 250 էջից է բազկացած, 3 մասի է բաժնուած՝ Ա. Տարագրութիւնները, Բ. Տարագրեալների վախճանը եւ Գ. Կատարուած իրողութիւնների բնոյթը: Ունի նաեւ մի յաւելուած, որ ընդհանուր վիճակագրական տեղեկութիւններ է տալիս հայ ժողովուրդի բնակավայրերի, թիւի եւ դաւանութիւնների մասին, քաղուած գլխաւորապար Դոկտ. Լէպսիուսի ծանօթ նշանաւոր գործերէն հրատարակութիւնից:*

Ա.յտահղի Հայոց Գաղութային Վարչութիւնն այս մասին մի ընդարձակ դեկուցագիր ուղարկեց Ժընէվ Ազգաժողովի Բելգիական ներկայացուցչին: Թուրք կառավարութեան պահանջը մասամբ միայն դոհացում առացաւ. գանուեց միջին ճանապարհ: Ըստ այսմ Բելգիայի հայ գաղութի այն մասն, որ նախկին թրքահպատակ էր, այժմ արձանագրուած է «turc, réfugié arménien»: Ա.յս réfugié arménienը պահպանելով, նա իրաւունք էր ստանում չարունակել պահպանել իր կապը Ժընէվի Գաղթականական Յանձնաժողովի հետ եւ անխափան էր մնում նրա իրաւակարգը Բելգիայում: Հայ Գաղութային Վարչութիւնը միշտ կանոնաւոր եւ ճշդապահ ընթացք է բռնել տեղական իշխանութիւնների մօտ, որով մեծապէս օգտակար է հանդիսանում թէ Բելգիայում մշտական բնակութիւն հաստատած «անհայրենիք» հայերին եւ թէ այն-պիսիներին, որոնք այս կամ այն պատճառով ուրիշ երկիրներից ստիպուած են լինում հեռանալ եւ գիմում են Բելգիա: 1933ին Ժընէվում նոր օրէնքներ սահմանուեցան, որով ճշդուեցան եւ աւելի ապահով կացութիւն տրուեց ոուս եւ հայ գաղթականներին: Ա.յս պարագան ազդեց նաեւ Բելգիայի Հայոց վիճակի բարելաւման:

Բելգիայի հայութիւնը չատ լաւ է կազմակերպուած իր ներքին ազգային կեանքում: Նա ունի իր ազգային կանոնագրութիւնն, ըստ որում ընտրում է նախ Պատգամաւորական

ժողով, որին մասնակցում են 18 տարին լրացուցած եւ տարեկան 12 ֆրանք կամաւոր տուրք վճարող բոլոր գաղթականները:

Այս պատգամաւորական ժողովն, որ բաղկացած է 30 անդամից, ընտրում է իր գործադիր մարմինն, որ կոչւում է «Բելգիայի Հայ Գաղութային Վարչութիւն» (Comité des Arméniens de Belgique) ու պաշտօնապէս ճանաչուած է բելգիական կառավարութեան կողմից: Վերջին ընտրութիւնը կայացաւ 1935 Մայիսին: Այժմեան կազմը հետեւեալն է.

Ատենապետ՝	Պ. Մուրատեան
Փոխ–Ատենապետ՝	Ն. Զամքէրթէն
Ատենադպիր՝	Գ. Պարսամեան
Փոխ–Ատենադպիր՝	Հ. Էնֆիաջեանց
Գանձապահ՝	Մ. Քալանթարեանց
Մօրհրդականներ՝	Աբր. Մըսըրեան
	Ն. Վրոյր
	Ս. Փափազեան
	Վ. Մուրատկեան

Սրանցից փոխ ատենադպիրն եւ գանձապահը կովկասահայ են, մէւանները Թրքահայ: Իսկ պատգամաւորական ժողովի ատենապետն է Պ. Մ. Մխրդատեանց:

Բելգիայի հայ գաղութն ընդհանրապէս եւ իր ունեւոր դասակարգը մասնաւորապէս, ինչպէս են Մըսըրեան զերդաստանը, եւ ՊՊ. Մօրատանճեան, Զամքէրթէն, Մխաք եւ մի

քանի ուրիշներ, իրենց դրամական օժանդակութիւնը չեն խնայած թէ ընդհանուր ազգային պէտքերին եւ թէ յատկապէս տեղական դաղութի կարօտութիւններին: Այս այլեւայլ հանրային պէտքերին եւ կրթական պահանջներին դոհացում տալու համար Բելգիայում եւս դոյութիւն ունին ազգային, բարեգործական, եւ կրթական միութիւններ: Այսպիսիներ են՝ «Հայ կարմիր խաչը», որի առենապետուհին տիկին Արմենուհի Մըսըրեան Գադութային Վարչութեան առենապետ Պ. Մուրատեանի նման ընդհանուր բաղձանքին դոհացում տալով, միշտ ճնում է իր պաշտօնի վրայ եւ անձնուիրութեամբ գործում: Ցիշեմ նաեւ «Հայ Երիտասարդաց Միութիւնը», «Հայ Ուսանողական Միութիւնը» եւ «Հօկի» (Հայաստանի Օգնութեան Կոմիտէ) մասնաճիւղն, որոնք բարեխղճօրէն կատարում են իրենց ստանձնած բարոյական պարտականութիւններն յօդուտ Հայութեան, իւրաքանչիւրն իր կանոնագրի սահմաններում: Բայց սրանցից զատ կայ մի ուրիշ համակրելի միութիւն, որ եթէ չեմ սխալում, միմիայն Բելգիային է յատուկ եւ ուրիշ հայաբնակ կենդրոններում դոյութիւն չունի: Այս միութիւնը կոչւում է պաշտօնապէս՝ Association des Amis de l'Institut de Philologie et d'Histoire Orientales de l'U. L. B. (Université Libre de Bruxelles), այսինքն «Բրիւքսէլի Համալսարանին կից Արեւելեան Կաճառի բարեկամների Ընկերակցութիւն»: Նախորդ Գլխում (ԺԱ.) տեսանք

թէ ինչպիսի հանգամանքներում հիմնուեցաւ այս Արեւելեան Կաճառն եւ հաստատուեցաւ Հայերէնի ամբիոնը: Ի նկատի ունենալով, որ մասնաւոր անհատների խոստացած տարեկան նպաստները այս կամ այն պատճառով կարող էին չվարունակուիլ եւ հետեւաբար Հայերէնի ամբիոնի դոյութիւնն իսկ կասկածելի կը դառնար, ուստի համակիրների մի խումբ որոշեց այնպիսի ձեւ տալ այդ օժանդակութեան, որ նա աւելի տեւական եւ հաստատուն բնաւորութիւն ունենայ եւ մասնակցութեան հրաւիրեց ուրիշ նուիրատու անդամներ ոչ միայն հայ այլ նաեւ օտարազգիներից, քանի որ Արեւելեան Կաճառն իսկապէս ընդհանուրի համար է, եւ ոչ թէ յատկապէս հայ ուսանողների համար: Մի հայ «կազմակերպիչ մասնաժողով», որի անդամներն էին ՊՊ. Մուրատեան, Միհրդատեանց, Թօփուզեան, Միսաք, Յակոբեան եւ Սարուխան, նախ առանձին եւ ապա 1935 Հոկտեմբեր 16ին Արեւելեան Կաճառի վարչութեան հետ, յանձին փոխ–նախագահ Պրոֆ. Հ. Գրէգուարի եւ քարտուղար Պրոֆ. Ժ. Պիրէնի (Jacques Pirenne) եւ միւս անդամների խորհրդակցութեամբ մշակեց նոր ընկերակցութեան կանոնագրութիւնն, այն հիմունքների վրայ, ինչպէս որ Բելգիական Օրէնքն էր պահանջում եւ նոտարի միջոցով պատշաճաւոր իշխանութեան ներկայացուելով հաստատուեց: Այժմ Ընկերակցութեան անդամներ են եւ կարող են լինել թէ հայ եւ թէ Բելգիացի

անդամներ: Վարչութիւնն էլ հայ-բելգիական է: Ընկերակցութեան պատուաւոր նախագահուհին է կոմսուհի դ'Արսքոտ (Պօղոս Նուպար փաշայի դուստրը) իսկ գանձապահը Պ. Ժիւլիէն Միսաք: Այս երկուքն էլ ինքնին հայ-բելգիական ընկերակցութիւն են ներկայացնում, առաջինն իր Բելգիացի ամուսնի, իսկ երկրորդն իր բելգուհի մօր շնորհիւ:

Համազգային մեծ տօնը, Հայերէն Աստուածաշունչի 1500ամեակը՝ Բելգիայում եւս կատարուեց մեծ հանդէսով, 1935 Հոկտեմբ. 20ին, նախ անձուկ հայ շրջանի մէջ, ուր պատշաճաւոր բանախօսութիւններ հետ խառն երաժշտութիւն եւ երգ տեղի ունեցաւ: Այնուհետեւ Բրիւքսէլի մի մեծ կաթոլիկ եկեղեցում նոյնը կատարուեց յատկապէս բելգիական ժողովրդի դիտաւորութեանը: Այդ օրը՝ Բելգիայի հայ-կաթոլիկ համայնքի հովիւ Յովհ. Վ. Նալպանտեան պատարագեց հայ ծէսով եւ հայ երգեցիկ խումբի ընկերակցութեամբ, որ տեղացիներից շատերի համար հաճելի նորութիւն էր: Ապա Լուվէնի համալսարանի հայերէնի ուսուցչապետ Տ. Լըբօն վարդապետը (le chanoine Lebon) գաղղիերէն մի հմտալից ճառով Բելգիացիներին բացատրեց օրուայ նիւթն եւ այս առթիւ նաեւ հայ ժողովրդի կացութիւնը, շեշտելով, որ «մեր հայ եղբայրները կարողացած են տոկալ բախտի ամենախիստ հարուածներին եւ ամենակատաղի փոթորիկներին, առանց յուսա-

հաստուելու եւ տուանց ընկճուելու»[4]: Միեւնոյն օրը նոյն տեղ երեկոյեան ժամերգութեան ժամանակ էլ Երուսաղէմից եկած մի լատին կրօնաւոր, նոյնպէս հայագէտ, սքանչելի մի բանախօսութիւն արտասանեց Հայոց՝ Ս. Տեղեաց մէջ ունեցած կարեւոր դերքի, Հայոց անցեալի եւ ներկայի վրայ, մեծ համակրանօք: Թէ առաւօտ եւ թէ երեկոյեան բեղխացիք խուռն բազմութեամբ եկել էին հայկական այս տօնին ներկայ լինելու, որ եւ մեծ տպաւորութիւն թողեց նրանց վրայ:

---

[4] Տ. Լէրօնի այս ճառն ամբողջութեամբ տպուած է Բէյրութի «Աւետիք» ամսագրի 1936 Մարտ—Ապրիլի համարում:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա· Չորրորդ դարի մի հայ սուրբ, Ս ե ր վ ա տ ի ո ս ե պ ի ս կ ո պ ո ս, saint Servais:

Բ· ԺԵ· դարի մեծ ուխտաւոր — ճաճանապարհորդ եպիսկոպոսը՝ Մ ա ր տ ի ր ո ս Ե ր զ ն կ ա ց ի:

Ինչպէս ընթերցողն արդէն նկատած կը լինի, ես այս պատմութիւնս, այն է Բելգիայի եւ Հայոց յարաբերութիւնների նկարագրութիւնը՝ յօրինել եմ ժամանակագրական կարգով: Արդէն աւարտել էի, երբ նոր մատենադրական աղբիւրներ հասան իմ ծանօթութեանս այս նիւթի շուրջը, որոնց հետազօտութիւնը երեսան հանեց երկու շատ հետաքրքրական հայ դէմքեր, կատարելապէս արժանի յիշատակութեան. ուստի հարկ եմ համարում մի քանի խօսք էս ասել դրանց մասին իբրեւ յաւելուած:

Ա·

Բելգիայի մայրաքաղաքի կենդրոնական մի թաղում Բելգիացի բարեպաշտներ մի փառաւոր եկեղեցի են կանգնել, որի ճակատը զարդարուած է մօրուքաւոր եւ արեւելեան ձեւով զգեստաւորուած մի եպիսկոպոսի ար-

ձանով: Եկեղեցու ձախակողմեան խորաննե-
րից մէկը նուիրուած է նոյն այդ եկեղեցա-
կանին, եւ դրուած է այնտեղ ճիշդ այդպիսի
մի արձան: Իսկ խորանի մեծ պատուհանի
պարզարուն դունաւոր ապակին պատկերաց-
նում է մի չքեղ եկեղեցական հանդէս, որտեղ
Հռոմի պապը, ի հարկէ անմօռուս եւ ինչպէս
պատշաճ է զգեստաւորուած, յանձնում է
նոյն եկեղեցականին մի ոսկէ բանալի, իբրեւ
բացառիկ վարձատրութիւն նրա մատուցած
ծառայութիւններին ի պայծառութիւն եկե-
ղեցւոյ: Այս արեւելեան եպիսկոպոսը Քրիս-
տոնէութեան սկզբնական շրջանում, յատկա-
պէս Զորրորդ դարում եկել է Բելգիա եւ քա-
րոզել, հրաշքներ գործել եւ վախճանուել է
մերձակայ Հոլլանդայում: Բազմաթիւ հին
աղբիւրներ եւ պատմական նոր քննութիւններ
վկայում են, որ այս հրաշագործ եպիսկո-
պոսը, որ կոչւում է Սերվատիոս (Servatius)
եւ Ֆրանսերէն ձեւով Սերվէ (Servais), ծագ-
մամբ հայ է եղել· դոնէ ըստ աւանդութեան:

Հոլլանդեանների համբաւաւոր լատինե-
րէն Վարք Սրբոցն ընդարձակ կենսագրական
ունի, որի մէջ այս մասին բոլոր աղբիւրներն
ու տեղեկութիւնները յատաջ են բերուած եւ
եզրակացնում է թէ նա հայ է համարւում[1]:
Իսկ բելգիայի յայտնի ուսումնական Կուրթ
(Kurth), Լիէժի համալսարանի պրոֆէսօրը,
երկու կարեւոր յօդուածի մէջ ուսումնասի-

[1] Acta Sanctorum, T. III, *Մայիս*, 1780, Anvers.

րել է Սէրվատիոսի ծագումն եւ գործունէութիւնը եւ նոյնպէս հաստատում է թէ «d'après les recits légendaires, Servais ou de son nom original Servatius était d'origine arménienne[2]» :

Այս ուսումնասիրութիւնների համաձայն, Սերվատիոսի անունն առաջին անգամ յիշւում է Սարդիկիայի եկեղեցական ժողովում, որ կայացել է Դ. դարում, Նիկիայի ժողովից վերջը[3]: *Այնուհետեւ նա թողել է Արեւելքն եւ միւս եւրոպացի եպիսկոպոսների հետ անցել է Իտալիա, ուր նրան գտնում ենք Րիմինիի եկեղեցական ժողովում*[4]: *Հռոմում քահանայապետի ընդունելութիւնը վայելելուց յետոյ, երբ նա վերեւ յիշուած ոսկէ բանալին է առացել, նա դիմել է դէպի Հիւսիս եւ հաստատուել է Բելգիայում, իբրեւ թեմական եպիսկոպոս* Տունգր (Tongres) *քաղաքի, որ այժմ Լիէժի թեմուն է: Այստեղ ամենամեծ համակրանք է չահել ընդհանուրի կողմից իր անձնական զոհաբերութիւններով յօգուտ հաւատացեալների եւ իր գործած*

---

[2] Prof. Kurth, Bulletin de la Société d'Art et d'Histoire du Diocèse de Liège (Belgique), 1881 et 1884.

[3] Սարդիքը գտնւում էր Բուլղարիայում Սոֆիայի մօտերը: Այս համագումարի մասին լատինական եկեղեցական աղբիւրն ասում է «Concilium Sardicense generale»:

[4] Rimini կամ լատիներէն Արիմինո (Իտալիայում), ուր հաւաքուած են եղել այլեւայլ կողմերից եկած 400 եպիսկոպոս: Այս ժողովը հաստատել է Նիկիոյ ժողովի որոշումն ընդդէմ Արիոսի:

այլեւայլ հրաչքներով: Տոնդրից նա տեղափոխուել է մերձակայ Մաաստրիխտ (Maastricht): Այս քաղաքն, որ այժմ Հոլանդայի մաս է կազմում, 1558ից յառաջ Բելգիայի եպիսկոպոսական աթոռատեղի էր:

Տոնդրի եւ Լիէժի ժողովուրդը մեծ ցաւով է նրանից բաժանուել: Պարիսի Ազգային Մատենադարանի ձեռագրների ժողովածոյի թ. 1258 հատւածոն բովանդակում է Ութերորդ դարում գրուած մի վարք Սրբոց, որի 47ղ էջն սկսում է Սերվատիոսի կենսագրութեամբ՝ այսպէս. «Incipit vita sancti ac beatissimi Servatii episcopi et confessoris»: Այստեղ պատմուում է թէ երբ Սերվատիոս բաժանուում էր իր հօտից՝ «ժողովուրդը լալով հետեւում էր նրան: Կրօնաւորներն եւ մայրապետները վանական վերակացեանքի կանոնները մոռանալով, կուրծք բարախելով եւ աղերսագին հայեացքներով գնում էին նրա ետեւից. չքաւորներն ու անդամալոյծները իրենց հատաչանքը խառնում էին ընդհանուր լացին...»:

Մաաստրիխտցի մի եկեղեցական՝ Ը. դարի վերջերում գրել է այս հայ սուրբի կենսագրութիւնը՝ Vita Servatii վերնագրով: Նա յառաջ է բերում ինչ որ աւանդաբար լսել է նրա մասին Տոնդրում կամ Լիէժի չրջանում եւ ապա Մաաստրիխտում: Այս գրուածքի մէջ նա յիշատակում է նրա տապանագիրը լատիներէն լեզուով: Հաւանական է համարում, որ այս տապանաքարը գրուել է նրա

գերեզմանի վրայ սուրբ Մոնիւլֆի (Monulfe) կարգադրութեամբ, որ հանդէս է՛ կատարել նրա գերեզմանի վրայ եւ ըստ Կուրթի՝ այս Մոնիւլֆ սուրբն ինքն է զետեղել ոսկէ տառերով արձանագրութիւնը: Պատմութիւնը վկայում է, որ Ութերորդ դարում մեծ հանդէս է տեղի ունեցել Ս. Սերվատիոսի գերեզմանի վրայ, ներկայութեամբ ժամանակի արքային, որ ըստ ոմանց դաղղ. Charles Martel թագաւորն է եղած եւ ըստ այլոց նոյն ինքն Charlemagne կայսրը:

Սքեպէնս (Schaepens) իր «Քրիստոնէական Գերեզմաններ[5]» երկասիրութեանը մէջ մանրամասն նկարագրում է Սերվատիոսի այս տապանը (sarcophage):

Մի գերմանացի հեղինակ էլ քերթուած է յօրինել Ս. Սերվատիոսի վրայ եւ նրա յիշատակը տարածել գերմանական շրջաններում[6]:

Այս հայ եպիսկոպոսը, Բելգիայում եւ Հոլլանդայում հաւասարապէս յարգուած մեծ սուրբը, վախճանել է Մաաստրիխտում 384ին: Նրա գերեզմանի վրայ մի փառաւոր եկեղեցի է կանգնուած, ուր ամփոփուած են սուրբի նշխարքն: Այնքան բարձր է նրա անունը Մաաստրիխտում, որ քաղաքային իշխանութիւնն ինքն է առանձնել Սերվատիոսի նշխարքի

[5] «Tombeaux Chrétiens», Académie d'Archéologie de Belgique, 1850, VII, p. 418.

[6] Haupt, Zeitschrift für deutsches Altertum, V, p. 76.

պահպանութեան հոգը: Նրա ծննի օրը, Մայիս 13ին (1935ին) Բելգիայի հայ կաթոլիկ համայնքն, որ բաղկացած է մօտաւորապէս 100 հոգուց, առաջնորդութեամբ իր հոգեւոր հովիւ Տ. Յովհ. Վ. Նալպանտեանի, ուխտագնացութիւն կատարեց Մաաստրիխտ, սուրբի գերեզմանի վրայ: Անշուշտ առաջին անգամ լինելով, այնտեղ, նրա անուան նուիրուած եկեղեցում, հայերէն լեզուով եւ հայկական թափորով պատարագ եւ օրհնեքգութիւն տեղի ունեցաւ, որ մեծ հետաքրքրութիւն չարժեց եւ հիացմունքով ընդունուեց Հոլլանդացիներից: Ուխտագնացների առջեւ բացին եկեղեցու գանձարանը (trésor), ուր ի մէջ այլոց պահւում է այն բանալին, որ Հռոմի պապը չնորհել է այս հայ սուրբ եկեղեցականին[7]:

Սրանից յառաջ, այն է Ապրիլ ամսում, Ս. Մակարի ծննի օրը նոյնպիսի ուխտագնացութիւն էր տեղի ունեցել Գան (Gand) քաղաքն, ուր հայերէն պատարագ մատուցուեց նրա անուամբ կառուցուած եկեղեցում եւ ի լուր ամենեցուն յայտարարուեց Բելգիայի ժանտախտից պաշտպան այդ մեծ սուրբի հայ պարմից լինելն եւ կատարած հրաշագործութիւններն, ինչպէս որ արդէն պատմեցինք (Գլուխ Բ.):

Հոլլանդական եւ բելգիական լրագիրն

---

[7] Այս տեղեկութիւնն ինձ հաղորդեց Բրիւքսէլի Saint Servais եկեղեցու ժողովրդապետը Տ. Գլիբէր (le Doyen Glibert):

արձանագրեցին այս հայկական ծիսակատարութիւնները իրենց եւ մեր սուրբերի յիշատակին:

Բ.

Տաննեւհինգերորդ դարի վերջին քառորդում Փոքր Ասիայից Եւրոպա է եկել մի ուրիշ եպիսկոպոս, իսկապէս հայ, այսինքն որի ծագումն ու ազգութիւնն որ եւ է կասկածի տեղի չէ տալիս: Սա մի վերին աստիճանի հետաքրքրական անձնաւորութիւն է, որ իր երկարամեայ ուղեւորութիւնը անճամբ պրի է առել հայերէն, ռամկականի մօտեցող դրաբարով: Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին, այս մեր ուխտագնաց մեծ ճանապարհորդը, անցել է նաեւ Բելգիայից, որով առիթ է մեզ ընծայում իր մասին եւս խօսելու[1]:

Առաջին անգամ բազմաչխատ հայագէտ պաղղիացին Սէն Մարտէն (Saint Martin) եղաւ, որ Մարտիրոսի այս գրուածքը գաղղիերէնի թարգմանելով ծանօթացրեց հասարակութեան, կցելով իր կողմից կարեւոր դիտողութիւններ, իրրեւ լրացուցիչ բացա-

[1] Մարտիրոս եպիսկոպոսի այս ուղեգրութեան մի ձեռագիր օրինակը գտնւում է Պարիսի Ազգային Մատենադարանում, օրինակուած 1684ին: Յարգելի բարեկամս Դոկտ. Վ. Թորգոմեան իմ խնդրանօք հաճեցաւ քննել այնտեղ այս ձեռագիրն, որ «կը կրէ, գրում է նա, 308 թիւը· փոքրիկ հատոր մ'է գանազան նիւթեր պարունակող, որոնց վերջընթերը կը ներկայացնէ հատորին 162ղ էջին վրայ· «Relation du voyage fait en Europe par Martiros d'Ezinka, de 1488 à 1491» վերնագիրը:

տրութիւն հեղինակի պատմութեան դժուարըմբռնելի կողմերին[2]:

Զեռագիրն սկսում է այսպէս. «Ես Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոսի եղնկացի, ի սուրբ Կիրակոսու յանապատէն ի Նոր գեղա...: Թվին ԹՃԼՀ (1489) հոկտեմբերի ԻԹ յելայ ես ի իմ վանացն եւ եկայ մեղմաբար հասի ի յատամպօլ եւ աստուծոյ յաջողութեամբ գտեալ նաւ մի եւ մտի անդ Վրդանէս սարկաւագովն. թվին ՋԼԹ (1490) յուլիսի ԺԱ. ի յատամպօլու ելաք եւ մտաք ի նաւ մի Ֆրանգի եւ հոկտեմբեր Ա. ելաք ի Վինէժ քաղաքն, որ է Վենետիկ մեծ եւ փառաւոր քաղաք»:

Ինչպէս նկատել է դպղ. թարգմանիչը այս հայ եպիսկոպոսի ուղեւորութեան իսկական նպատակն է եղել այցելել Եւրոպայի քրիստոնէական նուիրական ուխտավայրերն, սկսելով Հռոմի Ս. Առաքելոց գերեզմաններից:

---

[2] Journal Asiatique, t. 9, 1826, p. 321. *Այնուհետեւ ուրիշ տեղեր եւս երեւցել են նրանից այլեւայլ օրինակներ: Այսպէս՝ յարգելի բարեկամս Հ. Ն. Վ. Ակինեան Վիեննայից գրում է ինձ. «Մարտիրոս Երզնկացւոյ գրուածքը ծանօթ է յատկապէս* Journal Asiatique*էն: Պարիսի օրինակէն արտագրութիւն մը կայ նաեւ Վենետիկի Մխիթարեանց քով: Օրինակ մ'ալ կը յիշուի Սեւանի ձեռագրաց մէջ: Երկար խօսած է իր մասին Հ. Ալիշան, Հայ–Վենետ. 194—197: Journ. Asiatique*էն դպղ. *թարգմանութիւն մը արտատպուած է 1828ին: Նոյնին վրայ գրուածք մ'ունի* E. Lerou *ի* Revue de l'Orient, No. 13 (1862), *էջ 398—406»:*

Ես տեսած եմ միայն Սէն Մարտէնի հրատարակութիւնը, այսինքն սկզբնականն, եւ յենուում եմ նրա վրայ:

Վեննետիկը նկարագրելուց յետոյ, ուր մնացել է 22 օր, Մարտիրոս համնում է Հռոմ ուր մնում է ամբողջ հինգ ամիս եւ կատարում է իր ուխտը: Այնուհետեւ շարունակում է իր ուղեւորութիւնը Եւրոպայի միւս կողմերը: «Թվին ՋԽ (1491), գրում է նա, ելաք ի Հռովմայ եւ բազում աւուրք ԽՋ օրն հասաք յաշխարհին դունդէլք ազգին, որ են յալաման (allemand) եւ գնացաք ի մեծ քաղաքն Պազլ (Basel, Bâle, Զուիցէրիայում) ուր եւ ընեցին մեզ թէ դուք չաշուտ (լրտես) էք...»: Ճանապարհը շարունակելով գալիս է «Ֆրիբուրգ» (Fribourg), Ստրազբուրգ (Strasbourg) եւ ապա Հռեննոս գետով նաւարկելով «հասաք, ասում է ի մեծահամբաւ քաղաքն ի Կալոնիոյ (Cologne) որ եւ ասացին թէ մռ (200,000) եւ իդռ (24,000) տուն է եւ խիստ մեծ եւ զարմանալի քաղաք էր եւ մոզոց թագաւորաց գերեզմանն...[3]»:

Այս «ասացին»ը մեկնաբանում է թէ նա ի լրոյ է հաղորդում այս խիստ չափազանցեալ թիւերը: Այսպիսի չափազանցութիւն գտնում ենք Մարտիրոսի այցելած բոլոր քաղաքների բնակչութեան թուի նկատմամբ: Վեննետիկի մասին ասում է թէ 75,000 (եօթանասունեւհինգ հազար) տուն ունէր: Հռոմի համար

---

[3] Իրօք, Միջին Դարում, Կօլօնեայում (Köln կամ Cologne) ցոյց էին տալիս մոգ արքաների գերեզմանն, որին բազմաթիւ այցելուներ ուխտի էին գալիս ամէն կողմից:

պրում է թէ 2740 եկեղեցի ունի եւ 8000 սրբոց դերեզման:

Կոլոնեայում նա 22 օր հանգստանում է եւ 1490 Հոկտեմբեր 25ին մեկնում է այնտեղից եւ Գերմանիայի այլեւայլ քաղաքներն այցելելուց յետոյ գալիս է, ինչպէս նա է ասում, «Մանթիա Մարիա Տաքս», որ է այժմեան Ախէնը (Aix la Chapelle): Այստեղ, նա իր պարտականութիւնն է համարում դնալ երկրպագել Աստուածածնայ շապկին, որ ըստ աւանդութեան գտնւում է եղել տեղւոյն մի յայտնի ուխտատեղում:

Կանխեմ ասել, որ Մարտիրոս եպիսկոպոս իր այցելած բոլոր վայրերում մեծ պատիւներով է ընդունւում եւ սիրով հիւրընկալւում, չնորհիւ այն հանգամանքին, որ յաջողել է Հռոմում առանալ պապից յանձնարարական գրութիւն, որ յորդորում էր Եւրոպայի բոլոր քրիստոնեաներին՝ հիւրընկալել եւ աջակցել Արեւելքից եկած այս ուխտաւոր եպիսկոպոսին: Ամէն տեղ՝ մինչեւ իր ուղեւորութեան վերջը, նա հանում գոյց է տալիս Հռոմէական Եկեղեցու քահանայապետի նամակն եւ իսկոյն «պատասաց վարդապետ» ինչպէս նա գրում է եւ ժողովուրդը աջակցում են նրան: Գերմանիայից նա անցնում է Բելգիա, ուր իր այցելած առաջին քաղաքն է լինում Անվէրս[4], որ այն ժամանակ էլ կարեւոր նաւահանգիստ էր:

---

[4] *Մարտիրոսի ձեռագիրն օրինակողը՝* Անվէրս *քա-*

Ա.յատեղ նա երկրպագում է «ամենազաւր սուրբ թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի սուրբ Ֆուֆանին, որ ի ժամ խաչելութեանն կապեցին ասուածընկալ արեամբ»: Ա.յս ուխտն էլ կառաբելուց յետոյ Մարսիլիոս ճանապարհ է ընկնում. «եւ անտի ելաք բազում յաւուրք յաչխատութեամբ բազում քաղաքաւ հասաք յաչխարհն Ֆլանտիու [5]»: Ա.յս բառով նա հասկացնում է Ֆլանդրիան, ինչպէս կոչւում էր եւ մինչեւ հիմայ էլ կոչւում է Բելգիայի այս ծովեզերքը, Ֆլամանների բնակավայրը: Ֆլանդրիայի բնակիչների այն է Ֆլամանների մասին նա գրում է թէ նրանք չատ ծուկ ուտող են, որ ճիշդ է, քանի որ այդ ծովեզերքում ինչպէս այն ժամանակ, այժմ եւս ժողովուրդը մեծ մասամբ ձկնորսութեամբ է պարապուած: Ժողովուրդը խօսում էր Ֆլամաներէն եւ նա չի հասկանում, «լեզու չգիտեաք զրուցելու, գրում է, եւ խիստ դժուարութեամբ յելաք անտից»: Յետոյ «հասաք, ասում է, յաչխարհն ընկլզաց (անդլիացիք) եւ գնոցա լեզուն ալ չգիտեաք... [6]»: Ըստ ա-

---

գաբի անուան մէջ ա-ն ու կարդալով ըստ այնմ սխալմամբ գրում է Ունվէս, բառի մէջի ը- հնչումն էլ գանց առնելով: Ա.ն-Մարտէն էլ սխալմամբ այդ Ունվէսը կարդում է վեսուն եւ պատճառաբանում է այսպէս. «Ունվէս doit être *վեսուն*, qui est la ville Besançon (?!), où résidait à cette époque Maximilian I., encore roi des Romains»: *Եւ այս կերպով սխալ արտագրութեան եւ ապա սխալ ընթերցման չնորհիւ բելգիական նաւահանգիստը դառնում է... Բրգաւսօն!:*

[5] *Ա.յատեղ էլ սխալ է ընդօրինակուած. այս բառը պէտք է կարդալ Ֆլանգրու եւ ոչ թէ Ֆլանդիու:*

[6] *Ա.յատեղ Ա.ն Մարտէն իրաւացի նկատում է թէ*

մենայն հատանականութեան նրա խօսած միակ եւրոպական լեզուն իտալերէն է եղած, որին նա վարժուել էր երկար ժամանակ Հռոմում մնալով եւ Իտալիայում ճանապարհորդելով: Այս երեւում է նաեւ նրանից որ եւրոպական քաղաքների անուններն նա այնպէս է հնչում եւ արձանագրում իր Ճիշատակարանում ինչպէս իտալացիք, կամ մօտաւորապէս:

Բելգիայից նա անցնում է Գաղղիա եւ գալիս է «ի քաղաքն Սան Տօնիժ» «Saint Denis), եւ այն քաղաքն եպիսկոպոսաց եւ թագաւորաց եւ թագուհեաց դերեզմանատուն է... եւ ելեալ անտի հասաք ի մեծահամբաւ քաղաքն ի Բարիզ (Paris) Դեկտեմբերի ԻԲ.»: Այստեղ իր ուղեկիցը, Վրթանէս սարկաւագն այլ եւս չէ ուզում նրա հետ ճանապարհորդել, ըստ երեւոյթին, եւ նրանից բաժանւում է: Մարտիրոս Պարիսում միայն 13 օր է մնում, որը նկարագրում է նոյնպէս չափազանցօրէն եւ ապա անվհատ շարունակում է իր ուխտագնացութիւնն Եւրոպայի միւս նուիրատեղիները, կամաց կամաց եւ հետիոտն: Նա օրերով դադար է առնում իր հանդիպած քաղաքներում: Այսպէս ամիսներ ճանապարհորդելով Գաղղիայից մտնում է Սպանիա եւ իջեւանում է նախ Սան Սեբաստեան ծովեզե-

---

«Ընկղզաց» երկիր ասելով Մարտիրոս հասկանում չէ բուն Անգլիան, որովհետեւ չի յիշում թէ նաւ է նաստել, այլ Ֆրանսական Կալէն (Calais) եւ Պիկարդիան (Picardie), որոնք այդ թուականին անգլիական տիրապետութեան տակ էին: Այս տեղից էլ ուղղակի գնում է Պարիս (Paris):

բնակ քաղաքը: Սպանիացիք նրան հիւրընկալում են տեղական հիւրանոցում, որը նա սպիտակ է կոչում եւ երբ լսում են նրա ուխտաւորի հանգամանքը եւ կարօտ վիճակը, նրա համար փող էլ են հաւաքում: Մարտիրոս իր դլխաւոր նպատակներից մէկին է համնում երբ այցելում է եւ երկրպագում ծնկաչոք՝ «Ս· Յակոբի գերեզմանին» եւ «Պօղոս առաքեալի ձեռքով կառուցուած Սանթա Մարիա Ֆեհիստէռնայ եկեղեցուն», ինչպէս դրում է: Այս սպանիական «Սուրբ Յակոբը» նրա պաշտպան սուրբն է, որին միշտ օգնութեան է կանչում իր ուղեւորութեան ժամանակ:

Հայ անվախ եպիսկոպոս-ուխտաւորը՝ այս երկար, տառաճին եւ հետիոտն ճանապարհորդութիւնից վերջապէս յոգնում է եւ սկսում է դանդաղել ոչ միայն յոգնածութիւնից այլ եւ իր ունեցած վտանգալից արկածներից, որովհետեւ մի տեղից միւս տեղ անցնելիս նա երբեմն այնպիսի ամայի վայրերով է դնում, որոնց մեկ բնակիչները վայրի գազաններ են լինում: Այս կերպով նա հանդիպել է նաեւ վագրերի[7] բայց յաջողւում է խոյս տալ նրանցից:

Մարտիրոս Սպանիայում պատահում է

---

[7] *Մարտիրոսի Յիշատակարանում կամ աւելի ճիշդը նրա ընդօրինակութեանը մէջ, այս բառը գրուած է Վ.աֆիեր: Գաղղիացի թարգմանիչը Սէն-Մարտէն չէ կարողացել հասկանալ թէ «Վ.աֆիերը» ինչ տեսակ գազան է եւ թողել է չբացատրուած: Պարզ է որ այս բառը պէտք է կարդալ «Վագրներ»:*

«Վիլվավ» (Bilbao), բասկ ժողովրդի քաղաքը եւ այնտեղ 3 օր հանդստանալուց յետոյ 27 օր շարունակ քալելով դալիս է Ովկիանոսի ծովեզերքի վրայ «Կեթարիայ օրհնեալ քաղաքն», ուր բոլորովին նոր տեսակի ուղեւորութեան է ձեռնարկում: «Այստեղ, դրում է Էֆն Մաթէն, Մարտիրոս՝ ուխտաւորների կարգից դուրս գալով, բարձրանում է վեր. ուստի նրա պատմութիւնը աւելի եւս չահեկան է դառնում»: Մարտիրոս Սպանիայի այդ ծովեզերքն էր ևկել այն ժամանակ երբ ամէնքը հետաքրքրուել էին Քր. Կոլումբոսի տարի ու կէս յառաջ կատարած տարօրինակ նաւարկութիւնից: Նա նոր էր եռ դարձել իր առաջին յանդուգն ծովային խուզարկութիւնից «Էպպի արեւելք» եւ նոր ցամաքի (Ամերիկայի) դիւան այնպէս էր յուզել եւ ընդհանուր նախանձ չարժել, որ մի խումբ սպանիացիք որոշել են նրա օրինակին հետեւելով նոյնպէս երկրախոյզ դառնալ: Մարտիրոսի պատմութիւնից երեւում է, որ նրանք արդէն իրենց առաջատուանաւն էլ պատրաստել են Բիսկայի ծովածոցում (Biscaye, սպաներէն Vizcaya), երբ Մարտիրոս գալիս է այնտեղ: Այս նաւը նրա ասելով 80,000 քանթար (quintal) տարողութիւն է ունեցել: Մեր հայ եպիսկոպոսն երբ այդ տեսնում է, ցանկութիւն է զգում մասնակցելու սպանիական այս նաւատնտեսութեան եւ նա խնդրում է տեղւոյն քահանայից, որ մէջնորդէ նաւապետի մօտ, որ նրան եւս հետը տանի: Նա պատճառ է բերում թէ ինքն

հետոան երկար ճանապարհորդութիւնից ասատիկ յոգնել է եւ պէտք է ղղում հանգստանալու: Քահանաները համաձայնում են եւ Մարտիրոսին տանում են նաւ: Նաւապետին համոզելու համար էլ նրան կարդում են Հռոմի պապի յանձնարարականը: Նաւապետը՝ պապի յանձնարարականը լսելուց յետոյ ասել է. «Մենք մեր կեանքը զոհ ենք բերում մի գաղափարի համար. մեր միակ յոյսը Աստուած է. պիտի չըլինք ամբողջ աշխարհը. չենք իմանում թէ հովը ո՞ր կողմից կը փչէ: Ուզո՞ւմ ես մեզ հետ գալ, եկ, կը տանինք. մենք էլ քահանայի պէտք ունինք. դու մեր հոգումտաին մտածիր, մենք էլ քո ապրուստը կը հոգանք»: Մարտիրոս ուրախութեամբ ընդունում է այս առաջարկութիւնը: Քաղաքում լուր է տարածւում թէ «հայ ուխտաւոր կրօնաւորը» միանում է ապանիացի նաւապետներին եւ ժողովուրդը յօժարակամ հոգում է Մարտիրոսի ուտելիքը. ամէն կողմից մեծ քանակութեամբ պաշար են բերում նրա համար:

1494 Ապրիլի 8, երեքշաբթի օր էր երբ այս նորօրինակ հայ նաւագնացը սկսում է իր ծովային ուղեւորութիւնը: Նրա նաւը ամբողջ 68 օր թափառել է Աւլանեան Ովկիանոսում. այնքան ասատիկ փոթորիկներ է նա կրել, որ ամէն կողմից վնասուել է եւ ստիպուել է ցամաք մօտենալ, որ նորոգութիւններ կատարէ, որպէս զի կարենայ շարունակել: Մարտիրոսի ասելով նրանք իջել

են մի շատ գեղեցիկ փոքր քաղաք, որի անունը նա չէ տալիս, բայց Սէն Մարտէնի հաշուով, պէտք է որ Կադիքսը (Cadix) լինի: Այս 68 օրուան վտանգալից եւ յոգնեցուցիչ նաւարկութիւնն այնքան անհանգստութիւն է պատճառում հայ եպիսկոպոս-ուխտաւորին, որ նա այլ եւս չի վերադառնում նաւ եւ որոշում է ցամաքով եւ հետիոտն ետ դառնալ: Նա գալիս է նախ Սէվիլ կամ ինչպէս նա է գրում Սեբիլիա, ուր նա պատահում է Սպանիոյ Իզաբելլա մեծ թագուհուն: Այնուհետեւ լեռ ու դետ անցնելով նա հասնում է «մաղրէբ»ցիների (նախկին Մարոքցիների) քաղաքը «Գրիդաւն» (Գրանադա): Կամաց կամաց յառաջանալով եւ հանդիպած սպանիական քաղաքներում երբեմն մէկ շաբաթ, երբեմն աւելի հանգստանալով, մտնում է «Պարսալոն» (Barcelone), որ նրա ասելով 90·000 տուն է ունեցել, որ ի հարկէ չափազանցութիւն է: Այս անգամ նա մինակ չէ եղել· մի բժիշկ ուղեկից է ունեցել որ մեծապէս օգտակար է հանդիսացել, որովհետեւ Մարսիլիոս տատապել է աղիքների հիւանդութիւնից: Այսպէս ուղեւորուելով նա անցել է Կատալոնիան, կտրել է հարաւային Ֆրանսան եւ մեծ դժուարութիւններ կրելով եկել է Ճինիվէզ, որ Ջենովա (Gênes) իտալական նաւահանգիստն է: Այդտեղ նա կամեցել է նաւ նստիլ Փոքր Ասիա իր հայրենիքը վերադառնալու համար: Բայց տեսնելով, որ ծովն ալեկոծեալ է, թողել է այդ միտքն եւ դար-

ձեալ հետիոտն յառաջանալով վերջապէս 1496 փետրուար 20ին կարողացել է հասնիլ Հռոմ, երբ Մեծ Պահքն սկսել է: Անկից տեղից գնացել է մերձակայ նաւահանգիստն, որը նա «Սանթայ Մարիայ» է կոչում որ հաւանականաբար Ostia քաղաքն է, որի մայր եկեղեցին այդ անունն է կրում: Այստեղ նա գտնում է յարմար նաւ եւ վերադառնում է Փոքր Ասիա, սարսափելի կերպով յոգնած ու տանջուած իր բազմամեայ արկածալից ուղեւորութիւնից:

Հայաստանի Ազգային գրադարան
NL0422327